



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LTn


1786

1999

ԼՈՒՒ ԺԷ

ԻՐ ԿԵԱՆՔԸ, ՀՈԳԵՎԱՐՔԸ
ԵՒ ՄԱՀԸ

ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԳԵՄԱԼԻ ՄԷՋ
ԲԱՆՏԱՐԿՈՒԻԼԸ



ՀԵՂԻՆԱԿ

Մ. Ա. ՏԸ ՊՕՇԻՆ



ԹԱՐԳՄԱՆԻՉ


Ս. ՄԻՐՉԱ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



ՋՄԲԲԲԵԲԵ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆՆ



№ 181

LIBRARY

UNIVERSITY OF CALIFORNIA

LIBRARY

UNIVERSITY OF CALIFORNIA

LIBRARY


UNIVERSITY OF CALIFORNIA

LIBRARY

UNIVERSITY OF CALIFORNIA

91766-60

28 1777



UNIVERSITY OF CALIFORNIA

1880

ԼՈՒԻՍ ԺԷ

Գ Ի Ր Ք ԱՌԱՋ ԻՆ

Վ Ե Ր Ս Ա Յ Լ

27 ՄԱՐՏ 1785 — 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1789

Կորմանտիոյ դուքսին ծնունդը եւ մկրտութիւնը. — Ժողովրդեան ուրախութիւնը. — Լուի ԺԶի ժողովրդայնութիւնը. — Իր աստրինուութիւնները, ձիւրքերը եւ պակասութիւնները. — Ձեզձուքներու ջնջումը. — Վիճակին վրայ ակնարկ մը. — Թագուհւոյն ծննդաբերութեան քառասունքէ ելնելը. — Շէրպուրի ճանրորգութիւնը. — Լուի ԺԶի անդրանիկ որդւոյն մահը. — Կորմանտիոյ դուքսը անդրանկութեան տխուր զոսը կ'առձու. — Իր նշարագիրը. — Յարավէպը. — Թագաւորը եւ թագուհին իրենց զուտկի կրթութեան կ'նախագահեն. — Երիտասարդ իշխանին ծաղիկներու համար ունեցած ախորժը. — Մօրը վրայ ունեցած իր սէրը. — Պալատականի մը սուած իր պատասխանը. — Ընդունած պոյնտութիւնը. — Յեղափոխութիւնը երեւան կ'ելնէ. — Յուլիս 14ի օրը. — Մատամ աջթուրդէ Գրանայի արքայազանց մանկածուն. — Թագուհւոյն նկարագիրը, — Հոկտեմբեր 5ի երեք օրերը:

ԼՈՒԻՍ ԺԶ. Ֆրանսայի թագաւորին եւ Մարի-Անդուանէթ Ժոզէֆ-Ժան տը Լօրէն Աւստրիոյ արհիւրքուհւոյն եւ Ֆրանսայի թագուհւոյն երկրորդ տղան Ֆրանսայի եւ Պարպոնի Լուի Շարլը ծնաւ Վերսայի քաղաքանը 1785 Մարտի 27ին երեկոյեան ժամը 7ին 5 րոպէ մնալով:

Հակառակ հին սովորութեան որ Ֆրանսայի արքայորդւոց մկրտութիւնը քանի մը տարի ուշայնս կուտար, նոյն իսկ իր ծննդեան օրը մկրտուեցաւ ժամը 8¹/₂ին, Քարախնալ տըրոհան Սթրազպուրկի եպիսկոպոսէն որ մեծ ողորմաբաշխս

էր (grand aumônier), և Աւերայլի խոստովանահայր-
Պրօքրպիէէլ արքայէն Իրեն կնքահայր եղաւ Առի Սթանիս-
լաս-Քասպիէ . Բրովանսի կոմս (comte de Provence) ,
Մօնսիէօ , իր հօրեղբայրը , և կնքամայր՝ Մարի-Շարլօզ-
Առիլ սոր Աօրէն , Աւստրիոյ արհիեպստ-հին և երկու Սի-
կիլիոյ թագուհին , որու սաշտօնը փոխանորդաբար կատա-
րեց Մատամ Ելիզապէթ :

Նորմանսիոյ Վոքսի տիաղոսը ընդունեց , զոր Շարլը Եղի
չորրորդ զառակէն ՚ի վեր Վաղզիոյ իշխաններէ և ոչ մին
կրած էր : Թագաւորը բոլոր իր սաշտօնականներով սա-
լասի մատուոր երթալով հան Ջէյլ Ապստոմ երդուեցաւ
հանդիսաւոր կերպիւ : Արարողութեան ըմնալէն վերջը՝ Մ-
սոր Քալօն , արտունի դանձուն ընդհանուր դիւանապետը , և
թագաւորին հրամանաց մեծ գործակատարը՝ Սենդ-Էսբրի
(Հոգին Սուրբ) կարգին ժապտէնը և խաչը ներկայացուց
նորածին իշխանին :

Ժամը Սին ատենները շատ զեղեցիկ հրախաղութիւններ
տեղի ունեցան թագաւորին և բոլոր սպառախաններու
ներկայութեան :

Առի ԺՁ. սատուէր տուաւ մեծ արարողապետին եր-
թալ աւետել իր երկրի բարի քաղաքացւոց թէ Աստուած
երկրորդ զառակ մի շնորհած է իրեն : Աստ սովորութեան
հրովարտակներ զրկուեցան բոլոր կրօնական , բանակի և
խորհրդարանի գրուխներուն : Աւրախութիւնը մեծ քաղա-
քին մէկ ծայրէն մինչև միւս ծայրը սրանալով քիչ մը վեր-
ջը բոլոր թագաւորութեան մէջ տարածուեցաւ , Պասթիլ-
լի թնդանօթը սատասխանեց Անվալիաի թնդանօթին : Ա-
մէն ինքնայօժար լուսաւորութիւնները , զանգակներու ներ-
դաշնակաւոր հնչիւնը , ժողովրդին ուրախական ձայները՝
Քրանսայի առ թագաւորն թնեցած սիրոյն հաւատալին էին ,
որ իր երիտասարդութեան ծաղիկ հասակին մէջ ժողովր-

գեան երջանկութեան վրայ հաստատած էր իր երանա-
թիւնը :

Եւ ստուգիւ Վուի Ժ.Չ.էն աւելի ուղիղ և աւելի մա-
քութիւնը զխտաւորութիւններով թաղաւոր մը գեո. բազմած չէր
դահի մը վրայ : Չէ թէ միայն ախորժ այլ և սէր մ'ունէր
քարութեան : Չզալ որ ժողովրդէն կը սիրուէր՝ անպատ-
մելի ուրախութիւն մ'էր իրեն համար . տեսնել որ այս
սէրը կը սրահուէր իր վրայէ՝ ստեղծելի ցաւ մ'էր իր սրտին :
Ահա ասիէ ծնունդ առաւ իր արժանաւոր ժողովրդայնու-
թիւնը՝ զոր իր թաղաւորութեան առջի տարիները կ'վա-
յելէր : Անմիջապէս ձեռք զարկաւ այն միջոցներուն՝ զորս
յարմար կ'դասուէր այս սէրը ստանալու համար , նոյնպէս և
անոնց՝ զորս կ'նշանակէին իրեն իբր յարմարագոյն սոյն
նպատակին համեմատ . և չէ թէ միայն առանց երկմտու-
թեան հարա ուրախութեամբ բարեկարգեց այն ամէն զեղ-
ծումները՝ որոց ինք հասու կ'ըլլար կամ իրեն կ'յայտնե-
ին , ան ատեն իսկ որ այս զեղծումներու ջնջուիլը իր գան-
ձը կ'ազքատցնէր և դահին շուքը կ'սրահեցնէր :

Աւելի շատ այն անհատատարմութեանց և հարստահարու-
թեանց դեմ կ'սրտմտէր՝ որոնք հասարակաց գանձը ազ-
քատցնելով , ժողովրդեան վրայ արդէն եղած ծանր հարկը
աւելի կ'ծանրացնէին :

Պրանտա մի և նոյն միջոցին կ'չորհաւորէր օգտակար բա-
րեկարգութիւնները , արբունի կալուածներու մէջ անձնա-
կան ծառայութեան ջնջուիլը , անվարձ աշխատութեան անդ-
ընդհանուր հարկի մը հաստատութիւնը , նաև թաղաւորին
անձնական ստացուածոց վրայ , չուղելով ամենեւին նա
(թաղաւորը) որ իր կալուածները բացառութիւն մը սեպ-
ուին . երկրագործութեան վրայ դրուած ծանր հարկերու
սրահելը , այնպիսի իշխանի մը ձեռքով որ մշակներու և
ուսուսաւորներու համար Լանրի Գ.ի սէրը կ'կրէր իր սր-

տին մէջ, Գաղղիոյ օրինադրքի մէջէ տանջանքի ջնջուիլը, Բողոքականներու քաղաքային կեանք շնորհուիլը, Շէրպուրկի նաւահանդատին բացուիլը Անգղիոյ վրայ նայող ծովեզրին վրայ. Աւանտրի նաւահանդիստը՝ որ Սպանիոյ վրայ կը նայի, այն ինչ Գաղղիական նաւատորմը Տիւքէնի, Տիւկուէյ-Թրուէնի և Ժան Պարթի դրօշակը փառսոր կերպիւ ծովերուն վրայ կ'ծածանէր, և երեսասարդ Ամերիկա Հին շուշանագոյն դրօշին տակ անկախութեան ծնունդ կառնուր:

Գեղեցիկ և մեծ տեսարան մ'էր ասի ստուգիւ որ Գաղղիոյ սահմաններուն մէջ նոյնպէս և անկէ անդին բոլոր ուղիները կ'ըրաւէր: Աստի ժողովուրդը սքանչանալով այսպիսի թաղաւորի մը վրայ՝ որու ամենէ մեծ միսթարութիւնն էր անոր վշտերը թեթևցնել, կ'փութար Հանրի Գ.ի արձանի սպասուանդանին վրայ իր վերակենդանութիւնը դրել. և բոլոր Եւրոպիոյ մէջ ամենէ շատ ազդեցութիւն ունեցող ձայները, այս երեսասարդ թաղաւորութեան համար փառսոր ապառնի մը կ'աւետէին:

Սակայն եթէ մէկը թաղաւորին երկնքէ ընդունած ձիրքերը, բնաւորութիւնը և ողին, բաղդատէր սէպերու, փտիւքներու և ամենէ աւելի դժուարութիւններու և ժամանակին մոլութիւններու հետ՝ նոյն վայրկենէն ծանր դէպքերու խառնուրդ մը պիտի կարգար սպառնոյն մէջ: Ատի Թ.Չ. խիստ առաքինի, իր սարսաւորութեանց յարած, լուսաւորեալ բայց երկշտ ողիի տէր իշխան մ'ըլլալով թշուառութեան առջև սլինդ կեցող բնաւորութեան մը տէր ըլլալ կ'երևէր, սակայն անոր վաղանցուկ աներկիւղութիւնը՝ որ վտանգը կ'ընդունի, չէր միանար այն քաջարտութեան հետ՝ որ վտանգը կ'նուաճէ: Արշափ որ ուղիղ և անաչառ տեսութիւն մ'ունէր, սակայն իր անձին վրայ ունեցած մեծ անխտահարութիւնը Աստուծմէ իրեն շնորհուած այս արդարամտութիւնը ստարգիւն կ'ընէր: Իր հաւին

Լուի ժե.ի ժամանակ գործերէ հեռու մեծցած ըլլալով իր անսիրտ ճառութիւնը խորին կերպիւ կ'զգար հիմա իր սրտին մէջ : Խաղաղ ժամանակներու մէջ երկար ատենէ 'ի վեր հաստատուած օրէնքներու տակ պանչելի թագաւոր մը կրբնար ըլլալ, անաղարտելի օրինադրութիւններով և իմաստութեամբ սահմանուած և կանոնաւորուած իշխանութիւն մի վարելու համար, վասն զի բնութեամբ սրատես միանգամայն և ախորժ մ'ունէր բարութեան, և այնպիսի մարդերէ մին էր որոյ համար դժուարին միայն մէկբան կայ, այն է պարսքը ճանչնալ, զոր անգամ մի ճանչնալէ վերջը կ'զործագրեն իսկ անթերի : Սակայն այնպիսի վիճակի մը մէջ կը գտնուէր, որու առջև իր ձիրքերը իր թերութիւններու չափ աղէտարէր պէտք էին ըլլալ իրենց համար, վասն զի այս վիճակը բոլորովին տարբեր հանգամանքներ և տարբեր թերութիւններ կը պահանջէր անվրէպ :

Ամբողջ տասն և ութերորդ դարուն փիլիսոփայական գաղափարներու հեղեղէն պատրաստուած յեղափոխութեան և փոփոխութեան դար մ'էր այս, և առելի վտանգաւորն այն է որ միաբերը մի և նոյն միջոցին թէ նորաձեւութեան և թէ տեսականութեան կ'յարէին, և ասոր պատճառն էր ընդհանուր օրոգիներու երկար ատեն դադարումը, որով ազգը իր գործերուն անտեղեակ եղած էր, առանց դժուարութեան վրայ ակնարկ մը նետելու՝ մի միայն նպատակը կ'զիտէին, և դժուարութիւնը չ'տեսնելով ամէն բան կարելի կ'կարծէին : Տէրութեան պաշտօնաւորները անգամ որ իրենց բնութեամբ այս շարժումը չ'ախարհելու համար սահմանուած կ'երեւէին, արնատակնութիւնը և կղերի մեծ մաս մը նոր գաղափարներով անդիի ծայր շարուած՝ հակակշիռներ կը պակէին այս քաղաքական բանաւորութեան (rationalisme politique) որ չէ թէ միայն զեղծումները այլ և օրէնքներն ու հաստատութիւնները ազատ քննուելու մասն մագէն կ'անցընէր :

Բարիգլի մտաւորական շարժումը աշխարհս կ'յուզէր : Եւրոպիոյ և Ամերիկայի արձագանքները Գաղղիական փոխտփայութեան ձայնին կ'պատասխանէին : Պէր.բարիա Մօնթէպիէօէն աւելի յանդուզն բայց աւելի քիչ խոհական, Միլանի մէջ հին օրէնսդրութեան պակասաւոր կերպերը կը պակասակէր : Ալֆիէրի Ֆլօրանսի մէջ, Շիլլէր Ռէյնարի իրենց հայրենեաց Թիրթէն կ'հանդիսանային : Շաթամ Անգղիոյ բեմին վրայ նոր քաղաքականութիւնը կը նախարարործէր :

Փիլիսոփայութիւնը՝ թէև տարտամ, բայց պայծառ լուսով մը ընկերութեան ամենարարձր կատարները լուսաւորած . Ժ . Ժ . Ռուսօ , Տիարօ , Հէլվէդիտս , Աօլթէր , վրտանդաւոր առաքեալները , իրենց աշակերտանելով աշխարհս լեցուցած էին :

Շարժումի ընդհանրութիւնը անոր ուժգնութիւնը կ'աւելցնէր : Ամէն երևակայութիւնները դզրդած էին , և ամէն սրտերու մէջ եռանդուն փափաք մը կար ընկերային կարգի վերանորոգութեան համար : Գիտնականներու մշաքին մէջ կը նշմարուէր , և նոյն խկ օղին մէջ կ'զգայուէր այս ստոյգ նշանները , որոնք մեծ փոփոխութիւններ կը ծանուցանէին :

Եւրոպիոյ մէջ հին դաղափարներու հետևող բարձր հանճար մը չկար . քանի մը միջին կարգի մտքեր միայն թէև հաղուազիւս՝ անյողզող կ'կենային հին հաստատութեան հովանիին տակ :

Գարերէ ՚ի վեր ստուգուած հեղեղը կ'դիմէր իր ամբարտակները խորտակելու , 1789 Քրանայի կործքէն դուրս կեննէր , բարբերէ , գաղափարներէ , ակնկալութիւններէ և ամէն բանի համար կեղծիքներէ ծնած յեղափոխութիւնը :

Այս շարժումը իրեն օրինաւոր նպատակին առաջնորդելու , անոր ճամբուն մէջ սերմանուած արդելքներէն խոյս

տալով, և անոր այս նպատակէն անդին անցնիլը արդիւլելու համար խիստ նախատես և իրեն որոշմանց մէջ խիստ սլափափափական ու անդանդաղ ոգի մը, ամենահաստատ և անյողոցող կամք մը, ամենազօր և կորովի ձեռք մը կ'կարօտէին, թէ նորաձեռութիւնները մտցնել տալու համար հակառակ անխոհեմ զիմադրութեանց, և թէ օրինաւոր սահմաններու մէջ կասեցնել տալու համար նորաձեռութիւնները ընդդէմ բոլոր միտումներու: Սակայն բոլոր այս յատկութիւններով յաջողիլը դարձեալ շատ ստոյգ չէր, այնչափ արդեւքները մեծ, ոգիները յուզուած, նաև այս ալ ըսենք, սիրտերը ասպականուած էին:

Բայց Լուի Ժ-դ, այս սպարազաններու նկատմամբ սրահանջուած յատկութիւններէ և ոչ մին ունէր:

Իրեն խիստ անարատ սրտով մարդկան վատթարութիւնները չէր կարող հասկընալ և ոչ իսկ իշխել անոնց իր չափադանց տկարութեամբ. առանց կտակի միայն բարեսիրտութիւն ունէր և քաջասրտութիւն առանց որոշումի:

Յանդիմանելու սրարտաւորուած եղող գորովալիր և դրժբաղդ հօր մը նման՝ իր ծուռնկերու բոլորախօքը կամ ոտքերու տակ սողացող մոլորութիւնները և փառասիրտութիւնները մեծ գթութեամբ մը կ'դիտէր: Կնք որչափ սր կըրթուած՝ սակայն իրեն համար թերևս ամենէ հարկաւոր եղած գիտութիւնը կ'սրակսէր իրմէ, այն էր իր ժողովուրդը և երկիրը կառավարելու գիտութիւնը: Իր առաջինութեամբը բամբասանքէ չէր վախնար. վասն զի իր սրտի խորը, իր դիտաւորութեան վկայութեանց մէջ՝ իր գործերու ջատագովութիւնը կ'դտնէր. և տակաւին խղճի այս անարատութիւնը անդամ իրեն դէմ պէտք էր դառնալ! Չ'կայ էակ մը որ բամբասանքէ ազատ ըլլայ. գաղտնի մեքենայութիւնը և սարսաւազրերը նոյն իսկ հսկայ մ'անդամ սայթայթելու կարող ամեն տեսակ նուաստ ատելութիւններ կ'կուտէին անոր կեանքի բոլորախօքը: Անյողոցող սիրտ մը սակայն երկչոտ

ողի մ'ունենալով՝ փոխանակ դէպքերը նախատեսելու և կառավարելու, ինք անոնց կը հետևէր, և հետևելովը բնականաբար իր կորուստին դիմած պիտ' ըլլար անխորշելի կերպիւ. որովհետև զաղափարները՝ դէպ' այն սկզբանց վրայ յարձակելու կ'առաջնորդէին դէպքերու՝ որոց վրայ մինչև անատեն զաղղիական ընկերութիւնները, անհակառակելի ժառանգական իրաւունքը, արբայական գերիշխանութիւնը, կրօնքը հանդիման էին :

Իբր լրումն թշուառութեան՝ Ղուի Թ.Ձ. իր այնչափ առաքինութեանց հետ նաև երկու թերութիւններուն երեսնաւորութեան. որոնք ամեն ատեն վտանգաւոր ասկայն իր սպրած ժամանակի մէջ մահաբեր էին իրեն համար :

Այս թերութեանց առաջինն էր, կարծիքներու շարժումի մը երկար ատեն դէմ գնել չ'գիտնալը, փոխանակ յոգուտ իրեն դործածելու, ինչպէս որ նաւաստիք իրենց ուղած ուղղութեան մէջ յառաջանալու համար հովը պէտք եղած կերպով կ'դործածեն, քիչ մը վերջը ինք կ'սկսէր նոյն շարժումին ծառայել, և ալ իր գործածածը շարժիչ զօրութիւնը չէր միայն հասցա նաև անոր կողմնացոյցը :

Երկրորդն էր, իր ընդհանրապէս հասուն և ընտիր զաղափարները՝ իբր կարող իրեն ներկայացուած անձնու գաղափարաց շարունակ զոհելը : Այս կերպիւ թողուց որ Թիւրկոյի, Պրիէնի, Քալճնի, Նէքէրի, ևն. գաղափարները հետզհետէ մուտ ունենան, որչափ որ խիստ օրինաւոր կասկածներ ունեցաւ անոնց դրութիւններու գործնական ազդեցութեան վրայ : Իր անձին վրայ ունեցած այսպիսի անվստահութիւն մը՝ գիմազրաւ փորձերու և աւելի վտանգաւոր դարձուածներու մէջ պէտք էր գնել իր քաղաքականութիւնը : Մէկ խօսք մը անոր ինչ մտքի և սրտի տէր ըլլալը կրնայ նկարագրել : Ղուի Թ.Ձ. գահը ելած ատեն Մօրու արքունի ատենադպրին լուծած հին

խորհրդարանները կրկին գումարեց: Թէև կը հասկընար անոնց վերադարձի անսպաս հոթիւնները՝ բայց իր սաշտօնեայնեբէ մէկուն, որ իր հօր բարեկամն էր և որ իրեն կ'իշխեցնէր այս անսպաս հոթիւնները, սպասասխանելով ըստ: «Գիտեմ այդ ամէնը, սիրելիլ իմ Յիսի, բայց կ'ուզեմ, մանաւանդ հարկ է որ ամէն բանէ առաջ սիրոյնս տամ ինքզինքս իմ ժողովրդի Ծ: Անանկ ասեն մը որ նորաձեւութեանց հովը կ'իջէր, և ուր ժողովուրդը պէտք էր ալ ամէն կեղծ իքներու համար իր ակնկալութիւնները դադրեցնել՝ տրամաբանելու մանաւանդ դործելու այսպիսի եղանակ մը հեռու պէտք էր առաջնորդել Ղուի ԺՁ.ի և ինչպէս որ առաջնորդեց իսկ:

Խորհրդարաններու կազմութենէ վերջը մղեց զանի մեծամեծներու գումարումին, մեծամեծներու գումարումէն ընդհանուր ժողովներու հաւարման, ժողովրդեան ներկայացուցիչներու երկպատիկ ըլլալուն, կարգերու և կանոններու շփոթումին, սահմանադրիչ ժողովին, Յուլիսի 15 ին, Հոկտեմբեր 5 ին և Յին, վերջապէս կայանէ կայան մինչև մահաբեր վախճանին առաջնորդեց անոր:

Նոր գաղափարները արդէն կ'սկսէին խմորիլ: Նորմանտիոյ գուբին ծնելէ ինն օր վերջը (5 Ապրիլ 1785), արձանագրութեանց և զեղարուեստից արքայական ճեմարանին մէջ Հիւկ Բափէի զահը ելնելուն նկատմամբ հին և արդի սրատիչներէ դրուած սրատմութեանը վրայ Յիշատակալ իր մը կ'կարգացուէր: Արեւելի թէ հեղինակը իրեն նպատակ ըրած էր Հիւկի ազդին ազատ կամօք և հաւանութեամբ արքայական թագ ընդունած ըլլալը սպայցուցանել: Այս նիւթին ծնունդ տուին հանրազիտականները, որոնց ցնորքներու մէջէ առ ազօտ կ'ընթարուէր արդէն չորրորդ արքայական սերունդի մը կարելիութիւնը: Բայց գիտ-

Նախաններու սրաին մէջ խմորում չորաձևութեան այս դաղափարները դեռ հասարակութեան մէջ չէին իջած. թագաւորութիւնը հանդարտ՝ թուանց ամպի երկիրի մը տակ իր երջանիկ քայլը կ'առնուր :

Մայիս 24ին Մարի-Անթուանէթ Փարիզ եկաւ Աստուծոյ շնորհակալ ըլլալու իր յաջող ծննդաբերութեան և ժողովուրդի իր վրայ ունեցած սիրոյն համար, ուր իրեն միանգամայն և զուակին համար ընդունեց Աստուծոյ օրհնութիւնները և ժողովուրդին ուրախութեան աղաղակները :

Այս ուրախութեան աղաղակները աւելի եռանդալին կերպիւ ընկերացան թագաւորին հետ այն ինչ հետևեալ տարին (24 Յունիս 1786) դէպ ՚ի Շէրպուրկ Ճամբորդութիւն մը կ'ընէր, աչքէ անցնելու համար այն անթիւ աշխատութիւնները զորս հրամայած էր կատարել այս զինուորական նաւահանդատին մէջ, որ մեծ ժողովուրդի մը, ան ասին Գաղղից թշնամին, դէմ կենալու համար սահմանուած էր։ Առի ժՁ. աշխարհագրական տախտակ մը շինել առած էր այցելութեան ելնելիք տեղերուն համար, որու մէջ կը պարունակուէին մեծամեծներու դղեակները և զլխաւոր բնակութիւնները միանգամայն իրենց անունը և ըրած ծառայութիւննին նշանակելով : Այս քաջասիրտ անձերը պատահութիւն ունենալով այս աշխարհագրական տախտակին մօտենալու՝ զմայլեցան տեսնելով որ թագաւորը չէ թէ միայն իրենց անունները այլ և իրենց կեանքի մասնաւոր սրբադասները և իրենց ընտանեկան յիշատակները անգամ գիտէր : Պաշտօնականներու անգամ զարմացումը՝ անոնց ըզմայլումը և ապշութիւննին և ևս կ'կրկնապատկէր : Այսպէս Առի ժՁ. քաղցր յիշատակներ բերաւ իրեն հետ այս ճամբորդութենէ, զորս շարունակ յիշել իրեն հաճելի ըլլալով՝ իր երկրորդ տղուն այս գեղեցիկ նահանգին անունը տալը զնորը կ'հրճուեցնէր : « Եկուր իմ պղտի նոր-

մանա, յաճախ կրսէր անոր իր դրկաց մէջ սեղմելով զանի՛,
քու անունը քեզ երջանկու թիւն պիտի բերէ » :

Պատմածներէս կ'երևի թէ ինչ յաջող երևոյթներու
տակ սկսած էր Լուի Ժեփ կեանքը, որ բարձր և երջա-
նիկ ասրադայի մը համար սահմանուած կ'երևէր : Ապա-
նին չ'ուշադար ուելի սրայծատ խոտաուսներ ընելու անոր :
Գահաժատանդ իշխանը (Լուի-Ժօղէֆ-Քասպիէ-Փրան-
սուա) որ 22 Հոկտեմբեր 1781 ծնած էր Աերսայլի մէջ,
մեռաւ ՚ի Մէօտօն հինգ շաբթի 4 Յունիս 1789 : Սիրուն
և ընտիր զաւակ մ'էր այս, որ սրտի և մաքի ամէն ընտիր
յատկութիւններ կ'աւետէր : Անոր մահուան վրայ բոլոր
թագաւորութիւնը ցաւեցաւ : Ամէ մ'ի վեր բայցուած ընդ-
հանուր ժողովները՝ ժողովրդեան զդայցած տրամութեան
թարգմանը եղան : Ժողովրդեան ներկայացուցիչները յանձ-
նեցին իրենց գահերեցին, որ գահաժատանդ իշխանին մա-
հուամբ զդայցած իրենց խոր տրամութեան հաւատիքը ներ-
կայացնէ նորին Աւհատիտութեանց և Ազնուականաց ժո-
ղովը, ըստ առաջարկութեան Հաթըլէի դոքսին, նոյնպէս
միահամուռ որոշեց պատգամաւորութիւն մը զրկել թագա-
ւորին և թագուհոյն անոնց զդայցած տրամութեան կարե-
կիր ըլլալը հաւաստելու համար :

Հասարակաց խորհրդարանի հետևեալ օրուան նստին
մէջ Պայլի առաջարկեց երիտասարդ իշխանին դիակին վրայ
երթալ և օրհնած ջուր սրկել, որ միոսնայն հաւանու-
թեամբ ընդունուեցաւ : Բայց եթէ շատ մը ժամանակակիցնե-
րու պատմութեանց հաւատ ընծայուի՝ որոց վկայութիւնը
մեծ կարեւորութիւն ունի, մանաւանդ Մ. Ֆէրրանինը
(Ներբող Մատտի Ելիզապէթի), Հասարակաց խորհրդա-
րանը նոյն իսկ սոյն մահուան առթիւ իր միտքը և կամքը ա-
ւելի ճոխ կերպիւ յայանեց : Լուի Ժ.Չ. իր զաւակը կորու-
սելէ ետև ժամ վերջը, երբ առանձին քաշուած էր անաբ

կորուստը ազատ ողբալու համար, լուր առաւ թէ ժողովրդի ներկայացուցիչներու նախագահը երիտասարդ իշխանին մահը գիտնալով անգամ կ'սնդէր թաղաւորը տեսնել : Թագաւորը գոչեց անասնն : «Աւրեմն Հասարակաց Խորհրդաբանին մէջ հայր մը չ'գտնուիր ! » և ընդունեց զանի :

Գահը ելնելու համար սահմանուած այս իշխանին ծընընդեանն և մահու թուականին մէջ արդեօք մարդարեական և աղէտալի բան մը չ'երևիր : Ծնաւ 22 Հոկտեմբեր 1781ին . իր մկրտութեան հանդէսները մինչև հեռեալ սարսփն Յունլար 21 երկաբաձդուեցան . և հին ընդհանուր ժողովները Քրչիկօյէն ՚ի վեր խափանուած վիճակի մը մէջ ընկած ըլլալով իրենց սլաշտօնին սխիլը ըրին թագաւորութեան ժառանգին մահուան հանդիսին ողբիկց ըլլալով, որն որ կ'երևէր թէ ետ ետ մինչև իր գերեզմանը կ'երթար ողբալի ասպազայէ մ'ազատելու համար :

Արդէն 1787ին թագաւորն աղջիկ զուակ մը թաղած էր փոքր հասակի մը մէջ (Յօֆի-Հէլէն-Պէաթրիս սը Ֆրանս, Վէրայլ ծնած 9 Յուլիս 1786ին) : Այս երկու զաւակներու մահը թագաւորական ընտանիքին համար պահուած տրամութիւններու շղթային առաջին օղակը եղաւ :

Մինչև Յունիս 1789 Նորմանտիոյ դուքսին տղայ հասակը գրեթէ անտես մնացած ըլլալով իր անդրանիկ եղբօր մահը՝ Ֆրանսայի ակնարկը և ակնկալութիւնները դարձուց իր վրայ, և թաղամառանդ իշխանի փառալու սուտ աւնոր որ իշխան մը սպառնի թագաւորութեան համար աշակերտութեան և սրարտաւորութիւններու կենթարկէ : Բայց դեռ շատ երիտասարդ էր իր եղբօր մահը ինչ ատիճանն ողբալու սրարտաւորուած ըլլալը գիտնալու համար : Երջանիկ հասակ ! չէր կրնար իմանալ զեւ թագաւորական և սոսկալի ժառանգութիւնը, որու՝ ըստ ամէն երևոյթի, իր եղբօր կորուստը պիտի գատնապարտէր զինք հեռաւորա-

պայայտի մը մէջ, և բոլոր եղբայրական յաջորդութենէ իր տղայական միտքը ուրիշ բան մը չ'զբաւեց, բայց եթէ դեղեցիկ շան մը անմիջապէս տէր ըլլալու ուրախութիւնը որ Մուֆէ կ'կոչուէր, և իր անդրանիկ եղբօր վերաբերելէ ետք հիմն իրեն բաժին ինկած էր:

Լուի ԺՉ, որ հաւասարապէս անխափր կ'սիրէր իր դաւախները՝ Նորմանտիոյ դուքսին վրայ այն մանաւոր թէ ոչ բացառիկ սէրը ունեցաւ, զոր թաղաւոր մը սպաբաւար է ունենալ այնպիսի մէկու մը վրայ որու ծնունդը զանի գէսի ի գահը կ'առաջնորդէ իրմէ վերջը: Թագուհին իր կողմէ յետին աստիճանն ուշադիր և փութաջան հոգ ունեցաւ անոր վրայ կ'ուզէր մի և նոյն ստոն ինչպէս մայր նոյնպէս և վարժուհին ըլլալ իւր զաւկին:

Երգէն չորս տարեկան հասակը մտած էր նա սոյն միջոցին: Ազգմուստքը փափուկ, նուրբ և թեք, ընթացքը շնորհալի, ճակատը լայն և բոյ, և յօնքերը աղեղնաձև էին: Գժուարին է նկարագրել անոր կապոյտ մեծ աչերու հրեշտակային գեղեցկութիւնը՝ զորս շագանակագոյն երկայն արտևանուսներ կ'ծուպաւորէին: Անոր երեսի շացոյցիչ մաքրութիւնը վարդեգոյն կարմրութեամբ կ'գունաւորուէր. գեղին-մոխրագոյն մազերը բնական գանգուրներու խիտ օղակներով կ'իջնէին անոր ուտերու վրայ. իր մօր կարմրափայլ բերանը ունէր և անոր նման ծնօտին վրայ փոքրիկ խորշ մը կերպարանքին վրայ Մարի-Անթուանէթի վէհանաւորութենէ և Լուի ԺՉ-ի բարեսրտութենէ կ'նշմարուէր միանգամայն, Բոլոր իր շարժումները շնորհօք և կենդանութեամբ լի էին իր վարմանց, իր կեցուածքին մէջ գերազանց աղնուութիւն մը կար, և այնպիսի մանկական անկեղծութիւն մը՝ որ բոլոր իրեն մօտեցողները կ'հրապուրէ: Եր բերանը ամենէ սիրելի անկեղծութիւնները և պարզմտութիւնները լսելի ընելու համար կ'բացուէր միայն: Ասքանչանային զանի տես-

ներլու՛, և կ'սիրէին զանի լսելէ վերջը : Տղաները և իշխանս
 ները հասարակօրէն անճաստէր կ'ըլլան : բայց ասի ոչ իշ-
 խաններու անճասիրութիւնը ունէր և ոչ տղաներու ; որոնք
 իրենց կերպերովն մէկ մէկ թաղաւորներ են : Միշտ ու-
 ըրչներու վրայ կ'մտածէր, դորովալիւ էր պիւրք սիրողներու
 համար . ուշագիր իրեն հետ խօսողներու ; մեծարող իրեն
 այցելութեան եկողներու , և քաղաքավար ամէնու համար :
 Եւ այս ընտիր յատկութիւնները ամէն ատեն աշխուժով և
 եղական անհամբերութեամբ մը կ'բարեխառնէին : Իրեն ծու-
 րայելու համար յատկացուած կիներու սարկութեան հա-
 մար գծկամակութիւն և ցաւ կ'զգար սրտին մէջ . իր ան-
 թնալու և քնանալու համար հաստատուած կանոնին դէմ
 իր հասակի բոլոր ուժով կ'մննամարտէր , և մայրը տեսնե-
 լուն ամիջապէս մէկդի կ'թողուր իր տոսմբակութիւնը :
 Ասան զի սիրոյ ազգեցութեան չտի նաև գերիշխանութիւն
 մը գտնելով իր մօր վրայ ; սէր միանդամայն և յարգանք
 կ'զգար անոր համար : Այս բարձր և դորովալիւ դաստիա-
 բակ հին գիտէր իր տղուն բնաւորութիւնը կազմելու ; զանի
 հրահանգելու ; և մի և նոյն ատեն չնեղացնելով պակասու-
 թիւնները ուղղելու կերպը : Ուսուցիչներու ձեռք անցնելէ
 առաջ հրահանգելու և կրթելու սրաշտօնը իր վրայ առած
 ըլլալով նախնական ուսումներու և դիտութիւններու տար-
 բերը անոր գիւրբմբռնելի ընելու համար չ'կար միջոց մը որ
 չ'հնարէր : Ընթերցանութեան սկզբունքները բնաւ հրապու-
 ըիչ չ'ըլլալով ՚ի սկզբան կարևոր պարտաւորութիւն մը չը-
 սեպեց ասի ; ամենէ առաջ փոյթ ունեցաւ ախորժ և իղձ
 ներշնչել անոր սրտի մէջ : Բնական և անարուեստ պատ-
 մութիւններ ; սթարզ բարոյականներ , և Աաֆօնթէնի խնաս-
 տութեան , Բէբօլլի և Պէրքէնի հանձարէն բոլսած ման-
 կութեան գիւրբմբռնելի այն ընտիր միանդամայն խելացի
 առաջները կ'կարդար կամ կարգացնել կուտար անոր ; և

այսպէս զըօսանքի կերպով կ'աւանդուէին իրեն առաջին դասերը : Այս ընթերցումները ծաղկահասակ աշակերտին հանձարը և ճարտարմտութիւնը նշմարելու տեղի տուին : Մեծ ուշադրութեամբ միտ կ'դնէր , և իր կենդանի և աշխոյժ կերպարանքը՝ իրեն կարգայուած փոքրիկ պատմութեան բոլոր հանդամանքները և բոլոր անակնկալ արկածներու ազդեցութիւնը կ'արտայայտէր : Պատմուած ժամանակ իրեն ուշիմութեամբ դիւրաւ հասկցած կտորները զարմացման ազդակներ կը գողնային իր ներսէ , և չ'հասկցած շփոթ և անստոյգ մասերուն համար իր խաղաղ ճակտին և զարմացած աչքերուն վրայ փոքրիկ ամպ մը տարածուելով՝ անատեն հարիւրաւոր իրարմէ աւելի բնական հարցումներ , եզակիան դիտողութիւններ և հանձարեղ խորհրդածութիւններ կրկին զարմացնելով իր ունկնդիրները՝ ամենաբարձր և խիստ երջանիկ դադափար մը կուտային անոնց , արքայորդւոյն մտաւորական սպառնիկին վրայ :

Իր սրտի զգայնութիւնը , իր հոգւոյն փափկութիւնը և ալնուութիւնը , անոր նրբամտութեան և ազնուաբարոյութեան կ'արատասխանէին : Ամէն ատեն ընթերցումէ ետք տեղի ունեցած բնատնական տեսութիւններէ վերջը՝ թաղուհին սովորաբար կ'սկսէր « Է՛հ , է՛հ » կամ « քնար չայել , և ինչ բանի որ փորձ քրած էր իր սղուն սրտին մէջ ընթերցասիրութեան ախորժը տպաւորելու համար , նոյնը կ'ընէր նաեւ երաժշտութեան ախորժը տալու համար անոր : Իր չալած եղանակները քանի մը փոքր և ազդու երգեր էին զորս սովորած կամ ինք շարադրած էր իր զաւկին համար , և անոր գլխու շարժումներու մէջ , դէմքի սրցծառութեան վրայ որակաւորութեամբ կ'տեսնէր ներդաշնակութեան հրապոյրի համար ըմբռնող ականջ մը և փափաք ունենալը : Իրիկուն մը Սէն - Քլոմեդած ժամանակին , մայրը՝ Տղայոց Բարեկամ բնուած վիպասանութենէ կտոր մը կ'երգէր ,

Ննջէ որդեակ , գոյէ՛ աչերդ ,
 Սիրաս պատուեն աղաղակներդ :
 Ննջէ որդեակ , խեղճ քու մօր
 Մ'աւելցներ ցաւ մի նոր :

(Պէրբէն . Հատոր Ը . երես 101)

Աշխուժիւ երգուած այս շորս սող ոտանաւորը , մանաւանդ անոր մէջի «Խեղճ քու մօր» խօսքերը թագաժառանգի սիրտը յեալին աստիճան յուզած ըլլալով՝ **ԷԼՎԵՆԷՆԷ** մօտ իր փոքր աթոռին վրայ լռիկ և անշարժ նստած՝ իր տեսութիւնը և ունկնդրութիւնը բոլորովին մօրը նուիրած էր : Մատամ Ալիզապէթ հոն գտնուելով , զանի այսչափ հանդարտ գտնելուն զարմացած՝ ըստ անոր խնդալէն . « Տեսէք Շարլը որ կ'ընանայ այս անգամ : » Գլուխը խնդրն վեր վերցնելով սարսորիչ ձայնիւ մը պատասխանեց . « Ա՛հ , սիրելի հօրաքոյրս , թագուհի մօրս ձայնը լսողը կրնայ միթէ քնանալ : »

Տղայ մը կար , որու երախայրի յատկութիւնները և դիւցազնական մահճը՝ թագաւորական ընտանիքի ու Գրանապի յիշողութեան մէջ այնպիսի յիշատակ և սուգ մը թողուցած էր՝ որու Մարքի տը Բօմբէլինեան թարգմանը և միթիթարիչը հանդիսացած էր միանգամայն սրտաշարժ պարզութեամբ մը Պուրկօնեի դուքսին կեանքը գրելով , որ մեծ Անդրանկին (grand Dauphin) տղան և Լուի Ժ.Չ . ի մեծ եղբայրն էր :

Տարօրինակ քաջարտութեամբ ստեղծի ցաւերու դիմացող և 'ի վերջոյ ինն տարեկան հասակին մէջ նոյն ցաւերէ պատճառուած մահուան դո՛հ եղող տղու մը գովեաններուն նուիրեալ այս գրքին մէջն էր որ Լուի Շարլը կարգալ սովորեցաւ : Տարօրինակ հպարտութիւն ! Լուի Ժ.Չ . դեռ երիտասարդ՝ Անդրիարէն լեզուի մէջ վարժուելու նպատակաւ Շարլը Ա . ի կեանքը թարգմանած էր , և թագաժառանգը դեռ տղայ՝ կարգալու մէջ վարժուելու համար Պուրկօնեի վերջի դուքսին կեանքը ունէր իր աչերու տակ . Ա՛հա այսպէս ան-

յիւրոյն ուսման մէջ ապառնին ախար և առ աղօս երևոյթով մը կ'ընդանար հօր և տղուն համար :

Այս գիրքը Առի Շարլի չէ թէ միայն ընթերցանութեան այլ և նախանձաւորութեան առարկայ մ'եղաւ : Ծաղկահասակ եղբորորդին իր փոքր հօրեղբօր մանկութեան բնական և աշխարհաւտ նկարագրութիւնները և անոր կանխահաս առարկնութեանց օրինակները աշխտածիւ մը կ'ըզար իր սրտին մէջ : Աւստի թէ ինքնասիրութիւնը և թէ սիրտը զրոգելով զանի անոր նմանելու բաղձանքին, կ'հարցնէր եթէ իր կերպարանքի վրայ անոր նմանութիւն մը կ'նշմարտէր . և ուզելով անոր պատկերը տեսնել՝ բերին զան շարքերէնի սուփի մը վրայ շատ գեղեցիկ նկարուած : Տեսակ մը զարմացումով երկար ատեն անոր վրայ ակնկառոյց նայելէ և ծանր ու խոհական կերպարանքով մը զանի համբուրելէ վերջը, ըսաւ. « Ինչպէս ուրեմն ծաղկահասակ հօրեղբայրս իր փոքր տարիքի մէջ արդէն այնչափ գիտութիւն և խելք կրցաւ ունենալ »

Առի ԺԶ. հաստատուած հին սովորութիւններու հակառակ տղուն զատ պաշտօնեայնէր չ'յատկացուց, վախնալով որ մի գուցէ սրաշտօնակալներէ, պարօններէ և սպասաւորներէ սրաշարուելով՝ շողորթութեան դժնդակ ազդեցութիւններու ենթակայ ընէ զանի : Ա՛ռդէր որ բոլոր իր զաւկի մօտեցողները առաջինութեան և փառաց սէրը ներշնչէին անոր սրտի մէջ :

Թագաժառանգ իշխանը իրեն վարժուհի տնեցաւ Թալուհւոյն մասնաւոր բարեկամուհի Բօլինեսպ դքսուհին, և իբր ուսուցիչ Տավօ արբան, որ երկար ատենէ ի վեր Մատամ Բօյալի (Առի ԺԶ. ի աղջիկը) կրօնք, պատմութիւն, ընթերցանութիւն, առակ և աշխարհագրութիւն կը սորվեցնէր : Բայց Առի ԺԶ. իր տղուն ուսուցիչ մը տուած ատեն միւս կողմէ կրնայ ըսուիլ որ կառավարութեան անոյշ պաշտօնը հնր իրեն համար պահեց, և այս կարեւոր կրթութեան հար-



մար իր շինելիք ծրագիրը հաւատարմաբար պիտի գործադրուէր : Թագաւորը այս բարձր խնամակալութիւնը իր վրայ առած ժամանակ ըստ Թագուհոյն . « Չեզ երկրորդելու նպատակաւ է որ ես ալ պիտի զբաղեմ մեր զաւակին համար , վասնզի իմ ընելիքները ձեր մինչև այսօր ըրածները պիտի չ'կրնան գերազանցել : Երջանիկ պիտի սեպեմ զիս եթէ բոլոր ջանքս սրատասխանեն ձեր խնամքներու , և եթէ կատարել տամ Շարլի այն ամէն բաները՝ զորս իրեն խոտանալ տուիք : » Գոնէ այս սրբազայիս մէջ Թագաւորը պէտք էր ինքզինքը երջանիկ սեպել , վասն զի հայրական սէրը , մայրական հարստութիւնը ասկէ աւելի արժանաւոր փոքր՝ գլխի մը վրայ բնաւ հանդչած չունէին :

« Թագաժառանգը իրեն բաժին ընդունած էր , կ'ըսէ առաքինին Մ . Հիւ , երկնային կերպարանք մը , իր ժամանակէն առաջ սրամտութիւն մը , զգայուն սիրտ մը և ամենէ մեծ յատկութիւններու ընձիւղը : Գեռ կանուխ հասակի մը մէջ այս իշխանին շորհալի և հանձարեղ սպտորատարանութիւնները ամենու զարմանքը կ'զբաւէին : Քանի քանի օրինակներ կան նկարագրելու ! »

« Օր մը իր դասին սրբապաճ ժամանակ սուլելուն համար յանդիմանուեցաւ : Թագուհին վրայ հաննելով երբ նա ալ քանի մը յանդիմանութիւններ կ'ընէր՝ « Մայր իմ , ըսաւ , դասս այնչափ գեշ կ'կրկնէի որ ես իմ վրայ սուլեցի : » Ուրիշ օր մը Պակաթէլի սարտիղին մէջ իր եռանդէու աշխուժէ գրգռուած այն ինչ ինքզինօք վարդենիներու թուփի մը մէջ պիտի նէտէր , վաղեցի անմիջապէս և « Իշխան , ըսի զան արդիլելով , այս փուշերէ մէկ հատը անգամ կրնայ ձեր աչքը հանել կամ գէմքերնիդ հերձտել : Գարձաւ այս խօսքին վրայ և ազնուական ու հաստատ կերպարանօք ինձ նայելով , « Փշալից ձամբաները , ըսաւ , փառաց կ'տանին » :

Թագուհին այս սրատասխանը իմանալով Մ . Հիւէն ան-

միջապէս թաղածատանցը բերել տուաւ. և ըստ անոր .
 «Շատ ճշմարիտ սկզբունք մը յայտնեցիր, բայց չկրցար
 սէտք եղած տեղը դործածել զայն : Միայն վազելու և
 խաղալու հայճոյքին համար աչք հանելուն մէջ ամենեւին
 փառք չկայ : Եթէ ինդիրը յորենի և վնասակար կեն-
 դանի մը մեռցնել, անձ մը՝ սեղէ ազատել, վերջապէս
 ուրիշի մը կեանքը ազատել, ամար իր կեանքը վտանդի
 մէջ գնել ըլլար՝ ան ասոն կրնար փառք ըսուիլ. բայց այս
 քու բրածը ուրիշ բան չէ եթէ ոչ անմտութիւն և ան-
 խոհեմութիւն : Սպասէ տղաս ուրիշ առթի մէջ փառքի
 վրայ խօսելու, սպասէ մինչև որ կարող ըլլաս քու նախ-
 նեաց և Քրանայի գիւցազներու պատմութիւնը կարդալ,
 որոնք, ինչպէս են Աէպէն, Պայար, Թիւրէն, ԿՆասա,
 և շատ ուրիշներ, իրենց արեան գնով պաշտպանեցին
 Քրանաս և մեր թագը” :

Քաղցրութեամբ և զորովով տրուած այս իրաւացի և
 կարևոր դասը խորին տպաւորութիւն մ’ըրաւ նորաստի իշ-
 խանին վրայ, որ ՚ի սկզբան սկսաւ շիկնիլ, և վերջէն մօ-
 ըրը ձեռքը բռնելով համբուրեց զան, և “Շատ աղէկ սի-
 բեղի մայր իմ, ըսաւ շնորհալի և պատրաստական կերպիւ,
 ինձ փառք՝ ձեր խորհուրդներու հետեւիս և ձեզ հա-
 զանդիլս պիտի սեպեմ” :

Բնաւ զառակ մը իր մօրը վրայ այսչափ սէր զգացած
 չունի. չկար խանդակաթ սիրոյ հաւատալիներ որ չ’փնտուէր
 անոր յայտնելու համար :

Գիտած ըլլալով որ իր մայրը ծաղիկներու սիրահար
 էր, ամէն առաւօտ իր առաջին զբաղումն էր սպասուհի մը
 և հաւատարիմ Մուֆէն մեկտէղ առած Աէրասլի պար-
 տէզներուն մէջ վազել և ծաղիկներու փունջեր կազմե-
 լով մօրը սենեակը դնել անոր ելնելէ առաջ : Ամէն օր
 նորանոր ծաղիկներու փունջ մը կ’գանէր իր զարգարանին
 վրայ, և երջանիկ մայրը կրնար տեսնել որ իր զաւկի ա-
 ռաջին զործը անոր առաւօտեան աղօթքին սէս իրեն հա-

մար նուիրուած էր : Երբ դէշ օդը արդեւք կ'ըլլար իրեն
հետևաբար և չէր կրնար պարտէզ երթալ ու ծաղիկներ
ժողկել՝ կ'ըսէր տրամութեամբ . “ Գոհ չեմ ես ինձմէ !
այսօր պիտի չ'կրնամ մօրս առաջին համբոյրին արժանի
ըլլալ :

Թաղաւորը իր տղուն սիրելու տրամադրութիւնները և
մօրը համար ունեցած ջերմեռանդութիւնը ճշմարիտ եր-
ջանկութեամբ միանգամայն և դորտլալիւ անձկութեամբ
մը կ'դիտէր : Հաճելի էր իրեն նոյն խկ անոր մարմնական
կրթութեանց ներկայ գտնուիլ : Գասատետերը կ'քննէր ,
ինք անձամբ կ'հարցափորձէր զանի անընդհատ , և վեր-
ջապէս խաղու մէջ կ'դիտէր զանի անոր ախորժները և
քննաորութիւնը առիթ առիթ հասկնալու համար ,

Կ'հրճուէր անոր մարմնական ոյժը և կարողութիւնը զար-
դացնելու համար ըրած մեղմ , ճիշդ և կանոնաւոր ձևերը
և թեքումները տեսնելով :

Անոր սրտի մէջ այս ախորժը մշակելու և անոր այս
տրամադրութիւնները քաջալերելու նպատակաւ ազարանի
ճեմելիքի վրայ և սենեակներու դիմաց մասնաւոր փոքրիկ
գետին մը յատկացուց , և տրամխ մը (Թօէր + Գոր-դը)
բահ մը (Գ-զ-) ցնցուղներ (* * * * *) և պարտիզպա-
նութեան բոլոր հարկաւոր դորձիները տալ տուաւ անոր :

Իշխանը իր դասերու պարապոյ միջոցները հոս առգ
անցնելով կ'ուզէր իր փոքր ծաղիցցի միակ պարտիզպանը
ինք ըլլալ , որ ստուգիւ բոլոր պարտիզի մաքրութենէ և
կանոնաւորութենէ ետ չէր մնար : “ Հայրս այս սարտէզը
տուաւ ինձ որպէս զի ես խնամեմ , ըսաւ օր մը , բայց ,
յաւելցուց քիչ մը կինաէ ետք և զմայլելի կերպով մը ,
եւ ուրիշ բան չեմ եթէ ոչ անոր վարձկանը , բէրբերը
մօրս կ'վերաբերին ” :

Մեծ տրախութիւն մ'էր իրեն համար իր ոսոյցած ծա-

ոստուններու աճիլը և ծաղկիլը տեսնել . իր ամէն առ-
տուան փունջերը հիմա աւելի զեղեցիկ կ'երևէին իրեն
քանի որ իր փոքրիկ հողի արգիւնաւորած ծաղիկներէն
կ'շինէր : Բարձրաստիճան պալատական մը որ մը տեսնելով
զանի որ բիրը ձեռքը առած պարտիզակի եզերը անանկ
մեծ եռանդով մը կ'բռէր որ ճակտէն քրտինքի հեղեղներ
կ'վազէին իր այտերու վրայ՝ ըսաւ անոր . « Յիրաւի այդ-
չափ խանջնալնիզ զարմանալի բան է , Իշխան , ինչո՞ւ չէք՝
խօսիր , պարտիզական մը ձեռքի մէկ հարուածով կրնա
այդ գործը ընել ձեզ համար . — Արեւի է , պատասխա-
նեց տղան , բայց այս ծաղիկները կ'ուզեմ և սէտք եմ ես
ինքս աճեցնել , մօրս այնչափ հաճելի շէն կ'նար ըլլալ
եթէ ուրիշ մը մշակէ զանոնք :

Թագաժառանգին ազնուութիւնը և սրամտութիւնը ար-
դէն պալատին մէջ հռչակ առած կ'սխտը աւելի հեռու
տարածուի , և սիրուն , փոքր իշխանին վրայօք պատմուած
շատ մը մտնաւոր պարագայները մեծ փափաք մը կու-
տային ամենու զանի տեսնելու և ճանչելու համար : Բա-
րիլի մէջ համբաւ ունեցող դպրոցի մը գաստիարակուհին
այս գիտաւորութեամբ որ մը Յէն-Քլու եկաւ , և իրեն
հետ եղած երեք աշակերտներով թագաժառանգը տեսնե-
լու համար թոյլտուութիւն ինդրելը պալատուհիի մ'ի-
մացոց : Թագուհին անոյժապէս հրամանը շնորհեց , և
զանոնք աւելի պատուելու համար ուզեց նախ ինք ընդու-
նիլ գաստիարակուհին և իր աշակերտները և անձամբ
ներկայացնել զանոնք իր տղուն : Երեք նորասփ անձերը
և իրենց վարժուհին սրտերնուն մէջ զգացած յուզում-
կ'դողային , բայց թագուհոյն ակնածելի վեհանձնութիւնը
մեղմ և մարդասէր կերպարանք մ'առաւ զանոնք սպա-
հովելու համար : Գեռ չ'մեկնած գաստիարակուհին ար-
քայորդոյն ձեռքը համբուրելու թոյլտուութիւն ինդրած

ըլլալով իր աշակերտաց համար՝ Կշիանը այնպիսի շնորհալի և հրապուրիչ կերպով մը անոնց այս բաղձանքը դործադրելու փութաց, որ միանգամայն կ'քաշուէր և անհանդատութիւն մը կ'զգար մօրը այսպիսի արտօնութիւն մը շնորհելուն վրայ : Յետոյ իր փոքրիկ ձեռքը ետ քաշելով զոր երիտասարդ աղջիկները այն ինչ համբուրած էին, յարգական կերպարանքով քիչ մը հեռու կայնած վարժուհւոյն մօտեցաւ ինքնին, և անոր հասակին ու ատիւծանին յարմար զգացումով և իր նշուլազարդ գլուխը վեր վերցուցած ըսաւ անոր : « Գուք, տիկին, ճակտէս համբուրեցէք խնդրեմ » :

Եթէ այս տեսութիւնը, այս խօսքերը նորատի իշխանին դիւրազգածութեան վրայ դադարաբար մը կուտան՝ հետեւեալ դէպքը անոր ինչ ատիւծան արդարամիտ ըլլալը պիտի հաստատէ : Օր մը ժուռ եկած ժամանակ իրեն հետ ընկերանալու պաշտօն ունեցող նորատի սպասիկի մը սրինգը գողցած և չարութեամբ պարտիզի Շեմելքին վրայ եղած դեղձի (« երէնս աղածը ») ծառի մը մէջ պահած էր : Այս խորամանկութիւնը թաղուհւոյն ակաջը հասնելով հարկաւոր դատեց պատժել հեղինակը, և այսանգամ ուղեց այս տալիք պատիժը ոչ թէ իր անձին՝ այլ իրեն սիրելի եղած առարկայի մը վրայ յատկացնել : Խեղճ Մուֆլէ իր տիրոջ խորամանկութեան պատիժը ինք կրեց : անոր բոլոր խաղերու մէջ ընկերակից ըլլալով այս գործին մէջ անոր մեղսակից դատուեցաւ և բանտարկութեան դատապարտուեցաւ անոր համար : Մութ խօսքի մը մէջ փակուած, զգիւեւելով իր ազատութենէ և իր երիտասարդ տիրոջ տեսութենէն, խեղճ կենդանին սկսաւ դուռը դափրել, խանչել, լալ և բուրբ ուժովը հասել : Անոր լալազին ձայները բուն յանցաւորի սրտին ազդեցին, որ իր սիրելի շան համար կարեկ-

ցութեամբ լեցուած և բոլորովին արտատալից աճապարից
 թագուհին դաննել : “ Բայց մայր իմ , յանցանքը դործողը
 Մտֆլէն չէ , ըստ , նոյնպէս պատիժը կրողը պէտք չէ
 Մտֆլէն ըլլայ . խնդրեմ մայր իմ , ազատեցէք զան , և
 անոր տեղ թողէք որ ես մաննեմ ” : Այս շնորհը ստանալով
 նորաստի իշխանը ստուգիւ անմեղին տեղ գնաց ինք մտաւ ,
 և ինքզինք բանտի դատաբարտեց նոյն իսկ որոշուած պայ-
 մանաժամէն աւելի : Ասկէ զատ բանտի առանձնութեան մէջ
 սկսաւ իր վարմունքի վրայ մտածել և ըստ իւրովի , թէ իր
 յանցանքը քառուէր անդամ՝ հատուցումը չէր կրնար տրու-
 ած ըլլալ , և ազատութիւնը վերստին ստանալէ ետք իր
 առաջին դործը եղաւ սրբաէղ երթալ և սրինդը պահած
 տեղէն հաննելով իր ընկերակցին վերադարձնել :

Եթէ ժողովրդեան նորաստի զաւակի մը վրայ՝ մտածե-
 լու և դործելու այսպիսի եղանակ մը ստուգիւ մեծ արժէք
 ունի , հասկա որչափ աւելի գոլութեան արժանի չսեպտիբ
 եթէ թագաւորի մը աղուն վրայ տեսնուի այն , որ հակա-
 ոակ հայրական զգուշութեանց մանաւանդ թէ առօրեայ
 սրբազաններէ ստիպուած՝ իր բոլորտիքը գանուող պատուա-
 դիրերու շողորթութեանց յանձնուած է :

Արքայական որրանը շնորհաւորող ուրախութեանց շատ
 չուշացան մարգարէական երկիրդներ և սոսկումներ խառ-
 նուիլ : Անձայն յուզումները արդէն սկսած էին շուկ հա-
 ննել : “ Երբ ՚ի նորոյ ծնունդ առած ցնցիւններ ախար դէպ-
 քեր կ'ծանուցանէին :

Գործուած պակասութիւնները , անմտաբար վորձու-
 ած խնայողութիւնները , թագաւորին անփորձութենէ տե-
 ղի ունեցած անխոհեմութիւնները , իր տկարութենէ կոր-
 զուած թոյլտուութիւնները , աղետալի չքաւորութիւնները ,
 ողմկալի շարժումները , այս իշխանութեան հորիզոնին
 վրայ շողացող յոյսերը և ակնկալութիւնները ջրուած էին :

Գանճոյին և քաղաքական ազէտներ կ'մտակ ին Գրանտայի վրայ թափել : Չորս տարի առաջ Լուի ԺՁ. ճամբայ հանած էր Լա Բէրուզ որ ծովերու մէջէ պիտ' անցնէր երթար . թաղաւորը և նաւատին հրաժարական ողջոյն փոխանակած էին իրարու : Լա Բէրուզ մեկնեցաւ այն հեռաւոր ծովեզրերու համար ուսիէ ետ չ'դարձաւ . և թաղաւորը ինք' յեղափոխութեանց ովկիանոսին համար կ'մեկնէր ուսիէ նմանապէս պիտի չ'կրնար ետ դառնալ : Տանն և ութերորդ դարը ընկերային վաղեմի դրութեան բոլոր հիմները շարժած' և յանդուդն նորաձեւութիւններով այնպիսի փոթորիկներ պատճառած էր՝ որոնք անոր վերջին տարիները պիտի նշանակէին : Այն ինչ ժողովներու մէջ կիրպերը յուզուած և սկսած էին արդէն փողոցներու մէջ տարածուիլ՝ թագաժառանգը առանց մեծ վրդովում մը զգալու այս աղմուկներէ , և մի վիայն իր մօր անհանգստութիւն պատճառած երևելնին հոգ ընելով իր զրօսանքի ժամերը պարտիզի մէջ կ'անցնէր խաղաղութեամբ :

Իր ծաղիկներու աճիլը մեծ եռանդով և ուշադրութեամբ կ'նշմարէր , առջի իրիկունէ նշանակելով զանոնք՝ որոցմտի պիտի կրնար հեռուեալ առստ փունջը շինել իր մօր համար : Օր մը սրարզմտութեամբ և առանց նշմարելու փունջին մէջ քանի մ'օրածաղիկներ¹ (Souci) խառնած էր , և զանի իջմօր նրկայացուցած վայրկենին հասկնալով ըրածը՝ անմիջապէս զանոնք խելով « Ոհ , մայր իմ , ըստ . , արդէն բաւական ունիք ուրիշ կաղմէ » :

Ուրիշ օր մը Լուի ԺՁ. գանի իր քով կանչած ըլլալով այն ինչ այսպէս կ'խօսէր անոր , « Գիտես որ վտղը մօրդ տօնախմբութիւնն է հետեւարար և մեծ օր մը , հարէ որ արաքոյ կարգի փունջ մի պատրաստես , և կ'ուկլեմ որ նուէրիդ հետ ընելիք բարմաղթութիւնը դու ինք-

1 (Souci) (—) բաւը վիշտ ալ կ'նշանակէ :

նին շարագրես», — «Հայր իմ, պաաստիանեց, գեղեցիկ անթարշամ (immortelle) մ'ունիմ պարտիզիս մէջ, որ իմ փունջը միանգամայն և բարեմաղթութիւնը պիտ' ըլլայ. զանի մօրս ներկայացուցած ատեն պիտ' ըսեմ անոր, Կ'փախարիմ որ մայրս այս ծաղիկն նմանի :

Սակայն թողունք հիմա սոյն բնակարանը և պարտեզը, ուր այս տղու վերջին գեղեցիկ օրերը խաղաղութեամբ կ'սահէին, և արագ ակնաբեր մը նետները դուրսը, վասն զի յեղաշրջումը պիտի չուշանայ զալ անոր նախահարց պալատի դռները բազխելու :

1789 Յունիս 17 էն 'ի վեր Թիէրսի (ժողովուրդեան ներկայացուցիչներ) պատգամաւորները, որոց կրկին երեսփոխանութեան արտօնութիւն շնորհուած էր, ընդհանուր ժողովներու միութիւնը հրատարակած և Ազգային ժողովի տիպոսը յափշտակած էին : Աւելի աղէկ է քաղաքային ժողովներու շնորհել ինչ որ առաջադրած են առնելու : Ամենէ մահաբեր սխալումը՝ անոնց ստացած իրաւունքն ըլլա մերժել էպք, անոնց գէ՛մ գիմադրութիւն մ'ընելու սկսիլն է, առանց կամք և կարողութիւն ունենալու զանի մինչև իր նպատակին մղելու համար :

Աւարդարև կառավարութիւնը այս կերպիս թէ իր գլխավորութեան զազանիքը և թէ ժողովուրդին չօրսաոր ըլլալը կ'յայտնէ անոնց. անատեն կիրքը կ'մղէ զանոնք՝ երկուքն ալ շարշար գործածելու, կարծելով թէ ամէն տեղ մէկուն ճանբուն մէջ միւսին հետերը կ'տեսնեն : Ահա այս վտանգաւոր շտղին մէջն էր այն ինչ Առի թ.Ձ. որ Յունիս 28ի նիստէն վերջը Թիէրսի ժողովը լուծելու փորձ ըրած էր՝ գնտախաղի (jeu de paume)¹ նիստին մէջ ուժէ ինկալ :

1 Ազգային ժողովը պատգամաւորները իրենց սովորական ժողովատեղիէն արտաքսուելէն ետք, Ալէքսըն Ա. Ֆրանսուս փողոցը եղած գնտախաղի զբօսարանին մէջ ժողով կազմեցին, և երգում ըրին հան որ Ֆրանսուսի սահմանադրութիւն մը չ'աւուած չ'բաժնուին իրարմէ : Ասոր հա՛նր սոյն նիստը ժողով գնտախաղի (séance du Jeu de Paume) ըսուեցաւ :

Այս օրէ սկսեալ կառավարութեան և յեղափոխութեան մէջ խնդիրը ծագեցաւ, ամէն հասարակչութեան կարուկցաւ կառավարութեան և ժողովին մէջ որ այս կացութեան տէրն էր, և որու մէջ Թիէրսը իր զօրութիւնը միանգամայն և անյաջողութիւնը զգալով ծանրակշիռ ազդեցութիւն մը ձեռք անցուցած էր: Ալ այնուհետէ յառաջագէմ, կանոնուած և սահմանափակ բարելաւութիւնները վերջ ունեցան, խաղաղ և կանոնաոր բարեկարգութիւնը տեղ կ'ընենար յեղափոխութեան: Ժողովը կ'ուղէր տէրութեան իշխել և միջոցը իսկ գիտեր այս բանին, սակայն այս իշխողութիւնը ՚ի գործ դնելու համար պէտք էր հրաւեր կարգալ ժողովուրդը զինեալ փողոց թափելու, և կառավարութեան լուծը թոթափելու համար ամբոխին նսրասար և քիչ ատենէ անոր լուծը ընդունիլ:

Այս կերպարանելու սկսող կացութեան ազդեցութեանը տակ Ֆրանսա սուսերամարտերու ասպարէզ մը կ'զատնայ, զատուոններէ եկած լուրերը ամէն օր ասպարաններու և գիււաններու հրդեհ, խռովութիւններ և մարդաստղանութիւններ կ'ծանուցանեն. մտքերու եռացումը իր վերջին կէտը հասած է: Թագաւորը փորձ կ'ընէ ազատութեան քանի մը միջոցներ ձեռք առնուլ, ասաներկու հազարի չափ զօրք կ'ըրկէ որոնք Բարիզի և Աերսայլի մէջ կ'տարածուին. բեմը Միրասոյի ահարկու գոչիւնները կ'զոռայ, և զօրքերու ետ զըկուիլը կ'ուզուի:

Նէքէր Յունիս ՎՎ ին պաշտօնատուներ կ'ընողու և Բարիզէ կ'հեռանայ: Նէքէր իր ժողովրդայնութիւնը աւելի բազմութիւնը շողջորթելու կերպերով պատրաստուած իր նորասիրական խօսքերու կը պարտաւորէր քան թէ օգտաւէտ գործերու: Գահը անոր համար քիչ համակրութիւն ունէր, և ասի հասկնալը գիւրին է. Սենեկա մեզ

կը սովորեցնէ որ «Իշխաններու հաճելի ըլլալու համար սէտք է անոնց շատ ծառայութիւններ մատուցանել և քիչ խօսիլ» : Նէքէր բոլորովին հակառակը ըրած էր : ԱՉի իրիկուն իր մեկնելու լուրը կ'տարածուի , Բարիզ կը զարմանայ , Բարիզ կ'սրտմտի . սրայթումի նշանը տրուած է , թատրոնները ամայի , խանութները կ'զոյցուին , սրճարանները կ'լէցուին , փողոցները կ'բզզան , բազմութիւնը Բալէ Բոյալ կ'խոնի , Օրլէանի դուքսին և Նէքէրի կ'խարձանները կ'բերուին յաղթանակաւ : Քամիներ Տէմուլէն , անատեն յեղաշրջումի այս յաջողութիւններէն շտայտացած , որ զանի մեռնելու սխաի նշանակէր , փեղոյրի համար կանաչ ժապաւէններ ցրուելով առաջին անգամ զէնքի հրաւիրողը ինք կըլլայ . Ժողովակները (club) փողոց կ'իջնեն , վաճառի զանգակը կ'հնչէ , հուրը սպաննէ շներու մէջ կ'երևի , ամէնպէս ոտքի կ'եննեն , կ'խաձայտեն , կ'ոտնան . բովանդակ Բարիզ հնոցին մէջ կ'գանուի . յեղաշրջումը իր դէմքը կ'յայտնէ :

Այսրկեան մը գինորական միջոցներու ձեռք կը զարնուի , բայց 'ի զուր . զօրքերը ոչ կարդ ունին և ոչ կը գործեն . սահապան զօրաց դունդը կ'շահուի : Ապտամբութիւնը իր յաջողութիւններէ աւելի ևս ստուարանալով կարևորութիւն կ'առնու , կ'կանոնաորուի , կ'գլխէ որ առջի օրուան ընդունուած կանաչ ժապաւէնը Արդուայի կոմսի ծառաներուն նշանազոյնտի գոյնը ունէր , ոտտի կը մերժէ զանի և կասպոյտ , կարմիր ու ճերմակ եռագոյն ժապաւէնը կ'ընդունի . Կնովալիա վազելով մէջը գտնուած զէնքերը կ'զրաւէ և Պասթիլի վրայ կը քալէ (ԱՂ Յուլիս 1789) : Տխուր սրտմտութիւններով լի այս ամբողջին յարձակումը և առնուիլը մէկ կ'ըլլայ , անթուրի բազմութիւն մը կ'զրաւէ զանի և անոր կառավարիչը միանգամայն քանի մը անգէն անկարներ կ'սպաննէ : Մ . տը Ֆլէսէլ Բարիզի քաղաքային ժողովոյ առջին դատաւորը ստորձանակի մը հարուածէ կ'իյնայ կ'մեռնի : Պայլի անոր տեղ :

կանցնի բայց Բարիզի քաղաքապետ անունով: Թագաւորը Ազգային ժողովը կերթայ, զօրայ խումբերը կարձակուին, Լա Գայէթ պաշտօն կաւնու ազգային սահասարան զօրը կազմելու: Թագաւորը հետիոտս պալատը դառնալով սահաշղատիքը կերնէ, թագուհին և իր զուակները անոր հետ մեկտեղ կերեին: ուրախութեան աղաղակներ կ'սկսին լսուիլ: Թագաւորական ընտանիքը պատշգամբէն իջնելով մատուռը կերթայ որպէս զի սեղանին առջև իր վիշտերու համար սիրտով մի գանէ: Յեղաշրջումը Յուլիս Աէն'ի վեր կատարեցաւ իրօք. ամէն բան իշխանութեանց զէմ կ'դառնայ սատղիւ, երբ գործերու սկզբնաւորութեան մէջ ինքզինքնին պաշտպանելու անխորոզ ըլլալին կ'հասկնան: Այն տեղերու, ինչպէս յեղափոխութեան նոյնպէս և սատեքազմներէ վերջը, վայ յազմուողներու: Ամէն մէկ զէշ մտածուած և զէշ գործողութեամբ ընդդիմութիւնները անդամ զէպ' ետ նոր քայլ մ'աւնուլ կուտային: Թագաւորութեան նահանջը (retraite) փախուստի կերպարանք կ'աւնուր:

Այս վտանգաւոր սարազաններու մէջ թագաւորը և թագուհին աւանց ցատի կ'սենսնեն իրենց հարստակներէ ոմանց հեռանալը, որոնք ամէնէ հաւատարիմ և մտերիմ կերեւէին իրենց, նոյնպէս և իրենց սարսաւորներէ շատերը կ'յորդորէին իրենցմէ հեռանալ. ուհա այս կերպիւ զաղթ թակահարութիւնը սկսաւ. Բօլինարի ընտանիքը մինչև ուրիշներու նախանձը զրգոող սէր և շնորհներ կ'վայելէր պալատին մէջ, և սակայն չ'կար ընտանիք մը զոր բամբասանքը աւելի ատելութեամբ նշանակած չ'ըլլար ժողովուրդի կատարութեան: Թագուհին կ'հրամայէ Բօլինարի դքսուհոյն քաշուիլ, դքսուհին չ'ուզէր հաւանիլ. « Աւրեմն իմ անհանգստութիւնները աւելցնել և նոր տատապանք մը տալ կ'ուզես ինձ, » կ'ըսէ Մարի-Անթուանէթ

Մատամ' ար Քօլինեայք չ'ուզած էր ընառ հաւանիլ իր բարեկամին սակայն թագուհւոյն կ'հնազանդի : Զուրերը երթալու սրատրուակաւ Ստիա քաշուելով անկէ Աւստրիա կ'անցնի : Բայց որովհետեւ արքայորդւոց կառավարչուհին չ'կրնար բացակայանալ՝ իր հրաժարականը տալու կ'ստիպուի : Մարի-Անդուանէթ Թուրզէլի մարքիզուհին կ'ընտրէ որ ամէն ատեն մեծ կարեւորութիւն ունեցող բայց ներկային մէջ վտանգաւոր պաշտօններ կատարէ : Քիչ մը վերջը թագաւորական ընտանիքը ընկճող աղէտները Մատամ' Թուրզէլի վրայ ալ անգթարար ծանրացան : սրտ քաջասիրտ հաւատարմութիւնը թագուհւոյն անոր ըսած խօսքերը աշխարհարար արդարացոյց այն ինչ իր պաշտօնին կ'անուանէր զանի : «Թէ բարեկամութեան վստահացած ստապինտութեան անդ կուտամ» :

Անանկ ատեն մը որ չարախօսութիւնը զՄարի-Անդուանէթ իբր զլիտովին զուարճութիւններու և նանիք զբօսանքներու յանձնած կ'նեղկայացնէր՝ նա օրուան ամենեւեմ մասը մայրական սրտատարութեանց կ'ըզհէր : Աչքէ չէր հեռացնէր ընառ իր զուակնեցորդ, ժամը տասին երկրորդական կառավարչուհի մը կ'բերէր զանոնք իրենց մօր քով, որոն ներկայութեան տարբեր ուսուցիչներէ իրենց դասերը կ'առնուին : Արդէն սպառնացող սպաղայի մը անհանգստութիւնները եւ երկիւղները իր գործունեաց անսշութիւնը եւ իր գորովալիբ խնամքը աւելցնել կուտային, որոնք արդէն երջանկութիւն մը երեկ, եւ այսօր միտիթարութիւն մը կ'ըլլային իրեն համար :

Քանի որ գեռ Աւերայլի մէջն ենք, վտժանք հարեւանցի մը թագուհւոյն նկարագիրը ընել իր վերջի աղէկ օրերուն մէջ, որովհետեւ այս թագուհւոյն այնչափ բամբաստած վերջի զեղեցիկ օրերը, անցելոյն մէջ քաղաքալանութենէ բամբաստած և մեր ժամանակի մէջ

պատմութենէ, անդառնալի կերպիւ վերջանալու կ'մտաին ։
 Հստակ չէր ինք, սակայն սովորած ըլլալով բոլոր վնաս-
 քը շրջապատողներու իշխել՝ իր բնաւորութեան մէջ ամէն
 հստակութենէ զուրկ տեսակ մը պարզմտութիւնը և անկեղ-
 ծութիւնը զինքը դերագոյն կ'հանդիսացնէին բոլոր կիներ-
 քէ ։ Մեծութեանց համար պատիւ ակնկալութիւնն ըր ու-
 բոնցմով մանկութենէ զանի մտայած էին, ժողովուրդներ-
 քու զարմացումը, իր նախորդաց փառաւոր յիշատակը,
 ախեղերի ամէնէ գեղեցիկ գահին վրայ բազմած ըլլալու
 մտածումը, ամէն բան իրեն պատուանդան մը կ'ներկա-
 յէին, ուր անոր ոտքերու հաւասար կ'դնէր բազմութեան
 դուլները ։

Իր չքնաղ կերպարանքը, միտքը, շնորհալիութիւնը,
 ինչպէս և իր աստիճանը, երջանիկ էակներու կարգը գա-
 սել կ'երեւէին զանի ։ Իր թարմ առատօսները կ'անհետէին
 հրապոյրներով և իր երիտասարդ կեանքը քաղցր և մաքուր
 կիւքերու հեշտալի պատրանքով ։ Թշուառի մը հանդիպած
 ժամանակ բնաւ անզգայ չ'ըլլալով միշտ իր սրտի կանչած
 տեղը կ'երթար, և սիրտը դէպ ՚ի տառապողներու կ'մղէր
 զանի ամէն ատեն ։

Հասարակաց սիրոյ երջանիկ մակերևոյթին վրայ, բար-
 ձրութեան համար սահմանուած իր ժամերը բնաւ առանձ-
 նութեան մէջ չ'անցնելով իր արքայական սիրտը բարեկա-
 մութեան սրտին մէջ կ'սիրէր զուարթմանալ ։

Սակայն վտանգի և թշուառութեան օրերու մէջ չէր
 միայն որ Մարի-Անդուանէթի սրտաուշ յատկութիւնները
 երևան ելան ։

Տակաւին ոչ մարդերէ և ոչ բաղդէ յտաջ եկած նա-
 խատիւնքի մը ենթակայ եղած՝ դեռ ամէն բան երջանկութիւն
 էին իր բոլորակը, և իր սիրտը ասպատանարան մ'էր ար-
 դէն ամէնէ կարևոր մտածումներու և ամէնէ առատաձեռն
 զգայմանց ։

Փիլիսոփայութեան այս դարը , այս խաբող լոյսի և ազէտայլի փայլալներու դարը , իր սրանալու ասին մարտը և բարերար ճառագայթ մը կ'ընդունէր այն երիտասարդ թագուհիէն՝ զոր վատանուն սարսաւազները մինչև նահատակութեան փառքին մէջ հալածելու կ'մօտէին . մեռնելու վրայ եղող թագաւորութիւնը վայրկեան մ'անով իր վեհանաճի գուարթութիւնը և իր ասպետական բնաւորութիւնը կրկին նստցաւ :

Գծրաղղաբար թագուհին դահլը ելած ժամանակ թագաւորին պէս մի է նոյն անխորձատութիւնը ունէր . ամէն բան , թէ իր ձիրքերը և թէ պակասութիւնները , թէ իր մարի կատարելութիւնները և թէ թերութիւնները , ամէն մէկու արժէքը հասկնալու և ճանչելու համար , իր բնաւորութեան գուարթութիւնը , իր սովորութեանց պարզութիւնը , իր բարեկամութեանց կենդանութիւնը և հաստատութիւնը իրեն դէմ դարձան :

Բամբասանքը իր որսին պէս ձեռք դրաւ անոր վրայ , սեցոց բոլոր ընթացքը , ատելի բրաւ անոր բոլոր խօսքերը , թունաւորեց բոլոր գործերը , և անոր շուրջը այնպիսի կատաղի ատելութիւններ սերմանեց՝ որոնք վերջապէս զանի պիտի խեղդէին :

Թագաւորը Յուլիս ԱՂին , որչափ որ չարագուշակ նշաններ կ'ընմարէին , ուղեց իր Բարիդ դառնալու համար տուած խօստումը կատարել , իր ընտանիքի ամէնէ սրտառուջ հրաժարականներ տալէ վերջը ժամը ԱՂին կառք մտաւ : Թագուհին Ղուի ԺՁի անյնտեղիք օրերուն համար սրտազող բոլոր նոյն օրը ամէնէ մեծ վախերով և սոսկումներով անցուց . իր զուակները վայրկեան մ'անգամ իրմէ չբաժնուեցան : Թագաժառանգը ուղեւով իր հօր վերահարձի առաջին աւետողը ինք ըլլալ՝ շարունակ սրտուհանք երթալով , « պիտի վերագառնայ , մայր իմ , կ'պուար ,

«ի որ վերադառնայ . հայրս այնչափ բարի է որ չեն կըր-
ար անոր գէշութիւն մ'ընել :» Գարձաւ թաղաւ որը , կառ-
քէն թաղուհոյն և անկէ իր զաւակաց զիւրը նետուեցաւ .
Վէրսայլի ուրախութիւնը անպատմելի էր . ժողովուրդը
նարմարեայ բակը մտաւ ժապաւէններով զարգարուած
մուռնենիի ոստերով , որոնք զիշերուան մթութեան մէջ ձի-
թենիի ձիւղեր կ'երևէին . եռանդազին և ուրախութեանա-
զազակները երկու անգամ թարաւորը պատշգամբին վրայ
երևցուցին իր ընտանիքով : Սակայն այս գիշեր չէր կրնար
առաջն օրուան տառապանքները մոռցնել տալ . իր եան
Քարիզի մէջ թողուցած փոթորիկը օրէ օր կ'սպառնար
գալ և Վերսայլի վրայ յարձակիլ :

Երկար ատենէ ՚ի վեր խոռվարարները պատեհ առիթ
մը կ'գիտէին կռիւ մը յարուցանելու համար : « Երկայաց-
ման սրահին մէջ թաղաւորին անձնապահ զօրքերը Վէր-
սայլի պահպանութիւնը ընելու համար եկող Ֆլանարի
գունդին հացկերոյթ մը տուած ըլլալով (Վ Հոկ . 1789)
թաղաւորական ընտանիքը իր ներկայութեամբ վայրկեան
մը պատուած էր զայն : Սակայն պարաղլուխները իսկոյն
գէշ մեկնութիւններ տուին այս պարաղլային , և իրենց
պատրուակ ըրին յեղափոխութեան նշանը տալու համար :
Սուտ զրոյցները կ'տարածուին ժողովրդեան մէջ , ամբաս-
տանութիւններ երևան կ'երևնն , զայրոյթները կ'հրապար-
բակուին , կատաղիներու խումբ մը մայրաքաղաքին մէջ կը
վազվզէ պոռալով . Հաց ! հաց ! Թմբուկը կ'զարնէ , վտան-
գի զանգակը կ'հնչուի , արտարձաններու ժողովուրդը
կ'հաւարուի և ճանբայ կ'երևէ (Յ Հոկ) . հերարձակ կիներ
և զինով մարդեր ուղեկցութեան առաջնորդ կ'ըլլան որ եր-
երթալով կ'ստուարանայ քաղաքի փողոցներու մէջ : Գրդխ
տուռնները տապարով և գանակով զինեալ ազգային պա-
հպան զօրաց հետ կ'խառնուին և Վա Ֆայէթը կ'ըջապա-

Թե՛ն որ կ'ստիպուի անոնց Աւերայլ ստաջնորդել: Ժամը
 վեցին Բարիլ առաջնորդող ճանրուն վրայ թանձր մարա-
 խողի մը մէջէ այս կիներու բազմութիւնը կ'երևի որոնք
 Բարիլեան բանակի յառաջապահները կ'կազմեն: Դէպ 'ի
 պարտաւր կ'յառաջանան և պատգամաւորութիւն մը կ'ըրկեն:
 Առի Շապրի խօսելու պաշտօն ունենալով ժողովուրդի
 չքաւորութեան և թշուառութեան վրայ քանի մը խօսք
 կ'թողնուէ, և կարծես թէ նուազելու կ'մօտի այնչափ թա-
 գաւորին հաստատ կերպարանքը և սպահով նայուածքի
 զարմացմամբ և յարզանօք պաշարած էր զանի: « Բարե-
 կամեններս, ըստ անոնց, եթէ դուք թշուառ էք՝ յանցանքը
 իմն չէ, ես ձեզմէ աւելի թշուառ եմ: Քօրպէյլի և Է-
 թամբի ցորենի շտեմարաններու վերակապուաց հրաման
 պիտ' ընեմ հիմա որպէս զի կրցածնուն չափ ձեռք անցու-
 ցած ցորենը և ալիւրը յանձնեն: Երանի թէ այս հրա-
 մաններս մինչև այսօր տուածներէս աւելի ազէկ ըուէին»:

Անիծելու համար վարձուած կիները ստիպուեցան օրհ-
 ները կարդալ, մահու սպառնալիքներ արտասանելու հա-
 մար եկած՝ Աւերայլ Բարիլը ազազակներով մեկնեցան: Այս
 անակնկալ ազազակին ստեղծութեան և կատաղութեան գո-
 չիւնները կ'պատասխանեն, ինքզ Առի Շապրի որ հաց
 ուղեւուն սոսկ սրատրուակ մ'ըլլալը չ'զիտէր՝ քիչ մնաց
 պիտի կախուէր եթէ քանի մ'անձնապահներ բազմութիւնը
 ձեղքելով չ'սպատէին զանի կատաղիներու ձեռքէ:

Սակայն պարտին ամէն կողմը դժոխային կատաղիներու
 վտարանդիներ կ'սրբաշային, զորս ոճիրը Բարիլի տիղմերու
 մէջէ ժողուած էր Աւերայլի վրայ մղելու համար, և իրենց
 հետ մէկտեղ կ'հասնէին գարշատեսիլ և պատառուած ըզ-
 գեստներով գունդերը, ըստ զիպայ՝ տասպարներով և գա-
 ւազաններով, նիզակներով և գանակներով վննեալ, որոց-
 մէ յեղափոխութիւնը հիմա իր ճակատամարտները կ'կազ-
 մէր: Աւերջապէս Քարիլի վննորական կանսնաւոր գոհուեց

բը անոնց ետեւէ, իրենց գլուխ այնպիսի մէկը ունենալով՝ զոր աւելի շարժումը կ' մղէ քան ինք կ' առաջնորդէ, ազնուական ոգւոյ տէր սակայն սթափիր ակնկալութիւններով և տարտամութիւններով լի, որ իր կեանքը թերևս հիմակուան արդիւիւլ ուղած բանը պատրաստելու համար անցուցած էր, և որ կ' տեսնէր զարմացմամբ իր չուղած հետեւանքները որոնք իր ուղած պատճառներէ տեղի կ' ունենային :

Լա Ֆայէթ ուրեմն եկած էր իր թագաւորի օգնութեան, զոր կ' ուզէր ազատել սակայն կ' վախնար զօրայրներու, բայց և այնպէս ինք կ' վստահի և կ' ապահովէ թագաւորը, իր գլխու վրայ խօսք կուտայ պալատի մէջ եղողներու ֆլաս մը չ' հասնելու համար, քանի մը հրամաններ կ' ընէ, պահնորդներ կ' տեղաւորէ, ատենաբանութիւն մը կ' ընէ ազգային պահասան զօրաց և Բօայլ պանդուկը կը քաշուի քիչ մը հանդատանալու համար : Բայց ոճիրը չեննջէր, և օրը ծագելէ առաջ (Տ հոկ 89) պալատի վանդակապատները կ' խորտակէ, թագաւորական ընտանիքի սենեակները կ' սրաշարէ, թագուհոյն սենեակը առաջնորդելու ճանքան դացող անձնապահները կ' սպաննէ : Իրենց կառտաղութեան մէջ թաթխուած մարդասպանները կ' երթան Մարի-Անդուանէթի անլոյինը դաշոյնի հարուածներով կը պատառեն, ուսկից թագուհին կէս հաղուած ինքզինքը դուրս նետած էր :

Թագաւորը դողալով որ իր զաւակին ֆլաս մը չ' հասնի՝ այս թանկազին տղուն սենեակը վազելով գրկացը մէջ կ' առնու զայն և ստորերկրեայ մութ տեղէ մը կ' անցնի մարդասպաններու տեսութենէն խոյս տալու համար . ճանքան ճրագը կը մարի, ուստի խարխափելով իր սենեակը կ' հասնի ուր կը գտնէ թագուհին որ գիշերազգեստ մը իր ուսերու վրայ առած հոն եկած էր ապաստանելու, իրեն հետ են նաև իր

աղջիկը Մատամ Բոյալ, Մճնաիէօ Թագաւորին եղբայրը, Մատամ Ելիզապէթ և Թուրդէլի մարբիզուհին ։ Թագաւորական ընտանիքը այսպէս մէկտեղ ժողովուած՝ աւելի քիչ սոսկումով իրեն սպառնացող ճակատադրին կ'սպասէ ։

Աւերջապէս Լա Ֆայէթ կ'երևի և բազմութիւնը դուրս կ'հանէ պալատէն ։ յանուն ժողովրդի կ'աբահանջէ Թագաւորէն որ նոյն օրէ սկսի իր բնակութիւնը Բարիդի մէջ հաստատել, միանգամայն ահարկու գոյներով կ'նկարէ անոր այն վտանգները որ եթէ մերժելու ըլլար կրնային պատահիլ ։ Մուկեղիններու խռովանքը պալատէն արտաքսուելով ետ կ'քաշուի, կրիկն կը մթնայ, կ'եռայ, պալատի բակը աղաղակներով կ'լինցնէ և ահագին գոչիւններով Թագաւորը կ'ուզէ տեսնել ։ Երաւամբ, ահաբեկեալ ծառայները կ'պաղատին իշխանին որ ժողովրդեան այս կտակը չ'կատարէ ։ Թագաւորը խոհեմութեան սնէն առջարարութիւն կ'մերժէ և պատշգամբին վրայ ելնելով անձամբ կ'իմացնէ որ իր բոլոր ընտանիքի հետ անմիջապէս Բարիդ պիտի դառնայ ։ — « Թագուհին թող ելնի ! » կ'աբահանջին բազմութեան մէջէ քանի մը հօգի. Թագուհին մէկ ձեռքով իր տղան և միւսով իր աղջիկը լուծած կ'առաջանայ. ասոր վրայ աղաղակները կ'աւելնան. « Թագուհին առանձին ! առանց զաւակներու ! Թագուհին առանձին ! » Թագաւորը կ'ուզէ խօսիլ, բայց աղաղակները անոք ձայն ընկաբանեն ։ ուստի Թագուհին և զաւակները հետը առած կ'քաշուի, աղաղակները կ'կրկնապատակին. « Թագուհին առանց զաւակաց ! Թագուհին միայն, Թագուհին ! » Այս փափաքէն գուշակուած սպառնացող դիւաւաններէն առանց զարհուրելու՝ Թագուհին զաւակները իրենց հօր յանձնելէ վերջը պատշգամբը կ'դիմէ, առանձին, անվեհեր, երկրի սպառնալիքներու և երկնից լքումին մէջ տեղ, ձեռքօրը խաչաձև իր կործարին վրայ զետեղած իր հայեցուածքը վեհափառու

Թեամբ բազմութեան վրայ կ'ժողովուրդէ :

Ժողովուրդը զարմացմամբ սլաշտրուած կ'սկսի ծափա-
հարել . ապստամբութիւնը շուարած կ'մնայ :

Մարի-Անդուանէթ թագաւորին քով գալով և իր տը-
ղան գրկացը մէջ սեղմած այսպէս կը խօսի սրտի յուզու-
մով : « Խոստացէք ինձ Իշխան , կ'սպառախիմ ձեզ , յանուն
ձեզ ամենէ սիրելի եղած բանին , Ֆրանսայի , ձեր , և
այս սիրելի զաւակին կենաց համար , ո՛հ , խոստացէք ինձ ,
որ եթէ երբէք սոյն օրինակ պարագայ մը տեղի ունենայ ,
և դուք միջոյնք ունենաք խոյս տալու այս երկրէն՝ պիտի
չ'թողուք որ այնպիսի պատեհ առիթ մը ապարդիւն մնայ :
Այս խօսքերը խորին ազդեցութիւն մ'ըրին թագաւորին
վրայ , որ առանց պատասխանելու քովի սենեակը անցաւ :

Աճապարանօք մեկնելու պատրաստութիւններ կ'տեսնը-
ուին , աղղային ժողովը այս խմանալով կ'վճռէ որ թա-
գաւորէն անբաժանելի պիտի մնայ և անոր հետ պիտ'
ուղեկցի 'ի Բարիզ :

Ժամը մէկին Ղուի Ժ.Ձ. թագուհին , թագածառանդը ,
Մատամ Բոյալ , Մատամ Ելիզապէթ և Թուրգէլի մարքի-
զուհին կառք կ'մտնեն , իրենց ուղեկից ունենալով զինուո-
րական խումբեր , տէգերով զինեալ ու տիղմի , գինիի և
արեան մէջ թաթխուած հուղիահարներ , զինով և հե-
րարձակ կիներ , որոնք թնդանօթները քաշող կամ անձնա-
պահերու ձիերուն վրայ նստած , ոմանք զրահաւորեալ և
ուրիշները հրացաններով և սուխներով զինեալ , վաւաշ
երգեր կամ կատաղի անէժքներ կ'դուան :

Թագաւորին զաւակները կ'զարմանան այս ժողու-
վուրդին կատաղութեան և ապիրատութեան վրայ զոր
սիրելու խրատ կուտային իրենց : Ասոնց ետեւէ կու-
գան երկու հարիւր զինաթափ անձնապահեր , առանց
զլիսարկի և առանց ուսարարի (bandaulière) , ամէն մէկը

երկերկու ումբաձիգ զինւորներու մէջ զեւեղուած , թաղաւորին քանի մը Սուխ անձնասպահ զօրքերէն , Ֆլանարի գունդէն ձիաւորներ և զինւորներ , և այս ամէնու մէջ տեղ երկաթի կտորներով լեցուած թնդանօթներ : Պալատի վերայ յարձակման սկիզբէն ՚ի վեր աւելի իրենց պաշտօնը չ'ըքելու համար սպաննուած երկու երիտասարդ անձնասպահերու , Տըշիւթի և Վարիբուրի մահահոտ գլուխները երկու մարդեր (եթէ այս անունը պէտք է տրուիլ ասանկներու) նիզակի մը ծայրը անցուցած կ'կրեն , Սէվրի գիւղը կանկ կ'առնուն անոնց մտղերը խոսրոպելու և վրանին փոշի ցանելու համար : Այս երկու արիւնաշաղախ յաղթանակներու մէջ տեղ կ'տեսնուի Նիքօլա ծուռտան , այն երկայն և սև մօրուք մարդը՝ որ պատկերահանութեան և քանդակի ճեմարանին մէջ իբր օրինակ կ'ծառայէր , և որ այսօր մերկաբաղուկ փայլահնացայտ աչերով , երեսը և ձեռքերը արիւնով կարմրած , որով լուացած էր զաննը , յառաջ կ'քալէ իր տակալին խոնաւ տապարը տատանելով և օղն օրուան իրեն տուած *Գլխահատ* (coupe-tête մականուն) նունին վրայ հարտանայով :

Գէտքերը միշտ մի և նոյն եղանակաւ կ'նորոգուէին . թագաւորութիւնը ամէն մէկ բան յանձնատու ըլլալուն՝ իր ասպարէզը , իր ոյժը և իր բաղդը կ'կորուսէր . 1789 Յունիս 27ի Յուլիս 14ի և Հոկտեմբեր 6 և 6ի նահանջներէ ետքը Նէքէր վերստին պաշտօնի կ'կանչէ : Եւ հաս թագաւորութիւնը Բարիզ կ'առաջնորդեն , այն քաղաքին մէջ ուր չէ թէ միայն ժողովին դէմ դնելու վիճակի մէջ չ'գտնուիր , այլ ուր ժողովը անգամ կարողութիւն չ'ունի յեղափոխութեան անկանոն ոյժին դէմ դնել :

Վերջապէս մօտ 7 ժամ ճամբայ քալելէ ետք թագաւորական ուղեկցութիւնը Վերսայլէն Բարիզ կ'հասնի : Ժողովուրդը պատուհաններու մէջէ այս աննկարագրելի տե

տարանին վրայ շուարած կ'նայի . «Ալ բանէ մը մի վախ նար , կ'ստուան այս ախար ուղեկցութեան մէջ գանուող կիները , չքաւորութիւնը վերջ եղաւ , հացագործը , հացագործուհին և իրենց սղախ աշակերտները մէկտեղ բերին : »

Ահա ասանկ հանդիսի մը մէջ էր որ Լա Ֆայէթ Պայլիի ձեռք կ'յանձնէ Լուի Ժ.Ձ. Պայլի կ'ըսէ թաղաւորին , «Իշխան , գեղեցիկ օր մ'է այս ստուգիւ որ ձեր վեհափառութիւնը իր օգոստափառ լծակցին և իշխանի մը հետ որ Լուի Ժ.Ձ.ի պէս բարի և արդար սխալ ըլլայ՝ իր մայրաքաղաքը կ'դառնայ : » Աերջէն յանուն Բարիդի , որուն քաղաքացիսն է , թաղաւորը իր բնակութիւնը մայրաքաղաքին մէջ հաստատելու համար ժողովրդեան ունեցած փափաքը կ'յայտնէ անոր , որուն կ'ստատասխանէ թաղաւորը . «Ամէն ատեն հաճութեամբ և վստահութեամբ է որ ինքզինքս Բարիդ իմ բարի քաղաքիս բնակչաց մէջ կ'դանսմ : » Պայլի կրկնելով այս խօսքերը անոնց՝ որոնք կարող եղած չէին լսել մոռցաւ վստահութիւն բառը արտասանելու . «Պրկնեցէք , վստահութեամբ , ըսաւ թագուհին :

Այն վայրկեանին որ այս բազմութեան տարօրինակ թափօրը՝ գինով և արիւնարբու , թաղաւորական ընտանիքը իր միօրեայ աւարին պէս Բարիդ բերելով , Թուլիերրի պարտիզին երկայնութեանը ձգուած գետեզրին վրայէ կ'անցնէր՝ արծուի աչբով և հինաւորց կիսադէմով (profiantipue) երիտասարդ մարդ մը զայրոյթի շարժումով մը կ'ստուար . «Միթէ թնդանօթ մը չ'ունի՞ թաղաւորը այս սիլիբորները աւելլու համար » :

Այս երիտասարդ անձը , որ նոյն իսկ ինք նախասահմանուած էր օր մը յ'ղափոխութիւնը աւելլու՝ Նաբօլէօն Պօնաբարթ կ'կոչուէր :

Գ Ի Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Թ Ո Ւ Ի Լ Ե Ը Ր Ի

Յ ՀՈՒՍԵՄԲԵՐ 1789—ՅՈՒՆԻՍ 20 1791

Թագաժառանգին խօսքը Թուրքերի մտած ժամանակ. —
Թագաւորին ճիգը և ունեւալու թիւնները. — Սպանոնքե ա-
նարգանք. — Յեղափոխութեան յառաջագիտութիւնը. — Թա-
գաժառանգին պոստոնները — Իր քրտէ առաջին անգամ հա-
ղորդուելը. — Տրեգորի ճեմըն վրայ եղած պարտեզը. —
Տղայոց շուր ճակատագրերը. — Արքայական Գահաժառանգը
— Յարազէտք. — Թագաժառանգին քրտնափոխութիւնը. —
Գաշնաւորութիւնը. — Աղերի քաղաքային տահանաւորութիւ-
նը. — Յեղափոխական անթղլտուութիւն. — Թագաւորին ե-
ղած բանութիւնները :

ԼՊԻԻ ԺՁ. կողայ Թուրքերի սուլտար հաստա-
տուիլ, որ 1633 էն ՚ի վեր գլխեթէ անչոյհաստ ընտը-
ուած՝ ամենահարկաւոր նիւթերէն մերկայած էր չիւնս,
կարասիները աւրուած էին, սրտատակալները հիւցած և
դոյներնին նետած, սենեակները տիւր և նսմ. « Ամէն
բան տղեղ է հոս, մայր », ըստ թագաժառանգր մտած
ատեն. — « Տղաս, սրտասխանեց թագուհին, Աուի ԺՊ.
ալ հոս կ'ընա՛էր և դո՛հ էր, մենք անկէ աւելի դժուա-
րահաճ՝ պէտք չենք ըլլալ » :

Արքայական ընտանիքի ներկայութիւնը վայրկիւն մը Բա-
րիլի մէջ հանդարտութիւնը վերահաստատուեալ էր և յիթը
ունի : Աուի ԺՁ. իրեն քով կ'կանչէ սրբէնի մասնաժո-
ղովը, որ կ'զարմանայ հայրական խնամի հետ նաև խե-
լացի մատակարարի մը հմտութիւնները աւանելով թագա-
ւորին վրայ : միջոցներ ձեռք կ'առնուին մայրաքաղաքին հա-

մար սաշար հայթայթելու և ժողովրդային բարեկարգութիւնը վերակազմելու :

Լուի Ժ.Չ. կ'կարծէ թէ անցյալու զարաւարտութեանը հետ միայն պիտի կուռի, ջանք կ'ընէ ժողովրդեան սիրտը վերստին շահել, հիւանդանոցներու և աղքատանոցներու այցելութեան կ'ենէ, հետիոտս արուարձանները կ'ըրջի, իմաց կուտայ կարօտեալներու թէ ով որ դրատաւոր (mont-de-piété) զգեստ դրած ունի 'ի գրաւ' կրնայ երթալ ազատել առանց վճարելու :

Քիչ տեսցին այս ակնկալութիւնները . կանոնաւոր աւելելութիւններ մթութեան մէջ աշխատելով արօյսական ընտանիքի դէմ կիրքերը և նախազգացումները (prévention) կ'արծարծէին : Բաց ասկէ, բազմութիւնը մի և նոյն միջոցին թէ զինքը միայնող յեղափոխութեան ոգիէն, և թէ իրեն տառապանքներու զգացումէն և աւելութեան չափազանց զրգուումէ ծնունդ առած զայրոյթէն շարժած էր : Իր վիշտերու պատճառ և իր ակնկալութեանց կատարման իբր արգելք կ'նկատէր զթագաւորը . Գաղղիոյ մէջ թագաւորական իշխանութեան վրայ ժողովրդեան ունեցած հին գաղափարին արգիւնքն էր այս . ահա այսպէս թագաւորը ալ իր չունեցած իշխանութեան պատասխանատուութիւնը կ'կրէր տակաւին իր վրայ :

Տաղտկալի բամբասանները թագաւորին և աւելի շատ թագուհոյն դէմ կ'տարածուին, խռովարարները կը յուզին, ստակով զօրք կ'ժողմեն, ժողովուրդը կ'զրգուեն որ ժամ առաջ կուգայ պալատի քառուհաններու ասկ նախատիպներ և ամենագարշ զբոյցներ ժայթքելու . համարձակութիւննին ան սատիւնան կ'հասնի որ ժողովրդեան վերջին գիրտը եղող անձերը պատգամաւորի փառասով մինչև գահին առջև կ'հասնեն : Պաշտօնականները կ'առաջարկեն որ թողտուութիւն չ'ըլլայ անոնց ներս մտնելու, բայց թագաւոր

ըր և Թագուհին կ'ուզեն որ պալատի գուները բաց ըլլան
ամէնու համար : Այս խումբի արժանաւոր ատենախօսը՝ օր
մը կ'համարձակի ամենէ թշնամալի կերպիւ շարախօսութիւն-
ներ տեղալ Թագուհւոյն վրայ որ ներկայ կ'դանուէր իր
տղուն հետ : «Ասխալիք, ըսաւ Թագաւորը, Թագուհին և
ես չունինք ամենեկն այն դիտաւորութիւնները որ մեզմէ կը
կարծեն . մենք երկուքս ալ համաձայն և մի մէյայն հասա-
րակաց բարւոյն նկատմամբ կ'գործենք » : Պատգամաւորու-
թիւնը մեկնելով Թագուհին կ'սկսի լալ արտասուաթոր .
Մայր մը կրկին անգամ թշնամանուած կ'ըլլայ երբ թշնա-
մաննն զանի իր զուակի առջև :

Այս ամենօրեայ անարգանաց վրայ կ'աւելնայ նաև ճշմա-
րիտ գերութեան մը նեղութիւնը : Թագաւորական ընտանի-
քը ալ Բարիդէ դուքս չ'ենէր , նոյն իսկ Թուխլերիի պար-
տիզին մէջ իր պծոյտները մանաւոր ժամերու որոշուած
են : Այս ժամերուն մէջ հասարակութեան արդիւուած
ըլլալով պալատը մաննել ժողովուրդի մէջէ ոմանք և նոյն
իսկ բանակի զօրքերէն կոսրճութեամբ կ'ըսեն , «Թագաւորը
արձակուեցաւ » :

Քանի մ'աղելի սիրտեր կ'սրտմտին այս բռնադատեալ
վիճակին և Թագաւորութեան այս աստիճան նուաստանալուն
վրայ . յայտնի է թէ ժովովուրդը ինչ շուտութեամբ ա-
տելութենէ դուրս կ'փոխարկի . Քաղաքային ժողովէ պատ-
դամաւորութիւն մը Բարիդի քաղաքասպետէն առաջնորդուած՝
մինչև անգամ կուգայ Թագաւորին առաջարկել որպէս զի
որսի երթալը կրկին սկսի , որու երկար ատենէ ՚ի վեր սո-
վորած ըլլալով ալ իրեն համար պէտք մը դարձած էր :
«Որսի երթալը ինձ համար , կ'պատասխանէ Ղուի Թ. Զ. ա-
ւելի առողջութեանս նպաստաւոր ըլլալուն քան դուարձու-
թեան համար էր : Արդի քաղաքական գործերու ծանրակը-
շիւ վիճակը մտածելու իսկ ժամանակ չ'են տար և ոչ իսկ կը
ներեն որսի չ'երթալուս վրայ յաւիլ » :

Որչափ որ հսկանքներ Ծի և Յի հեղինակներու որոնք բլլալը գրեթէ գիտցուած և անոնց անպատիժ մնալիքնին ալ ստոյգ է սակայն Շաթրլէ գործը ձեռք առնելով յանձնածողով մը կ'ըսզմէ տեղեկանալու համար, որոնք թաղուհւոյն կ'ներկայանան հսկանքներ Յի առաւօտ գործուած յանցանքներու համար իր վկայութիւնը առնելու՝ Թաղուհւոյն կ'սրատասխանէ անոնց. « Ամէն բան տեսայ, ամէն բան տեղեկացայ. և ամէն բան մոռցայ » :

Մարերու յուզումներուն նոր սնունդ մը կ'կարօտէր, Կարէր գիշոր երեւան կ'երնէ և ամէնուն մտաքը կ'զրաւէ՝ Գաղանի ծախսոց այս արձանադրութիւնը (որ դանձուց ընդհանուր դիւանադարին ձեռք կ'զանուէր) թիւր և անտեղի ենթադրութեանց և պարտաւարողաց երզիծանող երեւակայութիւններու տուրկայ կ'ըլլայ, որոնք կ'ենթադրեն ինչ որ չեն գիտեր, և կ'ըսեն ինչ որ կ'ենթադրեն :

Ազգային ժողովք բարձրաձայն այս գրքի քննութիւնը պահանջելով կ'հրամայէ որ տպագրուի՝ Հասարակութիւնը անյազարար կ'կարգայ զայն, բայց չ'կրնար գաննել այն անդունդը ուր Գաղղեոյ գանձը խորատու զելու մծակեր :

Անիշխանութիւնը դաւառներու մէջ կ'տարածուի, կաշուածները կ'քանդուին, տպարանները կ'այրին, օրէնքները առանց ոյժի կ'մնան և դաւառանները առանց իշխանութեանն Ուտելիքի սրաշարներու Քարիզ գալը կ'արգիլուի խռովարարներէ, և օրական պիտոյից համար հայր կ'սկսի շ'բաւել : Հոկտեմբեր 19ի համար ընդհանուր տպագրութիւն մը կ'զաղափարուի. հացագործերու մեծ մասը հրատարկէ կամ վախէ բռնադատուած խռովարարներու կամաց կ'համակերպին և ալ հաց չ'են եփեր նախորդ գիշերը : Ոմանք այս պատուէրին անհնազանդ գտնուելով խանութնին բռնութեան զոհ կ'ըլլայ և կ'կողոպտուի : Անոնց մէջէ մէկը Ֆրանսուս անուն, ազնուապետական վատ — անունով կ'զրօշմուի

և փողոցի փառոսէ մը կ'կախուի բազմութենէ, որ քանի մ'օրէ վերջը Բրօւլանսի կոմս Մծնաիէօի հետ անդիւ- յեղաւ փոխական զաղանի յարարերութիւններ ունեցած ըլլալու ամբաստանութեամբ Ֆաւրասի մարբիլին դատապարտուիլը և տանջուիլը կ'սպհանջէ :

Այս օրուան անկարգութիւնները անիշխանական կատաղութիւններու վտանգներ կ'ծանուցանեն բոլոր տէրութեանց : Ազգային ժողովը սրասերագլխական օրէնքը կ'առաջարկէ և կ'ընդունի ընդ դէմ գօրաւոր դիմադրութեան : Ժողովրդային եռայումբ վայրկեան մը ևս կ'հանդարտի : Ուտելեաց կը'յին գայր, թաղաօրական բարեգործութեանց նորոգուիլը աւելի աղէկ զգացումներ տալ կ'երևէին ժողովրդեան : Ազգային ժողովը նոյն իսկ սոյնօրեայ կարծիքին համակերպելով պարտք կ'սեպէ թաղաօրին և թաղուհւոյն յարգանաց ընդհանուր հաստի մը տալ, և առանց հրաւերի կամ սպասելու. Թուիլերբրի պալատը կ'ներկայանայ յօժարակամ, Ս. Ֆրէթօ իր նախադահէն առաջնորդուած : Թաղաօրը որ անոնց զալուն վրայ տեղեկութիւն մը չունէր՝ գորովալիւր ընդունելութիւն մը կ'ընէ անոնց : Ժողովը թաղաօրին քովէն ելնելով թաղուհւոյն սենեակը կ'երթայ . « Տիկին, կ'ըսէ անոր նախազահը . Ազգային ժողովը մայրաքաղաք հասած ատեն իրենն առաջին պարտք ըրաւ յարգանաց և սիրոյ հաւաստին ներկայացնել թաղաօրին . ուստի ասանկ բնական պատեհութեան մը չ'կրցաւ դէմ դնել իր զգացումները և բարեմազթութիւնները նաև ձեզ նուիրել : Անդունեցէք զանոնք Տիկին, որոնք մեր զգացումն համաձայն կենդանի, եռանդազին և անկեղծ են : Ազգային ժողովոյ ճշմարիտ գոհունակութիւն մը պիտ' ըլլայ ձեր գրկաց մէջ նկատել այս անուանի զուակը, որ' ժողովրդէն գորովանօք սիրուած այնչափ թաղաօրներու շառախղը, Լուի Ժ. Գի . Հանրի Գի

և անոր՝ որու առաքինութիւնները Քրիստոսայի յոյն եւ՝ ժտանգն է : Բնաւ ոչ ինք և ոչ իր օրերու հեղինակները այնչափ բարեբաատութիւններ պիտի վայելեն՝ որչափ կ'բարեմաղթենք մենք անոնց համար » :

— Ազգային ժողովոյ յայտնած զգացումները շատ ազդեցին ինձ, ինչպէս որ պէտք էին ազդել, կ'ստոաստանէ Մարի-Անդուանէթ : Եթէ կանխաւ գիանայի անոր գիտաւորութիւնները՝ թերեւ աւելի արժանաւոր կերպիւ կրնայի ընդունիլ զայն » : Անատեն թաղածառանդը իր գոլաց մէջ առնելով կ'ներկայացնէ զայն Ազգային ժողովոյ . կեցցէ թագաւորը ! կեցցէ թագուհին ! կեցցէ թագածառանդը ! խանդակաթ աղաղակներու կրկնումը՝ վայրկեան մը թագուհին իր թշուառութեանց զգացումն կ'կորզեն :

Այսու ամենայնիւ Ազգային ժողովը Սահմանադրութեան համար աշխատելէ չ'կասիր : 1790 վետրզտը Կին թագաւորը Եւքէրի խորհրդով ժողովը կ'երթայ և նշանաւոր ատենադրանութեան մը մէջ անոր աջակցութիւնը կ'խնդրէ ազգը իր ճշմարիտ օգուաներուն ծանօթացնելու համար : Այս ատենադրանութենէ քանի մը կտորներ կ'դնենք հոս, որոնք գէթ անուղղակի կերպիւ կապակցութիւն ունին այս նիւթիս :

« Բաւական վնասներ պիտ' ունենայի նշանակել, եթէ մասնաւոր գիտումներու համար տէրութեան ամենէ մեծ օգուաներու ճանբուն մէջ կասէի . սակայն փոխարինութիւն մը, ազգին երջանկութեան ամմանը մէջ կատարեալ փոխարինութիւն մը կ'գաննեմ որ ինձ կ'բաւէ, և սրտիս խորէն է որ այս զգացումը կ'յայտնեմ ձեզ :

« Այիտի պաշտպանեմ ուրեմն, պիտի պահեմ սահմանադրական ազատութիւնը, որու համար ընդհանուր իղձը խնդիրս հեա մամուձայն՝ անոր սկզբունքները նուիրագործեց : Ասկէ զատ, թագուհւոյն հետ համալիտ՝ որ միշտ

իմ գղացումներու կ'մասնակցի, արդէն պիտի պատրաստեմ տղուս միտքը և սիրտը նոր դաղափարներու և գործողութեանց՝ որոնք պարագաներէ ծնունդ առին, իր մանկութենէն պիտի սովորեցնեմ զայն Գաղղխացոյ բարեբաատութեամբը երջանիկ ըլլալ, և ճանչել միշտ, ահանջ չ'կատելով շողքորդական խօսքերու, թէ խելացի սահմանադրութիւն մը անփորձառութեան վտանգներէն պիտի պահպանէ զինքը, և թէ օրինաւոր ազատութիւն մը սիրոյ և հաւատարմութեան զգացումները և ևս կ'ճոխացնէ՝ որոյ համար ազգը՝ այնչափ դարերէ՝ ի վեր ասանկ ազգուսապացոյցներ կուտայ իր թագաւորաց

«Այն ինչ հանդարտութիւնը կ'մբնէր վերածննդի, ինչ ճակատագիր է այն որ դաւաճեցրու մէջ նորանոր անհանգստութիւններ կ'տարածէ. ինչ ճակատագիր է այն որ նորանոր անկարգութեանց ծնունդ կուտայ. Ալակից եղևք ինձ զանոնք դադրեցնելու, և մեր բոլոր զօրութեամբ դէմ դրնենք որպէս զի պատժապարտ բռնութիւններն չ'զան աղտեղել այն օրերը՝ երբ ազգին երջանկութիւնը կ'պատրաստուի: Գուք որ այնչափ միջոցներով հասարակային կարողութեան վրայ կրնաք ազդել, լուսաւորեցէ՛ք ժողովուրդը իր ճշմարիտ օգուտներու զոր կ'խոտորեցնեն. այս բարի ժողովուրդը որ ինձ այնչափ սիրելի է, և որու ես ալ սիրելի ըլլալս կ'հաւատան ինձ, այն ինչ կ'ուզեն վշտացս մէջ զիս միտքարել»

Հոս ժողովին յուղումը ընդ միջեց Լուի ԺԶ: Անոր վայելուչ դերքը, խօսուածքը և հայրական հնչումը, վայրկեան մը բոլոր սիրտերը շարժեցին: Նախադասին կարճ պատասխանէ մը վերջը (Պ. Պիւրօ ար Բիւզի,) ծափահարութեանց մէջէ սրահէն մեկնելով ժողովոյ կողմէ պատգամաւորութիւն մը անոր թուկեբրի առաջնորդեց: Թագու-

Հին թագաժառանգին ձեռքէն բռնած զանի կ'դիմաւորէ :

« Ես ալ կ'մաննակցիմ, կ'ըսէ խօսքը պատ, ամաւորութեան ուղղելով, թագաւորին բոլոր զգացմանց, սրտով և մտքով կ'միանամ նաև ես ինչ բանի որ իր սէրը կ'թեյազբէ զանի իր ժողովուրդին համար : Ահա աղաս, հայրերու մէջ յաւաղոյնին առարինու թիւններովը պիտի կրթեմ զայն շարունակ, պիտի վտթամ ստիբեյնել անոր ժողովրդային ազատութիւնը յարդեւ և օրէնքները պահպանել : Ա՛յուսամ որ նա ամէնէ հաստատ նեցուկը պիտ' ըլլայ օր մը : »

Աւաղ ! խանդակաթ սիրոյ և սրտի ուրախութեան այս շարժումները ուրիշ բաներ չէին բայց և թէ յեղափոխական կայաններու մէջ կարճատև հանդիսաներ : Անիշխանութիւնը իր քայլը վերստին կ'առնուր, և հսկայաքայլ յառաջանալով կորսուած ժամանակը կրկին կ'շահէր : Ժողովը կ'վճրէ կղերի ունեցած բոլոր ստացուածոց վաճառումը, կրօնական կարգերու բարձումը, եկեղեցիներու կապտումը (spoliation), կղերի այս քաղաքային սահմանադրութիւնը կ'վճռէ որմէ բիշ մը վերջը հաւատարիմ քահանաներու հաղածումը տեղի կ'ունենայ և առաջին պատճառ կ'ըլլայ խռովութեան որ վերջէն Անտէի մէջ պիտի պայթէր, նոյնպէս կ'վճռէ ազնուականութեան ջնջումը, և անոնց տխուրներու և ծառայից նշանազգեստներու վերցուելը : Ապստամբութեան ողին ծովերու վրանէ կ'սրանայ, Ամբիկոյ մէջ Գաղղեացի զաղթականները տակնուվրայ կ'ընէ, սևերը ձերմակներու և գերիները տէրերու դէմ կ'զինէ, զաղթականաց երկրագործական հաստատութիւնները հրոյ ճարակ կ'ըլլան, արիւնը հեղեղի պէս կ'վազի :

Յեղաշջումը Բարիզի մէջ իր բրած յաղթութեամբ չ'հանդարտիր : Յօրեն ևն, սղութիւնը, ուտելեաց նուազութիւնը, թագաւորութեան դէմ ատելութեանց շտո-

Նալուն կ'նպաստեն , որու անկարողութիւնը պատասխանատու կ'ընէ զինքը ամէն բանի : Աղէտայլի ձմեռուան մը գառնութիւնները ամբաստանութիւն մը կ'դառնան անոր դէմ , առարկինի և բարեգործութեանը մը իբր անբարեխառն բնութեան դէմ դատաստանի պարտաւոր կ'համարուի : Յորենի վաճառականները իբր շահահինդիբ (accapareur) ժողովրդի սրամտութեան կ'նշանակուին , բոլոր վաճառականական շահագործութիւնը (speculation) կը դադրի վախնալով որ իբր ժողովուրդը սովի ենթակայ ընող չ'ամբաստանուին : Գէշութեան վախը գէշութիւնը աւելի կ'ծանրացնէ :

Թագաժառանգը գրեթէ շարունակ պաշտօնի սենեակներու մէջ դոցուած ըլլալով՝ դիւրին է գատել թէ որչափ պէտք էր ցաւիլ Աերասյէ բաժնուելուն վրայ : Այսու ամենայնիւ երբեմն իր կտավարչութեան հետ կ'ուրախ ժողովուրդար : Հինգշարթի օրերը սովորաբար Ախի Մարբիդուհայն տունը կ'տանէին զան , որ Սէն-Ժէրմէն արուարձանը գեղեցիկ սալարան մ'ունէր ընդարձակ սրահով : Հոն ծաղիկներ , օգ և սպասութիւն կ'գտնէր վերատին , նոյնպէս իրեն հասակակից մէկ կամ երկու տղաներ որոնք կը վազէին և կ'խաղային իրեն հետ :

Օր մի պահուրտաք խաղայած առննին , իշխանը սանդուղի մը վրայէ մաղցելով կ'ուզէ պարտիզին խորը զանրուած համբարանոցի մը մէջ մտնել , սանդուղը դէշ դրուած ըլլալով կ'սահի և պարտիզակի եզրերը շրջապատող տօսակէ (շէշէշէ) փոքրիկ ցանկապատէ մը միայն կ'արդիւուի վար ինչպէ : Արբայորդին աչքէ չ'հեռայնելու պարտաւորութիւն ունեցող բաշտօնակալը երկու քայլ անդին կ'դանուէր , բայց մի միայն այս միջոցին գլուխը անդին դարձուցած զանուելով՝ ամենևին կասկած մը չունէր ճարտարամիտ տղուն առաջադրութեանց վրայ , այն ինչ յան-

կարծ աչերը վերցնելով նոյն խակ ծռուած վայրկենին սանդուղի վերջին աստիճանը բարձրացած տեսաւ զանի , ՚ի սկզբան շատ վախցաւ տեսնելով տղուն ենթակայ եղած վտանգը , սակայն թագածառանդին անմիջապէս իր գտնուած վտանգաւոր դիրքէն հանդարտութեամբ մը ելնելը տեսնելով՝ որ յաղթական եղանակաւ մը ամէն մէկ իջած աստիճանները կ'համբեր , սիրաբ հանդատացաւ :

Լուի Էարլը չէր գանգատէր որչափ որ իր զբօսումնս բը բոլորովին քիչցած էին , այսու ամենայնիւ 1790 ապրիլ 7 ին ըսաւ Տիկին Թուրքէ լի : « Եստ կ'ցաւ իմ այսօր իմ պարտիզէ զրկուած ըլլալուս , եթէ ոչ վաղը երկու գեղեցիկ փունջեր կ'կազմէի մին մօրս և միւսը քոյրիս համար » Թագածառանդին նշանակած օրը Մատամ Բոյալ իր առաջին հաղորդութիւնը կ'ընդունէր . նոյն առաւօա թագուհին զանի թագաւորին սենեակը տանելով « Աղջիկս , կըսէ , հօրդ ոտքերուն խոնարհելով անոր օրհնութիւնը խնդրէ : » Իշխանուհին զետին խոնարհեցաւ , իսկ հայրը զանի վերջընելով ըսաւ անոր . « Իմ օրտի խորէն է որ ըզքեզ կ'օրհնեմ աղջիկս , և կ'խնդրեմ երկնքէ որ կատարելու մեծ գործիգ յարզը աղէկ հասկնալու շնորհը ընէքեզ : Աստուծոյ աչերու առջև քու սիրտը անմեղ և մաքուր է , քու տխտերը պէտք են հաճելի ըլլալ անոր , նուիրէ զանոնք քու մօր և ինձ համար : Խնդրէ անորմէ որ հարկաւոր եղած շնորհները սայ ինձ որպէս զի երջանիկ ընեմ զանոնք որոց թագաւորութիւնը տուաւ ինձ և զորս , պէտք եմ իբր իմ զաւակները համարիլ : Խնդրէ անոմէ որ այս տէրութեան մէջ կրօնքի անարատութիւնը պահպանելու հաճի , և զու աղէկ միտքդ պահէ աղջիկս , որ այս սուրբ կրօնքը երջանկութեան աղբիւրը և կեանքի աղէտներու մէջ մեր նեցուկն է : Ինքզինքդ ապահովութեան մէջ մի կարծեր , գեռ շատ երիտասարդ ես , բայց հայրդ արդէն

քանի մ'անգամ վշտացած տեսար : Դու չես դիտեր աղջիկս
ինչ բանի որ Նախախնամութիւնը քեզ կ'սահմանէ , չես
դիտեր թէ հոս՝ կամ ուրիշ տէրութեան մը մէջ բնա-
կելու որոշուած ես : Ուր որ Աստուծոյ ձեռքը զքեզ տե-
ղաւորէ՝ յիշէ որ քու գործերով պէտք ես օրինակ ըլլալ
ուրիշներու և բարիք գործել ամէն անգամ որ առիթ
ուեննաս : Բայց ամէնէ աւելի , զաւակս , սիրովէ թշուառնե-
րը քու բոլոր զօրութեամբ , Աստուած ուրիշ բանի համար
կեանք չ'տուաւ մեզ մեր եղած աստիճանին մէջ՝ եթէ ոչ
անոնց երջանկութեան աշխատելու , և զանոնք իրենց ցա-
ւերու մէջ մխիթարելու համար : Գնա ուրեմն այն սեղա-
նին առջև ուր զքեզ կ'սպասեն , և սաղատէ զթութեան
Լօր որ չ'թողու զքեզ բնաւ խանդակաթ հօր մը տուած
խրատները մոռնալ : »

Թագուհին ուզեց որ թագածառանդը այս կրօնական
արարողութեան ներկայ գտնուի , որ քաղցր յուզումներ
պատճառեց թագաւորական ընտանեաց :

Քանի մ'օր ետքը ահարկու շշուկներ կ'տարածուին ,
բունն զօրութեամբ սպալատը մանելու համար կազմուած
զաղտնի ընկերութեան մը վրայ կ'խօսին : Ատկին անգին
հրոցաններու ձայներ կ'լսուին դիշերուան մէջ :

Թագաւորը արթննալով թագուհւոյն սենեակը կ'վազէ
բայց հոն չ'գտնէր , ուստի թագածառանդին սենեակը եր-
թալով հոն , այս սիրելի զաւակը իր սրտին վրայ սեղ-
մած կ'գտնէ զայն : « Տիկին , ձեզ կ'վնասուէի և մեծ ան-
հանգստութեան մէջ էի ձեզ համար . — Իշխան , կ'պա-
տասխանէ թագուհին , իմ պաշտօնատեղին կ'գտնուէի : »

Բայց սակայն այս անընդհատ յուզումները թագածա-
ռանդին կանոնաւոր ուսման և կրթութեան ամենեւին վը-
նաս մը չէին պատճառէր : Արօնք , զրաւարժութիւն ,
պատմութիւն , թուաբանութիւն , աշխարհագրութիւն և

բուսաբանութիւն կ'սովբեցնէին անոր : Պ. տը լա Պօրտո ,
 Լուի Ժե. ի վաղեմի առաջին սենեկաւանը՝ այս վերջին
 դիտութեան մէջ աշխատելու համար չորցած բոյսերու
 հաւաքում մը սրատրաստած ըլլալով՝ նորատի իշխանին
 մասնաւոր յօժարութիւնը կ'զրզուէր : Մի և նոյն միջոցին
 մարմնական կրթութեանց , սարելու և գնտախաղութեան
 մէջ կ'վարժեցնէին զայն : Չկար տղայ մը որ խաղու մէջ
 անոր չափ շնորհալի , յաջողակ և արագաշարժ հանդի-
 սանար :

Թուիլերըի մէկ կողմը ջրեզրի վրայ եղած ճեմելիին
 ծայրը՝ ցանցապատով մը սրաշարուած փոքրիկ պարտեզ մը
 կար , թաղածառանդի մարդիկէին Տալօ արբայի պարապած
 տաղաւարին կից : Ուստի մտածեցին որ Աւերսայլի մէջ
 ձգածը հոս թաղածառանդը կրնար վերստին գանել , և
 իր ախորժներու համաձայն առողջութեան օգտակար կրթ-
 ութեանները կ'ոգին սկսիլ . հեռեւարար այս փոքր ծաղ-
 կոցը տուին իրեն ուր մեծ եռանդով ձեռք զարկաւ գոր-
 ծելու . ճագարներ սնոց հոն և ծաղիկներ մշակեց : Այս
 գեախնը վերջէն ջրեզրի ճեմելիի բարձրութեան հաւասար
 բրին : Սակայն այս մի և նոյն պարտեզն է , այսպէս փոխ-
 ուած , կրկին նորոգուած , մեծցած , զոր քիչ մը վերջը
 Նարոյէոն Հուովմայ թաղաւորին , Շարլը Ժ. Պօրտոյի դուք-
 սին՝ և Լուի Ֆիլիպ՝ Բարիլի կոմսին նուիրեցին ! Քանի
 դասեր սերմանուեցան երկրի այս փոքրիկ կտորին վրայ ,
 որ այնչափ շուտ լքաւ իր երխտասարդ ստացողներէ ! Մին
 մեռաւ բանտի մը մէջ տանն տարեկան . միւսը դեռ որրա-
 նին մէջ՝ փոթորիկէն յափշտակուելով , կեանք առած էր
 մի միայն իր հօր անունը սովբելու և մեռնելէ առաջ իր
 սուրը տեսնելու համար . երրորդը և չորրորդը միւս եր-
 կուքին պէս մերթիկի մէջ անհետացած՝ դեռ մինչև այսօր
 բննց արտօրի վերարկուն Աւստրիոյ կամ Անգղիոյ ճանբա-

ներու վրայ կ'ըսարչեն : Եւ այս զաւակները՝ որ այնչափ իրաւունք ունին մեր գութը գրաւելու, քանի՛ արտասուք նոյն սէս չ'իթափեցին իրենց հայրերու վրայ ! Մին դիւատութեան բէմին վրայ մեռած, ուրիշ մը մարդասպանի մը սուրին տակ, մէկ ուրիշը ճամբու մը քարայատակին վրայ իյնալով կ'տապալի, և վերջապէս հանճարով ամենէ մեծը Բրօմէթէի սէս ժայռի մը վրայ թողւած՝ իր յիշատակներովը տակաւ առ տակաւ կ'սպառի :

Արքայորդին իր փոքր պարտեզը գացած ժամանակ Թուիլերրիի պահակութեան համար սահմանուած ազգային պահապան զօրքերէն հատուած մը սովորաբար անոր կ'ընկերանար : Քանի մ'օրէն զէնք գործածելը սովորելով՝ դրբեթէ շատ անգամ ինք ալ ազգային պահապան զօրաց միազգեստը կ'կրէր : Ապանձար իր պահակներու վրայ, իր ազատ ու բաց տեսիլը իր երջանկութեան անկեղծ յայտարարը ըլլալով՝ նոյնպէս իր ճակատը ամէն անհանգիստ մտածումէ ազատ կ'երևէր : Երբ սակաւաթիւ ըլլար իր խումբը՝ զանոնք կ'հրաւիրէր որ իրեն հետ պարտեզ մըտնեն : Օր մը երբ աւելի բազմութեամբ իրեն հետեւելով կ'ստիպուէին դուրսը մնալ, «Ներեցէք ինձ, պարոններ, բտաւ անոնց, շատ կ'ցաւ իմ պարտիզիս այսչափ փոքր ըլլալուն վասն զի զձեզ ամէնքը ընդունելու հաճոյժէն կ'ըրկէ զիս : » Եւ փութաց ծաղիկներ նուիրել ամէն անոնց որոնք ցողապատին կ'մօտէին և իր զբօսումները տեսնելու հաճոյք մը զգացած կ'երևէին :

Ուրիշ օր մը, — և այս նկարագրութիւնը պիտի յայտնէ որ իր շնորհալի կերպերու և իր բնական բարեօրտութեան նաև ասպետական մասնաւոր կենդանութիւն մը կը յարէր, որ թերևս կ'արդարացնէր Պուրպօնի տան այս շատ հին նշանաբանը, Բարոնիէն և Արթէր, — իր փոքրիկ պարտեզը երթալու համար զեռ պալատէն չ'մեկնած հը-

րացան գործածելու վարժութիւն կ'ընէր, պալատի ազգային պահապան զօրաց պաշտօնակալը ըսաւ անոր. « Իշխան, քանի որ պալատէն դուրս պիտ' ելնէք՝ յանձնեցէք ինձ ձեր հրացանը : » Թագաժառանգը խիստ կերպով մը մերժեց. « Մատամ՝ Թուրզէլ այս խիստ վարմունքը սողրտանելուն, « եթէ պարօնը ըսած ըլլար որ հրացանը իրեն տամ, շատ աղէկ տիկին, բայց իրեն յանձնել ! . . . »

Թագաւորը իր տղուն տուած պատասխանը իմանալով պողաց, « միշտ աշխոյժ և խրոխտ ! բայց հաճութեամբ կ'տեսնեմ որ բառերու արժէքը դիտէ և զանոնք գործածելու պատշաճութիւնը կզգայ : »

Գահիր Թագաժառանգի անունով բոլոր երիտառարդ արզաններէ ընկերութիւն մը կազմուած էր Բարիզի մէջ : Այս պաղատարը Անգամ արբան յղացած ըլլալով թագաւորին առաջարկած էր անոր կազմութեան համար : Գրեթէ բոլոր ծախքը քաղաքացիք իրենք մատակարարելով այս գունդին կազմութեան համար պէտք եղած անձերը, բոլոր տղայ, նոյնպէս մեծագոյն մասամբ իրենք հոգացին : Առի Անթուան իր գրած Առի Ժէ.ի կենսագրութեան մէջ այս խումբին վրայ այսպէս կ'ըսուի. « Այս փոքրիկ գունդի անգամներէն մին ալ ես էի, որու շատ անգամ թոյլ տրուեցաւ երիտասարդ իշխանին ներկայութեան կրթութիւնները : Մեր առաջին աջերութիւնը բրած ատեննիս զանի իր պարտիզի մէջ գտանք շատ մը մեծամեծներէ շրջապատուած : — Ար հաճիր այս խումբի գնդապետը ըլլալ, հարցոց անոնցմէ մին : »

— Այո, պատասխանեց թագաժառանգը, իմ պարտիզի նոսնենիները (grenadier)¹ շատ կ'սիրեմ, բայց աւելի աղէկ ունիմ ասոնց զլուխը անցնիլ : »

— Ուրեմն ասկէ ետք պիտի վերջանան ծաղիկները և փունջերը ձեր մօր համար : — Ոհ, ասի պիտի չ'արդելու զիս իմ ծաղիկներու հոգ տանելէ :

Այս պարօններէ շատերը ըսին նաև թէ իրենք ալ

(1) Այս բառը Գաղղիարէնի մջ թէ նոսնի կ'ընանակէ եւ թէ գնտաձիգ գօրք :

փորձիկ պարտէզներ ունին : « Աւրեմն ! իրենց գնդապետին օրինակաւ թագուհին պիտի սիրեն , և մայրս ամէն օր փունջերու գունդեր պիտ' ունենայ . . . » : Մեր յարգանկան ծափահարութիւնները ստուգիւ անոր օգոստափառ ծընօղաց վրայ ունեցած սէրերնուս հաւաստիքն էին : »

Այս փորձիկ գունդը մեծազոյն մասամբ ընտրուած տղաներէ կ'կազմուէր , որոնք բնականաբար տեսակ մ'ակնաճանօք կ'վարուէին թագաւորին տղուն հետ . սակայն ուսուցիչը չէ թէ միայն թոյլ չ'սուաւ աւելի մեծարանքն յայտնել անոր՝ այլ նաև յայտնապէս արդիւնց զանոնք որպէս զի չ'ստնարհին իրենց ընկերէն և ոչ մէկ բանի մէջ : Թագաւորը իսկ ըսած էր . « Անոր նախանձաւորութիւնը գրգռելու համար ընկերներ կ'ուզեմ , չէ թէ փոքր շողորթներ որոնք ամեն բանի մէջ անոր հաւանին : » Սակայն 'ի սկզբան հարիւր յիսուն-երկու հարիւր մարդերէ ազմուած այս փոքր գունդը սկսաւ օրըստօրէ աւելնալ : Այն օրէ 'ի վեր որ Մ. Անդօմ' թագաւորական արտօնութիւն ստացած լրագրերու մէջ կ'ծանուցանէր , բազմաթիւ ընտանիքներ փութացած էին իրենց զուակները նըշանակել տալ անմօրուս գնդին արձանագրութեանց մէջ և անոնց համար հանդերձի ծախսեր ընել : Զգեստը գաղղիացի պահապան զօրաց միազգեստի մանրանկարն էր , նոյնպէս ճերմակ սրնապաններով (guêtre) և եռանկիւնի դիւարկով :

Սակայն պարծանօք Թագաւորական - Թագաւորական անունը առած այս հեազհետէ շատցող բանակը հրահանգուելու պէտք ունենալով հասակաւ և զինուորական կրթութեան պաշտօնատունէն ընտրուած հրամանատարներ տուին անոր : Պաշտօնական գնդապետը (վասն զի թագաժառանգը միմիայն ախաղօսը կ'կրէր) տասն և եօթ տարեկան սիրուն երիտասարդ մ'էր , և որուն հայրը զգեստի վաճառական մը , Մոլիէրի ծնած տան մօտ Հալի սիւներուն տակ : Սաստիկ նախանձաւորութիւն մը գրաւեց նո

րեկ զօրականներու սիրտը, և ամէն մէկը կ'աշխատէր միւսները գերազանցել կրթութեան մէջ: Շարաթը երկու անգամ Թագաորական-Թագաժառանգը Մօնամարդը փողոցին կից փոքր և նեղ փողոցին մէջ գտնուած Անդօմ արբային տունը հաւարուելով, և անկէ թմբուկի ձայնիւ որ բոլոր դրացեաց ուշադրութիւնը կ'գրաւէր ու Անդօմ արբան առջև ինկած՝ Սէն-Տընի արուարձանին վերի կողմը գտնուած և չորս կողմէն գոց Սէն-Լազար արախն մէջ մտնելով բուն ուսուցիչ պաշտօնակալի մը հրամանատարութեամբ զինուորական կրթութիւնները կ'կատարէր: Երկու ժամ կրթութիւն ընելէ վերջը կրկին Անդօմ արբայի տունը դալով անկէ ամէն մեկը կ'րաժնուէր և իր ծնօղաց տունը կ'գառնար: Այս գունդը ի'սկզբան թագածառանգին գտնուած բոլոր արարողութեանց մէջ ներկայ ըլլալով հետզհետէ իր պահանջումները աւելցոց և ուղեց ազգային սահասարան զօրաց նման զինուորական անուն առնուլ: «Այս գարուս մէջ տղայ չ'կայ, կ'լռէ Լա Փայէթ, բարի, այսպէս թող ըլլայ, երիտասարդ անձերու մոլութիւնները ունեցող այնչափ ծերեր տեսնա՞ք՝ որ հասակաւոր մարդերու առաջինութիւնները ունեցող տղաներ տեսնելը հաճելի է:»

Այն ատենէ սկսեալ Թագաորական-Թագաժառանգը զըրեթէ կարևոր կերպարանք մը ստացաւ: Արտօնութիւն տալին անոր պատուոյ երեք կայան հաստատելու, առաջին՝ պալատը, երկրորդ՝ Բարիզի քաղաքապետին ապարանը Քափուսիններու փողոցը (A), և երրորդը՝ ազգային սահասարան զօրաց ընդհանուր հրամանատարի ապարանը Պորպօնի փողոցը: Պահասարան զօրաց այս երիտասարդ գունդը հեծեալ և կարգաւ Թուրքերի հրապարակին վրայ քայ-

— (1) Պայլի նստած Բարիզի քաղաքապետութեան ապարանը Բլաս Անասովն Պուլվար երթալու աջ կողմը Քափուսիններու փողոցին վրայ շինուած: Այս տունը հիմա թիւ 12 կ'կրէ:

լած ատեն մեծ ժամացոյցը հաստատուած թաղաւարի սպա-
տշգամբին վրայ եղող թաղաւորական ընտանիքի կողմէ
գոհունակութեան ասպացոյցներ կ'ընդունէր միշտ : Թաղա-
ւորը խիստ խանդաղատանօք գրօշակը կ'ըրարէր, և թա-
ղաժողովը ուրախութեան և համակրութեան հաղարաս-
ւոր նշաններ կ'ընէր իր բնկերակցաց :

Բայց չ'կայ յաջողութիւն առանց բանադատութեան :
Թաղաւորական թաղաւորական կողմնակիցներու հետ նաև
չարախօսներ ունեցաւ : Բնաւ և ո՛չ մէկ ժողովրդայնու-
թիւն մը, և ո՛չ իսկ մանկութեանը անդամ, կ'ընայ ակեղ
Բարիզի մէջ ! Հասարակային շարժութիւնը ամէն բանի հա-
ճոյ կամ ծաղրելի մասը շատ շուտ կ'զանէ : Այս փոքրիկ
գունդը ծաղրելու գիտաւորութեամբ Թաղաւորական շա-
քէղէն անունը տուին անոր : « Սկաւտակով չէք ուտէր »,
կ'սրտային մէկ քանին . — Ո՛չ, թոչունի մը տրուած հա-
տիկներու չափովը կ'ուտէք, Մէյնի սղախի բաղեր (1), կ'ը
սէին ուրիշները : Այս ծաղրական կատակներու վրայ երի-
տասարդ արիւնը կ'տարնար : Ամէն զաղափարները ազա-
տերազմի կ'հակէին, և Գաղղիոյ մէջ այնչափ զօրաւոր
եղող զինուորական ողին՝ աստիճանաբար մինչև տասն տա-
րեկաններու զուխները գրաւած էր : Թաղաւորական Թա-
ղաժողովին թաղական գունդի և աղղին սպահապան
զօրաց հետ երթևեկելը, իրեն գիշեր քերեկ զինուորապէս
պարապած հրէք կայաններու մէջ իր փոքր զինուորանոցը
մեծ զինուորանոցին մօտ առ մօտ հաստատուած տեսնելը
չէր բաւէր, կ'ուզէր հասարակաց ըլլալու իրաւունք ստա-
նալ, և կ'իտորհէր որ զայն ձեռք անցնելու լաւաղոյն մի-
ջոցը սահմարդ մը և անցախօս մ'ունենալն էր : Սակայն
կարելի չ'եղաւ յաջողիլ :

Ասկէ վատ ուրիշ մէկը ելաւ և Մ. Անդօմի օրինակին
հետևելով՝ աղաներէ բաղկացեալ գունդ մի կազմեց, որու

1 Հեղինակն անուն մը որ Գաղղիացի սպահապան զօրքերու կու-
տային, որոնք վերջի սպաներազմներէ մեկուն մէջ դժկամակութիւն
յայտնած և բռնի ստիպուած էին ըզալով Մէյնի անցնելու համար :

Ճեբֆոլ - Ոստադէր + կամ Հանրի Գ. անունը տաին . այս երկրորդ յարանունը ժողովին Բօն-Նեօֆ կազմելուն համար էր : (1) Այս մըցումը սաստիկ կ'իւններ յարուցանելով շատ մը մենամարտութեանց պատճառ եղաւ . երեք տղայ վերաւորուեցան սուինի հարուածով, և չորրորդ մը սուրով վերաւորուեցաւ խիստ վտանգաւոր կերպիւ : Այսչափը բաւական էր չէ թէ աշակերտ զինուորներու գէշ դրութիւնները հանդարտելու՝ հասցա ծնողաց ահաբեկ եռանդը պաղեցնելու համար, որոց ամէնքը, առանց իրարու հետ խորհրդակցելու, միահատան մտածեցին որ իրենց կ'վերաբերէր այս անգամ հրամանը և անյախօսը սալ, և իրենց ծնողական իշխանութեամբ Թագաւորական Թագաճառանգի լուծուիլը վճռեցին :

Միտապոյի թաղումը ամէնէ շքեղ հրատարակային արարողութիւններէ մին եղաւ, որու մէջ կ'երևէր տղայական զօրագունդը և երկու ամիս վերջը նորէն զանի մասնակից կ'գտնենք այն յուզմանն որ թագաւորին Մօնախի փախչելու գեղէն ծնունդ առած էր. բովանդակ Բարիզի մէջ մեծ թմբուկը ընդհանուր հրաւեր կ'կարդար զօրքերու, և փոքրերը նոյնը կ'կրկնէին : Քանի մ'օր վերջը արձակուրդ արուեցաւ : Փողոցի ողբերգութիւնը երթալով ծանր կերպարանք մը կ'առնուր, և ալ տղաներու համար դէր մը չէր մնար :

Բայց չ'աճապարենք եղելութիւնները կանխելու :

Թագաճառանդը չէր կրնար ալ իր պղտի պարտեզը երթալ առանց իր ճանքու վրայ բազմաթիւ մայրերու ռզաւակներ գտնելու : Մայրերը ինքնայօժար յարգանք կ'բարևէր, և զաւակնին մտերմութեամբ :

Իրեն հետ խօսելու փափաքող տղաները կ'մօտէին անոր իբր ընկերի մը . մտիկ կ'ընէր անոնց, վասն զի մտիկ ընել դիտէր, և երբեմն (վասն զի դիտէր նաև յիշել) ստակ տալ կուտար անոնց՝ որոնք իրենց ընտանիքի պէտք

1 Այս հոյակապ կամուրջը Հանրի Գ.ի ժամանակ շինուեցաւ .

ունենալը ըսած էին իրեն։ Օր մը խեղճ մայր մի գալով
 զանի իր ծաղիկներու մէջ կ'դանէ և շորհ մի կ'խնդրէ ան-
 կէ : «Ո՛հ, իշխան, կ'ըսէր անոր, եթէ այս շորհը ընդու-
 նէի՝ թագուհւոյ մը սէս երջանիկ պիտ' ըլլայի : » Իշխա-
 նը դշխոյ—մարգարիտ (reine-marguerite) ժողվելու
 համար ծնուած ըլլալով ոտքի կ'ենէ, և զանի գիտելէ
 ետք յուզուած ձայնիւ մը կ'ըսէ անոր, «Թագուհւոյ ճշ-
 պէ՞ երջանիկ ! . . . Ես կ'ճանչեմ մէկը որ շարունակ
 կուլայ : »

Խեղճ կնոջ աղաչանքը վրան առաւ, որ անհամբերու-
 թեամբ հետևեալ օրը կրկին գալով զանի իր փոքր պար-
 տիզին մէջ կ'դանէր : «Պատասխան մ'ունիմ, ըսաւ անոր
 սղան ուրախութեամբ լեցուած, և պայծառ տեսիլով մ'իր
 գրպանէն ոսկի մը հանեց թուղթի մէջ փաթտուած . «Ա-
 սի մօրս կողմէ է, ահա իմ», » կրկին ըսաւ անոր ծաղ-
 կեայ մեծ փունջ մը տալով :

Բարիք գործելու այս թանկագին տրամադրութիւնը կը
 մտոյցանէին անոր սրտի մէջ թէ հայրը, որ բարեգործու-
 թիւնը իբր կըթու թեան հիմերէ մին կ'նկատէր, և թէ
 մայրը որ բնաւ առիթ չէր կորուսէր անոր սովորեցնելու թէ
 իշխանները թշուառաց պաշտպան՝ և կարօտներու երկրա-
 ւոր նախախնամութիւնը ըլլալու համար ծնած էին . Եւ
 Մարի—Անդուանէթ քաղցր խօսքերով և գեղեցիկ վար-
 դապետութիւններով չէր որ ողորմասիրութեան դասերը
 կ'սահմանէր : Օրինակը պատուերին նեցուկ ընելու միշտ
 պատրաստ՝ չ'կար աղէտ մը, չ'կար դժբաղդութիւն մը զոր
 տեղեկանար առանց օգնութիւն մը, միտթարութիւն մի դը-
 կելու : Իր բարի գործոց հաղորդ ընել կուտար իր աղան թէ
 հիւանդանոցաց խճալիներու նկատմամբ, և թէ դեռ աւե-
 լի շատ թշուառ եղող աղքատներու՝ որոց գաղանապահ
 արտառքները խրճիթներու ցուրտ առանձնութեան մէջ
 կ'վազին :

Երկու հեախոտս ծառանս բով որոնք մեծ և բերաննին բայ քսակննր կ'կրէին՝ փորք իշխանը իր ձեռքով կ'առնուր ամէն մէկ որքի տուած արծաթի դրամները : Տնակին մէջ իր ներկայութեան և առատաձեռնութեան պատճառած երջանկութիւնը տեսնելով՝ հոգեպարար ուրախութիւն մի կ'երևէր իր վրայ , նոյնպէս և աւելի պակաս չէր յուզուէր այն օրհնութիւններէ՝ որոնք իր ճանբու վրայ տեղաւրով մինչև մօրը քով կ'հասնէին :

Գիտողութեան արժանի հանգամանք մ'ալ այն էր որ ամէն պարագայի մէջ և աւելի շատ գրեթէ իրեն հասակակից տղաներու թշուառութեանց զղայուն կ'հանդիսանար : Պարտէզ մտած ժամանակ պահպաններէն կ'խընդբէր միշտ ուղտ թողուլ զանոնք իրեն մօտիկ , որպէս զի կարող ըլլար խօսիլ անոնց հետ , ստակ տալ աւելի շատ աղքատ եղողներու , և ծաղիկներ անոնց՝ որոնք այնչափ աղքատ չէին : Եւ միշտ Գփնոսած Գլայոց (enfant trouvé) ապաստանարանէն մեկնած ժամանակ այնչափ շուտով անոնցմէ բաժնուելուն վրայ իր սրտի ցաւը յայտնելով , « Մայր , մայր , ե՛րբ կրկին պիտի գանք հոս , » կ'պուար օր մը զինքը Թուխլերրի տանող կտրին մէջ մտած ատեն :

Գժբազդ զուտիներու վրայ ունեցած անոր համակրութիւնը տեսնելով՝ չ'կրնա՞ր ըսուիլ որ իր վշտակցութեան մէջ տեսակ մը նախազգացում ունէր , և թէ իր սրտին խորը բան մը կ'յայտնէր իրեն որ ինքն ալ օր մը աղքատ , թշուառ և լքեալ պիտ' ըլլար ?

— Զ'կայ այնչափ համոզիչ որչա՞նք ընտանիքի մ'օրինակը , չ'կայ բան մը որ ամէնէ շատ երջանկաւիթ-փոխադրական ըլլայ , որչափ մանկութենէ սկսեալ մայրուկէն մթնոլորտին մէջ ծնած սիրոյ , պատիւի և բարեգործութեան զգացումը : Երիտասարդ դահաժառանգը իրեն մանր-մունր ծախուց համար յատկացուած գումարին մեծ մասը մէկ կողմ դը-

նելով՝ գեղեցիկ փորձ արկղի մը մէջ կ'սպահէր, զոր իր հօրաբոյրը Մատամ Էլիզ արգել թ տուած էր իրեն, իր խոնարհ զանձին անտեսուհին միանգամայն իր ողորմասիրութեան եռանդուն գործակիցը : Լուի Ժ.Ջ. այս սրարազայէն անտեղեակ չ'ըլլալով՝ տեսաւ օր մը իր տղան որ մտադիւր իր էքիւները (1) համբելու զբաղած վերջէն զանոնք արկղին մէջ կ'գեղեղէր կոյտ առ կոյտ, « Ի՞նչ է այդ Շարլը, բաւ անոր, ազահներու պէս ստակ կ'դանձես ! » Տղան այս ազահ անունին վրայ խռովելով սկսաւ կարմրիլ, բայց խկոյն ուշարբիւով ուրախ կերպարանօք և յստակ արտասանութեամբ մը սրատասխանեց, « Այո՛ հայր իմ, ազահ եմ, բայց զանուած անխնամ ու խեղճ զաւակներու համար է : Ո՛հ, եթէ տեսնէր զանոնք, շատ յարմար անուն տուած են անոնց, ստուգիւ մնարդուս դուր ի՛շարժեն ! » Թագաւորը իր բազկաց մէջ առնելով երիտասարդ ողորմարաշիւր՝ սրտագորով գրկեց զանի : « Այս սրարազային մէջ զաւակս, ես ալ պիտ'օղնեմ քեզ արկղիկդ լեցնելու : »

Ժամանակը կ'քաղէ, սակայն դէպքերը իրմէ աւելի շուտ կ'քալեն. 1790 Յուլիս 14ին, որ Պասթիլի առնուելուն տարեկարձի օրն էր, Արիսեան դաշտին մէջ (champ de Mars) Գազդիշ ընդհանուր դաշնադրութեան քաղաքային աօնը կատարեցաւ :

89ի սերունդը այս մեծ աօներու սիրահար էր, որ բովանդակ ժողովուրդը մի և նոյն կեանքի մէջ ապրեցնել տալով բոլոր սիրտերը միարանութեան համար բարասել կուտան : Յեղափոխութեան այս թատերական մասը՝ սոյն արարողութեանց մէջ մի և նոյն ատեն թէ դերասան և թէ հանդիսական եղող բազմութեան ողինները կ'շրջայներ : Ժողովուրդը մի և նոյն անհամբերութեամբ կ'սպասէր այն նոր տախտակներուն՝ որոց վրայ տասնութերորդ դարու փիլիսոփայութիւնը իր տասնարանեայ սպառախրանները գրած էր, ինչպէս որ Հրէաները Սինալեւան վրայէ Աս

1 Մէկ էքիւ (écu) հարիւր ինն ամիգիմ է :

տուժոյ իրենց տուած սուրբ օրինաց սպասեցին անասաւորին մէջ : Այնպէս կ'երեւէր որ կարգը, խաղաղութիւնը, ազատութիւնը, յառաջագիւտութիւնը, յաջողութիւնը, վերջապէս ամէն բան սահմանադրութեան մէջ պիտի պարունակուէր, և Ֆրանսա մտնալով իր Ահ դար ապրած ըլլալը կ'կարծէր որ 1790 Յուլիս Ահէն միայն պիտի սկսէր տալ իւր Բողոք գաւառները հոն են, թագաւորը նոր սահմանադրութեան համար երդում կ'ատնու. 'ի վկայութիւն հաւատարմութեան թագաւորը իր ձեռքը վերուցած ատեն անհամար ձեռներ կ'ըարձրանան իրմէ ետք. թնդանօթը կ'որոտայ, շէփորանները կ'հնչեն, ամէն կողմէ ուրախութեան աղաղակներ կ'լսուին. թագուհին, որ զահին վերնակողմը բեմին վրայ կ'դանուէր՝ թագածառանդը իրբազկաց մէջ կ'առնու, և զանի ժողովուրդին բանակին և բովանդակ ազգին ներկայացնել կ'ուզէ. նոյն իսկ տղան իբր երկնից օրհնութիւնը Պաղղլոյ վրայ հայցելու համար իր անմեղ ձեռները կ'ըարձրանայնէ : Ասթուղին սէրը և եռանդը կատարեալ էր : Խէնթի մը տեղ պիտ' անցնէր անտարակոյս այն մարդարէն՝ որ բովանդակ տէրութեան վրայ թափելիք աղէաներու հեղեղը դուշակէր հանդիսականաց : Պաշտարաններու Բարիկի մէջ կեցած միջոցին Թուրքերի բակերը կեցեէնէ և օրհնութեանց աղաղակներով կ'թնդային. պարտիզին ծասերը, պալատի պատերը հաւատարիմ և խորհրդաւոր նշաններով և համակրական նշանաբաններով լեցուած էին : Պահածառանդին դաշնակիցները 'ի մասնաւորի ամենասիրալիր յարգանքներ նուիրեցին անոր. արքայորդոյն ընդունած կերպերէն յայանի կ'երեւէր թէ որչափ որ իր հասակը տակաւին փոքր՝ (հինգ տարի և քանի մ'ամիս) սակայն և այնպէս կ'ճանչէր անոնց զգայնութիւնը, և իրեն պարծանք կ'սեպէր սոյն օրինակ զգացումներ պահող նահանգի մ'անուշը կրել իր վրայ :

Սակայն դաշնու որհերու բարի տրամադրութեանց հասկառակ, բոլոր տէրութեան մէջ անիրշխանութիւնը կ'տարածուի: Հասարակաց իշխանութիւնները օրագրոց շարունակ ամբաստանութեանց հետ կ'կուսին. Մ. Նէքէր ըստիպուելով կամ թշնամանաց ենթակայանալ և կամ հըրաժարիլ՝ դործերէ կ'հեռանայ կրկին ետ չ'դառնալու համար: Ազգային ժողովը այս կուսքին իր սլատուանդանի վրայէ թաւաղըր անկումը կ'ծափահարէ, գաւառները անտարբերութեամբ կ'դիտեն: Թագաւորին հօրաքոյրերը անգամ կ'որոշեն Հուովմ քաշուիլ, (ժողովէ անցազիր չ'ունենալուն համար Արնէ-լը-Տիւքի մէջ բաւական օր կ'արդիլուին,) յեղափոխութիւնը կ'փորձէր արքայական անձերուն վրայ իր ձեռքը դնել. թագաւորին իշխանութիւնը օր ըստ օրէ աւելի կ'հակառակուի և իր ազատութիւնը աւելի կ'ամփոփուի: Միրապօ կ'մեռնի, իր հետ տանելով, ինչպէս ինք ալ կ'ըսէ, Ժողովուրդն ու գործերը: Թագաւորը իր վաղեմի թշնամին միանգամայն և բարեկամ մը կ'կորուսէ. բայց գէշութեան մէջ այնչափ զօրաւոր ըլլալէ ետք՝ բարութեան մէջ միթէ անզօր չ'մնայ նա: Ասի Մատամ Ելիզապէթի կարծիքն էր: « Չեմ կարծեր, կ'գրեր նա Մատամ Բէժբուր իր բարեկամուհւոյն, որ Ատուած սկզբունք և բարք չ'ունեցող անձերու ձեռքը վնեղ ազատել ուզէ »:

Աւագ շարաթը կ'մօտի: Լուի Ժ.Չ. վախնալով որ պիտի չ'կրնայ Բարիզի մէջ իր կրօնական պարտաւորութիւնները կատարել, որոց համար նուիրուած են այս օրերը՝ կ'առաջագրէ Չատիի երկու շարաթը Սէն-Քլու անցնել, մէջ բերելով թէ ցաւալի տկարութեանէ մը վերջը որմէ կատարելապէս առողջ անալուն արդեւք կ'ըլլար Բարիզ կենալը՝ հարկ էր իրեն համար գլուղը օգափոխութեան երթալ: Պարազլուխները քաղաքի ամէն թաղերու մէջ կը

հրատարակեն թէ այս օրափոխութիւնը պատրուակ մ'է, և թէ անոր տակ փախուստի գիտաւորութիւններ կ'ծածկուին՝ կ'կրկնեն նաև թէ թաղաւորը երդում առած ըլլալուն համար իր սովորական խոստովանահասցիքը թողուցած է: Այս կերպիւ Բարիկը այնչափ դժուարահաւատ և այնչափ դիւրահաւատ ժողովուրդը կ'յուզեն, որ միաբերան թաղաւորին չ'մեկնիլը, միանգամայն անոր թաղական եկեղեցին յաճախելը և սահմանադրական առաջնորդէն հաղորդիլը կ'սրահանջէ:

« Առջին ստիպել թաղաւորը, կ'զրէ Մատամ Ելիզապէթ իր բարեկամուհւոյն, իր մատուոյի քահանաները ճանբել, կամ անոնց առջև երդում առնելով զատիկը թեմական եկեղեցին ընելը: Ահա երեկուան աստուածութեան պատճառով Սէն-Քլոյի ճանբորդութիւնը գրեթէ սրտբուակ ըրին: Պահապան զօրքը Ղա Ֆայէթի և իր բոլոր պաշտօնակալներու կատարելապէս անհնազանդեցաւ, բարեբաղդարար դժբաղդութիւն մը տեղի չ'ունեցաւ: Թաղաւորը աշխոթիւ և բարեսրտութեամբ խօսելով կատարեալ վեհանձնութիւն մը կ'կրէր: »

Ահաւասիկ ինչ կերպիւ տեղի ունեցած էին այս դէպքերը: Թաղաւորը ժողովրդեան յուզումը տեսնելով միտքը փոխած՝ սակայն Պայլիի և Ղա Ֆայէթի թախանձանքները կրկին անոր միտքը կ'ընեն, առաօտեան ժամը Վիլին իր ընտանիքի հետ կառք կ'մտնէ, անմիջապէս անթիւ բազմութիւն մը կատրը կ'սրաշարեն: Պատիկ զինուորներու կամակորութիւնը պալատի դռները կ'գոցէ, կատրին բոլորակը կ'վիժի, կ'սպռայ, կ'սպառնայ և սուխնները ձիերու լանջին կ'ուղղէ: « Թաղաւորը սէտք է մեկնի, կ'յայտնէ Ղա Ֆայէթ, եթէ ստիպուիմ անդամ զինուորութեամբ վարուիլ և արիւն թափել: »: Բայց գիմադրութիւնը կ'շարունակէ, զէնք չ'զործածուիր, և թաղաւորը երկու ժամ

չարունակ կուոյ մը մէջ անցնելէ վերջը՝ ամենաբիրտ հա-
խատմանքներու մէջէ, չ'ուղեղով աղցային պահասարան զօրաց
մէկ մասը միւսին հետ կոտեցնել, հաստատուէ՛ս ետ կը
կենաց ճանրորդութենէ և դասնալով իր սենեակները կամ
լաւ ևս իր բանալը կ'մանէ :

Թագաժառանգը որ ամէն աղաներու պէս վտիճաթիւնը
կ'սիրէր՝ և հաղարտոր աղէկ միջոցներ մտածած էր զրօս-
նելու համար եթէ Յէն-Քլու երթալու ըլլար՝ այս հակ-
հրամանին (contre-ordre) վրայ խիտ վշտացաւ : Այս
վիշաք անոր մտցնել տալու համար Տալօ արքան անոր
սենեակը մանելով՝ Պէրքէնէ գրուած մէկ հասար «Բա-
րեկամ Տղայոց» (Ami des enfants) տաւ անոր :
Երխտասարդ իշխանը ըստ գիպաց բանալով զան բոլորո-
վին զարմացմամբ կ'որոայ, « Եհն պարագաներուս յար-
մար գլուխ մը Պ. Արքա, տեսէք սրտաճէնը, ինչ զար-
մանաղի բան, ողջի բանորիւնը ! »

Հետեւեալ օր Թագաւորը Ազգային ժողովը կ'մանէ :
« Պարմաներ, կ'ըսէ անոնց, կուգամ ձեր մէջ այն վրս-
տահութեամբ զոր միշտ յայտնած եմ ձեզ, երէկ իմ
Յէն-Քլու երթալու արդիւրելու համար ըրած գիմնադրու-
թիւննին տեղեկացար : Չուղեցի որ զանոնք գտելու հա-
մար զինուորական ոյժ բանեցնեն, վասն զի կ'իմանամ խր-
տաթեան միջոցներ գրգուկ այնպիսի բազմութեան մը դէմ որ
խարտած է, և որ օրէնքները լուծելով կարծէ թէ ըստ
օրինի կ'գործէ, սակայն ազգիս համար կարեւոր է հաստա-
տել իմ ազատ ըլլալս, ձեր վճիռներու համար իմ ար-
ւած հտանութիւնս և ընդունելութիւնս որ ձեզ բերելի ը-
նելու համար չ'կայ սակէ աւելի էտկան բան մը : Ար-
ւելիք եմ ուրեմն այս զօրաւոր պահապանի իմ Յէն-Քլու
երթալու գիտարութիւնս, որու հարկաւորութիւնը
Ազգային ժողովը պիտի զգայ : »

Այս ընթացքը, որ թէ՛ Զատերու թեան մէջ և թէ՛ անկէ զուրս թաղաւորին գերի եղած ըլլալուն խիստ իրաւացի կարծիքը կրնար հաստատել՝ շատ կ'ըփոթէր Ազգային ժողովը. ուստի անոր նախագահը համեմատիւ պատասխանեց թէ՛ յուզումը անբաժանելի է ազատութեան յառաջադիմութենէ, բայց սակայն ամէն սիրտ թաղաւորին յարած ըլլալով՝ ինչպէս նա ժողովրդի երջանկութիւնը կ'ուզէր՝ այսպէս ալ ժողովուրդը իր թաղաւորին երջանկութիւնը կր ինդրէր :

Թաղաւորը Սէն — Բլու չ'գնաց, նա մանաւանդ տեսնելով որ ոչ — երգութեալ պտպական քահաներու գէմ զայրոյթը օր ըստ օրէ կ'ամօքէր՝ իր մատուր կազմող բոլոր եկեղացականներէն ինչոքեց որ իրմէ հեռանան : Այս շնորհումները (concession) խռովարարներու աննկրողութեան (intolerance) թնտ բաւական չ'եղան : Պահանջեցին որ ապրիլ 24ին, Չատիլ օրը, թաղաւորը և թաղահին Սէն — Ժէրմէն — լ'Օբսըրուա իրենց պալատի թեմական եկեղեցին երթան սահմանադրական քարտիչէն պտտարագ լսելու համար, որ նախկին առաջնորդը հրաժարեցուցած էր իր պաշտօնէն եպիսկոպոսական ժողովոյ յայտնած սկզբունքներու հաւատարիմ մնացած ըլլալուն համար, և զորս բարը 1790 Յուլիս 10ին իր քահանայապետական հրովարտակին մէջ հրապարակու վաւերացուցած էր :

Մատամ Էլիզապէթ թնտ ստիպուած չ'ըլլալով այս տեսակ զգուշութեանց ենթակայանալ՝ յայտնեց որ զատկուան պտտարագը պալատի մատուռին մէջ իր ողորմութաշինէն պիտի լսէր : Նոյն իսկ իր սենեկի մօտ գտնուող մը պատերուն վրայ փակուած գարշելի ծանուցողները յետին աստիճան նախատանայ կ'ենթարկէին զինքը եթէ թաղաւորին չ'քնկերանար իր թեմի եկեղեցին երթալու :

Այս սպառնալիքները ամենեւին բանի տեղ չ'գնե-

լով իր որոշման մէջ հաստատու մնաց, այսու ամենայնիւ չհաղորդուեցաւ իսկ: « Կ'յուսայի, կ'զրէ նա, աւագ հինգշաբթի և զաւկի օրը հաղորդուելու Երջանկութիւնը ունենալ, բայց պարագաները զիս զրկեցին այս երանութենէ, կ'վախնամ որ պալատի մէջ խռովութեան մը պատճառ չ'ըլլամ: »

Ի զուր Լուի Ժ.Չ. ՚ի միտս իւր իշխանութեան նոյն իսկ իր խիզճը տապալտելով կ'աշխատէր խաղաղութիւնը և հանդարտութիւնը մերահաստատել տէրութեան մէջ. իր համբերութիւնը, իր բարեսրտութիւնը, առանց կարող ըլլալու իր սրտի մէջ ունեցած անչափ սէրը ժողովրդեան սրտին մէջ փոխադրելու, մինչև անգամ անուղղակի հակամբաստանութիւնները (récrimination) և թշնամանքները կ'կրկնապատկեն: Մոյրումը (égarement) օրէ օր աւելի կոյր, լքումները (défection) աւելի յանդուգն, և պահանջումները աւելի անհանդուրժելի կ'դառնան: Թագաւորը կա բող չէր իր գլուխը սրտտահանէն զուր հանել առանց նախաախնք մը գրգոելու, առանց թշնամանք մ'ընդունելու: Լուծը հեղահեղէ այնչափ կ'ծանրանար որ ալ ուրիշ բան չէր մնար ընել եթէ ոչ կամ անկէ խոյս տալ և կամ զանի խորտակել: Սակայն յեղաշրջումը որ մինչև անստեղծ Լուի Ժ.Չ. ՚ի վրայ յարձակած էր միայն իր միասելտի իրաւանց, իշխանախան աստիճանին և մարդկային ազատութեան մէջ հիմա աւելի զգալի յարձակումի կ'ուղղէր անոր դէմ. կղերի քաղաքային սահմանադրութեամբ և ժողովոյ մոլեռանդ աններողութեամբ, որ ինչպէս՝ արքունի գաւազանին նոյնպէս և բուրուտին ձեռք կ'երկընցընէր՝ անոր քրիստոնէական պարտաւորութեանց մէջ յարձակած էր անոր վրայ: 1790 Յուլիս 10ին բաբը այսպէս գրած էր թագաւորին: « Եթէ արքայական առանձնաշնորհութեան անբաժանելի իրաւունքն ընդ անգամ

Հրածարելու միտք ունենաք՝ իրաւունք չ'ունիք բնաւ օտարին յանձնել կամ թողուլ ինչ որ Աստուծոյ և եկեղեցւոյ իրաւունքն է և որու անդրանիկ զաւակն էր : » Նոյն տարւոյն Սեպտեմբեր 13ին բարը նորնամակաւ մ'իմացուցած էր թագաւորին որ կղերի քաղաքային սահմանադրութիւնը «սպաստական կրօնի հիմանց հակառակ » էր : Աերջապէս կարդինայնբու գրուած կոնդակի մը մէջ 1791 Ապրիլ 13 թուականաւ , բարը կղերի քաղաքային սահմանադրութեան համար տրուած երդումը հերձուածութիւն անուանեց :

Յեղափոխութիւնը իրեն անծանօթ զօրութեան մը կ'հանդիպէր և ուր թշուառ մէջ : Թագաւորը ամէն զոհողութիւններ ըրած էր , իշխանը ամէն փորձութիւններու գլուխ ծըռած , մարդը ամէն թշնամարի համբերութեամբ տարած , սակայն քրիստոնեան անդրդուելի կեցաւ :

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ

Ճ Ա Ն Ի Ո Ր Գ Ո Ի Թ Ի Ի Ն Ի Վ Ա Ր Է Ն

20—26 ՅՈՒՆԻՍ 1791

Թագաւորին զժկանակութիւնը սոյն ճանբորդութեան
Համար.— Միրապօի ծրագիրը.— Թղթակցութիւն Պուիլ-
էէի հետ.— Փախուստի պատրաստութիւնը.— Պ. ար Ֆէր-
սան.— Պալատը հսկողութեան տակ կ'առնուի.— Ներքին
մանրամասն պարագաները.— Արքայական ընտանիքը թուիլ-
էրիէ կ'մեկնի.— Ծոյտեալ Հագուստ և կեղծ անուններ կ'առ-
նու սյա ճանբորդութեան համար.— Պօնտի.— Քէյ.— Մօն-
միրայլ.— Շալօն.— Թագաւորը կ'ճանչուի.— Չգործա-
դրուած հրամաններ.— Սէնդ—Մընուլ.— Տրուէ.— Քը-
լէրօն.— Վարէն.— Արքայական ընտանիքի բանուիլը.—
Ժողովոյ վճիռը.— Վերադարձ.— Քէրօն.— Սէնդ—Մը-
նուլ.— Շալօն.— Պ. ար Տամբիէի սպանումը.— Պ. Բա-
ղօղ.— Իրէրնէ.— Ազգային ժողովէ երէք գործակալներու
համիլը.— Պահածաւանդը և Պարնալ.— Լա Ֆէրթէ—
սու—ժուար.— Մօ.— Բարիզ.— Պ. Վիլէրօն.— Պահածա-
ւանդին խօսքերը.— Խորհրդածութիւնը սյա ճանբորդութեան
ազէտարէր հետեւանքին վրայ :

Թագաւորական ընտանիքի փախուստի խնդիրը ար-
դէն խիստ շատ անդամ յուզուած ըլլալով՝ Թագաւորը
մինչև անատեն հաստատուէն վաճառ էր այս գաղափա-
րը : Իր յիշողութեան առջև միշտ ներկայ եղող երկու
պատմական յիշատակներ իր վարույ շարժառիթը եղած
էին . Ժաք Բ․ որ պալատը լքելուն համար դահը կորուսած
էր , և Շարլը Ա․ որ կախաղանը տարուեցաւ խորհրդա-
րանի հետ կուտելուն համար : Աւստի համոզուած ըլլալով
որ անհրաժեշտ հարկ էր երկու վաճառներէ խորշիլ , այ-
սինքն փախուստէ և քաղաքային պատերազմէ , իւրովի որո-

շած էր մինչև վերջին կէտը համբերել և սահմանադրու-
թեամբ իշխելու փորձ փորձել :

Այս փորձը , ինչպէս տեսանք , երկար , ցաւալի և սոս-
կալի եղաւ : Թաղաւորին անձկութիւնները և փորձութիւն-
ները օրէ օր աւելցան : Ի սկզբան այս շատ անգամ խօս-
ուած և միշտ ետ ձգուած փախուստի գիտաւորութեան
համար Բարիդի մէջ իրեն միակ մտերիմ՝ խորհրդակա՛ն ու-
նեցաւ թաղուհին և Մատամ՝ Ալեղապէթ . և Բարիդէ-
դուրս՝ Պուխլէ մարքիզը , որ այնպիսի վատահոթիւն մը
կ'ներշնչէր անոր սրտի մէջ՝ որու ըրած գործերը մեծ ա-
պացոյցներ էին այն ինչ՝ Նանսիի պահապան գուռի ապս-
տամբութիւնը մեծ աշարժութեամբ նուաճեց և կարգ կա-
նոն վերահաստատեց իր բանակի մէջ :

Միրապօ իր մահէ քանի մ'օր ստաջ յատակադիմ մ'ա-
ռաջարկած էր որով թաղաւորը սահմանակից երկրի մը մէջ
իրեն կողմնակիցներու քով գանուելով՝ անկէ ծողովոյ
հետ սլիտի բանակցէր :

Միրապօյի այս գաղափարը ամէն սոյնօրինակ գիտաւո-
րութեանց պէս ՚ի սկզբան ետ ձգուելով՝ քիչ մը վերջօ
ընդունուեցաւ , երբ թաղաւորը համբերութիւնը հատած՝
որոշեց ալ իր խղճին անգամ անհանդուրժելի դարձած
ստրկութենէ մըխուսափիլ :

Թուանշաններով թղթալցութիւն մը հաստատած էր
Պուխլէ մարքիզին հետ : Այս փոխ-զօրապետը Պրուա-
նիլէշէի մէջ բանակի մը թուաւոր բաժնին ընդհանուր հը-
րամանասարը ըլլալով իր հրամանի տակ ունէր Ֆրանշ-
ֆօնթէի , Շամբանի , Ալասի և Աօրէնի մէջ տարած-
ուած գունդերը , և այսպէս Սուխէն սկսեալ մինչև Մօ-
զէլ և Սամսրը՝ Գաղղիոյ սահմանները կ'ազաւարանէր :

Բայց յեղափոխութեան շունչը այս բանակի գրեթէ բո-
լոր ատրիճաններու մէջ թափանձած՝ անոր գլխաւորը միայն

Հասն վաշտ գերմանացի հետեւակներու և երեք կամ չորս հեծեւազօր գունդերու միասեւտական հաւատարմութեան կրնար վստահել :

Ուստի թագաւորին և զօրապետին մէջ յատակագիծ մը կարգադրուեցաւ, որով Լուի Ժ.Ձ. պէտք էր Մօնպէնէ երթալ որ սահմանադրութիւն մօտ տակար տեղ մ'էր :

Պուլիէէ առաջարկած էր ոչ վտանգը քիչցնելու համար պէտք էր բաժնուիլ և առաջ թագուհին դահաժատանդին հետ միայն մեկնիլ. տակայն թագուհին չ'հաւանելով « Եթէ կ'ուզէն զմեզ ազատել, ըստ, կամ ամէնքս մէկտեղ ազատեն և կամ բնտ » :

Թագաւորը ան ասեն կ'ըրէր Պուլիէէի (29¹ ապրիլ) որ այս ճանրորդութեան համար բոլոր իր բնասանկը պարունակող մեծութեամբ մասնաւոր պէտքին (ճանրորդութեան կառ.ք) մը շինել կու տար : Չօրապետը Թագաւորին միտքը փոխելու աշխատելով առաջարկեց այնպիսի կառ.քով մը ճանրորդել՝ որ իր ձեռով հասարակութեան ուշադրութիւնը չըզրաւէ, և յորդորեց զանի նոյն ասեն սովորութիւն եղած երկու շատ թեթեւ Մտղի՛ական փոքր սնդակառ.ք (diligence) գործածել. Թագաւորը զժբաղդարար չ'ընջաւ այս խորհուրդին :

Ճանրորդութիւնը նախ յունիսի 19է 20ի գիշերը բոշուած ըլլալով՝ չկրցաւ տեղի ունենալ եթէ ոչ 20է 21ի գիշերը. վասն զի սահմանադրութեան հարկ էր Թագուհւոյն սենեկուհիէ մը (femme de chambre) բոլոր պատրաստութիւնները ծածկել, որ եռանդուն հանրապետական մ'ըլլալով կարող էր փախուստը հրապարակել, և որու ծառայութիւնը 19ին միայն կ'ընթանար :

Ժամանակ չկար կորուսելու. Այս փախուստի գիտատարութիւնը արդէն կ'սկսէր երևան գալ, վասն զի տակաւ առ տակաւ հարկ եղած էր իրենց օգնականները գաղտնի-

քին մասնակցել, որոց որ կրնային վտասՀիլ : Մակայն ասնր կ'իսօսէին իրենց մէջ, և նոյն ժամանակուան թոյլ բարբր և քանի մ'անխորհուրդ ընթացքներ խորհրդականներու թիւը կրկնապատկած, և ասով թագաւորական ընտանիքի մտաւկայ փախուստի լուրը օտար երկրներ շատ ժողովներու մէջ կատարելապէս տարածուելով՝ մինչև անդամ Թուրքերին մէջ ծառաներու հասարակ խօսակցութեանց նիւթ ճղած էր : Ահա այսպէս թագաւորական ընտանիքի նախորոշուած փախուստի շուկը յունիս ³ Թի և 20 ի օրերը ժողովուրդը ան աստիճան յուզեց՝ որ մինչև անդամ մանրամասն յայտարարութիւններ զրկուելոյն ոտակկանութեան : Այս աղմուկները բնականաբար արդէն այնչափ աշտուրջ և խիստ կասկածոս հակողութիւնը աւելի պիտ'արթնցնէին՝ որոց ենթակայ եղած էր սրբատը : Պէտք է նաև չմոռնալ որ նոյն ժամանակ Թուրքերին սրբատը սեռակ մը ջանտ էր, որու գլխաւոր սրատասխանատուն Աս Գայէթ լլլալով՝ ազգային պահապան զօրքը սրահներու մէջ իր պաշտօնը կ'կատարէր : Յեղեկը տարբեր կայաններու հրամայող պաշտօնակալները կ'երթային Թագաւոր, Թագուհին և Մատամ՝ Էլիզապէթ ընդունելու երբ կառքէն կ'իջնէին, և անոնց աստիճանին անկ եղած մեծարանքը տալու սրտորակաւ սրբատը կ'ատջնորդէին անոնց : Բայց իրապէս, անոնց վրայ անկառ և նախատական հակողութիւն մ'աւելցրնելու համար էր այս լրտածնին : Վստն զի մթննապէ վերջը Թագաւորը, Թագուհին և Մատամ՝ Էլիզապէթ իրենց սենեակը դոցուելով՝ սահակները անկողին մը կ'երկրնցրնէին դռներուն ստջև, որպէս զի թագաւորական ընտանիքը չ'իրնայ չուրս ելնել շտանց այս բանտապահ գարձող սահակներու լնորմիննու՜ վրայէ անցնելու : Ուր՝ մն յերեկը անշարելի էր փախուստը և զիշերը խիստ դժուարին :

Արքայական ընտանիքը զիշերները իր բոլորակըր պաշա-

բող զգուշութիւններէ տեղեակ ըլլալով՝ երկար ասեմէ՛ր վեր դադանի անյքեք՝ բանալ տուած էր : Անցե. զ յաւնալ ամե՛ն սկսեալ Մատամ՝ Նլիզալէ՛ թի սրահի տախտակ բմածին մէջ աշնդիսի ճարտարութեամբ գոտա ճը շինած էին՝ որ առանց ճանրադնին որ. նէլա զգոտարին էր յայտնուել : Այն վկայութիւնը վ. յճէն դատաստանի մէջ տրուեցաւ :

Այս դուռը զմբէթի մ' առաջնորդող փոքր սանդուղի մը վրայ կ'ըստէր, որ կ'զատէր Մատամ՝ Նլիզալէ՛ թի սրահը թաղուհւոյն սրահէն : Այն օրինակ դռներ նոյնպէս արքայական ընտանիքի սենեակներու մէջ շինուած ըլլալով՝ գլխաւոր բանալիներու միջոցաւ կ'ըստէին, զորս կ'ընտրին առանց գոտարութեան փրանին կրել, և տախտակաւնի երեսին վրայ ամենայն ճշգրտութեամբ յարգարուած ըլլալով անանկ մէկ աննշմարելի կերպով մը կ'գոյտէին՝ որ առանց պատասակալներով ծածկուած ըլլալու անգամ խիստ մեծ գոտարութեամբ կրնային յայտնուիլ : Արջապէս զգուշաւոր միջոցներով կարող եղած էին երկար ասեմէ՛ր վեր դոյ սրահուած դուռ մը բանալ և գործածել, որու առջև հոգ տարած էին կարասի մը զետեղել որ իր փեղկերը գէմ՝ սո. գէմ՝ բացած ժամանակ զանի կ'ծածկէր առանց գոցելու : Այս դուռին միջոցաւ կրնային մէկ սենեկէ միւսը անցնիլ և մինչև անգամ պարտէ դուրս ելնել : Այն միջոցներու ճարտարամիտ նախատեսութիւնը արքայական ընտանիքի բանտարկութեան խստութիւնը կ'ապացուցանէր : միայն բանտարկեալները կարող են այսպիսի արհեստ և արդիւնաւոր հնարքներ երկնելու :

Յունիս ՉՅի առաւօտ ժամը տասնին գահաժառանգը իր սենեկէ ելաւ թուղիլըրի մէկ ծայրը եղող իր սյարակըլ երթալու համար : ժամը ՎՎին թաղուհւոյն բոլոր իր շքադիրներով պատարալ լսելու գնաց : Մատուռէն դուրս ելած ասեմ հրաման ըրաւ որ ժամը հինգին կատրը պատրաստ ընեն :

«Յունիս 20ի բողոք օրը, կ'ըրէ Գառնա՛լ Բօյալ (Թագաւորին աղջիկը) իր Աւարէնի ճանրորդութեան զբայ դրած պատմութեան մէջ, հայրս և մայրս խիտ շատ յուզուած երեկցան ինձ, և պատճառը չ'ըխտէի: Թամը հինգին մայրս, զիս և եղբայրս մէկտեղ տած, նոյնպէս և Գառնա՛լ ար Գայլէ իր պարտուհին և Գառնա՛լ ար Յո. սի եղբօրս երկրորդական կատարաբնահին, Թրիփօլի դայինք ժռո. դպու՛ որ Ըօսէ ա՛ Անթէի ծայրն է: Քայլած ժամանակնիս մայրս զիս մէկ կողմ քաշեց և խնայոց ինձ թէ պէտք չէի սն հանդիսաւ բլլալ բողոք իմ տենեկերներու վրայ»:

Թագաւորը և իր ընտանիքը սովորական ժաման իրենց ընթրիքը ընկէ և պատկերու թողաւութիւն տառնալէ ետք, ինչպէս կ'ըսէին ան տտեն, այն անձերը որոնք սովորութիւն ունէին նոյն ժաման թագաւորական սրահը դանտիլ՝ ժամը տաննէն վերջը իրենց սենեակը քաշուած էին: Պալատի սովորութիւնները ճշդիւ կատարուած, թագածատանցը ժամը իննին, մատա՛ Բօյալ տանին, Թագուհին տանուկէսի մօտ և Թագաւորը Ա լը 20 անցնելով անկողին մտած էին: Միւս օրուան հրամանները արդէն տրուած էին ւստատորներու, դռները բանալիով գոցուած, սովորական նախադրուշութիւնները ձեռք առնուած, և մէկ քանի տեղ, գլխաւորաբար Գառնա՛լ Ելիզապէթի դրան առջև, սրահակներու թիւը կրկնապատկուած էր:

Հազիւ հազ արքայական սպասաւորները մեկնած՝ երբ Թագաւորը, Թագուհին և Գառնա՛լ Ելիզապէթ ելնելով մէկ մանրերկրորդի մէջ կ'արատրատուին մեկնելու: Թագուհին իր աղջկան սենեակը մօտեցած ատեն Գառնա՛լ Բօյալ իր դրան առջև շշուկ մը լսելով սենեկուհոյն խնայ կու տայ, որ թէ և կ'վարանի՝ սակայն Թագուհոյն ձայնը լսելով Գառնա՛լ Պրիւնիէ կ'աճապարէ դուրը բանալու: Թագուհին ներս մտնելով անմիջապէս փախուստի դիտաւորութիւնը կ'խնայնէ այս

վերջինին, նոյնպէս անոր և Մատամ՝ Նէօվիլի իրեն ընկերակից ըլլալու համար որոշուած ըլլալը, և կ'հրամայէ որ Մատամ՝ Բօյալը հաղուեցնելով գահածառանդին սենեակը բերէ: Իշխանուհւոյն համար որոշուած զգեսալը պարզ լաժէ մը շինուելու համար կար կարող կ'նոջ մ'ապաստուած էր ծախու առնելու, որ շորս Ֆրանկր սասը սուի գնուած թուխ չիթ մ'էր:

Թագածառանդին փոքր աղջկան հաղուսս կ'հաղցնեն որ պանչելի կերպարանք մը կ'ստանայ այս զգեստին տակ: Խեղճ սղան ժամը ՎՎին և Եթ արթնցած՝ քունը աչերէն կը վազի և եղած բաներէն բան մը չ'հասկընար: Ար քոյրը, որ այս պարագաները ինք գրեց, կ'հարցնէ անոր թէ ինչ կը կարծէ որ պիտ'ընեն: «Արծեմ, կ'պատասխանէ աչերը կիսաբաց, կատակերդութուն մը ներկայացնելու կ'պատարասուին, վասն զի ծպտեալ հաղուսաներ հագած ենք»:

Եկննելու վայրկենին Մատամ՝ ար Նէօվիլ և Մատամ՝ Պրիւնիէ գահածառանդը և Մատամ՝ Բօյալ առնելով Թագուհւոյն միջնասենեակը (entre-sol) կ'սանին, որ նոյնպէս կ'գանուի Մատամ՝ ար Թուրլէլ: Ժամը հազիւ թէ ՎՎ¹/₂ կար:

Թագուհւոյն սենեակէն մեկնելով սանդուղէ մը վար լջնելէ ետք՝ Մ. ար Վիլլիքիէի սենեակներու դռներէն մեկուն հետ հաղորդակցութիւն տեսնող ճեմելի մը վրայ կ'յառաջանան: Թագուհին իր զաւակաց կ'առաջնորդէ ձեռքերնէն բռնած, Մատամ՝ ար Թուրլէլ վերջէն Մատամ՝ Նէօվիլ և Մատամ՝ Պրիւնիէ անոնց ետեւ կ'երթան: Բաւական երկարատեն կ'անցնի սենեակին դուռը բանալու համար, և Մատամ՝ ար Նէօվիլ կէս-քուն եղող թագածառանդը համբերել տալու համար՝ սանդուղին գլուխը կ'նստի և անոր քնացող գլուխը իր ծնկաց վրայ կ'կրթէ:

Պահակներու ուշադրութիւնը չ'արթնցնելու համար այն-

պէս սրատշաճ տեսնուած էր որ զատ զատ խումբերով մեկնին:

Թագուհին իր քայլը շարունակելով՝ Թագածառանդը, Մատամ՝ Բոյալ և Մատամ տը Թուրքէլ Իշխաններու Բակը կ'առաջնորդէ ուր կատքը կ'սպասէր, և զս'նոնք ներս մտցընելով կրկին կ'գառնայ սպառտը: Այս կատքին կառավարն էր կոմս Ա. քսէլ տը Ֆէրսէն: Ատքը Իշխաններու Բակէն կ'մեկնէ, և վերջէն սրահակներու հսկողութիւնը 'ի գերև հանելու համար թողին մէջ քանի մը սրտոյաներ ընելով՝ կու գայ փոքր Քարուղէլի վրայ սպասելու ինչպէս որ որոշուած էր: Ատքը հոն սրտած ժամանակ Ղա Ֆայէթ՝ որ Թագաւորին քովն էր սրակելէ առաջ, իր ստվարութեան համաձայն ջահերով շրջապատեալ և իր կատքով կ'անցնի բոլորովին մօտ առ մօտ: Ղա Ֆայէթ բան մը չ'տեսներ, բան մը չ'ձանչուիր: Գահածառանդը իր կառավարչուհոյն բողային տակ կ'կծկուի կատքին խորը:

«Մէկ ժամ ետքը, կ'ըսէ Մատամ Բոյալ, կին մը տեսայ որ կատքին բոլորակքը կ'գառնար, և վախցայ որ զմեզ չ'մտանեն: Սակայն սիրտս հանգստացաւ տեսնելով որ կառավարը դուռը կ'բանար անոր համար, և հօրաբոյրս էր»:

Մատամ Էլիզապէթ կատք մտած տտեն անդդուշութեամբ Գահածառանդին վրայ կոխեց, որու անմիջապէս խնայ տրուելով որ պէտք չէր ձայն հանել և ոչ խի շարժիլ խեղճը ամենեւին ճիգ մը չ'հանեց: Թագաւորը և Թագուհին դալու կ'ուշանան. այս յարադումը Մատամ Էլիզապէթի և Մատամ Թուրքէլի անհանգստութիւն կ'պատճառէ:

Այս ժամ սպասելէ ետք Թագաւորը կ'երևի թղթատարի հաղուտով ծարրեալ անձնապահի մը հետ որ Մ. տը Մալտանն էր:

Թագուհին քիչ մը հեռաւորութեամբ Աուի Թ.Զ.ի կ'հետևէր, բայց Քարուղէլի մեծ հրապարակէն անցած վայրիկնին՝ զօրասկտ Ղա Ֆայէթի կատքին դալը կ'տեսնէ, և որ-

շատի որ իր երեսը ծածկող ղլխարկ մը կ'կրէր զլխուն վրայ՝ կ'ուզէ խոյս տալ այս հանդիպումէն, և անասնն Քարուղէլի հրասարակին բոլորաւըր եղած նեղ փողոցներու մէջ կը նետուի: Այս լախիւրինդոսի մէջ կորսուած, և չ'համարձակելով՝ Թուխերբիի այնչափ մօտ՝ մէկու մը ճանքայ հարցընել, վերջապէս մեծ դժուարութեամբ և երկար ատեն յողներով որոշուած սեղը կ'հասնի առաջնոյն պէս ծպտեալ անձնապահի մը հետ ընկերացած: Այս մէկ ժամուան յարադումը՝ սպրցական ընտանեաց, Պարզիոյ և Եւրոպայի ճակատագիրներու վրայ կ'նչ սղոյեցութիւն ունենալիքը ուր գիտէր:

Մէն-Մարդէն արուարձանի նոր վանդակապատ դուռը կ'հասնին, ուր պէտք էին Մ. տը Ֆէրսանի հողատարութեամբ սրտբաստուած ճանքու կառքը դանել, և սառգիւհինդ հուժկու ձիերու լծուած այս կառքը երկու ժամէ՝ ի վեր կ'պասէր հոն: Երեք հողի, որոց մին Անդղլիական ձիու մը վրայ հեծած էր, զանի հոն բերած էին, այսինքն Պ. Տը Վալորի և տը Մութիէ, երկուքն ալ ծառայի զգեստներ հագած, և վերջապէս Պ. տը Ֆէրսանի կառավարը որու անունն էր Պաղղաղար Սափէլ:

Այս սպասումը կ'սկսէր Պաղղաղարի մտածելու առիժ տալ, որ կարծելով թէ իրեն աստիճանի մարդերու հետ կը դանուէր՝ կ'հարցնէ անոնց. «Ընկերներ, ուր են ձեր ակրերը, շատ հարուստ կ'երեւին»: որու պատասխանեց երկու անձերէ մին. «Ընկեր, պիտ'իմանաք ով ըլլալնին»: Պաղղաղար ուզեց խօսակցութիւնը տրիշ նիւթի մը վրայ դարձրնել, բայց իր հարցումները այնպիսի լակոնական պատասխաններով կ'անհետէին որ կ'հասկնար թէ լուծեանէ զատ տրիշ պատասխան չ'պիտի կրնար աւնուլ անոնցմէ. ուստի խօսակցութիւնը վերջ եղաւ: Անձնապահերէ մին, Պ. տը Վալորի, այն որ ձիու վրայ հեծած էր, մեկնեցաւ Պօնափ

երթալու որպէս զի ձիերը փոխելու սրատաստութիւն անու-
նէ : Այս վայրկեանէ ՚ի վեր սուանց բառ մ'արտասանելու՝
լուծեամբ կ'արտակին :

Յունիսի ՉՅԷ ն 24 տարւոյն ամենէ կարճ դիշերն էր :
օրը կ'սխտէր ծաղիլ, և արդէն սուտօտեան ժամը երկուքը
անցած էր երբ կատք մը հասաւ ածասարսանօք : Երկու
կատքերը դռնակ տա դռնակ կ'մօտեցնեն, և երկրորդ կատ-
քին մէջ դանուողները առաջնոյն մէջ կ'անցնեն : Պ. ար
Ֆէրասն երկու դռնակները կրկին գոցելով՝ արքայական
ընտանիքը բերող կաթը ճանբուն մէկ կողմը կ'թողու և
կատաձիներէ մին խրամի մը մէջ իջեցնել կու տայ որպէս զի
կատքը անշարժ մնայ : Արմէ անմիջապէս ետք՝ միւս կատքի
բարձրաւանդակը ելնելով, Պ. ար Մութիէի քով որ արդէն
ելած էր, կ'ըսէ սուրհանդակի սրաշտօն վարող իր կառավա-
րին, «Երթանք անվեհեր ! շնտ գալեցուր» :

Ճանբաց կ'եղնէն : Ահա առիկ դերերը ինչպէս բաժնուած էին :

Մատամ ար Թուրդէլ, Քօրֆի պարօնուհի անունով,
(այս անուամբ Ռուս տիկին մը, որ իր ընտանիքով և թու-
տուոր պարագայիւքը Քարկէ մեկնելու զխտարութիւն ու-
նէր և ըստ խնդրոյ Ղամն ար Ֆէրասնի իր անցաղիքը Թա-
գաւորին ծառայելու համար յանձնած էր :)

Քուրանասոցի պարօնուհւոյ այս տխրոյսը, այս Գրանք-
փորժի անուէր, որու սպասներու և կատքերու խնատ հա-
րուստ և խնատ պլանդակ ըլլալուն ժողովուրդը կարծիք ու-
նի՝ արքայական կատքի տարօրինակ և կասկածաւոր մտքը
կ'պատրուակէին :

Աւստի Մատամ ար Թուրդէլ Քօրֆի պարօնուհի .

Մատամ Բօյալ և Գահաժառանգը, իր աղջիկները, Ա-
Ֆէլի և Ակլաէ անուններով :

Մարի - Անդուանէթ, կառավարչուհի իր զաւակաց, Մա-
րամ Բաշէլի անունով :

Մասում՝ Էլիզապէթ , ընկերուհի օրիորդ մը , Բեռլինի
անուանով .

Ն. Թ. Ե. սենեկասպաս (valet de chsmbae) Տէրանի
անուանով :

Երեք անձնասպահերը ,

Պ. ար Վալտան , ծառայ , Սէն-Ժանի անուանով , որ
մերթ կառքին ետև կղած նաստրանին վրայ կ'նստէր , և
մերթ ձեռքով անոր կտակէն կ'երթար . Պ. ար Մութիէ , ծա-
ռայ , Մէլլէբըի անուանով , կառքի բարձրաւնդակը նստած :

Է. Ե. ար Վալորի , սուրհանդակ , Ֆրանսուս անուանով :

Թագուհին պարեզօտի (tunique) ձեռքով թուխ շրջա-
ղցեալ մի հագած էր , գլուխը շինած և սև գլխարկով , բրու-
ժայրերու կրկայն մանրակերտ բանուածքը քողի տեղ կ'ծա-
ռայէր : Թագուհորը թուխ-կանաչ գոյնէ և ճերմակ (գաղ-
թակուր մարդարխ) կոճակներով կրկնոց մը , ճերմակ սնդու-
րէ բանուած վերարկու մը , սև մետաքսեայ առտիէ անդ-
րակարտիք և ճերմակ մետաքսեայ գոլպաներ հագած , իր
մուճակներու վրայ արծաթեայ ձուածև ճարամանդեր (թօ-
ղա) դրուած , և մազերը սև սնդուսէ պարկի մը մէջ ամփո-
փուած էին :

Պ. ար Ֆէրասն ամեն մէկ վայրկեան խորազանը կ'շաչէր
և կատակարին « յառաջ , Պարզապար , կ'պոտար , ձեռք ա-
ղէկ վարժուած չեն , աւելի շուտ քալեցուր , բաւական ժա-
մանակ պիտ'ունենան հանդ չեղու » : Ատաքը հեռուորու-
թիւնը կ'ըստէր , սակայն այս շուտթիւնը տակաւին Պ.
ար Ֆէրասնի նախատես անհամբերութեան շատ գանդաղ
կերեւէր , վասն զի կ'զգար այն անհամար վտանգները որոնք
արքայական ընտանիքի կտին կ'ճեպէին : Աէս ժամին Պօն-
տի հասան աւելի սլանալով քան թէ վաղելով : Պ. ար
Վալորիի հոգատարութեամբ վեց սուրհանդակի ձեռք պատ-
րաստուած էին առաջիններու հետ վախանալելու համար ,

և ինք կրկին ճանբայ ելած էր Քլէյ երթալու որպէս զի մի և նոյն զգուշութիւնները նաև հոն դործապէ: Պօնտի մէջ Պ. ալ Ֆէրան Թաղաորէն հրաման առաւ, և Բարիլ մանկելով մի և նոյն օրը մեկնեցաւ Պրիւքաէլի համար:

Քլէյ հասնելով Մատամ՝ Նէօլիլ և Մատամ Պրիւնիէ գտան հոն, մին Գահաժառանգին և միւսը Մատամ՝ Բոյալի առաջին սենեկահիները, որոց երկուքն ալ սուրհանդակի պատդարակով մը քանի մը ժամ առաջ մեկնած էին: Այս սուրհանդակի պատդարակը վեց-ձի կառքին միանալով անոր ետևէ սկսաւ երթալ, սակայն Պէռլինը՝ թէև նոր, քանի մը նորոգութեանց պէտք ունի! Ո՛հ, թերևս այս կորսուած վայրիեանները Ֆրանսայի համար սրչտի արեան և քանի ու ճիրներու ծնունդ պիտի տան:

Մօնթիքայլի և Շալօնի մէջտեղ եղած Եթօժի տանը հասած ասեանին ինքզինքնին ճանչուած կարծելով սկսան վախնալ, Թաղաորը իր սովորական վտահոթեամբ՝ յաճախ կ'երևէր, շատ անգամ կառքէն իջնելով հետոսս բլրակներու վրայէ կ'երթար, և նոյն խկ, ինչպէս որ արժանահաստ միացութիւններ կ'հաստատեն, դիզայլներու հետ խօսակից կ'ըլլար: Շալօնի մէջ, ուր կէսօրէ ետք ժամը չորսին հասան, թէ կայանապետէն և թէ ուրիշ քանի մ'անձերէ որոնք Թաղաորը օժուփ ժամանակ տեսած էին՝ բոլորովին ճանչուեցաւ: Բայց այս հաստատարիմ և խոհեմ՝ անձերը անոր փախուստին համար լուրիմամբ բարեմնացթութիւններ ընելով՝ նոյն խկ իրենք օգնեցին ձիերը լծելու համար և սուրհանդակները ստիպեցին շուտով մեկնելու: Ամենեին սեղ մը չ'կեցան ճաշելու և կառքին մէջ կ'ուտէին:

Վօմ-Վէլի կամօրջը, որ Շալօնէ ետք առաջին կայանն է, թեթևապէն հեծելալօրներու հաստած մը պէտք էր գտնուիլ կառքին հետ մինչև Մօնթի տեղեկից ըլլալու

Համար, սակայն Թագաւորը ժամը վեցին հոն հասնելով ոչ գունդերը տեսաւ և ոչ Պ Պ. ար Շօաղէօլ և Աօկրլա, որոնք Պ. ար Պուկընէի հրամանաց համեմատ ուղեկից գունդերը պէտք էին կարգադրել: Լուի Ժ.Ջ. չկրնալով մէկու մը հարցնել սոյն նիւթիս վրայ՝ նոյնպէս չկրցաւ գիտնալ թէ նոյն գունդերը ստակի կարաւան մը պահպանելու պատուակաւ վեց ժամ առաջ ներկայած էին հոն, թէ երկարատեւն հաստատ տեղ մը սպասող հասուածի մը տեսքը վերջապէս ամբոխում մը (attroupement) պատճառած էր, թէ Շալօնի քաղաքային ժողովը մարդ զրկած էր բոլոր այս շարժումներու պատճառը հասկնալու համար, և թէ Պ. ար Շօաղէօլ վախնալով որ նոյն իսկ թեթեւ և յանխորհուրդս արտասանուած մէկ բառ մը վտանգարկու (compromettant) կասկածի մը ծնունդ չ'ստայ՝ ճանբորդի մը պատմածին հաւատալ ցոյց տուած էր, որ առաւօտեան պնդակառքին իրատ շատ բեռնաւորուած ըլլալը կ'հաստատէր: «Յայտնի կ'երևի որ սպասուած գանձը կ'կրէր, ըսաւ Պ. ար Շօաղէօլ, ուրիշ գործ մը չ'ունինք հոս ընելու, մեկնինք ուրեմն»:

Այս խօսքերու վրայ ամէն բան հանդարտեցաւ, և վնուորներու մեկնելէ ետք նոյնպէս և ամբոխումը ցրուեցաւ: Տարօրինակ բան! Բարիդի մէջ Թագաւորին փախուստի նրկատմամբ նախազգացում մ'ունէին, և ճանբուն վրայ անոր անցնելու նախազգացումը: Այս պարագային տեղի ունենալէ հաղիւ թէ ժամ մը վերջը Թագաւորը հասաւ, և ձիերը առանց դժուարութեան փոխեցին:

Սակայն Պ. ար Շօաղէօլ վախնալով գրդոել մի և նոյն ուշադրութիւնը և մի և նոյն շարժումները ինչպէս Մընուլի մէջ՝ խոտորնակի ճանբաներու մէջ քշած էր իր խումբը որպէս զի քաղաքին մեջէ չ'անցնի. ուստի մեծ ճանբուն վրայ չ'հանդիպեցան անոր և Սէնդ-Մընուլ հասան, ուր նոյնպէս տրակօններու (վրշաբսգունդ) ուղեկից պահնակ մը

պէտք էր Թաղաւորին անանկ.՝ բայց անոնց հրամայող պաշտօնակալը, գնդապետ ա՛նգլուան, սախաւած էր տեղոյն քաղաքատունը (hôtel de ville) երթալով՝ գունդերու այս շարժմանց վրայ հաշիւ տալ որ շարութենէ մը կասկած ունեցող ժողովուրդը կ'զարհուրեցնէր, և ինք գրեթէ բանտարկուեցաւ հոն :

Ահա այս կայանն էր որ Թաղաւորը իմաց տրուած միջոցներու և ոչ մէկուն զործադրուելը չ'անսնելով սիրտը անհանգիստ՝ զլուրը յաճախ դռնակէն գորս հանեց և Տրուէ կայանապետէն ճանչուեցաւ որ 28 տարեկան երեսասարգ մ'էր : Այս մարդը որչափ որ նախորդ տարւոյն գաշաւորութեան ժամանակ Լուի Ժ.Զ. տեսած՝ 'ի սկզբան չ'կրցաւ ճանչել զանի : Սակայն գնդապետ ա՛նգլուանի և իր շէշո՞ղնէրն ներկայութիւնը իր կասկածները արթնցուց : Գրամնթումըթ մ'առնելով որու վրայ գտնուած Թաղաւորին պատկերը խիստ շատ կ'նմանէր անոր՝ երկուքը իրարու հետ բաղդատեց : Թաղաւորին այս շարժումը հասկնալով սկսաւ զարհուրել, բայց կառքը անմիջապէս մեկնելով իր հեռացած ժամանակ նոյնպէս և անհանգստութիւնները ցրուեց :

Տրուէ Սէնդ-Մընուլի քաղաքային պաշտօնակալներու լուր տալով ամենքը քաղաքատունը հասարակեցան և բոլքը բնակիչները զէնք առին, 'նոյն վայրկենին՝ — երեկոյեան ժամը եօթը քառորդ անցած էր — Մարնի նահանգի վարչութեան աստանէ մասնաւոր բանրեր (express) մը Շալօն հասնելով՝ Թաղաւորին ճանբորդութեան պաշտօնակալն լուրը կ'ըրէր : Ան աստն որոշուեցաւ որ Տրուէ վախատականներու ետեէն իջնայ և բռնել տայ զանոնք և թէ կարող ըլլայ անոնց հասնել : Ուստի ձի հեծնելով կարբերու ետեւէն խնկաւ, Արան-Մէրֆի (մեծ կողմերու) պանդոկապետի տղուն Ալիլի օմի հետ ընկերացած, որ Թաղաւորին վիշտակներու դռնդին մէջ ութ տարի ծառայած՝ անկարող էր ինք

նայոժար դորձել այս պարագային մէջ, Ստիպոյն Տրուէի սղ-
դեցութիւնը մղեց զանի :

Պ. սը Տամա վիշապներու հատուածի մը զլուխը անցած
Քլէրմօն գտցած էր սոջի իրիկուն : Հրամանն ստած էր
Յոնիա Չիլի մինչև երեկոյեան ժամը հինգ ձի հեծնել, և
թագաւորական ընտանիքի կառքը անցնելէ ետք նորէն Աւա-
րէն գաւնալ : Այս հրամանին հետեւելով իր գունդի հետ
մինչև գիշեր ձիու վրայ կ'սպասէ, հուսկ ուրեմն հրաման
կու տայ ձիերու թամբերը իջեցնել և ամեն մարդ իր տեղը
երթալ : Ժամը իննսուկէս էր . կառքը ճիշդ այս վայրկենին
կ'հասնի և իր ճանքան կ'շարունակէ : Պ. սը Տամա անոր
անցնիլը տեսնելով պաշտօնակալներ կ'ղրկէ իր ձիաւորները
կանչելու իրենց ստանրէ : Քաղաքը կ'խմբի, քաղաքային
ժողովը կ'յուզի, բանակցութիւններ կ'սկսին, վէճը կ'ստար-
նայ կ'բորբորի, Պ. սը Տամա հրաման հնչել կու տայ ձիերը
թամբելու և հեծնելու . քաղաքային ժողովը զօրքերու ընդ-
հանուր կոչումի համար մեծ թմբուկը զարնել կու տայ :
Վիշապի գունդը քաղաքային և իրենց պաշտօնակալներու
մէջտեղ մնալով կ'անհնազանդի այս վերջիններու : Պ. սը
Տամա հազիւ ժամանակ ունի փախչելու :

Թագաւորին կառքը այն ինչ Քլէրմօնի մէջ ձիերը փոխած
և մեկնած էր երբ Տրուէ կ'հասնի հոն, և նոր ձի մը կ'առ-
նու իր հետադատութիւնը շարունակելու համար : Արքայա-
կան կառքը արդէն ճանքայ ելած է իր սուրհանդակը սո-
ջեէն և լրտեսը ետեէն : Պ. Շարլը սը Տամա Տրուէի մեկ-
նած վայրկենին օթեանասրեա մը (maréchal de logis) կը
ղրկէ անոր ետեէն ինչպէս համար : (Այս պաշտօնակալին
անունն էր Լակաշ, որ գաղթականութեան մէջ Շօաղէօլ-
Հիւսարի գնդապետ կ'ըլլայ վերջէն . այս մանրամասն յարա-
բերութեանց մէջ կ'աշխատիմ և ոչ մէկ անուն մը ինչպէս և
ոչ մէկ պարագայ մը գորտ չ'ձգել :) Լակաշ Տրուէի հասնե-

լու վայրկենին՝ այս վերջինը մեծ ճանքուն ձախ կտրվի եղած անտառին մէջ կ'ենտուի, և դիշերուան օդներովը հակառակ ուղիներու մէջ կ'անհետի զորս միայն ինք կ'ճանչէր, ուտի այս կերպիւն՝ երեկոյեան սասնակէկը քառորդ անցնելու մօտ Վարէն կ'մտնէ Թագաւորէն առաջ:

Արքայական ընտանիքը կ'հասնի ժամը 11¹/₂ին: Արկիւրներու մէջ կը զլիարցած այս փոքր գիւղին մէջ կայան մը չ'ըլտուիր: Բայց այն սունը՝ ուր ձիերը փոխելու համար այնչափ աղէկ նշանակուած էր Նուի Թ.Ձ.ի՝ մեծ գիւրտ թեամբ գտնուելով նոյն ինքը գուռը զարկաւ անոնց ձիերը ուղելու համար. սակայն բան մը չէին հասկնար անոր ըսածէն: Այս կերպիւն ամեն տեղ երեւան եղած թիւրիմայր թիւնները և մի և նոյն անձկութիւնները կ'ստիպեն զիրենք Էրի միւս կողմը գտնուած իջևան մ'երթալ ձի գտնելու համար: Սակայն հասկնալու գծուարին կէտը այս էր որ Թագաւորը ամենևին տեղեկութիւն մը չ'ունէր այս փոփոխումէն: Ի զուր երեք անձնապահները լոյս տեսած տուներնուն գտնելը կը զարնեն և ձիերը տեղաւորելու տեղ կ'հարցնեն: Թագաւորին նոյնպէս կառքէն վար իջնելով Թագաւորին հետ մէկտեղ կ'ըլտէ, յուսալով որ բաղդը թերևս զիրենք տեղեկացնող մէկը կ'հանէ: գէմերնին, բայց ՚ի զուր: Այս բոլոր որոնումները անցին ժամանակ մը կորուսել կու տան և որմէ Տրուէ օգուտ կ'ըսողէ: Ճանքորդները վերստին կառք մտնելով միւս կողմը անցնելու համար պատուէր կու տան սուրհանդակներուն, սակայն անոնք այս բանին անկարելի ըլլալը կ'իւնայրնեն ձիերուն սատարի յոգնած ըլլալուն պատճառաւ: Այս վիճարանութիւնը շարունակուած ատեն որ ետեւէ կերկարէն՝ թղթաբերը ետ կ'դառնայ մարդ մը բերելով մէկտեղ որ երին ալ խորհուրդի մէջ գտնուիլը կ'յայտնէր. այս մարդը դիշերուան զգակով և զգեստով՝ Թագաւորին և Թագաւորէն կ'մտնէ, և անոնց «Ե՛հ ուրե՛ն, ո՞ր են մեր ձիերը»,

պոռայած ատեննին՝ դրեթէ բոլորովին կառքին մէջ կ'ներ-
տուի . — «Չեր ձեռնըր, կ'պատասխանէ անոնց, տեղեկու-
թիւն չունիմ, սակայն ես ուրիշ գաղտնիք մը չեմ որ
ձեզ չ'պիտի յայտնեմ : — Մատամ տը Բօրֆըր կ'ճանչէք, կը
հարցնէ անոր Մատամ տը Թուրդէլ : — Ա՛չ, բայց աղկէ ա-
ւելի աղկէ կ'բան մը կ'ճանչեմ» : Եւ կ'աներևութանայ :

Մուրհանդակները Թաղուհայն թոխանձախքներէ վեր-
ջապէս կ'հաւանին դիւղին միւս կողմը անցնել : Ճանրորդնե-
րը ինքզինքնին ազատուած կ'կարծեն, և այս դէպքը մի մի-
այն թիւրխուսցումի մը տալով՝ Պ. տը Պուիլէէի հաւատա-
րիմ դունդերու մէջ գանուելու յուսով արգէն կ'պարարին :
Հեռուելիք դէպքերուն վրայ աղկէ տեղեկութիւն մ'առ-
նելու համար՝ սէտք է Վարէնի փոքր դիւղին վրայ ճիշդ
դադարաւ մ'ունենալ, վասն զի այս դէպքերը պատահած
ժամանակէն ետք շատ փոփոխութիւններ կ'եսցնա :

Վարէն Արիօնի մէջ զատ ՚ի վայրի մը վրայ շինուած ըլ-
լարով՝ հեռաբար երկու դիւղերու բաժնուած է, տտրին
և վերին, կամ լաւ ևս երկու թաղերու, զորս էր բաժնելով
կամուրջով մը կ'միանան : Ան ատեն Քլէրմօն հասնելով քա-
ղաքը մտնելու համար, փոխանակ այսօրուան սէս դեղեցիկ
տեղէ մ'անցնելով՝ երկու վեղերով ըստ հաճոյս գոյուած
կամարի մ'առաջնորդող փողոց մը կ'մտնէին : Այս կամարը
այն ժամանակէ ետք փլուած եկեղեցի մը զանգակատունէն
կ'բաժնէր որ դեռ կ'կենայ, և զանգակատան կցուած էր
Պրա տ'Օրի (տակերագուկ) փոքր պանդոկը, Արպլան անու-
նով ընտանիքէ մը պահուած . կամարը՝ պատերազմող քաղ-
քի մը մեծ դրան կ'անանէր, և տանդոկը՝ անոր պահանջ-
ցին : Կամարէ դուրս ելնելէ վերջը կամուրջը կ'երևէր ու-
րու վրայէ Երէն կ'անցնէին : Ահա այս տեղ զարանակալու-
թիւնը պատրաստած էր Տրուէ, Թաղաւորին ճանքան կրտ-
րելու համար : Պրա տ'Օրի պանդոկապետը որ նաև աղջա-

յին պահապան զօրաց պաշտօնակալ մ'էր, Տրուէէն ար-
 թըննալով՝ ժողովուրդեան դործակալ Պ. Սօսի տունը վաղեց,
 վերջը՝ իր եղբոր հետ ղննեալ, աղպային պահապան զօրաց
 մէջ պաշտօն մը խնդրելով կամարին բերանը դնաց սպասեց :
 Սօս ձայն տուաւ քաղաքային ժողովոյ պաշտօնակալին, որ
 աղպային ժողովոյ մէջ Քէլերմանդուաի երեսփոխան Պ. Ժէօրժ
 քաղաքապետին պաշտօնը կ'վարէր փոխանորդաբար, նոյն-
 պէս և քաղաքային բոլոր միւս պաշտօնակալները արթնցնել
 տուաւ : Աճապարհին գաղանի պատուիրակներ (emissaire)
 ղրկել մօտակայ բնակչաց. Ժէօրժի աղան², թնդանօթաձիգ
 զօրաց հարիւրապետը, պահանջի կառավարութիւնը կ'սու-
 նու, այն ինչ Սօսի աղաները ըստ հրամանի իրենց հօր՝ բո-
 լոր գիւղին մէջ կ'սկսին վազվզել կրակ էաց պռապով, և
 Տրուէ՝ օրէնսդէտ Պարօն Թընէէի հետ ընկերացած, բեռ-
 նաւորուած կառք մը կ'առաջնորդէ զոր ճանրան արգիլելու
 համար կամօրջին լայնութեանը կ'թողուն : Բոլոր այս պատ-
 րաստութիւնները լինցած էին երբ սպասուած կառքին շը-
 շուկը լառեցաւ : Աւերին գիւղը առանց արգելքի անցած էր,
 որու դրեթէ ամեն տունները գոց և լսիկ էին :

Սակայն կամօրջի մուտքին վրայ բարձրացած աշտարա-
 կի մութ կամարին տակէ անցած վայրկեանին՝ ձիերը՝ տա-
 պալուած մեծ կառքէ մը և իրենց քայլերու սուջև նետուած
 ուրիշ խոչնդոսանբէ զարհուրած յանկարծ կ'հասին, և ան-
 միջապէս սոյն ձայները կ'լսուին ամեն տեղէ. կեցիբ! կե-
 ցիբ! Մի և նոյն միջոցին մթութեան մէջէ՝ ¹ զինեալ մար-
 գիկ երեսան կ'ննեն և նոյն աղաղակը կրկնելով՝ ձիերու գըլ-
 խին վրայ կ'իյնան, սուրհանդակներու ակըր կ'գրաւեն և
 գոնակներու վրայ երկննալով ճանրորդաց ով բլլալնին կը
 հարցնեն : «Մատամ տը Գօրֆ և իր բնտանիքը! — Արեւի-
 է, կ'ըսէ ձայն մը, բայց սէտք է մեզ ասարցուցանէք» :

Առջի ազարակին, հրացաններու և սուխնէրու առաջին

նշոյլին՝ անձնապահէրը իրենց նստարանէն ոտքի ելած և ձեռքերնին իրենց սրահած զէնքերու վրայ տարած էին զանոնք դործածելու հաւանութիւն խնդրող ակնարկով մի : Լուի ԺՁ. կ'արդելու զանոնք զէնք դործածել : Հրացանները ուղղուած կ'մնան կառքին վրայ : Տրուէ ճրայ մ'առնելով Թաղաւորին կերարարանքին կ'մտակցիւ և ստանց անոր անունը տարու՝ կ'ապստրէ վար իջնել և ժողովրդեան դործակալի տունը երկալով իր անցաղիւրը ցուցնել : Լուի ԺՁ. իս անձանօթ մնալը դեռ յուսալով՝ կառքէն կ'իջնէ և ընտանիքը իրեն կ'հետեւի :

Արքայական ընտանիքը փողոցէ անցած ժամանակ քանի մը թեթեւազէն հեծելազօր կ'տեսնէ զօրս Պ. տը Շօպէօլ Սօմ՝ Վէլի կամուրջին միւս կողմէ կ'բերէր, այն միջոցին կ'երևի Պ. տը Վօկըլա : Ազգային պահապան զօրքը արդէն փողոցներու մէջ թուաւոր և քարակոյտեր շինելու գրաղած՝ չ'թողուց որ անյնին մինչև ազգային ոստիկանութիւնը զանոնք ճանչեց, և ստոր վրայ միջոցներ ձեռք առին անոնց հետ յարդանօք վարուելու : Տրուէ ի դործունէութիւնը իր աղբեցութիւնը ներդործած էր : Չանդակը կ'հնչէր, թմբուկը կը զարնէր, ճանբանները կ'փակէին, արդէն շրջակայ գիւղերը կ'զզրդէին, և այն քաղաքները զօրս Թաղաւորը իր ետին ձգած էր՝ կ'սկսէին շարժիլ անոր փախուստի լուրին վրայ Բովանդակ Վարէն ոտքի վրայ էր : Թաղաւորական ընտանիքի զացած ժողովրդեան դործակալի տունը երկու սենեակներէ կ'բաղկանար առաջին յարկին վրայ, ուր ոլորտ սանդուղէ մը կ'մտնէին, և որոց մին փողոցի վրայ կ'նայէր և միւսը սրարտիղին : Այս վերջինին մէջն էր որ Լուի ԺՁ.ը մտուցին : Այսու ամենայնիւ երկու սենեակները իրարու հետ հաղորդակցութիւն ունենալով՝ առաջինէն կ'ընային փողոցին վրայ բոլոր անցած գացածը տեսնել : Այսպէս արքայական ընտանիքը լրագտեցներու լուսով, սպակիներու

մէջէ, փողոցի վրայ մէն մի վայրկեան շատցող քաղնութիւնը կ'տեսնէ : Սօս 'ի սկզբան իրեն բերուած վիհափառ ճանաբորդները պարզ օտարականներու տեղ առնել կեղծելով՝ դիտել տուած էր անոնց որ ձիերնին ալ չէին կրնար քալել, և աղաչած էր զանոնք որ իրեն ստունը հանդ չին մինչև նոր ձիերու դալը :

Ժողովրդեան գործակալը և Տրուէ, Թաղաւորը բռնելու համար սրահանջուած բոլոր զգուշութիւնները ձեռք առած կարծելով, համարձակեցան անդու թ յանդիմանութիւններու դղիլ թշուառ Աուի ԺՁ.ի, անոր օտար երկիր փախչելով իր ժողովրդին դէմ սրասերազմ յարուցանելու դիտաւորութիւն ունենալուն վրայ զոր կ'ենթադրէին : Արքայական փախստականը դեռ իր անձին իսկութիւնը տակ կ'ուզէ : Բոլոր ճանրորդներու համար ապահովուած աղատութիւնը կ'սրահանջէ ստիպմամբ . սակայն Սօս և Տրղէց գատաւորը իմացնելով որ իշխանը և իր ընտանիքը կատարելապէս կը ճանչեն, «Բարի ուրեմն ! կ'սրոաց Թաղաւորին որ մինչև ան ատեն լուռ կ'կենար, եթէ ձեր Թաղաւորը կ'ճանչէք՝ յարդեցէք ուրեմն զանի» ! Այս խօսքը Աուի ԺՁ.ի այն աղատ բնաւորութիւնը կ'վերադարձնէ՝ որ այնչափ նեղութիւն կրած էր զանի զսպելու : Այսպսնէ համարձակ այս ճանրորդութեան սրածառները և նպատակը, իր դիտաւորութիւնը, իր ժողովրդեան ստոյգ սէտքերը ճանչելու համար ունեցած եռանդուն փախաբը, այն ժողովուրդը՝ զորս 'ի սրտէ կ'սիրէր և որու երջանկութեան համար կ'ուզէ ամեն բան զոհել . կ'բողբէ այն կարծիքն զէ՛ր զոր ունէին թէ օտարներու գիւղը նետուիլ կ'ուզէ, և կ'առաջարկէ Աւարէնի աղաչային սրահանջան զօրաց վստահիլ որպէս զի զանի անձամբ Մօնմէտի կամ տէրութեան ուրիշ որ և է քաղաք մը տանին ուր աղատութիւնը կրնար ապահով ըլլալ :

Աուի ԺՁ.ի հայրական հնչումը, իբր բարեօրոտութեան

և անկեղծութեան յայտարար խօսքերը՝ այս հեաարքիրներու և թշնամիներու խումբին վրայ վայրկեան մը լռութիւն կ'ներգործեն որոնք չեն կրնար անդայ մնալ : Սօս կ'շարժի և կ'մեղմի . Թագաւորը ազատուած էր եթէ իր ազատութիւնը միայն այս մարդէն կախեալ ըլլար . բայց Տրուէ իր որսը ձեռքէ չ'թողուր բնաւ , կ'յուզի , կ'ճառարանէ (pérorer), կ'խմայնէ որ թէ իր և թէ բոլոր ներկայ եղողներու զլուխը վտանգի մէջ պիտ'իյնան եթէ Թագաւորը Բարիւ չ'դատնայ :

Այս վայրկեանին ծանր դէպք մը տեղի ունեցաւ որ Թագաւորին վիճակը որոշեց : Բաւական թեթեւազէն ձիաւորներ որք քիչ մ'առաջ տեսնուեցան՝ նոյնպէս Պ Պ. տը Շօսգէօլ , տը Կօկըլա և տը Տամա քաղաքին մէջ մտած էին : Այս երեք զինուորական զլուխները բաւական դժուարութեան և երկար ատեն բանակցելէ ետք Թագաւորին քով հասան : Ան ատեն Պ. տը Վինեւմօն քաղաքին զինուորական կառավարութիւնը կ'ընէր : Պ. տ'Կալօն թեթեւազէն հեծելազօրաց հրամանատարը՝ Տէօնի մէջ խմանալով Թագաւորին կացութիւնը , իր գունդի զլուխը անցած դէպ 'ի Աարէն վազեց և թոյլ տրուեցաւ Թագաւորին ներկայանալ , սակայն այն դաշամը որ իրեն հետ բերած 76 հեծեալները Էրի միւս կողմը ձգէ որ անցնուելու չափ ծանծաղ չէր : Թամանակակից յիշատակադրերու մէջ կ'տեսնուի որ Կօկըլա Թագաւորին առջև ելած ատեն , այս վերջինը հարցուց անոր , « Ե՞րբ պիտի մեկնինք » . Պ. տը Կօկըլա անոր պատասխանեց աւելի իր եռանդին քան թէ կարողութեան հետեւելով , « Չեր Ահհախառութեան հրամանաց կ'սպասեմ » : Մի և նոյն միջոցին նաև ազգացին պահապան զօրաց հրամանատարը եկած էր մեկնելու համար Թագաւորին հրամանները առնելու , և Թագաւորը պատասխանած էր որ իբր ուղեկից յիսուն և նոյն իսկ հարիւր հողի կ'ընդունէր ազգային պա-

Հասարակ զօրքերէն : Սակայն քաղաքային ժողովը դիմումը շփոթութիւն մը յարոյց : Պ. ար Աօկըլլա դէսլ 'ի Մօնմէտի ճանբայ ելնելու համար հրամաններ կ'ենդրէր, և ազգային սրահասարակ զօրքը՝ հրամանատարը դէսլ 'ի Բարիկ ճանբայ ելնելու : Այս երկու հակառակ ուղղութեանց մէջ ընդհարումի մը սրայթելու վայրկեանը մօտեցած կ'երևէր . ո՞վ պիտի շահէր արդեօք, զինուորական թէ ոչ քաղաքային վարչութիւնը, ահա հանելուկը : Խնդիրը ետէ կ'սարգումի . Պ. տ'Ալօն որ դժուարութեամբ մինչև Քաղաքորին քով հասած էր՝ կու գայ անոր հրամանները ընդունիլ : «Պ. ար Պտիլէ ժամանակին պիտի հասնի», կ'հարցնէ Քաղաքին Ալմաններէն : «Չի հեծնենք և զէնքերնիս լարնք», կ'ըսէ անոր Պ. ար Տամա նոյն լեզուաւ : Աթէ ասի կարելի ըլլար՝ ստուգիլ միտի արդիւնաւոր միջոցն էր, թէ ոչ բոլորովին ձախորդ, ինչպէս որ պիտի տեսնուի : Պ. ար Աօկըլլա վեց հեծելազօր զեռեղած էր պատնէշի մը մօտ որոնք վերին փողոցներու անցքերուն կ'հրամայէին, ուրիշ վեց հոգի ալ կամուրջին և անոր կից փողոցներու անցքը արդիւող պատնէշի մը մօտ : Հասարակայ ժողովը աւելի յարմար դասեց Քաղաքին գանուած փողոցին ծայրը թնդանօթ մը զետեղել, այս միջոցով անոր առաջին անգամ նետուիր հեծելազօրաց ամբողջ հատուածը պիտի տասպալէր : Պ. ար Աօկըլլա այս բանիս դէմ զնելու համար ուղեց օլնու թիւն փնտուելու երթալ, սակայն մեկնել ուզած վայրկենին ազգային սրահասարակ զօրաց հրամանատարը և հինգ սրահասարակ զօրքեր զանի արդիւցին, և ասի առաջաէն 'ի վեր նիթումաձ կուխն առիթ տուա : Պ. ար Աօկըլլա չէ թէ միայն հրամանատարը հեռայնելու կերպիւ մը կ'շարժէր իր ձին՝ որ արդէն բաւական կից ընդունած էր, այլև սուրբաշեց, որու վրայ հրամանատարը ասորձանակը սարսիւելով անոր վրայ՝ ուսէն վերաւորեց զանի : Չին ջցուեցաւ և իր վրայ եղողը զետին տա

սրախնց : Չիտոր դունդը աւելէն չ'չարժեցաւ , և ան առե՛նէ յայտնի եղաւ որ կուռոյ մէջ նետուելու արտանայութիւն չ'ունէր : Պ. Աօկըլա որչափ որ վէրքը թեթեւ , սահայն սարտարեցաւ վայրկեան մ'իւր պանդոկը քաշուիլ , և ասի սլասեհ առիթ մ'եղաւ ձիաորններու շահուելուն , որոնք խօսք տաին իրենց տրուած աղղային սլահասլան զօրաց սլաշաոնակալին հնազանդիլ : Թագաւորը , Թագուհին և Մատամ Ելիզապէթ այս գէպքի աղմուկէն պատուհանը ելնելով բազմութիւնը կէցցէ Թագաւորը ! կէցցէ Աւագը ! կէցցէ Լօգէօն ! աղաղակներով բարեւոյ զանոնք : Այս վերջինը թագաորական ընտանիքը լքող դուռկին անունն էր :

Արաւ ամեն յոյս , այս սարազաններու ուրիշ կերպարանք մը տալու համար ուրիշ միջոց չ'կար ելիէ ոչ Պ. ար Առուկէէէ հասնիլը : Ի դուր կ'աշխատէր Թագուհին տիկին Յօսի սերտը շահիլ ինչպէս որ Թագաւորը անոր էրկան միտքը դարձրնելու փորձ փորձած էր : «Քուք մայր մ'էք , տիկին , ըսած էր անոր , խմքաշած տատապանքները սէտք էք զգալ , դուք մեծ ծառայութիւն մը մեզ ընելու համար կարող էք նորաստեղ : Թագուհին չէ այս , հասլա մայր մը , հասլա կին մ'է որ աղաչանքներով կ'ինողրէ ձեզմէ այս բանը» : Արբայական աղերասրելուն համեմատաձառի կ'աջ նուաւ սրախն մէջ մի սրաղ զպացումէ զատ ուրիշ բան չ'գտնէր , և հետեւալ խօսքերը կ'ընդունի անկէ : «Տիկին , չեմ'ուզեր էրկիս վտանգի ենթարկել , դուք ձերը կ'մտածէք , ես ալ ինն» : Մայրը աղաչած էր՝ Թագուհին սրտմտեցաւ : Աշխտժիւ մը ոտք ելնելով Մատամ Ելիզապէթի հետ իր զառակաց քով գնաց , որոնք իրենց զլեւաններով ներսի սենեկին մէջ անկողնոյ մը վրայ խորունկ կ'ննջէին , զլխաւ բարձրնուն մօտ սլահասլան ունենալով իրենց սենեկուհիները :

Ուրիշ բան չ'մնաց յուսարու եթէ ոչ ժամանակի և զօրաց : Գիշերը՝ հետզհետէ սուեցած յուղումով մը սահեցաւ ան-

շար : Աւարէնի զանգակին շրջակայ բնակչաց զանգակները սրատասխանեցին . աղգային պահապան զօրքը կ'զննուի և Աւարէնի մէջ իր ընկերակցաց թիկունք ըլլալու կ'փոթայ : Ամեն մէկքառորդ շատցող ամբոխը քաղաքին մէջ կ'խանի , որ թէև աննշան՝ այլ սակայն այս աղետաբեր գիշերը պատմութեան մէջ անոր անուն մը կու տայ : Յրուէի անգութեամբը զինքը կ'մղէ :

Ժամը վեցէն եօթ , Բոմբօֆ լա Գայէթի օգնական զօրագլուխը Բարիզէն կ'հասնի Ժողովոյ կողմէ վճիռ մը բերած , որ Թագաւորին փախուստի դիտարութիւն տնննայը առաջին անգամ ծանուցուած ատեն տրուած ըլլալով , և հարքը մեկնած ըլլալուն նկատմամբ եղած յայտարարութիւնը կարդացուելէ վերջը՝ կ'հրամայէր որ փախստական Թագաւորը ուր որ գտնուի Բարիզ բերեն :

Պ. տը Բոմբօֆ , իր զօրապետը սքօղելու համար ընդունած պաշտօնէն զարհուրած , որ Թագաւորի փախուստին համար մեղսակից սեպուած և վտանգի մէջ կ'գտնուէր , Քլէրմօնի մէջ Պ. Պայօն աղգային պահապան զօրաց սաշտօնակալը կ'դանէ , որ իրմէ չորս ժամ առաջ մի և նոյն ճանքով զրկուած էր Պայլի Բարիզի քաղաքապետէն , և այսպէս ճանքանին մէկտեղ շարունակած էին : Պ. Պայօն առանձին կ'մտնէ Թագաւորին եղած սենեակը . խոնջէնքէ և զինքը յուզող զգացումներու հարուածէն իր բնական արխուր կերպարանքը աւելի տխրատեսիլ գոյն մ'առած էր Մագերը և զգեստները անկարգ , գէմքը յետին աստիճան խռովեալ , շնչասպառ և կցկատը ձայնիւ հետևեալ խօսքերը կ'թօթովէ . « Իշխան , դիտէք . . . բովանդակ Բարիզի մէջ գերար կ'խեղդեն թերևս . . . Աւելի հեռու պիտի չեթաք . . . իշխան , տէրութեան օգուտը . . . Այո՛ , իշխան , մեր կեները ! . . . մեր զաւակները » !

Այս խօսքերուն վրայ Թագուհին զօրեղ շարժումով մը

անոր ձեռքը բռնեց, և խոնջեցեք թմբած ու Պ. Սօսի անկողնոյն վրայ երկնցած պատկած Գահաժառանգը և Իշխանուհին անոր ցուցնելով, «Էս սլ մայր չե՞մ», բառ անոր :

«Վերջապէս, ի՞նչ կ'ուզէք, հարցուց Թագաւորը :

— Իշխան, Ժողովէն վճիռ մը! . . .

— Ո՛ւր է :

— Ընկերիս քով :

Այս խօսքերը լսնցնելով դուռը կէս մը բացաւ, ուսիէ առաջին սենեկին մէջ Պ. ար Բօմէօֆ պատուհանին կրթնած կ'երևէր, որ ստանալու վրայ և աչերը արտաքով լեցուած ու գեախն խոնարհած՝ կ'յառաջանայ ձեռքը թուղթով մը : Թագաւորը անոր ձեռքէ թուղթը աւելի յափշտակելով քան թէ ընդունելով՝ աճապարանօք կարդալէ վերջը կ'սրտայ . «Գաղղղոյ մէջ սկ Թագաւոր չ'կայ!» Թագաւորէն ետք Թագուհին զայն աչքէ կ'անցնէ, կրկին Թագաւորը կ'առնու, նորէն կ'կարգայ և իր դաւաններու քնացած անկողնոյն վրայ կ'գնէ զայն . Թագուհին ուժգնութեամբ մը անկողնոյն վրայէ մեկդի նետելով՝ «Չեմ ուզեր որ դաւաններս աղտոեղէ!» կ'սրտայ : Այս գէպքը ներկայ եղող քաղաքային պաշտօնատարաց և բնակիչներու մէջ յուզում մը պատճառեց, որպէս թէ սուրբ բան մը կ'սղծէին : Պ. ար Շօաղէօլ անմիջապէս վճռադիրը գետնէն վերցնելով սեղանին վրայ դրաւ :

Չաւակները կ'արթնցնէին : Երիտասարդ Ակլաէ վերստին Գահաժառանգի փոխուած՝ մասնաւոր ուշադրութեան մ'առարկայ կ'ըլլայ . ոմանք անոր գեղեցիկութենէ կ'յափշտակուին, ուրիշները Թուելերրիէ մեկնելուն վրայ հարցումներ կ'ընեն անոր, որոց հալիւ թէ կ'սրատասխանէ գեռ քունը դրուելը տղան, որու աչերը բացուած ժամանակ իր մօր աչերը կ'փնտուեն և հոն՝ բաւր այս դարձուածներու բացատրութիւնը կարգալու կ'աշխատին : «Ով Շարլը, ցած ձայնիւ

բառ անոր իր քոյրը : դու կ'սխալէիր , ասի կատակերդու թիւն մը չէ : — Երկար ստենէ ՚ի վեր է որ ես ալ կ'նշշմարեմ , սրտասխանեց մի և նոյն ձայնիւ :

Սակայն ժողովուրդը՝ Տրուէէն զրդրուած , Պոյժն և քանի մը քաղաքային դաշտօնակալներ այնպիսի մոլեգնութեամբ Քաղաքին մեկնիլը կ'ստիգեն՝ որ զառանցանքի մը կ'անանէր : Մէն մի վայրկեան կրկնապատկուած թշտամանքներու սպառնալիքներ կ'ստանուն : Այս կատարի մարդերէ շատերը կ'ուզեն ստիպմամբ տանը դռնէն ներս մտնել Քաղաքը բռնի դուրս հանելու համար : Թշտամանաց մէջ այս խօսքերը կ'ըսուին , « Եթէ պէտք ըլլայ՝ զանի մինչև իր կտորը սխալ քաշկուտեմք » : Քաղաքը պատուհանը կերևի զանոնք հանդարտեցնելու համար , բայց ամեն բան անօգուտ : Սակայն արքայական ընտանիքը դեռ կ'հակառակի , որովհետև բանասիրեալներու մէն մի վայրկեան շահիլը ազատութեան նշոյլ մը կ'երևի իրենց : Ազէտարեր ժամը կը հասնի : Քաղաքին ընկերակցող սենեկահիներէ մին կը հիւանդանայ , Մարի-Անդուանէթ կ'մերժէ ստանց անոր մեկնիլ : Արքայական ընտանիքը՝ կորսուելու վրայ եղող ծովընկիցի մը նման դէմը ելած առաքիցիին կ'յարի : Քժիշկ մը բերել կու տան որ պէտք եղած դեղերը կ'մատակարարէ , որու վրայ թախանձումները աւելի խրոխտ կերպարանք մը կ'առնուն : Քաղաքը որ մինչև ան ստեն Մօնթեաի երթուլու վրայ կ'իջուէր՝ կ'հասկնայ որ չէր կրնար աւելի երկար դէմ դնել այնպիսի ստիպումի մը որ բռնական միջոցներու փոխուելու կ'դիմէր : Վայրկեան մը կ'լինողէ իր ընտանիքի հետ առանձին մնալ , և քանի մը բոպէ ցառալի խորհրդակցութենէ մը վերջը կ'զիջանի և մեկնելու սրտորատու ըլլալը կ'յայտնէ : Արքայական մայրը իր տղան դրկելով՝ ինք կը տանի զան կառքին մէջ : Ծամը առաւօտեան եօթնուկէս է երբ ձանրայ կ'եղնեն :

Թագաւորին մեկնելէ վայրկեան մը ետք՝ բաւական թու-
աւոր դուռներ Աւերակ օսնի կողմը գերզին բոլորակերը եղած
բարձր տեղերը կ'ըմբռնեն : Աւերակն մէջ սրահ մը տակումը
կ'տնայ : Ասի Պ. ար Պուկիէի աղան էր որ Տէօնէ կու
դար ձիաւոր դուռերով, որ գայած էր զանոնք դանելու :
Իր ձիաւորները անցունելու գիտաւորութեամբ իր գետը
չափել տուաւ, որպէս զի Թագաւորը բերող Հինգ վեց հա-
զար մատրկան բանակի նոյն խկ ճակտին վրայ յարձակի, և
այսպէս սրաշարին դանի ինք առջեւն և իր հոջըր ետեւն,
որ մտաւրուտ վտանգը իմանալով չէր կրնար ուշանալ երևե-
լու : Մակայն ճանշան գծուարին և անբայելի բլլալով՝ ա-
զատութեան այս վերջին սրտահալութիւնը 'ի գերեւ ելաւ :
Պուկիէ զօրապետը որ Բոյալ-Ալմանի գլուխը անցած
սանձարձակ կ'համարէր՝ Մուղա համակէ առաջ Լօղէօնի ձի-
աւոր զօրքերէն տեղեկացաւ Թագաւորին Աւերակն մեկնելը
և իրեն շատ ուշ մտայած բլլալը : այսպէս մահը սրտին մէջ,
իր քիչ մ'առաջ քաջազերութեամբ և հիմա յուսահատ դուռով
ճանքէն ետ դարձաւ :

Արքայական տղեկցութիւնը արդէն հեռացած էր Աւ-
երակն : Բաղաբէն մեկնած վայրկեանին կալանաւորութեան վի-
ճակի մէջ զբաժն էին Պ Պ. ար Էօսպէօլ, Տամա և նոյն խկ
ար Բօմէօֆ, որչափ որ Լա Քոյէթի օգնական զօրապետիս
և Ազգային Թողովոյ վճնազիրը բերողն էր : Թագաւորը իր
ընտանիքով կ'չանտարկուի մի և նոյն կառքին մէջ որ զինքը
ազատութեան պիտ'առաջնորդէր : Աստքերը դրեթէ ամեն
տեղ թշնամական և յաճախ կատաղի ու գրգռուած բազմու-
թեանէ մ'առաջնորդուելով՝ միաբայլ կ'յառաջանային : Թրշ-
նամական խօսքերով կ'հալածեն ազնուապետական կար-
ծուածները, և ազնուական բտուողները կ'լլկեն : Աստքին
մօտեցող գերի խեղճ առաջաւոր մը՝ իր ազատութիւնը ազ-
գային զօրաց սրաշարակալի մը կրօնասիրութեան կ'ստորա-

ւորի : Անթիւ բազմութեան մը շարժումէն կառքը չկրնալով կանոնաւորապէս յառաջանալ՝ Վարէնէ Քլէրմօն հաղիւ թէ չորս ժամու մէջ կ'հասնի : Այս դաւառը, ինչպէս բոլոր միւսները ուր արքայական ուղեկցութիւնը պիտի հանդիպի մինչև Քարիզ հասնիլը, բազմութենէ լեցուած է, ամեն տեղ խանութները դոյ, սասանի եռանդ, բորբոքում և կատաղի սղաղակներ չորս կողմէ կ'լսուին :

Պէտք է ըսել որ ամեն օխտը շշուկներ տարածուած էին հասարակութեան մէջ : Յեղաշրջումի ժամանակներ վեղձումը իշխանութիւն մ'է, և տարցած երևակայութիւններու համար չկայ բան մը որ այնչափ հաւանական երևի որչափ անկարելիութիւնը : Պիւղերու մէջ լուր կ'տարածէին որ Աւստրիացիք արդէն Ֆրանսա մտած ոչ կ'լինե՞րու պիտի խնայեն և ոչ տղաներու : Այս լուրերու վրայ գիւղացիները կը բորբոքին, մանգաղով, երեքժանիով և մանգաղակով կ'զինին, և յիմարարար կ'դիմեն առանց ուր երթանին գիտնալու :

Քլէրմօնի մէջ, Մօնսիէօի (Թագաւորին եղբայրը) վիշապի գունդէն մաս մը ուղեկիցներու անհամար բազմութեան կ'միանայ, և հաղի կէսօրէ ետք ժամը երեքին Սէնդ-Մընուլ կ'հասնին : Այս դաւառը շատ սպարաւոր էր Ղուի Ժ.Զ.ի, որ սոսկալի հրդեհէ մը վերջը զանի վերատին շինած ու նորոգած էր : Պ. Ֆիւրսի.բաղաբապետը, արժանաւոր և ուղղամիտ անձ մը, կարճ բանախօսութիւն մի կ'ընէ Թագաւորին, վերջինը՝ զլուսը դռնակին մօտեցնելով կ'սրատասխանէ «Թէ իր անընդհատ զբաղումը ամեն ատեն իր ժողովրդի երջանկութիւնը եղած է» : Քաղաքապետը կ'հրաւիրէ Թագաւորական ընտանիքը դաւառի սպարանը իջնել, ուր քաղաքային ժողովը իր սրահին մէջ կ'ընդունի զայն : Թագաւորը երես և իր ընտանիքի համար սպարատուած բազմոցին վրայ կ'նստի : Թագաւորին ոտքի վրայ կենալով քա-

ղարային սրաշածնակալէ մը ներկայուած արծաթեայ թասով արդանակ մը կ'առնու : Առի ԺՁ. ինչպէս Աւարէնի ժողովրդեան դործակալին նոյնպէս և Հիմա Սէնդ-Մընուլիքաղարապետին կ'հասկցնէ զինքը մեկնելու որոշող պատճառները : Թագաւորը կ'ուզէր քանի մը ժամ Սէնդ-Մընուլ կենայ . Գահաժառանգը եօթն ժամուան ճամբորդութենէ և կիզող արևէ մը յոգնած՝ սաստիկ ջերմէ մը բռնուած էր : Պ. Պայօն, ճանբորդութեան առաջին հրամանատարը, այս վախաբերին չ'ուզեց զիջանիկ, ուստի հարկ եղաւ նորէն ճանբայ ելնել : Աւիշապի գունդերուն հրաման կ'արուիքաշուկ, սահմանադրութենէ հեռանալին՝ ասիէ վերջը անոնց ուղեկցութեան պէտք չէր թողուր . Աւարէնի և Քլէրմօնի սողոյսին պահապան զօրքը նոյնպէս իրեն անդը կ'վերագառնայ, և անոր տեղ կ'անցնի Սէնդ-Մընուլի պահապան զօրքը որ նոյնպէս պիտի փոխուէր իր կարգին : Թողութուրդը ամեն կողմէ ճանբուն վրայ կ'տեղար :

Աւրի լեռան մօտ Հան գիւղին մէջ, որ յաջորդ տարին Բրուսիոյ Թագաւորին հոն բանակելովը և մանստանդ Ալլմիի սրտերազմին պատճառաւ անուանի հանգիստացաւ, Տամբիէրի մարքիզը որ այս գիւղի իշխանն էր՝ եկաւ Առի ԺՁ. բարևել անոր անցնելու ժամանակ, որ վայրկեան մը անոր հետ տեսնուելէ ետք բարեսէր կերպարանքով մը հրրաման տուաւ անոր մեկնելու : Պ. սը Տամբիէր մինչև գետին խոնարհելով իր թշուառ Թագաւորին ձեռքը յարգանք համբուրած էր : Այս յարգանաց հաւատին ժողովուրդը աղմկելու գիտմամբ եղած դործ մ'երեւցաւ բազմութեան աչքին : Հաւատարիմ մարքիզը կառքին դռնակէն այն ինչ բաժնուած՝ կատաղիներ անոր բռնուկը կ'պտան : Չիաւորը վտահելով անոնց կ'հնազանդի . անմիջապէս վրան կ'վազեն, ձիէն վար կ'նետեն զանի, և արբունի ընտանիքի աչբուն առջև կ'սպաննեն անխղճաբար : Գլուխը նիզակի մը

վրայ անցունելով՝ յաղթութեան նշանն մը պէս վայրկեան մը Թագաւորին կառքին առջև կ'տանին :

Այն ինչ Օրպէվալի կայանը ձիերը կ'փոխէին՝ Տրուէ և Կիլեօմ, սոյն օրուան յաղթականները ձի կ'հեծնէին Բարիզ երթալու համար :

Ականատես վկայ մը, Կազօթ, որ աղքայական մարտիրոսազրութեան մէջ աղէկ ճանչուած անուն մ'ունի, և որ Էբէրնէյէ մէկ մըն հետի դանուած Բիէրի փոքր զիւղի աղզային պահապան զօրաց հրամանատարն էր, աբբունի ընտանեաց սոյ գիւղը հասնելը պատմած է : Իր սրտկառելի հայրը զանի ծնկան վրայ բերելով՝ իր օրհնութիւնը ապէվելը, «Գնահ, ըստ անոր, քու կրած համազոյստէ օյուսաքաղէ, և շորհէ Աստուած որ մեր բարի Թագաւորին մխիթարութիւն մը տալու կարող ըլլաս!» Ահա սոյպէս Գաղղիական վաղիմի հաւատարմութիւնը՝ գրեթէ ընդհանուր մոլորումի ժամանակ, թանկագին աւանդի մը պէս ուղիղ և մաքուր մնացած միջանի սրտերու մէջ կ'պահպանուէր : Երկատարող Կազօթ իր գունդի գլուխը անցնելով ճանրայ ելլաւ : Ինչպէս որ Էբէրնէյի աղզային պահապան զօրքը Շալօնի վրայ ուղղուած էր, ուր կ'ըսէին թէ Աւստրիացիք մը տած և ամեն բան հուրի և արեան մէջ թաթաւած էին, գաւառին նախագահ Պ. Լըպլան պատուէր տուաւ Կազօթի և իր գունդին որպէս զի Ալալէ վարձուած Բօհանի պանդոկին մուտքերը պահպանեն, ուր Թագաւորը սլնա'իջնէր : Կազօթի տեսակ մ'երգում աունել տուին իր մարդերը, որոց հրաման ըրաւ կարգաւ կայնիլ և սահմանադրական պաշտօնեաներէ զատ մէկը չ'թողուլ ներս մտնել : Հազիւ թէ սոյ միջոցները ձեռք առնուած էին, երբ Թագաւորին կառքը ժողովրդեան ալիքներէն մղուելով սանդակի գրան առջև դադրեցաւ : Բանտարկեալները կառքէն վար իջան, հաղաբաւոր թշնամալի աղաղակները մանաւանդ Թագաւորին

դէմ՝ օղբ կ'ընդոյնէին : «Արհամարհեցէք այս կատաղութիւնը, ամենուն վրայ Աստուած կ'կենայ!» ըստ Աաղօթ Արմաներէն, որու աչերը Թագուհւոյն աչերու կ'հանդիպէին . «Verachten sie das, Cott ist über alles!» Թագուհին, կ'շարունակէ՛ր Պ. Աաղօթ, ուշադրութեամբ զիս դիտելով իր ճանրան շարունակեց Մատամ Բոյալի, Մատամ Լիլլապէթի, Մատամ ար Թուրդէլի նոյնպէս և ժողովրդեան հետ խստն ՚ի խուռն, որ չ'ուշացաւ դալ և բակին մէջ զօրքերու շարքը աւրել : Գահաժառանգը անձնապահ զինուորմը գրկուած և չ'կրնալով ալ իր մայրը տեսնել՝ արտատուալի աչերով անցած ատեն ձեռքը սրբանոցիս փաթտելով ինձ կ'հարցնէր անոր ուր գտնուիր . ծնօտներս թրջուեցան անոր արտասփններէ : Թագուհւոյն գտնուած սենեակը տարիք զանի : Թագուհին հարցուց ինձ եթէ կրնայի կար կարող մը մատակարարել իրեն, որպէս զի ժողովրդէն կոխկրտուած իր զգեստներու մէկ մասը նորոզել տայ : Մի և նոյն տան մէջ սլանդոկապետին ամենազեղեցիկ կերպարանքով աղջիկը կը գտնուէր, ուստի Թագուհւոյն ներկայացուցի զան, որու յարգական կերպարանքը, արտասքէ կարծնած աչերը հակապատկեր մը կ'ընծայէին Թագուհւոյն իր աչերու տակ եղած տեսարանին առջև : Մօտակայ սրահի մը մէջ քաղաքային պաշտօնակալներ, վարչութեան անդամներ և դատաւորներ Թագաւորը կ'ըջապատէին : «Թէև յանցաւոր էք, ըստ անոնցմի մին, սակայն առ ներկայացուցիչս ազգին ձեր վերադարձը կ'պաշտօնախնայք, վախ մ'ունենար» : — Աւախ ! սրատասխանեց Աուի հանդարտութեամբ, Գաղղիացիներու մեջ վախ չեմ կրնար ունենալ» : Խօսակցութիւնը իր ճանրորդութեան վրայ դառնալով՝ Թագաւորը կրկնեց որ իր դիտաւորութիւնը տէրութենէ մեկնիլ չէր, սակայն չէր կրնար ալ Բարիզի մէջ մնալ ուր իր ընտանիքը վտանգի մէջ կ'ըլլանուէր . — Ո՛հ, անտարակոյս պարոն, անտարակոյս կրնաք

մնալ, ըստ խօսակիցներէ մին : Թագաւորը զանի գիտելով լուռ կեցաւ :

Պատմական ճշմարտութիւնը հոս խողովքենէ քաղուած է . կ'ապրի նա, կ'շարժի, կ'շնչէ : Պաղտփարներու խառնակութիւնը, մաքերու շիտթը, կ'կտրերու մոլորումը առանցքօղի կ'յայտնուին : Թագուհւոյն կառք մտած վայրկենին Էբէրնէյի կիներէ մին կ'ըսէ անոր . «Պայէք գեղեցիկը իմ, գեռ ասկէ գէշերը պիտի ցույնեն ձեզ» ! Այս շարագուշակ թռչունը Թագուհւոյն դժնդակ ճակատադիրը մարդարեացած ասեն չէր գիտեր որ իր ըսածները պիտի կատարուէին :

Էբէրնէի և Տօրմանի մէջ ախտը ուղեկցութիւնը, Թագաւորին բռնուած ըլլալը անձամբ ստուգելու համար ազգային ժողովէ զրկուած գործակալներու կ'հանդիպի, որոնք էին Պարնալ, Լա Թուր-Մօպուրի մարքիզը և Բէթիան : Թագաւորին Վարէնի մէջ բռնուիլը և անոր մօտելու լուրը Լա Ֆէրթէ-Սու-Ժուարի մէջ խմանալով՝ հետևեալ նամակը զրկած էին ազգային ժողովոյ, բողբոլին Պարնալի գրքչէն ելած :

«Լա Ֆէրթէ-Սու-Ժուար, հինգ շաբթի, ժամ 9 :
«Պարոն Ասիսպահ,»

«Թագաւորին իր ընկերակիցներով երեք դիշեր Շալօնի մէջ անցունելը լսեցինք, որ առաջնորդուեցան ազգային ղօրաց բանակէ մը որ մօտակայ նահանգներէ անապարանօր ժողովուած էր երբ Թագաւորին Վարէնի մէջ գանուելուն լուրը տարածուեցաւ : Ա՛յուսանք այս իրիկուն անոր միանալ : Մեր անցած տեղերը՝ անոր վերադարձի ժամանակ ապահովութեան և հանդարտութեան ամենաճշգրիտ հրամաններ տուինք, և քաղաքակցաց տրամադրութիւնները մեր ըրած պատուէրներու կատարելապէս պատասխանեցին : Ամեն տեղ Թագաւորին մեկնելու տարաւորութիւնը նոյնը եղած

է ինչպէս Բարեղի մէջ : Ժողովուրդը հանդարտ և մեծանձն կերպարանք մի կ'կրէ , և Ազգային Ժողովոյ համար վստահութեան և յարգանաց հուսատիներ յայտնելէ չ'զաղբիր :

« Պատիւ ունինք մնալ , և այլն :

« Պարնալ , Բէթիոն , Լաթուր - Մօպուր » :

Այս նամակը և Տրուէի հասնելը Բարեղի մէջ յուզմը հանդարտեցին , ուր Թագաւորին բռնուելուն վրայ դեռ լուր մը չ'ունէին : Ի սկզբան երեք պատգամաւորները արքունի կառքին մէջ նստան , բայց վերջէն՝ այս նեղուածքէ սպառնաւորած անհանդատութեան տեղի տալու համար կ'ընեն թէ Բէթիոն վար իջնելով բասձ բլլայ , « Ես ազրին կ'նմանիմ , ազատ բլլալու պէտքը կ'զգամ » . և իր ընկերակից Լաթուր - Մօպուրի հետ ետեւի կառքը անցան : Պարնալի կերպերը և խօսքերը Բէթիոնի կերպերու և խօսքերու հակապատկեր մը ներկայացնելին շուտով նշմարուեցաւ :

Այսպիսի ընկերներու դալը ամենու դէմքը արեւոյցած էր . Թագաւորին իր դէմքը քողարկած , և մինչև Բէթիոնի և Լաթուր - Մօպուրի կառքէն իջնելին՝ լուր թիւնը բնաւ չ'ընդմիջեցաւ : Աստի ամեն մէկը վերստին իրենց տեղը անցան , և Պարնալ արքայական ամուսիններու դիմաց Գահաժառանգին տեղը նստելը շարունակելով՝ վերջապէս Լուի Ժ. Խօսակցութեան սկիզբ բրաւ , և վերաւին բացատրեց իր ճանքորդութեան նպատակը : Արքայալի երևատասարդ ատենախօսք յարգանք կ'ստատախանէր Թագաւորին , և իր վրայ բռնայտ զգայումներու յուղմամբ համամիտ չ'եղած կարծիքի մը ակնաձանձօք դէմ կ'զնէր : Անոր վրդովումը , նոյնպէս խօսքին սպառնալովն և կերպերու վայելչութիւնը Թագաւորոյն սրտին աղբելով՝ քիչ մը վերջը նա ալ խօսակցութեան մէջ մտաւ : Նոր օր մը ծագեցաւ Պարնալի : Արքունի ընտանիքին վրայ ամենօրեայ նկարագրերը որչափ քիչ կ'նմանէին հիւսա իր աչօք տեսածներուն ! Գահա-

ժառանգը իր ծնկաց վրայ առնելով՝ երկար առնն իր դրկաց մէջ պահեց զանի : Երբ խօսակցութիւնը կ'կտրէր՝ նորէն սկիւռ համար անոր կ'աղղէր իր խօսքը , և անոր պատրաստ , կենդանի , սիրտն պատասխանները զինքը կ'աղղեցրնէին . « Ձէ որ Բարիզ գառնալուդ վրայ բնառ չես ցաւիր » : — Բ'հ , ամեն տեղ հանդիստ եմ ես , պատասխանեց նա , բաւական է որ հօրս և թագուհի մօրս հետ ըլլամ , . . . նոյնպէս հօրաքեռս , քոյրիս և Մատամար Թուրղէլի հետ » , շարունակեց աչերը սոս երեք անձանց վրայ դարձնելով ուրոնք իրեն դէմ նստած էին կառքին մէջ : « Ասի պարսն , բաւական տխուր ճանքորդութիւն մ'է զաւակացս համար , վերստին սկսաւ Թագաւորը : Ինչ տարբերութիւն Շէրպուրի ճանքորդութեան հետ , ան առնն բամբաստմները գեռ կարծիքները մնորեցուցած չէին . ինչպէս միաբերը յառաջեցին , ինչպէս դու խնեբը տարցած են ! կրնան դէշ կարծիք ունենալ իմ վրայ , բոցց պետի չ'կրնան վոխել զիս : Ժողովրդեանս սէրը ինչպէս որ իմ պարսքերու տաջինն է՝ նոյնպէս և իմ սրտի տաջին պէտքը պետի մնայ միշտ » : Այս խօսքերու ցաւագին հնչումը Գահաժառանգի սիրտը շտիպաւ զանց շարժեց : Եր հօր ձեռքը բռնեց համբուրելու համար : Թագաւորը իր սրտի վրայ սեղմեց զանի , և ուրիշ անգամուանս պէս « Իմ պղտի 'Նորմանտ » , կանչելով համբուրեց : — Մի արտախր բնառ հայր իմ , ըսաւ անատեն տղան աչերը արտաքով լեցուած , ուրիշ անգամ Շէրպուր կ'երթանք » :

Գրեթէ ամեն կայան միւս երկու դորձակալները կու գային Թագաւորի կառքին մէջ անցած գացածը տեսնելու համար : Բէթիոն , Գահաժառանգին շարունակ Պարնալի ծակաց վրայ գտնուելուն զարմացած՝ օգոստտախառ ճանքորդներէ ըտելու չափ բարձր ձայնիւ ըսաւ Լաթուր-Մօպուրի . « Պարնալ հաստատայէս սպառնի թագաւորութեան նեցուկն է :

Այսու ամենայնիս. Թագաւորին ընթացքը արդիւղդ բան մը չկար, ժողովուրդը տխուր և լռիկ, միասեւտութեան յուզարկաւորութիւնը անցած ժամանակ ապշութեամբ զլրդիտէր : Մէկը չէր երազեր 'ի նպատաւ անոր փորձ մը փորձելու : Սակայն Ֆէրթէ-Մու-Թուարի մեջ արքունի ընտանիքը Հնորհալի կերպիւ ընդունուելով՝ Պ. Բրնեարի տունը իջաւ ճաշելու համար : Արշափ որ տիկինն Բրնեար փոյթ ունեցաւ գողնաց մը կտակել իր առջև՝ սակայն Մարի-Անդուանէթ առանց սխալելու ըսաւ անոր մտտելով. «Անտարակոյս տիկինն, այս տան տիրուհին էր? — Ելի վայրկեան մը Ձեր Աւհափաութիւնը հոս չեկած» : Մինակ այս բառը այն առատասերտ տանուտէրերու ինչ մտքի և ինչ սրտի տէր ըլլալնին կ'յայտնէ, որոց վերջէն այնչափ սուղի նստաւ գծրադդ թագաւորութեան յարգանք և մտադրութիւն յայտնելու սրտիւ ունենալին :

Տիկինն Բրնեարի տունէ մեկնած ատեն Թագաւորին ըսաւ Պահածատանդին. «Տղաս, Հնորհալիւ եղիր նաև տիկնոջ իր ուշաշարքութեանց համար, ըսէ անոր թէ բնաւ չ'սխալի մոռնամ զանոնք : — Ձեր մեղի տարած խնամնց համար մայրս Հնորհալիւ կ'ըլլայ, ըսաւ տղան, և ես սրտովս կ'սիրեմ ձեզ մօրս հաճոյք սրտաճառելնուդ համար» :

Արիւշ կայսններ բնաւ նոյն միսիթարութիւնները չ'նուիրեցին օդոստոսիաւ ճանքորդաց : Նոյն խկքանի մը զլուրերու մէջ յեղափոխական աղաղակներ լսուելով՝ կառքի բարձրաւանդակին վրայ նստող անձնատրահ զօրքերը նախատած էին : Մօի արուարձանը մտած ատեննին բաւական մեծ դժգոհին մը տեղի ունենալով՝ քահանայ մը Պ. տը Տամբիէրի սէս զոհուելու կ'տարուէր. Թագաւորին աղաղակ մը կը ձգէ, Պարնավ բոլոր մարմինը կառքի գոնակէն դուրս կ'հանէ. «Գաղղիայիք ! ազգ քաջերու, մարդասպան ժողովուրդ մը կ'ուղէք զանալ» : Մատամ Ելիզապէթ Պարնավի արու-

Թեան վրայ սրանչացած, անոր զգեստէն կ'ըռնէ վախնալով որ մի՛ գուցէ այս կատաղի բազմութեան մէջ նետուելով ինք բլրայ զոհ : Սակայն Պարնավի ահնդ ձայնը բառական եղած էր կրօնաւորը մահէ աղատելու :

Բէթիոն ըստ ան ատեն Լաթուր-Վօպուրի, «Այնքնի թէ մեր սաշտօնակիցը չէ թէ միայն թաղաւորութիւնը այլև կղերը սաշտօնակիցը : Հսկար սաշտօն առած է» :

Այս գործողութիւնէ վերջը Գահաժառանգը աճաստարանօք իր տեղը դարձաւ Պարնավի ծոռնիկերու մէջ, զոր իր ընտանիքի համար եռանդուն սաշտօնակից մը կ'ըստէր, և կառուանը հանդարտօրէն ու ծանրաբայլ Պօսուէի երկիրը մըստաւ ուր գեղերը մնացին : Արքայական զժբարդութիւնները ողբացող մեծ հեղինակին ստուերը թերևս դուրս ելած էր իր դամբանէ, որպէս զի մասը յիզաշջումի շուրթերուն վրայ դնելով՝ աշխարհային իշխանութեանց այս ստակալի սղզարարութիւնը կրկնէ, «Թաղաւորնե՛ր, հասկցիք հոնա . կրթուեցէք բայարձակ իշխանք աշխարհի!»

Պարնավ ժամը 14ին, երբ իր սաշտօնակիցները արդէն ծանրաբեռն օրուան մը խոնջէնքէ կ'հանդատանային Լուի Ժ.Չ.ի սենեակը հրաւիրուելով՝ անոր և Թաղաւորնե հետ երկար խօսակցութիւն մ'ունեցաւ անոնց ներկայ կայութեան վրայ : «Ստուգիւ, ըստ Թաղաւորնե, Գաղղից մէջ ժողովրդային մտքի իրապէս ինչ վիճակի մէջ բլրայր սխալ հասկացիցն մեզ» : Պարնավի անաչառ խորհուրդներուն հաւանելով՝ ասպաղային համար իսկ խնդրեցին և խօսք ըրին Թուրքերի մէջ կրկին տեսնուել զաղանապէս : Պարնավ ուխտեց այս օրէն զահին հաւատարիմ մնալ և ազատութեան համար ինքզինքը նուիրելով մեռնիլ : Ճանրորդութեան վերջը նշանակութեան արժանի դէպք մը չ'ստատահեցաւ . Թաղաւորը 25ին իրիկուն ժամը 7ին Բարիզ մտաւ :

Բէթիոն և Լաթուր-Վօպուր վերջին կայանէն 'ի վեր

արքունի կառքը ա՛ն յոժ էլին, ուր ինն հողի գիղուած կը
զանուէին կիզող արեւի մը տակ :

Առջի օրէն քանի մը ծանուցագրեր փակցուած էին սլա-
տերու վրայ սոյն խօսքերով. «Այ՛ որ Թագաւորին համար
ծախահարէ՛ պիտի գանուի, և գանի նախատողը պիտի կա-
խուի» : Աստիկանութիւնը արքունի բանաւարկելոյց անցած
ժամանակ միայն այս անընդունելի լուծիւնը պատիրելով
գոհ չեղաւ : Ազգային պահապան զօրքը հրաւիրուեցաւ որ
գէ՛նքերը վար խոնարհած բնդունի գանանք, և ժողովուրդը
գլխարկինն չհանած : Տխուր տղեկցութիւնը Շանդ-Նշիկե-
լի վրայ երկու երեք հարիւր հազար հանդիսականներու մե-
ջէ անցաւ : Այս անթիւ բաղմնութենէ բարձրացած փոշիէն
գոյացող թանձր ամպ մը՝ մերթ բնդ մերթ կ'ըծածկէր ժողո-
վրդեան տեսութենէ անոր նախկին տէրերու նուաստանալը,
և այս վերջիններու՝ իրենց թշնամեաց յաղթական ուրախու-
թիւնը : Քրտինքը կ'հոսէր Թագածառանցի ճակատէն, և
չնշառութեան համար օդը կ'սրակսէր : Նր մայրը կառքի սլա-
տահաններէ մին բանալով և պահապան զինուորներու բո-
լորակքը միտացող ազգային զինուորութեան մեջ գտնութ հայցե-
լով, «Տեսէք սարօններ, ըսաւ, տեսէք ինչ վիճակի մեջ կը
գանուին զաւակներս, պիտի խեղդուին ! — Արիշտեւի ա-
ղէկ կերպով մը պիտի խեղդենք քեզ», մըմըացին քանի մը
վատ և անդութ ձայներ, որոնք ազգային պահապան զօրաց
կարգերու եակն կ'ըշէին : Աստքերը ոլերտ կամուրջին վրայէ
Թուխլըրի սրբաւէզը մանելով՝ գժուարութեամբ մինչև
սլալտորը հասան, ուր խիտ բազմութիւն մ'անոր գուռը կը
փակէր : Ամեն գլուխներու վրայ գլխարկները կ'կենային,
վասն զի տրուած սրատուէրն էր այս : Միայն մէկ անձ մը,
Պ. Աիլէրմի, ազգային ժողովոյ անդամ, գլխարկը ձեռքը
խոնարհեցաւ ամենախորին յարգանաց նշաններով : Պոտա-
ցին որ գլխարկը գլուխը դնէ, բոլոյ նա ժողովրդեան մեջ

աստուանելով զանի , և աներկիր ճակտով , հանդարտ դիտոր
ու գլուխը բաց կեցաւ :

Ամենէ առաջ երեք անձապահները առաջին կատրի
բարձրաւանդակէ վար իջան . ձեռքերնին սնդուած չէին ,
ինչպէս որ լուր տարածուած և վերջէն պսակս խկ գրած
էին , սակայն հաղարարը թշնամանաց ենթակաց եղան :
Գինիէ և զայրոյթէ զինուոյցած կատաղիներ ուղեցին բոնա-
ւորական միջոցներ գործածել անոնց դէմ , ազգային պահա-
պան զօրքը դժուարաւ կրցաւ զանոնք շահածել : Պ. Հիւ ,
ամբոխին մէջէ ճամբայ մը բանալով կատրին մտա կ'հասնի
ժամանակին , և ձեռները կ'երկնցնէ Պահածատանդը ընդու-
նելու համար : Արքայորդին այն ինչ իր սրտայաներու այս
բարեւեր վկան , իր խտրելու այս մտադիր տեսուչը տեսա՛
և աչերը արասուքով լեցուեցան : Պ. Հիւ զանի իր գոկաց
մէջ առնելու համար այնչափ ջանալէ ետք՝ ազգային պա-
հապան զօրաց պաշտօնակալներէ մին յափշտակեց զանի իր-
մէ , և պաղատը տանելով խորհրդարանի մէջ գտնուած սե-
ղանին վրայ նստեցուց : Սոյն պաշտօնակալէ անմիջապէս ետք
նաև Պ. Հիւ հասաւ նոյն սրահը . Թագաւորը , Թագուհին
և Իշխանուհիները վայրկեան մը վերջը մտան : Թագաւորը
պատգամաւորաց խումբ մը գտնելով հոն՝ մտակցաւ անոնց և
ըսաւ . « Երբ Բարիդէ հեռանալու պէտք ունենալ կարծեցի՝
խմբիստորութիւնը բնաւ հրանայէ մեկնիլ եղած չէ : Ա-
ղեցի անոր սահմանադրութիւններէ մէկուն մէջ հաստատուիլ ,
և ժողովոյ մէջ օր ըստ օրէ աւելցած վէճերուն միջնորդ ըլ-
լալ : Աղեցի մանաւանդ բոլորովին ազատ և առանց որ և է
գրօսանքի , իմ խնամոց անընդհատ առարկայ եղող ժողովրդ-
դեանս երջանկութեան համար ճանրորդել » :

Լուի Ժ.Չ. խանջէնքէն ընկճած , քրտինքով և փոշիով
ծածկուած կ'ըբաշուի իր ներքին սենեակներէ մին : Ընտանի-
թը նոյնպէս անոր կ'հեռուի : Ազգային պահապան զօրաց

սրաշտօնակալներէ մին դարձեալ կ'ուզէ Գաճաժառանգը վերցնել, Թագաւորը կ'հակառակի . և այս անգամ իր հրամանաց համեմատ Պ. Հիւ իր դրկաց մէջ առնելով ծագկա-
հասակ Իշխանը՝ անոր սենեակը կ'առնի և Մատամ Թուրէ-
լի կ'յանձնէ :

Լաֆայէթ սրաշտօն կառավարութեան և Թագաւորին ու իր ընտանեաց յատուկ պահպանութեան պաշտօն ընդունելով՝ մեծագոյն մասամբ անձերնին իրենց գլխաւորին նուիրած ՅՅ սրաշտօնակալներ ընտրեց Բարիզեան բանակի մէջէ, որոնք երեքի բաժնուելով սրահներու ներսերը և սենեակներու մէջ ամեն մէկ քսանն շորս ժամը անգամ մը կարգաւ սլախի հսկէին : Այս պաշտօնակալներէ երկուքը անմիջապէս Գաճաժառանգի սենեկին մէջ հաստատուեցան : Մատամ տը Թուրէլ իր բոնուիլը նախատեսելով՝ ուղեց Գաճաժառանգի տեսութենէ հետանալ, որպէս զի այնպիսի տեսարանի մը ներկայ գտնուելով սիրաբը չ'վշտանայ, և անոր պատկերու սենեկին մօտ տեղ մը քաշուելով՝ Պ. Հիւ ի միջոցաւ գիրք մը խնդրեց Մատամ Նլիզապէթէ որ արդէն խոստացած էր տալ անոր . այս գրքին անունն էր *Մոսկովի Գրքանոց* : Իր նոր սենեակը անցնելէ քանի մը վայրկեան ետք՝ երկու պաշտօնակալներ ներկայացան ընդունած հրամաննին զործադրելու, որ էր հսկել անոր վրայ և մի և նոյն սենեկին մէջ : Սակայն այս երկու պաշտօնակալաց Պ Պ. Պանսի և Թիւ Քայի յայտնած յարգական նկատումներէն շատ գոհ էր :

Գաճաժառանգը իր անկողինը մտնելուն Պ. Հիւ կանչեց իր քով և ըստ անոր. «Ըսէ՛ ինձ բոլոր այս եղածները : Այն ինչ Ղարէն հասանք՝ զմեզ նորէն ետ դարձուցին, չ'գիտեմ ինչ պատճառաւ, դուք գիտէք արդեօք» : Այս միջոցին պահապան պաշտօնակալները սենեկին մէջ խօսելով կ'ըսէին : Պ. Հիւ այս ճանրորդութեան վրայ բնաւ մէկու մի

բան մը չ'խօսելու անհրաժեշտ պէտքը խնայուց անոր , և այս պատուէրը ապառնուցն մէջ թէև ճշդիւ գործադրուեցաւ՝ սակայն թերևս պատճառ եղաւ այս երիտասարդ երեւակայութեան մէջ երկիւղ և անհանդատութիւն յառաջ բերող ծանր մտածում մը սրբարելու : Տղան , թէև յոգնած և հակառակ իր սուլորութեան , սոյն զիշեր բաւական ուշքունը տարաւ . և հետեւեալ օր արթնցած միջոցին իր պահապաններու ներկայութեան՝ ստակալի երազ մը տեսած ըլլալը սրամեց իր սիրելի խորհրդակիանին բաւական բարձր ձայնիւ որպէս զի ամենքը լսեն . թէ՛ գայլերէ , վաղրերէ և վայրենի գողաններէ պաշարուած էր իր երազին մէջ , որոնք կ'ուղէին զինքը փառասել : Պ. Հիւ , որու այս մանրամասն պարագաները սրբատար ենք , կ'սրտամէ թէ երարու երեսնայեցան սուանց խօսք մը հնչել համարձակելու :

Թագաւորը՝ ինչպէս յայտնի է , աւելի ստակալի թշուառութեան մը մէջ ինկաւ , աւելի աստիճան այն թշուառութեան՝ ուսկէ թէ զինքը և թէ ընտանիքը ազատելու աշխատած էր : Թէ անոր և թէ իրեն համար գերութիւնը աւելի կ'ծանրանար , բանտը աւելի կ'նեղնար , և նուազագոյնը աւելի կ'աղղէր : Աստիճան խղել ուղած ատեն զանոնք աւելի սնդայուց : Անհատատալի ճակատադիր մը , և սէտք է խոստովանիլ , մեծ կարճատեսութիւն մը այս ձախող ճանքորդութեան նախադասած էին : Պառիլէ յորդորած էր Թագաւորը որ փոխանակ Ալարէնի ճանբան բռնելու՝ Քէմի վերայէ Քարիզէ Վօնմէտի սուաջնորդող ուղղակի ճանբուն հետեւի , որ Քէմիմեն Վօնմէտի երկրորդական կարգի միակ ուղի մ'ըլլալով՝ ամենեւին ձի փոխելու կայան մը չունէր : Պառիլէ իրաւամբ կ'վախնար որ տարբեր պատրուակներով կատրին համար զրկուելիք ձիերը կատկածներ չ'արթնցնէին : Մի և նոյն անպատահութիւնը և վախը կար դունդերու ներկայութեան համար այնպիսի ճանբու մը վրայ՝ ուր սուլարարար չէին յաճախէր :

Թագաւորը եթէ պնդած էր իր ընտրած ուղղութեան հետեւի՝ վասն զի կ'վախնար որ Քէմլի մէջ օծուած ըլլալուն հոնկէ անցած ժամանակ չ'ճանչուի :

Ասի առաջին այլ ոչ վերջին դժբաղդութիւն մ'եղաւ : Պուլիէէ թագաւորական ընտանիքի քով հաստատրիմ, արթմուն, հասաստ, զինուորաւ, ճան բորդութեան դժուարութիւնները բառնալու և ՚ի հարկին արդեւթները փշրելու կարող մարդ մը գտնուելու պէտքը զգացած ըլլալով՝ այս կարեւոր դերին համար Գաղղիացի պահակներու հաղարասպետ Ալուլի մարքիզը նշանակած էր Լուի Ժ.Չ.ի : Թագաւորը ՚ի սկզբան խօսք տուած էր այս խորհուրդին հետեւիլ, տակաջն թագաւորական ընտանիքը Մատամ Թուրքէլի միշտ Արքայորդուոց քով գտնուելուն սովորած ըլլալով՝ չ'ուզեց բնաւ աւտորմէ զատուիլ, հետեւարար Պ. Ալուլ բերել չ'տուաւ :

Գեռ ամենը այս չէ . Պուլիէէ աղաչած էր Թագաւորին , որ Փօնակտիի կողմը Ֆրանսացի սահմանադրութիւններու վրայ ըստ պատնական կերպարանք ունեցող գունդեր երեջնելու խնդիր ընէ Լէօփօլտ կայսեր , որպէս զի այս գիւղաքաղաքի բոլորտիքը Գաղղիական հեծելազօրաց գունդի մը կեդրոնաւորիլը արդարացիէ զարհուրած ժողովրդեան աչերու առջև : Լուի Ժ.Չ. պատասխանած էր Պուլիէէի որ իր աները (Լէօփօլտ) բանակ մը պիտի զրկէր Լօնկուիլի վրայ , որպէս զի պատճառ տայ Գաղղիական գունդերու հատարման : Սակայն այս շարժումը դիպող ժամանակին տեղի չ'ունենալով՝ զօրասպետին համար մեծ անսպասուհութիւններ պատճառեց . եթէ իր բանակը տկար ըլլար՝ կ'վախնար որ Թագաւորին փախուտը չէր կրնար պաշտպանել , և եթէ զօրաւոր՝ մի գուցէ քաղաքային զօրաց արթնութիւնը և կասկածները զրդուելով հակառակ զէպք մը տեղի ունենար :

Նաև քանակչորս ժամուան կորուստը անդարմանելի հետեւութիւններ ծնաւ . տեղերու և ժամերու համար տրուած

պատու էրներու ճշգրտութիւնը խղած, և անբայաստրելի հակահրամաններ տալու ստիպած էր թէ պատրաստուած ձիւերուն և թէ վաշտերու համար, որոյ ճանբաներու վրայ ըստպատելը վտանգաւոր և կասկածներ արթնցնող վիճակ մը գարձած էր :

Վերջապէս մասնաւոր պարագաներու նկատմամբ հաղաբաւոր վրիպումներ դործուեցան, այնչափ թուաւոր՝ որ անստոյգ մնացածները անդամ իբր ստոյգ ընդունելու կ'պարտաւորինք : Սակայն այս իրաւ է որ Թագաւորին թշնամիները աւելի արթուն, որոշելու համար աւելի պատրաստ, դործադրելու համար աւելի շուտ նոյնպէս և աւելի յաջողակ և յանդուգն գանուեցան : Ներքնապէս շատերու մտւածութիւնները և կիւքերը, ամենուն երեւակացութիւնը, վերջապէս ամեն բան իրեն դէմ էին : Արծիբի ոյժին հետ, որու հոյր թագաւորութեան դէմ կ'փշէր, նաև բարոյական վեհապետութիւնը ժողովոյ անցած էր : Արտիճեակ քաղաքականութեան մէջ ինչպէս ծովու վրայ՝ գրեթէ ամեն բան նպաստաւոր կամ հակառակ հողմով կ'որոշուի : Թագաւորին ծառայողները հաւատարիմ սակայն կորուսած դատէ մը յուսահատ հպատակներու պէս կ'գործէին, իրենց ճիզը յողթմանակը աանիլ չէր այլ պատիւը աղատել : Բոլոր այս անհաճոյ պարագաներուն մէջ այնպիսի տարօրինակ բաներ, անյուր վրիպումներ և ողբալի հետեւութիւններ տեղի ունեցան՝ որ ոմանք մտածեցին և խոհական մտտենալի մը (Սէզի կոմսը) իր պատմութեան մէջ ըսաւ թէ Վարէնի ճանբորդութիւնը ներքնապէս ուրիշ բան չէր՝ բայց եթէ Թագաւորը կորուսելու համար լարուած թակարդ մը, որու մէջ ինկաւ իր ամենէ անձնուէր բարեկամներով :

Ահա սոյն օրինակ էր այս դէշ կարգադրուած և դեռ աւելի դէշ դործադրուած տխուր ճանբորդութիւնը : Արեւի էէ յաջողութիւնը անկարելի ընելու համար ամեն բան մի-

այսած էին . բարուց մէջ անհաստատութիւնը , սկիզբ ընելու պահասութիւնն բնաւորութեան մէջ , վտանգաւոր ընարողութիւնները , զաղանկըն համար անողուտ և վնասակար պատաստութիւնները , դունդերու երեոյթը որոնք աւելի վրտանդի ենթակայ ընելու համար պատրաստուած կ'ե բեէինքսն թէ ճանբորդութեան յաջողութիւնը սպահօվելու : Ամեն օր գաղթականներ կ'մեկնէին առանց անցայիք անգամ հարցուելու իրենցմէ : Աւաղ ! ամեն բան պէտք էր աղիտարեր ըլլալ զժբաղդ Առի ԺՁ.ի համար , թէ նուանդի և խոհեմութեան շախաղանցութիւնը և թէ մասնութիւնները : Նրիւ սարիէ 'ի վեր իր արքայական կենանքը պատերազմ մը գարձած էր : Թերևս Ա.հ.հատերը իր առջի ընդունած հարուածէն 'ի վեր իր վիճակի անողորմ ճակատագրին տակ զլուխը ծռած , և Հոռվմայեցի սուսբամարտին նման իր մահուան սպասող հանդիսականները տեսած էր որոնք իրեն նշան կ'ընէին թէ ժամանակն էր մեռնելու :

Աւելի քրիստոնէարար խօսիւք այս մեծ Քրիստոնէին վրայ : Առի ԺՁ. թշուառութեան համար ծնած իրր իր հաճոյական վայրը մատ անոր մէջ : Գժբաղդութիւնը , խիստ բարեկամի մը պէս զոր կրօնքը իրեն կ'ներկայէր՝ առանց զարմացումի և առանց երկիւղի տեսաւ : Միշտ Աստուծոյ ձեռքին տակ խոնարհելու պատրաստ կ'զգար իւրովի թէ այնպիսի անդունդներու մէջ ինչպու համար ստեղծուած էր՝ զորս ազգերը ժամանակ առ ժամանակ իրենց վայրենական յիմարութեան և ցաւումի օրերու մէջ կ'փորեն :

Աստի Թագաւորը ամբոխին ձեռք անցաւ որ կ'պատրաստուէր նախ իրեն խողալիք և վերջը զոհ մ'ընել զան : Ասպառնացող վարդապետութեանց , միմիայող երևակայութիւններու ձեռք կ'յանձնուի , անդութ ժողովրդասիրութեանց՝ որոնք կ'կատեն շոյելով և քարեր կ'ներտնն դալեսաներով : Անխորշելի կերպիւ իր կորստեան կ'քարշուի , և բան

մը չկրնար զանի աղլատել : Թողովուրդը կ'ուսասէր և արխնարբու բնազդումներով կ'արթննար : Հայրենեաց սէրը՝ իշխանութեան գէմ ասելութեան կ'փոխուէր : Երբ այս մնչութումը ժողովրդի մը սրտին և մտքին մէջ կ'իջնէ՝ մարդկային հօտը ան ասնն իր հովիւը վարստտելու կ'մտնի : Հասաւ նորոգումներու անողոք ժամանակը, զոհ մը սէտք է անոր համար, և այս մատղը որով տէրութիւնը կ'անձնաւորի՝ այս մարդն է դարերու քառութեան համար խոստացուած զոհը, որու անմեղ արխնը սրբաաններու բոլոր ամօթը, իշխաններու բոլոր մոլութիւնները, և ժողովուրդներու բոլոր արատնջները և մոլորումները պիտի գնէ : Լուի Թ.Չ. մարտիրոսութեան համար երկնքէ վճուած ըլլալով՝ եթէ չունէր այն գիւցազնական քաջասրտութիւնը որ մարտնչիլ գիտէ, սակայն մեռնիլ գիտցող գիւցազնական հանդարտութիւնը ունէր :

Գ Ի Բ Ք Զ Ո Ր Ր Ո Ր Դ

ՅՈՒՆԻՍ 20Ի ՕՐԸ

26 ՅՈՒՆԻՍ 1791 — 20 ՅՈՒՆԻՍ 1792

Արքունի ընտանեաց Թուիլերբրի մէջ բանտարկուիլը. —
Գահաժառանգին առաջին անգամ դուրս ելնելը. — Ժողովոյ
դիրքը Թագաւորին դիմաց. — Սահմանադրութիւնը կ'ըրեւոր-
կուի. — Թագաւորը սահմանադրութիւնը կ'ընդունի. — Ար-
քայազն Իշխանը. — Տօն Արխան դաշտի մէջ. — Ժողովուր-
դի ուրախութեան ազդակները. — Գահաժառանգին երա-
նութիւնը. — Թագաւորին վստահութիւնը. — Նամակ իր
եղբայր. — Գահաժառանգին նկատող յարազակ. — Սահ-
մանադիր ժողովը կ'ըրաւ. — Օրէնդիր ժողովոյ հաստա-
տուիլը. — Անոր առաջին դործերը. — Կարծիքները նորին
'ի նպատակուի ժ.Ձ.ի կ'ըստնան. — Արքայական ընտանիքը
Իտալական թաղանթը կ'երթայ. — Եւրոպիոյ սպանական գիր-
քը. — Անիճեալ դաղթականութիւն. — Ժողովոյ վճիռները.
— Լուի ժ.Ձ.ի բացարձակ իշխանութիւնը. — Յեղաշրջումի
ցասումը. — Նամակ Թագաւորին. — Արքայազն Իշխանին
կառավարիչը. — Յունիս 20ի օրը. — Վէպ Մատաժ Էլի-
զապէթի. — Գահաժառանգին խօսքը. — Լա Քայէթի ըն-
թացքը. — Խորհրդածուիլներ:

ԹԱԳԱՒՈՐԸ և Թագաւորին իրենց փախուստի պատ-
ճառներու և սպառազաններու նկատմամբ ժողովոյ դործակալ-
ներէն հարցուփորձի մ'ենթակայ եղան: Արչափ որ համեստ
մտքեր՝ Պարնավ զլուինին անցած, կ'ուզէին Յունիս 21ի
դէպքին վրայ եղած խուզարկութիւնները նեղ սահմանի մը
մէջ ամփոփել, սակայն այս ձախող դէպքին մէջ իբր մեղակից
ամբաստանեալ բոլոր անձերը արքայական ընտանիքի վրայ
դործադրուած բռնութիւններու և նուաստութեանց մասնա-
կից եղան: Երեք անձնապահները՝ Թագաւորի սրահին կից
սենեկի մը մէջ բոլոր գիշերը պահակներով շրջապատուած
անցնելէն ետք, Սէն-ժէրմէնի մենտունը տարուեցան
Տիկնայք Նէօվիլ և Պրիւնիէյի հետ: Պ Պ.ար Ըօպլէօլ, ար

Տամա և տը Ֆլորիսաք Վարէնի մէջ բռնուելով՝ Վէրտէօնի բանտերէ մէկուն մէջ նետուած էին : Քանի մ'օր վերջը Ազգային Ժողովէ տրուած վճռոյ մը վրայ՝ Պ. տը Շօաղէօլ Օրլէանի բանտին մէջ փոխադրեցաւ, և Պ. Պ. տը Տամա և տը Ֆլորիսաք Բարիզի բանտերէ մէկուն մէջ : Քանի մ'օրէն երկու սենեկուհիներու ազատութիւն տուին, սակայն միւս կալանաւորները չկրցան արձակուիլ մինչև որ Թագաւորը սահմանադրութիւնը ընդունելով՝ ընդհանուր ներողութիւն մը շնորհուեցաւ :

Գահաժառանգը իմանալ ուղեց թէ ինչ եղաւ իր կառավարչութիւն, այսպէս կ'անուանէր նա Մատամ Նէօվիլ իր առաջին սենեկուհին, պատասխան տուին անոր թէ զաւուրին մէջ իր մայրը տեսնելու գացած էր : Եւ վերտոխն իրեն դարձուած ժամանակ, Քաւակիան երկար ատեն է որ զձեզ տեսած չեմ, ըսաւ անոր Թագուհւոյն առջև, բայց շատ աղէկ ըրիր : Եթէ ես բու սեղ ըլլայի կարծեմ քեզմէ աւելի շատ ատեն սլիտ'անցնէի մօրսբով : Այս ըսելով մօրը դիւրիւ նետուեցաւ զանի խանդաղատանօք շոյելով :

Թագաւորը՝ որտ. միտքը շատ անգամ անհաստատ, սակայն սիրտը միշտ ազնիւ և ամուր էր, ուղեց Վարէնի ճանբորդութեան բոլոր պատասխանատուութիւնը իր վրայ առնուլ : Աստի բոլոր իր տուած պատասխանները սոյն միտքով էին, երբ Թրօնէ, Տիւբօն և տ'Անտրէ Սահմանագիր ժողովէ ընտրուած եկան իր յայտարարութիւնը ընդունիլ . (Տեղնական յարգանօք մ'այս անունը տուին զինքը հարցափորձող ժողովոյ :) Թագաւորը իր միտքը ան առաջին որոշած էր այս բանին վրայ՝ որ հետևեալ օր երեք գործակալները Թուրքերի հրաւիրել տուաւ յաւելուածական յայտարարութիւն մը ըսելու իրմէ : Ասով կ'ուղէր հաստատել թէ ինք դրաւոր հրաման զրկած էր Պուրիէի՝ որպէս զի Շալօնէ Մօնմէտի իր ճանբորդութիւնը պաշտպանէ :

Հեռուէն քանի մ'օրերը Պարնալ չ'համարձակեցաւ Քուիլեբրի գալ : Աւելի վերջը՝ Թագաւորին հետ իր տեսակցութեանց գաղանկքը չ'յայտնուելու համար ամենազիւշաւոր միջոցներ ձեռք առնուեցան :

Միջնայարկի վրայ դտնուած փոքր սենեկի մը մէջ էր որ այս խորհրդաւոր տեսակցութիւնները տեղի կ'ունենային : Արքայական ամուսինները շատ անդամ ձեռքերնին նիզկն վրայ դրած ժամերով կ'սպասէին , որպէս զի գաղանկի պաշտպանին առջին քայլի ձայնը առնելուն՝ որ 'ի զուր Միրասոյ՝ յի դժուարին և վտանգաւոր յաջորդութիւնը կ'ընդունէր՝ կամաց մը դուռը բանան : Աւաղ ! քիչ մ'առաջ Թագաւորութեան գէմ՝ յեղաշրջումով այնչափ զօրաւոր եղող մարդերը՝ յեղաշրջումի գէմ՝ Թագաւորութեան ուրիշ բան չէին բերեր , բայց եթէ ընկերային տաղալումի դործին մէջ սպառուած ոյժի մը անզօր մնացորդները , այն ոյժը որ իրենց երիտասարդութեան բոլոր աւիւնը , (verne) և իրենց տաղանդի բոլոր գալարութիւնը ունեցած էր : Աւրեմն Թագաւորութեանց ճակատագրերը և մարդկան կարծիքները հաստատուն կայան մը չ'ունին ! Եթէ Պարնալ մտէն տեսած չ'ըլլար Նուի Թ.Ձ. և Մարի-Մնդուանէթ՝ անտարակոյս բորբոսին տարբեր դեր մը պիտի խաղար յեղաշրջումի մէջ : Աւարէնի ճանբորդութիւնը իր զգայնութիւնը արթնցուց 'ի միաս իր փառասիրութեան , և զինքը միապետութեան շահեցաւ . մինչև անատեն իր քաղաքականութիւնը իր երևակայութեան հետեւած էր , սակայն հիմա միայն իր սրտէն կը շնչէր : Անովարանութիւն ինկած ժամանակներու մէջ Պարսպօմներու հետ կ'ցորդութիւնը՝ իրենց դատին թշնամիներ յօշկեց այն միակ մագնիսով՝ զոր առաքինութիւնը և թշուառ աւազութիւնը իրենց մէջ կ'սլահեն : Պարնալ Թագաւորական ընողը ուրիշ բան չէր եթէ ոչ՝ վասն զի զեղեցիկ Թագուհւոյ մը խոնաւ աչերուն մէջ անհանդստութիւն և ա-

ըօթք կարդացած, այնչափ Թագաւորներու գահին ժառանգը իր ծնկաց մէջ առած, և անոր մազերու դեղին խոպուպներու հետ խաղացած էր: Իրաւ է որ Պարնալ Միրապոյի փայլուն խօսուածքին բնաւ չէր կրնար հասասարիլ, սակայն իր զգացումի վսեմութիւնը և բարձրութիւնը անորմէ աւելի էին: Տաղանդի տէր մարդը ծախուեցաւ, սրտի աէր մարդը ինքզինքը նուիրեց:

Արքայական ընտանիքի գերութիւնը, և այն նախատիքները որով զանոնք ընկճած էին՝ պահ մ'իրենց թշնամեաց անգթութիւնը մեղմեցին: Ասկէ վերջը Թագաւորը անոնց աչերու առջև ազգին ոչ այնքան գլուխը՝ որչափ պատանդն էր. ուստի մտայոյզ վիճակի առաջին շարժումի մը մէջ արտասանուած գահակորոյս ընելու խօսքը ալ արձաղանք չունեցաւ:

Ժողովոյ անդամներէ շատերը նոյն խկ իրենց շատ հեռացած ըլլալը զգալով՝ Թագաւորը ժողովրդեան հետ հաշտեցնելու պէտքը զգացին, որու վրայ Բուպէսրիէր ըսաւ,
«Բարեկամներս, ամեն բան կորսաւ, Թագաւորը աղատեցաւ»:

Այսու ամենայնիւ երկրորդ փախուստի մ'առաջը առնելու համար ամեն հարկաւոր միջոցները ձեռք առնուած էին Լա Փայէթէ: 1789 Հոկտ. 5էն 6ի գիշերը այնչափ աչալուրջ չգտնուող զօրապետը՝ հիմա վայրկեան մը հանդիստ չունէր: Ամեն ժամ, գիշեր և ցերեկ իր անխոնջ աչալըջութիւնը Թագաւորին ընտանիքը շրջապատելով՝ անոնց ամենափոքր շարժումները և խօսքերը լրտեսել կու տար իրեն: Հսկողութիւններու խստութիւնը այնչափ մեծ կղաւ որ մինչև անգամ պալատի մատուան մէջ պատարագելը արդիւնցին սենեակներէն իբր հեռու գտնուելուն համար, Վից սենեկի մը մէջ փայտաչէն սեղան մը շինուելով՝ վրան կփնտտէ խաչելութիւն մը և քանի մը ծաղկալի անօթներ գրուած, Ամենաբրիստոնեայ Թագաւորին մատոււրը կըլլայ: Շարունակ

բռնազրօտ մենքը իր ընտանիքի բոլոր շարժումները կ'իտան-
գարէին : Թագուհին որ գետնայարկը կ'ընակէր՝ ներքին
սանդուղէ մ'իւր որդւոյն սենեակը ելնելու համար չորս պաշ-
տօնակալներ կ'ընկերանային անոր, և միշտ անոր դուռը գոց
դանելով՝ պաշտօնակալներէ մին կ'ըտղխէր ըսելով. «Թա-
գուհին!» Ամեն վայրկեան տիկին Թուրղէլի սենեակը դրա-
նուող երկու պաշտօնակալները դուռը կ'ընային անատեն,
և Մարի-Անդուանէթ իր աղան առնելով Թագաւորին սե-
նեակը կ'իտանէր :

Գէշ վարմունքները չ'կրցան այս Օգոստոսիառ Սեոի զու-
արթութիւնը այլայլել, որմէ թէև կրնար ոյժը պակսիլ՝ այլ
ոչ սիրտը, և որ իր անկման միջոցին չ'տկարացաւ իր գահին
վրայ՝ բայց եթէ դժբաղդութեան մէջ աւելի մեծնալու հա-
մար : Լուի Ժ.Չ. իր այս առանձին բանտարկութեան միջո-
ցին Շարլը Ա.ի կեանքը կրկին կ'կարգար, զոր իր երիտա-
սարգութեան ատեն Նիւմէ թարգմանած էր, այս կերպով
ինքզինքը իր ճակատագրի կատարումին վարժեցնելով, և
Մարի-Անդուանէթ օրուան մեծ մասը իր զուակի, իր աղ-
ջկան, և Էրնէսթին Լամպրիքէ անունով երիտասարդ ուր
աղջկան մը կրթութեան համար կ'ըզհէր, (Խշխանուհոյն
աղախիններէ մէկուն աղջիկը :

Ուսման այս ժամերու մէջ ուր ամեն մէկ ճիւղ կարգաւ
կ'աւանդուէին, արքայական դատտխարակուհին ցուրտ հրա-
հանդներով և ամուլ տեղեկութիւններով չէր սահմաներ իր
դասերը. կ'ջանար մի և նոյն միջոցին թէ բարբը կազմելու և
կրթելու և թէ յիշողութիւնը անուշանելու, թէ սիրտը ար-
գասաւորելու և թէ միտքը լուսաւորելու : Ա'ստիքեցնէր իր
աշակերտաց իրենց հաճոյից համար յատկացած փոքրիկ գու-
մարէն մաս մ'ամեն ամիս խնայել, որպէս զի աւելի կեն-
դանի զուարճութիւն մը հայթայթին իրենց համար, այն է
թշուառները մխիթարել :

Հաստատութիւնը յայտնելու համար ինքզինքը օրինակ կ'ըլ-
 ցընէր, ըսելով թէ բնաւ պէտք չէր վստահիլ բազդի տե-
 ղութեան հասցա միշտ Աստուծոյ արդարութեան: Ահմարի
 պերճութիւններէ զրկուելէ առաջ բարեգործութեան ա-
 խորժը նախադրուած էր Թադուհէյն սիրտը: Այս ողոր-
 մասիրական առաքինութիւնը պէտք մ'էր իր սրտին համար,
 իր հողւոյն առաջին բնազդուն էր, չէ թէ թշուառու-
 ռութեան ուշահաս սրտուղը: Եր իշխանութեան գեղեցիկ օ-
 ըրերուն մէջ հիւանդանոց մը հաստատած էր 'ի Յէն-Քլու-
 ամեն ամիս առատ նուէրներ կ'ըրկէր Փարիզի առաջաւո-
 բաց, որոնք աղքատներու համար իր դործակալներն էին:
 Մայրիկան ընկերութեան, այս անուամբ ճանչցուած իր բա-
 րեգործութիւններով, ինք ալ մասնակից էր, բայց չէ թէ
 իբր պատուաւոր պաշտպանուհի, չէ թէ իբր անուանական
 նախադաս մը, հասցա իբր դործօն և անձնուէր անդամ մը:
 Եր ծառայութեան մէջ եղող անձերու զաւակաց մէջ միայն
 Էրնէսթին չէր զոր ինք կ'իմնամէր, Թադուորի սենեկի պաշ-
 տօնակալներէ մին (Գարոն Շօմօն) և իր կ'ինք իրարմէ քիչ
 տոնն վերջը մեռած ըլլալով՝ փոքր հասակի մէջ երեք աղ-
 ջիկ զաւակ թողուցած էին առանց հարատուութեան. երեք
 որբուհիները իրեն որդեգրեց, երկու տարի զանոնք զիշերօ-
 թիկ գալոց մը զրաւ, անոնցմէ ամենէ փոքրը իր աչերու
 տակ մեծցնել տալով: Ողորմասիրական գործերու հետզհե-
 տէ աւելնալը՝ որով ինք օրինակ կ'ըլլար իր զաւակաց Աս-
 ֆայէթի կասկածոտ պատասխանատուութեան տակ մանրա-
 դնին հսկողութեան սուարկաց եղան: Թադուհէյն ալ աղաւ-
 չէր Աւետարանի պատուէրին հետեւիլ, որ աջ ձեռքի
 տուած ողորմութիւնը ձախ ձեռքէն պահել կ'հրամայէ.
 կասկածոտ ոտտիկանութիւն մը ամեն գործերու մէջ դաւա-
 գրութիւններ փնտուելով՝ բարեգործութեանց մէջէ կ'եր-
 թար կ'ընէր: Աւ ոչ իսկ Թադուորը իր շարժումներու մէջ

ազատ ըլլալով՝ չէր կրնար տեսնել ուղած անձերը դադանի կրկնքով կանչել տալ . սէտք էր այս անձանց անունները յառաջադոյն ցուցակի մը վրայ նշանակուիլ, զոր Սան-Սուխաներու (դուռնդ հաբիւր Սուխ անձնատրաստաց) հարիւրապետ Պրիսաքի դուքսը առնելով սղգային պահապան զօրաց ընդհանուր հրամանատարին կ'յանձնէր, և այս վերջինին հաճոյքէ կ'ստեալ էր նշանակուած անձերէ ուղածին պալատը մտնելու արածնագիր տալ . Ներսը դորձադրուած բռնունու թիւնը նոյնպէս և դուքսը կ'կրկնուէր . եթէ ամառուան մէջ տաք օրուան մ'իրկիւնը արքայական ընտանիքը ուզէր դուքսի դով օդը շնչել՝ չէր կրնար պալատի պտուտահաններէն դուքս նայիլ առանց մնայորդ ամբոխին թշնամանաց երթակայ ըլլալու : Թագաւորը Լա Ֆայէթի բանտարկեալն էր, այնչափ խիստ պահապան մը՝ որ ալ ինք կ'ակէր յեղտիտութեան բանտարկեալը ըլլալ :

Այսու ամենայնիւ Ազգային ժողովը, որ արքայական ընտանիքի Արէնէ դառնալէն ՚ի վեր վճիռ տուած և Լուի Ժ.Չ.ի թագաւորական իշխանութիւնը վրայէն առած էր մեծ փութով նոր Յասմանադրութեան խմբադրութեանը կ'ըրաղէր : Հասարակաց կարծիքը քիչ մը հանդարտեցաւ : Քանի մը շարքով բանտարկութենէ ետքը վերջապէս Թագուհւոյն թոյլ արուեցաւ Գահտաւանդին հետ Թուիլերքիի սարտէղը իջնելու : Երկտասարդ Եշխանին սիրտը մաքուր և ազատ օդ շնչելուն վրայ ուրախութեամբ լիցուած, «Մայր իմ, կ'արուար ոտոտանելով, ՚րջափ կ'ցաւ իմ միշտ դոցուած տեղեր ապրող թշուառներու վրայ» : «Արտիպին մէջ գտնուած բարձր ծառերու վրայ դադարող թռչուններու խումբ մը մը իր ուշադրութիւնը գրաւելով՝ մէկ ծառէ միւս ծառ անոնց շարժումին ակնկառոցց հետեւած ատեն՝ կանաչ ակններով ծածկուած փոքրիկ խտոցի մը մէջ սահեցաւ ինկաւ : Կնչուէս որ անոր բոլորովը կ'փութային զանի

վերցնելու . «Մայր , ըստ ոտքի վրայ ելնելով , ես ալ Աս-
ֆօնթէնի աստղաբանին նմանեցայ» , և խնդալով սկսաւ սոյն
առակի առաջին չորս տողերը ըսել :

Աստղաբան մի անդգոյշ ինկաւ օր մի հորին խոր ,

Անմիտ դու ըսին անոր ,

Երբ ոտքերուդ տակ եղածն հագլու կրնաս դու տեսնել ,

Գլխէդ բարձր եղածներն ինչպէս կ'ուզես նշմարել :

Իր գործունեաց և միշտ սխալաստ մտքին հաճոյք մը կը
սրտածառէր օրական մանր դէպքերը իր սովորած դասերուն
վրայ յարմարցնել : Այսպէս երևելի առակախօսը ուրիշ եր-
կու առիթներու մէջ բողբոջիկն արդարացի և յարմար վկա-
յութիւն մը մատակարարեց անոր համար : Իր քոյրը յաջո-
ղակ աղերսարկուի մը վրայ խօսած ըլլալով իր առջև , որ շո-
ղորթթութեամբ կարող եղած էր թոշակ մը կորզել պաշ-
տօնեայէ մը՝ «Իսեղճ պաշտօնեայ , ըստ , ես այնչափ խելացի
չեմ՝ համարիք սոյն աղուաները որ այսպէս իրենց պահիրը կը
թողուն որ իյնայ : Աւրիշ անգամ մը երկար պտոյտէ մը վեր-
ջը , որ բաւական կրթութիւն բրած և թիթեան որսալու
դրաղած էր՝ թէ աղայի և թէ որսորդի կրկին ատրժակովը
տուն դարձաւ . նախընթացիկը սովորականէն աւելի ուշնա-
լուն , տիկին աը Յուսի՝ սեղանի պաշտօնակարը կ'իշտամբէր
այս անսովոր յապաղումին համար . — Մի յանդիմանէք
կաղաչեմ , տիկին , որովհետեւ ատի իմ կերակուրիս աւելի
շուտ գալուն պատճառ սխալ չ'կրնայ ըլլալ այս իրկիւն .

Համբերութիւնը և ժամանակի երկարութիւնը

Աւելի ոյժ կու տան մարդուս քան թէ զսցրոյթը» :

Վարէնի ճանքորդութիւնը ամեն կուտակ յութեանց ա-
ռիթ առած էր գաղափարներ յօրինելու : Հանրապետականք
կ'սկսէին իրենց դրօշը բարձրացնել : Վասն զի երբ ժողով
մը կրնայ թագաւորը բռնել տալ , զանի արդեւքի տակ դը-
նել , իր պաշտօններէն դադրեցնել զանի , անտառն միասն-

սութիւն բնականաբար չկայ : Հանրապետութիւնը հողի առած է և կ'ընչէ , թէ ոչ իրաւամբ՝ դո՛նէ իբօք : Փոքրադոյն մասի տրամաբանող հանրապետականները՝ սահմանադրականներու , այսինքն մեծադոյն մասի սկզբունք չ'ունեցող հանրապետականներու կ'հակառակէին , զանոնք ազնուապետական կոչելով :

Այս անունն էր որ քիչ մ'առաջ սահմանադրականք թագաւորականներու կու տային : Ղանոնք ժողովրդեան ատելի երեքնելու համար : Մի և նոյն գէնքը կ'ծառայէր զարնելու , միայն թէ ձեռքէ ձեռք փոխուելով՝ իրենց գէմ դառնալու կ'մօտէր , զորս յաղթող բրած էր ինք . Յեղափոխութեանց յախտնական օրէնքն է այս . առաջին ժամու յեղափոխականները երկրորդ ժամու յեղափոխականներէ կ'վաւաւտուին :

Մատաւ Ելիզապէթ այս օրէնքը նշմարելով՝ այսպէս կը գրէր սոյն թուականին (սեպտ . 1791) : « Ամեն բան սուկայի ծփումի մը մէջ է հոս , մէկը չկրնար վստահիլ իր վիճակին : Ժողովը մեծ շփոթութեան մէջ է , չկրնար իր ճանքէն ետ դառնալ , վստան դի անասին հանրապետական կուսակցութիւնը դլուխ պիտի ելնէ » :

Ժողովը՝ որու մեծադոյն մասը մեծ տաղանդի տէր մարդերէ կ'բաղկանար , բայց գժբաղգարար այս տաղանդը աւելի տեսական ըլլալով քան թէ գործնական , նոյն խակ իր անգամոց շատերու իրական առարկնութիւններէ կ'սկսէր իր ստոյգ վիճակի վստանդները նշմարել : Զօրաւոր էր Թագաւորին գէմ , սակայն ամբոխին գէմ տկար : Հետեւաբար կ'աճապարէր վերջնական կերպիւ Սահմանադրութիւնը լրացնելու : Այս ժամանակիս մէջ ինքնիշխանական կերպերու ազդեցութեան կ'հաւաստային , որոնք մարդկային կամաց անհատատութեամբ շատ կ'նմանին յատակի մը վրայ դժուած և աշխարհ չափելու համար սահմանուած երկրաչափական

դ ծերու՝ զորս տղայ մը իր ստորով կ'աւրէ վտղած ժամանակ :
Վերջապէս 1791 Սեպտ . 3ին այս յօդուածը լրացաւ , որ
[Թաղաւորութիւնը] վերջացած հրապարակելով՝ միասին տա-
կան հանրապետութիւնը կ'հաստատուէր :

Սոյն այս օրը Պ . աբ Լա Ֆայէթ [Թաղաւորին ներկայա-
ցաւ խորհրդարանի մենեսնենկին մէջ : « Իշխան , ըսաւ ա-
նոր , սահմանադրական յօդուածին մտտակայ ներկայացու մը
արածնութիւն կու տայ ինձ ձեր սննձին մօտ եղած պահակ-
ները վերջնել : — Ժողովը զանոնք վետեղեց , պատասխանեց
Թաղաւորը , նոյնպէս և ժողովոյ կ'ընայ զանոնք կրկին վեր-
ջննելը » : Լա Ֆայէթ այս անակնկալ պատասխանին վրայ
խորովելով՝ առանց պատասխանելու ևս կ'ըջաւրի : Թաղաւո-
րը անապեհ պաշտօնակախներէ մէկքանին կանչել տալով հա-
ւաստեց անոնց թէ որչափ դոճ էր այն հաւատարիմ՝ նկա-
տումներէ՝ զորս թէ իրենք և թէ իրենց ընկերակիցներէ շա-
տերը իր և ընտանիքին համար ունեցած էին : « Սոյն օրը այն
թշաւամանող պահակները որոնք Թաղաւորը պատանդ և պա-
լատը բանաւ մ'ըրած էին՝ սոյնպէս վերջուեցաւ :

Հետեւեալ օրը (4 Սեպտ . 1791) պատղամաւորութիւն
մը մեծ հանդիսիւ սահմանադրութեան գիրքը բերաւ Լուի
Ժ. Ժ . թուրէ , սահմանադրութեան մասնաժողովի բանջե-
րը զանի հետեւեալ խօսքերով ներկայացուց անոր :

« Իշխան ,

« Ազգին ներկայացուցիչները կ'փութան Ձեր Վեհախա-
ռութեան ընդունելութեանը մատուցանել սահմանադրու-
թիւնը . Ֆրանսայի ժողովրդեան աննախադրաւելի իրա-
ւունքները կ'նուիրագործէ նա . զահճին իր ստոյգ արժանա-
ւորութիւնը կ'յանձնէ , և կայսրութեան կառավարութիւնը
կ'յարգարէ :

Թաղաւորը պատասխանեց թէ Ազգային ժողովոյ իրենց
միջոցաւ ներկայացուցած սահմանադրութիւնը քննելով՝ իր ո՞

բոշումը պիտի յայտնէր անոր կարելի եղածին չափ քիչ ասու-
նուան մէջ, որչափ որ այսպիսի կարևոր դործի մը քննու-
թիւնը կրնար ներել :

Թուրէ այս հանգիստութեան տեսակցութեան պարագաները
յայտնեց ժողովոյ : Ժողովը և բեմերը ծախահարեցին : Հա-
տարակայ ակնկալութիւնը ամեն կողմէ կ'յայտնուէր : Փո-
թորիկի լրումը կ'տեսնէր նա այնպիսի ուխտի մը մէջ որ
գժբաղդարար այնչափ զօրաւոր չէր թագաւորութեան յաղ-
թուած իշխանութիւնը և ժողովոյ յաղթական իշխանութիւ-
նը իմաստութեամբ յօդելու և աղէկ ներդաշնակութեան մը
մէջ պահելու համար, որու ետին յեղաշրջումը կ'յուզէր :

Սեպտ. 1 Յին Թագաւորը՝ իր խելքին և խղճին խոր-
հորդ հարցնելէ ետք, արդարութեան պաշտօնէին միջոցաւ
և Պարնապի հետ մէկտեղ պատգամաւոր մը զրկեց ժողովոյ .
որով սահմանադրութիւնը կ'ընդունէր սրտի անկեղծու-
թեամբ : Անտարակոյս անոր մէջ դէշ սկզբունքներ, վասն-
դաւոր կամ անդործադրելի արամադրութիւններ դատուս .
և ստի տի տիոյ շինուած սահմանադրութիւններու պակա-
սութիւնն է, սակայն սրտանց կ'ուզէր կառավարութիւնը
նոր սահմաններէ խնայել, և ժողովուրդը նոր թշուառու-
թիւններէ, որոնք կրնային տեղի ունենալ ՚ի դիպումս ի եթէ
իր հաւանութիւնը մերժելու ըլլար : Սակայն և այնպէս ան-
տրտունջ կ'ընդունէր իր իշխանութեան նուազութիւնը, ա-
ւելի յօժարութեամբ կ'հաւատար աղէկութեան՝ քան թէ գե-
շութեան . անսահման և բացարձակ իշխանութեան մ'այն-
չափ նախանձութեամբ չ'ըլլալով՝ կ'տեսնէր որ այս իշխանութե-
նէ ոչ այնքան վայելումներ՝ որչափ պարտաւորութիւններ կը
բռնանային : Նբր մարդ՝ ինքզինքը տկար կ'դանէր, իբր
Քրիստոնեայ՝ զիտէր խոնարհ ըլլալ, և պատուութեան մէջ
սովրած էր որ մարդս շատ քիչ անգամ պէտք եղածը կ'ընէ,
եբր միշտ իր ուղածը ընելու ըլլայ : Աւտի կ'հասկնար ինքն-

իշխան կամբի անուատեհու թեանց դէմ աղղին պահանջած
ասրահոլութիւնները . և հին իշխանութիւնը՝ զոր իր գաղա-
փարներու մէջ, իր խղճին մէջ նոյն իսկ Աստուծա՛յ ընդու-
նած կ'համարէր՝ պատրաստ էր ներկայ ազատութեան հետ
անկեղծ դաշնաւորութիւն մը սրբանշնելու :

Իր որոշումի պատճառները ճանչցնել տալէ ետև արքա-
յասկէս կ'պահանջէր որ յեղափոխութեան դէպքերէ՛ ծնունդ
առած ամբաստանութիւնները և հալածումները վերջ ունե-
նան ընդհանուր հաշտութեամբ մը : «Վուզեմ', կ'ըսէր խօս-
քը վերջացնելով, սահմանադրութեան համար երդում առ-
նուլ նոյն իսկ անոր հաստատուած սեղը, վաղը կէսօրին Ազ-
գային ժողովոյ պիտի ներկայանամ » :

Թագաւորէն պահանջուած ընդհանուր ներողութիւնը
միաբան հաճութեամբ ընդունուելով, թուաւոր պատգամա-
ւորութիւն մի այս որոշումը տարաւ 'ի Թախլերբի : Արքա-
յասկան ընտանիքը մէկտեղ ժողովուած ըլլալով՝ «Ահա կինս
և գաւակներս, ըստ Առի ժ.Ձ. իմ զգայմանցս կ'մասնակ-
ցին» : Թագուհին յառաջանալով ըսաւ, «Ահաւասիկ իմ գա-
ւակներս, ամենքս ալ կ'վազենք, և Թագաւորին բոլոր զգայ-
մանց մասնակից կ'ըլլանք» :

Հետեւեալ օրը Սեպտ. 14, կէսօրին Թագաւորը Քնդա-
նօթի ձայնով և ժողովրդին զղրելիչ ուրախութեան յայտա-
բարութիւններու մէջէ՛ Ազգային ժողովը մատու, և իրեն
համար որոշուած աթոռին վրայ բազմելէն ետքը,

«Պարօնայք, ըսաւ անոնց, սահմանադրութեան համար
տուած հաւանութիւնս հոս հանդիսաւոր կերպիւ նուիրա-
գործելու համար կ'ներկայանամ ձեր մէջ : Հետևարար
կերպնում հաւատարիմ մնալ ազգին և օրինաց, ու Ազգային
սահմանադիր ժողովէն վճռուած սահմանադրութիւնը
հաստատուն պահելու և օրէնքները գործադրել տալու հա-
մար ինձ յանձնուած բոլոր իշխանութիւնը գործածել :

Ելիւ թէ այս մեծ և յիշատակաց արժանի թուականը՝ խաղաղութեան և միութեան վերահաստատուելու թուականը ըլլալով՝ ժողովրդի երջանկութեան և կայսրութեան բարեբաստութեան գրաւականը ըլլայ !» :

Թագաւորի երդումին սրահի և բեմերու միաձայն ծափահարութիւնները յաջորդեցին :

Թուրէ՛ որ ժողովոյ կ'նախագահէր՝ Թագաւորին պատասխանած ժամանակ, տեսան որ Թագաւորին իր զաւակներով օթեակի մը մէջ կ'ընտէր : Թագաւորին տրուած ծափահարումները յօժարակամ դէպ'անոր և սահմանադրական դահի ժառանգին ուղղուեցան : Անոցէ՛ Քաղաքակառուցչականները ամեն կողմէ կ'մնդային 'ի նշան ընդհանուր հաւանութեան առ նոր սահմանադրութիւնն, որ Անդրանիկ տունը ջնջելով Արքայական Իշխանի տիտղոսը կու տար Թագաւորանդին :

Ամբողջ ժողովը, իրեն առաջնորդ ունենալով իր նախագահը՝ Թագաւորին ընկերացաւ 'ի Թուիլերի . այս հոյակապ ուղեկցութիւնը անհամար ժողովրդեան մ'ալիքները դժուարաւ կ'ձեղբէր ձանրաց բանալու համար, որոնք իրենց ծափահարումները և ուրախական ձայները մինչև երկինք կը բարձրացնէին : Պատերազմական փողերը և զինուորական հրանօթներու միահաղոյն զոռումները՝ ազատութեան և դահին, ազգին և Թագաւորին հաշտութիւնը կ'աւետէին Քրանսայի :

Սեպտ. 18ին Քրանսա իր սահմանադրութեան յաղթանակին մէջ մտած էր աւիւնով (էշիս) : Այս ընդհանուր ուխտի հրապարակումը տօնի մը կերպարանքը ունեցաւ : Արևեան դաշտը քաղաքացի գունդերով ծածկուած էր, քաղաքային ժողովոյ, Պայլի անոր զլուխը անցած, վարչութիւնը, հասարակաց պաշտօնատնները, վերջապէս ժողովուրդը որ այս տօնէ առաջին օրստղն էր՝ հին կ'ձեպէին, ուր հայրե-

նեաց սեղանի բարձունքէ սահմանագրութիւնը կարգացուեցաւ իրեն : Միայն մէկ աղաղակ մը՝ սակայն երեք հարիւր ձայներէ միահամուռ հնչուած՝ պատասխանեց այս վերժանումիւն , Աէցցէ Աշգը ! իրարու անձանօթ քաղաքացիք , իբր հզրայր , վերածնեալ մեծ ընտանիքի մը իբր անդամները զիրար կ'ըրկէին :

Շքեղ լուսաւորութիւն մը սոյն օրը երկարեց . հայրենասիրական վերնադրերով օգտարարիկներ , մեծ ժողովրդեան մ'ազատութեան հաւատին իբր մինչև երկինք տանելու համար կ'բարձրանային : Արեկոյեան ժամը ՎԱին Թաղաւորը , Թաղաւորին և իրենց զաւակները կառքով կ'ըջէին Շանդ-Ելիզէի և սալաթի ճեմելիներու մէջ , որմը Թուիլերիէ մինչև Եթօպի դուռը և մինչև Շայլեօ ծառէ ծառ առկախեալ հրեղէն և կայծակնացայտ սրակներով լուսաւորուած էին : Խանդակաթ և սրտանուէր ծափահարումներով և աղաղակներով զանոնք շրջապատած՝ յաղթական ուղի մը կ'բանային անոնց այն մի և նոյն ճանբուն վրայ՝ ուսկէ քիչ մ'առաջ բազմութեան անէծքներու և կատաղութիւններու մէջէ անցած էին : Աէցցէնէր նոյնիւրեքան Թաղաւորին , Ազդին , Անգրանիկ հին անուսին , և արբայական իշխան նոր անուսին : Արիտասարդ իշխանը թէև սառնորուշ , սակայն բողբոլին քունը մոռնալով՝ իր ընդարմած ուրախութեան մէջ իբր ժողովուրդի մէկ զաւակը ինք ալ իր կողմէ մասնակից կ'ըլլար այս տօնի :

Անցած նեղութիւններու յիշատակը , ապառնոյն մէջ նշմարուած թշուառութիւններու անհանգստութիւնը նոյնպէս պահ մը մարեցան Աուի ԺՋ.ի սրտին մէջ : Փոթորկի մէջ մնայած նաւաբեկը՝ ամենէ զիւրաբեկ նաւակէն իր փրկութիւնը կ'փնտռէ . Թաղաւորը Սահմանագրութեան ապախնեցաւ : Անոր համար աննենդ հաւատարմութիւն մը երդմնելով իր համեստ սրտի մէջ՝ մաքերու ընդհանուր քաջութիւն հետեւեցաւ :

Նոյն գիշերը նաև Մարի-Անուանէթ իր կողմէ տիեզերական լուսաւոր յոյսերով կ'դառնար պալատը : «Ո՛չ ևս մի և նոյն ժողովուրդն է այս, կ'ըսէր» , և զաւակը իր դրկաց մէջ առնելով՝ պալատի բոլորտիքը վատացող ամբոխին կը յուշնէր զանի հարաբարութեամբ մը :

Քանի մ'օր ետք, սահմանադրական Թագաւորը մեծ հանգէս մը տուաւ Բարիզի ժողովրդեան, և իր սրաին համաձայն չքաւորներու վրայ մտածելով սկիզբ ըրաւ, որպէս զի անոնք ալ իրենց կողմէ խնդակից ըլլան հասարակաց ուրախութեան, առ առ նուէրներ բաժնեց անոնց . և Քրանսայի համար յուսացուած երջանկութեան այս նոր թուականը գոհարանելու համար ԶԷՂ ԱՊՊՊՊՊՊՊՊ երգուեցաւ Նօթըր-Տամի մէջ :

Մատամ Էլիզապէթ որ այնչափ մասնակից չէր ըլլար այս ակնկալութեանց՝ հեզնական կերպով մ'այսպէս կ'զբէր տիկին տը Բէժբուրի այն ժամանակ . «Անգամ մի Օփերա դայնք, վաղը կատակերգութեան պիտի երթանք : Աստուած իմ, ի՛նչ հաճոյք, հոգիս բերկրութեամբ կ'սարարի : Այսօր պատարագի ժամանակ ԶԷՂ ԱՊՊՊՊՊՊՊ լսեցինք : Ուրիշ մ'ալ Նօթըր-Տամի մէջ երգուեցաւ : Յեղափոխականք մեծ փափար ունէին որ հան ալ երթցուի, սակայն աւելորդ է դուրս երթալ վնասել երբ մարդս իր տանը մէջ արդէն կը դանէ : Ուստի տեղերնիս կեցանք հանգիստ . Գեռ ճբաղավարութիւն մ'ալ ունինք այս գիշեր, պարտէզը սքանչելի տեսարան մը պիտի ներկայացնէ, բոլոր կանթեղիկներով լեցուած և այն սպակեայ մեքենաներով՝ զքս երկու տարիէ՛ր վեր է որ չեն կրնար անուանել առանց սոսկումի» : *

Սահմանադրութեան ընդունուելուն համար տրուած սօներու միջոցին յեղափոխութիւնը վայրկեան մը թմրած կ'ե-

* Մատամ Էլիզապէթ այն լատներները կ'ուզէ յիշել՝ որոնցմով յեղափոխութիւնը սղանման մեքենաներ յօրինած էր :

րեւեր : Լուի ԺՁ. դադանապէս Պ. տը Ֆէրասնը Աէօբօրօ
 կայսեր զրկեց, աղաչելու համար անոր որ զէնքերու շառա-
 չիւններով չ'արթնցնէր աղգային զգացումը որ իր ուրախու-
 թեան մէջ կ'սիրհէր : Ասկէ զատ Պ Պ. տը Ա. իօնիզիլէ տը
 Քօնեի իր եղբարց զրկեց որպէս զի անմիջապէս զէնքերը թո-
 դուն և դաղթականները ցրուեն : Բայց այս հրամանը բանի
 տնդ չեն դներ, որ բունադատուած ձեռքէ մը ստորագրեալ
 ըլլալը կարծելու իսկ տեղի ունէին :

Լուի ԺՁ. իրբն թողաւ որ բնաւ միջամատթիւն ուղած
 չէ, վհատումի վայրկեաններու մէջ թերեւս իբր մարդ, իբր
 ամուսին և իբր հայր փախաբաժ ըլլայ այս բանին : Բրօլանտի
 կոմսին (Թագաւորին եղբայրը) ինամակալութիւնը կ'օսէնցի
 մէջ տակերին՝ որ բոլոր Եւրոպիոյ առջև Լուի ԺՁ.ը իբր
 առժամանակեայ իշխան մը անցնել կու տար՝ Թագուհւոյն
 սիրտը սաստիկ կ'վիրաւորէր, որու վրայ նոյնպէս և Թագա-
 ւորը կ'վշտանար. բայց ան ատեն իսկ որ միջամատթեան
 կարելիութեանը վրայ իր միտքը հաստատուեցաւ՝ բնաւ ա-
 մենէին օտարը Վաղղիոյ տէր ընելու համար չէր, հասրա-
 մի միայն իրեն օժանդակ ընելու : Բնաւ այս ճշմարիտ Վաղ-
 ղիայի Իշխանը իր երկիրը ոչ մասնեց և ոչ ծախեց. իր անի-
 բաւութիւնները իր վիճակի արդիւնքն էին, և յանցանքները
 իր բաղդին :

Այն ինչ իր ճանբուն վրայ յուսոյ նշոյլ մը կ'տեսնէր՝ կը
 շարունակէր յառաջ ելթալը, խնդրելով իր բարեկամներէ որ
 նոր դաղափարները գոհ ընելու համար իր ջանքերու առջև
 արդեւքներ չ'հանեն :

Ասոր համար էր որ Սահմանադրութիւնը ընդունելէ
 վերջը նամակ մը գրեց Վօնսիէօի և Արդուայի կոմսին, հե-
 տեւեալ իմաստալի խօսքերով : «Նախադաս ընտրեցի խաղա-
 ղութիւնը սրատեբազմէ, վասն զի նա աւելի առաքինի միան-
 գամայն և աւելի օգտակար երեցաւ ինձ : Ազգը կ'սիրէ

Մահմանադրութիւնը, վասն զի այս բառը ժողովրդեան ստորին մասին ուրիշ բան չ' յիշեցնէր՝ եթէ ոչ անկախութիւնը, որու մէջ երկու տարիէ 'ի վեր է որ կ'ապրի, և բարձրագոյն մասին՝ հասարակութիւնը: Ի մասնաւորի այս կամ այն վճիռը կ'սխալարակեն կամովին, սակայն այս չէ Մահմանադրութիւն անուանածնին: Հասարակ ժողովուրդը կ'տեսնէ որ զինքը բանի տեղ կ'դնեն, քաղաքավարը անկէ աւելի բան մը չ'տեսնէր: Բնքնասիրութիւնը դո՛՛հ է, այս նոր վայելումը բոլոր միւսները մոռցնել տուաւ: Աստարեւապէս երջանիկ ըլլալու համար Մահմանադրութեան աւարտելուն կ'սպասէին. զանի ուշայնչը ամենէ մեծ ոճիրն էր՝ իրենց աչքին, վասն զի անոր հետ պէտք են զգալ նաև բոլոր երջանկութիւնները: Ժամանակը սխալի սովորեցնէ իրենց որչափ խաբուած ըլլալնին, և իրենց սխալումը բաւական ծանր է: Եթէ ձեռք զարնէին այսօր զանի տապալելու՝ երջանկութեան ամենէ մեծ միջոցը կորսուածի պէս գաղափար մը սխա՛ռնե՛նային իրենց մտայ մէջ, և եթէ զանի տապալող գունդերը Բրանսայէ դուրս գանուէին՝ այս բանդագուշանքով սխալի կրնային զաննք շարունակ գրգռել, և կառավարութիւնը հասարակաց մտքին դէմ՝ գրութեան մը մէջ սխալի գանուէր առանց կարող ըլլալու զանի բովանդակել»:

Անկարելի է ասկէ աւելի աղէկ տեսնել և աւելի աղէկ խօսիլ, և թշուառ Առի ԹԶ, անձուէր զո՛հի մը պէս կը յառաջանար դէպ' աղետարեք նպատակը, ուր մի և նոյն միջոցին թէ իր թշնամեաց քինացոյց յարձակումները և թէ իր բարեկամաց անխոհեմ ծառայութիւնները զինքը կ'մղէին:

Թաղաւորին Մահմանադրութեան համար երդում առնելէն քանի մ'օր վերջը ինդրեցին անորմէ որ աղպային սահմանադիր ժողովոյ սրտակեր մը նուիրէ 'ի յիշատակ նոր թուականին, որու մէջ ինք նկարուած ըլլայ սահմանադրութիւնը իր սղո՛ւն ցուցնելով: Սակայն քիչ մը վերջը տեղի

ունեցող դէպքերը՝ նախ Թագաւորը վերջէն Սահմանադրութիւնը յափշտակելով՝ արգելք եղան այս գիտաւորութեան գործադրուելուն :

Սահմանադրութիւնը կ'ըսէր, գլուխ II, հատուած III, յօդուած IV, թէ օրէնք մը պիտի հաստատուի անչափահաս Թագաւորին և անչափահաս մերձաւորացոյն ժառանգին կրթութիւնը կարգադրելու համար : Բայց այս տրամադրութիւնը բնաւ անմիջական ազդեցութիւն չ'ունենալով՝ Թագաւորին Թուիլերբիի մէջ բանտարկութիւնը դադրելուն պէս Տալօ արբան կրկին իր սրաշանին ձեռք զարկաւ արքայական Իշխանին մօտ : Գասերու վերատին սխուած օրը՝ «Եթէ կ'յիշեմ, ըսաւ արբան իր աշակերտին, վերջին դասը բաղդատութեան երեք աստիճաններուն վրայ էր, դրական, բաղդատական և գերադրական. ասկայն բոլորը սէտք է բնուցած ըլլալ : — Աստալիք, պատասխանեց տղան, և ասոր սպացոյց մտիկ ըրէք որ ըսեմ : Գրականը այն է՝ երբ ըսելու ըլլամ, իմ արբան բարի արքայ մ'է. բաղդատականը՝ երբ, իմ արբան ուրիշ արքայէ մը լաւագոյն է, ըսեմ. գերադրականը, շարունակեց մօրը վրայ նայելով, երբ ըսեմ, Մայրս բոլոր մայրերէ ամենասիրելին և ամենասիրեալն է» : Թագուհին գրկացը մէջ առնելով իր զաւակը՝ սրտին վրայ սեղմեց զանի չ'կրնալով արատաքները զսպել :

Քանի մ'օր վերջը արքայական Իշխանը իր դատաւարակին հետ Ղուվրի պատկերասրահը այցելութեան կ'ելնէր, այն ժամուն՝ երբ արհեստաւորաց թոյլտուութիւն կ'ըլլայ երևելի պատկերահաններու գործերը օրինակել : Տղուն գեղեցկութիւնը, իր շնորհալի կեցածքը, իր վառվառն մտքի հանձարեղ խօսքերը այս տաղանդի և ասպիցի տէր երիտասարդ անձերու զարմանքը կ'զրդուէին, որոնք վայրկեան մ'իրենց աշխատութիւնը կ'դադրեցնէին զանի աւելի աղէկ տեսնելու և անոր աւելի աղէկ ըսելու համար : Երիտասարդ

Իշխանը իր սովորութեան համեմատ առած պատմութեան և գիցարանութեան դասերուն վրայ կ'աշխատէր իր աչաց ստջև ներկայող պատկերներու մեկնութիւնը գտնել : Իտալական դպրոցի նշանաւոր դործերէ մէկուն առջև կենալով, «Արնաբ ինձ ըսել ինչ կ'ներկայէ այս պատկերը, ըսաւ անոր դասախարակը . — Այնպէս կ'երևի ինձ որ Բիրամ և Թիսպէն են, արխնաթաթաւ քօղ մը կայ, սակայն մատակ առիւծ մը չեմ տեսներ» . — Պարոնայք, ըսաւ ան ստեն անուանին Ալիէն արքայական Իշխանը շրջապատող արհեստաւորաց, Իշխանին դիտողութիւնը շատ ճիշդ է, արդէն ուրիշ բանադասներ ալ մի և նոյն դիտողութիւնը ըրած են» :

Պ. Պէրթրան տը Մօլլիլերը հեռեւեալ դէպքը կ'պատմէ իր յիշատակարաններու մէջ :

«Թաղուհայն ինձ խօսած ժամանակ, հրեշտակի գեղեցկութեամբ պղտի Գահաժառանգը մէկ ձեռքով փայտեայ փոքրիկ սուր մի բռնած և միւսով վահան մը, սրահին մէջ երգելով և ոտոստելով կ'ըլտարձանար : Եկան զինքը ընթրիքի հրաւիրելու և երկու ոտոմով անմիջապէս դուռը հասաւ : «Ինչպէս, զուակա, ըսաւ անոր Թաղուհայն, կ'մեկնիս և առանց Պ. Պէրթրանը բարեւելմ» : — Ա՛հ, մայր իմ, պատասխանեց այս սքանչելի տղան իր ոտոմը շարունակելով, Պ. Պէրթրան մեր բարեկամներէն է, մնաք բարով, Պ. Պէրթրան, և սենեկէն դուրս նեաուեցաւ : Միթէ սիրուն չէ, ըսաւ ինձ Թաղուհայն անոր մեկնելէ վերջը : Երջանիկ է առուզիւ, շարունակեց նա, որ դեռ տղայ է, մեր ցաւերը չ'զգար և անոր զուարթութիւնը մեզ օգուտ կ'ընէ» :

«Այս վայելուչ անզգաստութիւնը, կ'ըսէ Ե. քար այս վէսյը յառաջ բերելէ ետք, Գահաժառանգին ունեցած մտադրութիւնը և խորհրդապահութիւնը ամենեւին չէր խափաներ, որոնք աւելի հազուադիւրս են ասանկ ծաղիկ հասակի

մը մէջ: Իրիկուն մը շատ մ'երիտասարդ անձերու հետ Թուրքէլի մարքիզու հւոյն տունը կ'անցնէր: Աարդաւ ամեն մէկ տղայէ առաջարկուած խաղերը լմննալէ վերջը ուրիշնոր մը խնդրեց իր վարժիչէն. Տալօ արքան բոլորակ մը կաղմնէ տուաւ և առաջարկեց որ ամեն մէկ տղայ մէկ մէկ կարճ պատմութիւն մը գրուցէ: Աարդը Իշխանին դալով յեղափոխութեան դէպքերուն յարաբերութիւն ունեցող խիստ եզակիան բան մը պատմեց: «Ո՞վ ձեզ սովորեցուց այդ պատմութիւնը», հարցուց անոր տիկին Թուրքէլ մեծ զարմացմամբ: Գահաժառանգը ուշաբերելով խնայն ակնարկ մը նետեց իր գաստիարակին վրայ, և անոր խոհական և դժգոհ կերպարանքէն դասելով որ այս վէպը կրնար վտանգի մէջ ձգել զանի իրեն սովորեցնող անձը՝ «Տիկին, պատասխանեց, «Պ. Աբրային առաջարկութիւնը այս էր որ ամեն մէկերնիս մէկ մէկ պատմութիւն գրուցնէք, սակայն խաղին մէջ պայման մը չկար որ ուսիէ քաղած ըլլալնիս ալ յայտնենք»:

Ընդհանրապէս տղայոց բնաւորութեան մէջ իրենց մտքի կանխահաս ծաղիկները շնոր սիրեր. որոնք խիստ շատ անգամ հիւթը կ'սարառեն զանի եղանակէն առաջ ուսերուն վրայ բարձրացնելով: Մակայն երբեմն կ'երևի որ երբ կեանք մը շատ կարճատե ըլլալու սահմանուած է՝ բնութիւնը կ'աճապարէ զարդանալ, հիւսիսային այն երկիրներուն նման որ երկու ամիս միայն ամառ ունենալով արևէն օդուտ կ'քաղեն տենչանօք, և իբր հմայուած՝ ծաղիկներով և հունձերով կը պատկուին: Ուրեմն Լուի Թ.Չ.ի տղուն շնորհուած այս երկու ամիս ամառուան փոքրիկ հունձը քաղէր յարգութեամբ: Այսու ամենայնիւ եթէ միտքը վաւիւրուն՝ սակայն աննեղ և ճշմարիտ էր, և եթէ երբեմն կ'դադրէր տղայ ըլլալէ՝ յեղաշրջումի յանցանքն էր այն:

Իր սիրելի ընթերցումներէ մին էր Արիաձք Տէլէմարայ: Հինգերորդ գիրքին մէջ Նդիսսեսի տղան կ'պատմէ թէ ինչ

պէս «Արեւտայիք զիրենք կառնալարելու համար ալ թագաւոր մը չ'ունենալով, որոշած էին որ օրէնքները իրենց անբժու թեամբ պահպանելու կարող մէկը ընտրեն»։ Այս ընտրութեան արժանի ըլլալու համար նախ պէտք էր մէկը նշանաւոր ըլլալ կրկեսի, մենամարտութեան, ըմբշամարտութեան և կտարշաւի մէջ, և անկէ վերջը Մինօսի օրինաց իսկ և իսկ մտքերու համաձայն երեք խնդիրներու պատասխանել : Երբ Տալօ արքան երկրորդ խնդիրը կարգաց որ էր, «Մարդերու մէջ ո՞վ է ամենէ թշուաւը», արքայական Իշխանը գանի ընդմիջեց ըսելով, «Թողէք ինձ պատասխանել այդ խնդրոյն, Պ. Աբբայ, իբր թէ Տէլէմարը ես ըլլայի : Մարդերու մէջ ամենէ թշուաւը այն թագաւորն է՝ որ իր հպատակաց բնաւ օրինաց չ'հնարանդիլը անանելու ցաւը կ'զգայ»։ Լուի Ժ.Չ. որու այս խօսքերը հաղորդուեցան՝ պոռայ, «Այս տղուն խորանուծիւնը զիս անհանդիստ կ'ընէ իրեն համար» : Թագաւորը յանիրաւի անհանդիստ կ'ըլլար, ասի Լուի Ժ.Չ. ի տղուն սիրան էր որ Տալօ արքայի աշակերտին մտքին այս պատասխանը թելադրած էր :

Ուրիշ անգամ մ'իր գասերու ժամէն ստաջ մօրը սենեակը գանտելով, պատուհանէն կ'աննէ Տալօ արքան որ Թուիլերըիսի պարտիզին մէջէ՛ անասարանօք կ'անցնէր պալատը մտնելու համար : «Մայր իմ, ըսաւ, կ'ուզէք ինձ շնորհ մը ընել, այս է որ զիս զրահաւորելու օգնէք և պահպանակներս (brassard) ու սաղաւարտս, զորս տարբեր ժամանակներու մէջ իբր մըլցանակ ընդունած եմ իմ ջանիցս համար՝ հաղցնէք ինձ» : — Ի՞նչ է զխաւորութիւնդ, ըսաւ անոր Թագուհին : — Մայր իմ, Աբբան մտած ժամանակ անոր զարմանք պատճառելու համար՝ Թագուհին կ'փութայ անոր մտացածին խորհուրդը կատարել : «Էլիմ որ ոտքէդ մինչև գլուխդ զինեալ ես՝ ի՞նչ անուհալ կ'ուզես որ զքեզ կանչեմ : — Մայր, խնդրեմ'ըսէք որ ասի Պայար ասպետն է որ Մարինեանէն կու գայ :

Պ. Տալօ ներս մտնաւ, և ինչ որ որոշուած էր ըսուեցաւ : Արքան ամեն բանէ առաջ իր աշակերտին Հաղուստին չափ գինւորական կեցուածքին կ'ըքանչանայ : «Գեղեցիկ առիթ մը պիտ'ըլլար այս Քրանսուա Ա.ին Համար իբր ասպետ զրահաւորութիւն» կ'ըսէ : Աւերջէն Հարցնելով Իշխանին թէ ինչո՞ւ Համար Պայարի անունը ընտրած էր, «Աւան զի, կը պատասխանէ, կ'ուզեմ անոր պէս բարի ըլլալ առանց վախի և առանց սողտանայ» :

Քանի մ'որ վերջը ցանցակերպ և խիստ ճարտարութեամբ շինուած լասպեր մը պարզ և ընդունած ըլլալով զանի գաղանի կերպով մը կ'վառէ, և պատմութեան առած նախընթաց դասը միտքը բերելով այնպէս կ'ձևացնէ որ իբր թէ մեծ կարևորութիւն ունեցող բան մը կ'վնասուէր : Բաւական պատյտ ընելէ ետք՝ վերջապէս արքայ Տալօյին կ'համարի, և և ձեռքը բռնելով կ'ըսէ անոր. «Ես Դիողինէսէ աւելի երջանիկ եմ, վասն զի ճշմարիտ և աղէկ բարեկամ մը գտայ» :

Սովորելու փափաքը և իր յարմարութիւնը այնչափ շատ էին որ բնաւ դասի զանգակը ժամանակին չ'զարնուելով՝ երբեմն այնպէս կ'պատահէր որ իր դաստիարակէն կ'խնդրէր իբր փոխարինութիւն դասերու տեղումը կրկարել : Թագուհոյն Խապերէն խօսիլը յաճախ լսելով՝ այս լեզուն սովորելու արածնութիւն խնդրեց, և այնչափ աստիճանով առաւ, այնչափ եռանդով կ'աշխատէր, որ քիչ ժամանակուան մէջ իր սիրելի Տէլէմարը նոյն լեզուաւ կարգալու և իր մօր հետ խօսակցելու կարող եղաւ :

Սակայն ուսման այս առաւելութիւնը անտիցիթ չէր ընել որ զինքը միւս ճիւղերով ալ հրահանգուելու : Արդէն իր գիւրը կ'սկսէր շտկուիլ, թուանշաններու հաշիւը իրեն ընտանի, և երկրաչափութեան տարեբքներու ու աստղաբաշխութեան առաջին սկզբունքներու բաւական տեղեակ էր, զորս կ'սովորէր Բարիզի ճեմարանին անուանի դասատու Արրնէ արքա-

յէն ճարտարութեամբ հնարուած լսարաներէս երկնագուն-
տի մը օգնութեամբ :

Եթէ այս մանրամասն պարագաները պատմելու հաճու-
թեան մէջ կ'զեղերիմ՝ պատճառն այն է, որ այսչափ կարճ
օրեր ունենալու սահմանուած այս կեանքի վերջին զեղեցիկ
օրերու վրայ՝ մարդուս աչքը սեւամաղձոտ հրասլոյրով մը կը
հանդիսի :

Սահմանադրութեան Թագաւորէն ընդունուելէն վերջը ,
Ազգային Ժողովը իր առած Սահմանադիր փառաւոր անունը
Օրէնագիր համեստ անուան փոխելով՝ մնածեց վերջմը տալ
իր աշխատութեանց , և տեսնելով որ իր համարումը և ժո-
ղովրդայնութիւնը կ'կորուսէ՝ գլխաւոր ժողովներ գումարե-
լու փութաց : Սեպտ. 30ին Թագաւորը անձամբ փակեց
Ազգային Ժողովը , և Ահողե Թագաւորը՝ աղաղակներու կրկի-
նումը վայրկեան մ'անոր խօսքը ընդմիջելով՝ նոյնպէս և
մեկնած ժամանակ կ'բարեւէին զանի նոյն ձայներով :

Աստի Ազգային սահմանադիր ժողովը դէպքերու պա-
տասխանատուութիւնը յանձնեց , թողլով , 'ի ներկայու-
թեան անգոր սահմանադրութեան մը , յանդուգն ռամկա-
պեաներ և հաշտուած Թագաւոր մը որ առանց ուժի իր
պալատը կ'մանէր և առանց իշխանութեան իր պաշտօնին
մէջ :

Հօկտեմբեր 1ին նոր օրէնագիր ժողովը գումարուեցաւ ,
և իր առաջին դործէն հասկցուց այն բաժանումները՝ որ իր
ժողէն երեւան պիտի դային , և այն արդելքները որ դործա-
գիր իշխանութեան քայլերու առջև պիտի դնէր :

Սահմանադիր ժողովը հրաժարումի գլխամամբ կամ փոք-
րաթիւ մասի պարագլուխներուն դէմ նախանձու զգացումով
մը , որոնք ընտրութեան մէջ աւելի յաջող պիտ'երեւէին , որո-
շած էր որ իր անդամներէ և ոչ մին պիտի կրնար վերընտ-
րելի ըլլալ : Ասի մէկ ուրիշ վտանգ մ'էր թագաւորութեան

Համար : Մինչև անգամ իր պակասութեան համար փորձա-
 քուծեան սկիզբի սը պէտք ունեցող ժողովոյ՝ բողոքովին ան-
 փորձառու ժողով մը կ'յաջորդէր : Յեղաշրջումի երկրորդ
 դումարումը աւերումի անկողնայն աննշանօք կ'հասնէր , որով-
 հետև տակաւին չէր աւերած : Հաւասարութիւնը զեռ վար
 կ'իջնէր , և Ժիրօնուէնները մեծագոյն մասի պարագլուխներ
 ըլլալու կ'մտնէին : Օրէնսդիր ժողովոյ սկիզբէն ՚ի վեր
 յեղափոխական այս առիւնը ուժգնապէս պայծեցաւ : Թա-
 գաւորէն գրուած նամակ մը , որով ժողովոյ ներկայանալու
 իր դիտարութիւնը կ'յայտնէր սահմանադրական երգումը
 առնելու համար , կարգացուելով՝ սաստիկ ամբաստանու-
 թիւններ սկսան դողալ , և նոյն միջոյն իսկ խնդիրի տակ
 ձգեցին թէ միթէ ազատ ժողովուրդի մը ներկայացուցիչնե-
 րու վեհանաճեութեանը կ'իյնա՞ր Թագաւորին հետ խօսած
 ժամանակին զանի Իշխան և Վեհաճառութեան անուններով
 կոչել : Եւ ժողովը վճռեց որ երկու յար և նման ամբողջներ
 դրուին դիւանին մէջ և Թագաւորը նախադահին ձախ կողմի
 ամբողջն վրայ նստի : Ասի շատ շուտ և շատ հեռու երթա-
 լու սկիզբ մ'էր : Բարիօլիքազարաւորութիւնը (bourgeoisie)
 յաղեցաւ , ազգային սահապան զօրքը սրտմտեցաւ , և հա-
 սարակաց գոռումը ստիպեց ժողովը որ վճիւր Թագաւորին
 տանի : Ի նպաստ թագաւորութեան այս անցաւոր յետա-
 շրջումը դիւրին է բացատրել : Գործերը բառերով գատելու
 սովորած ռամիկ միտքերը մոլեռանդ ընող նոր սահմանա-
 դրութեան հրասրդրով լեցուած էին : Այս սահմանադրու-
 թիւնը երկչոտ մարդիկը կ'վստահայնէր , որոնք թագաւո-
 րութեան նուաստանելէն զո՛հ եղած՝ ձեռնառու եղած էին
 զանի ջղահատելու , բայց անոր կործանումը չէին ուզեր :
 Այր վստահութիւն մի կ'ներշնչէր նա աղջին այս ողջամիտ
 բայց թիչ լուսաւորեալ մասին , որ չէր կարող նշմարել թէ
 այս սահմանադրութիւնը՝ անամոր ժողովուրդի մը ներկայու-

Թեան Թագաւոր մը կ'հաստատէր առանց իշխանութեան .
 և թէ Լուի ԺՁ.ի ձեռք թողած ակար գէճքերը չէին
 կրնար իրեն ծառայել եթէ ոչ նոյն իսկ զինքը միբաւորելու :
 Երբ տեսան որ օրէնսդիր ժողովը կու գար չէր գար այսպիսի
 սի յարձակող զիքք մը կ'առնուր՝ խռովելով անոր գէմ գըր-
 դուեցան , որ իր առաջին նստով կու գար աւերել և թեր-
 ևս խորտակել այն անխնեւը՝ զորս քաղաքական հաստատու-
 թեան մեքենականութեան մէջ այնչափ դժուարութիւն քա-
 շած էին յարդարելու . վայրկեան մը յետաշրջումի գօրաւոր
 շարժում մը 'ի նպատաւ սահմանադրական դահի տեղի ունե-
 ցաւ : Օրէնսդիր ժողովը ուզելով կարծիքները իրենց սահմա-
 նէն աւելի հեռու տանել՝ մինչև 'ի նպատաւ Թագաւորու-
 թեան միւլեց զանոնք և ասով ժողովրդային կերպարանք մը
 ստացաւ :

Երկամեաց թիւանոցի հետքերը , Ալարէնի յիշատակները
 անհետացան այն օրս , յուսոյ վերջին ճառագայթ մը սողաց
 Թագաւորին և Թագուհոյն սրտերու մէջ . երջանկութեան
 շունչ մը կարծես շրջապատող փոթորիկներէ ծանրացած օդը
 վայրկեան մը կ'մաքրէր : Հոգերը և միշտերը միայն իրենց
 համար սահելով զաւակին ուղեցին իրենց հաճոյից մաս-
 նակցել , զիշերը զանոնք Ետալական թատրոնը տարին ,
 սրտեռանդն ժողովուրդ մ'անոնց ցոյցներուն վրայ երջան-
 կանալով : Սրահը շատ անգամ հեծեծանքներով խառնուած
 ծափահարութեամբ կ'իծեղար , այնչափ գոթը կ'միտնար
 զարմացումի հետ , և կակղութիւնը յարդութեան ! Լուի
 ԺՁ.ի բաց կերպարանաց վրայ տպաւորուած պարզ հան-
 դարաութիւնը , Մարի-Անդուանէթի մեծաշուք գեղեցկու-
 թիւնը , և ամենէ առաջ երկու զաւակաց շնորհալի գէմքը
 այնպիսի յուզում մը յառաջ բերին , որ վայրկեան մ'աբացա-
 կան ընտանիքի հաստցում տուաւ բոլոր անցած նախասինք-
 ներու համար :

Արքայական Իշխանը իր մօր ծնկաց վրայ նստած, բոլոր ակնարկները իր վրայ կ'զարտէր. իր գիմաց Հրեշտակային դժադրութիւնը, տեսարանի ներկայացումէն բոլորովին կենդանի տալաւորութիւն մը ստացած՝ ուրախութենէ կ'փրթթէր, և իր սքանչելի մեղմ շարժումները գերասաններու շարժումները նմանցնելով՝ իբր թէ իր մօր կ'օգնէր ներկայացումը աւելի աղէկ հասկնալու համար :

Մարդասէր և կարեկիր զգացում մը՝ տիրած էր ամբոխի սրտին մէջ երբ կ'ատենէր Թագաւոր մը և Թագուհին որ գլուխնէն այնչափ վշտեր անցած, հիմա այսչափ հանդարտ, այնպէս մատնուելէ վերջը հիմա այսչափ վստահութեամբ կը ներկայէին իրենց մէջ, նոյնպէս և տեսնելով այս գեղեցիկ և անմեղ զաւակը՝ որ փոթորկին յառաջօրը և ամեն թշուառութեանց նախօրը կ'իյնդար անկասկած :

Սոյն գիշերը հանդիսականաց մէջ անտարակոյս շատ մայրեր կ'գանուէին, վասն զի այս տղան այնպէս կ'երևէր որ ամբոխին սրտերը, ուրախութեան աղաղակները, արտասուքները իր ծնողաց վրայ դրաւած, նոյնպէս և ստիպած էր քաղաքականութիւնը բնութեան առջև լռելու :

Սոյն գիշերուան յուզումները անոյշ փոխաբխութիւններ նտիրելոյն Թագաւորին և Թագուհոյն սրտերուն, մանաւանդ թէ իրենց զուակնուն պատճառաւ կ'վայելէին զանոնք : Երիտասարդ Իշխանը մինչև ան ատեն ժողովուրդը ուրիշ տեղ տեսած չ'ուներ բաց միայն Արեւնէ աղմկալի վերագարձի փոշիին մէջ, և անկէ առաջ Հոկա : Յի նիզակաւորներու մէջէ ապստամբութեան ցնցոտիներու մէջ : Այս արդան զոր ժողովուրդը սիրելու համար կ'մեծցնէին, հիմա այս զուարթ և սիրալիր ժողովուրդը անոր ցուցնելու երջանկութիւնը կ'զգային : «Ամեն բան հանդարտ է հոս, կ'զրէ Մատամ Ելիզապէթ այս թուականին (12 Հոկտ. 1791), սակայն ի՞նչ գիտէ ասոր որչափ տեսիլքը» : Թագաւորը սոյն

վայրկենին հասարակութենէ կ'սլաշտուի : Չեմ կրնար քեզ հասկցնել շարած գիշեր Խաչակիան թատրոնին մէջ եղած յուզումը , բայց սէտք է տեսնել թէ այս խանդակած սէրը և եռանդը որչափ պիտի տևէ » :

Այսու ամենայնիւ Լուի Ժ.Չ. զինքը կապտող այս սահմանադրութեան հաւատարիմ , նորէն գրած էր իշխանութեանց որպէս զի չ'թողուն որ իր եղբայրները և գաղթականները զինեալ գունդեր գումարեն իրենց սահմանադրութեան վրայ , և այս վերջիններու՝ թէ Յունվար 13էն առաջ Ֆրանսա մաննէն եթէ ոչ իբր թշնամի պիտի վարուէին իրենց հետ : Այս նամակներու անկեղծութիւնը արդէն հանրապետական գրութեամբ ճանչուած քարոզիչներէ կապածի տակ ձգուած էին . « Լուի Ժ.Չ. կ'ըսէին , կ'ատէ Սահմանադրութիւնը , շա՛ն շա՛ն շա՛ն ելիւ « ինչպէս և » հար : Արդէն ճանրորդութիւնը բաւական խրատ մ'է ազդին թէ որչափ կրնայ վստահիլ այսպիսի մարդու մը » : Ժաքուպէններու կարկաղելի ընկերութիւնը և առաջնորդանիստ քաղաքը ամեն գաւառներէ յայտագրեր գրելիւ կու տային , որոց մէջ մասնակցած ընկերութիւնները մինչև անգամ և վարչութիւնները իրենց երկիւղը կ'այտնէին սլաշտուից երկրի մի վարմունքին , և ստերգում իշխանի մ'իրենց թշնամեաց հետ գաղանի միաբանութեան վրայ : Աերջսպէս աւելի գիւրութեամբ բնաջինջ ընելու համար՝ անարգութեան մէջ կ'թաթաւէին Թագաւորը . իր կորուստը փութայնողը՝ անարգանքը և նախատիները պիտ'ըլլային : Ահա այսպէս դժբաղդ Լուի Ժ.Չ. միշտ մատնութիւններու նշուակ եղած , իբր մասնիչ կ'ամբաստանուէր միշտ : Ուստի Ժողովրդեան խոստացուած բարեբաստութիւնը 'ի զուր կ'սպասուէր . պայծառ արշալուստ մը բարեւել տուած էին զանոնք , որու օրը բնա չէր ծագեր : Ստակը ետէ կ'իջնար , թղթադրամներու արժէքը կ'նուազէր : Յնորքը զլուխներու մէջ և սպրա-

ստանում թիւնը հասարակաց հրասարակին վրայ կ'զանուէին : Աճիւններու թանձր բառ մը , մասնութեան բառը կ'սկսէր բերնէ բերան պալտօլ : «Միայն մէկ վախ մ'ունիմ' , կ'սոսուար Պրիսօ , վախ մը՝ որ չ'ըլլայ թէ մասնութեք» :

Միասնական Եւրոպա կ'դիտէր այս ամենը , սասախլ յուզուելով այն բանէ՝ որմէ տեղի ունէր զարհուրելու , և անստոյգ՝ ինչ որ կարող էր համարձակիլ ընելու : Ռուսիոյ Այցարուհին որ իշխանութեան համափառ եղած էր յեղաշրջումի դէմ՝ յարձակելու՝ իր դունդերը Բօլժնիացի վրայ քաղցնել կուտար , որպէս զի Բարիլ երթալով մարտնչիլ ուղղ սկզբանց շառախնները խեղդէ հոն : Աէօփօլա կայսրը , այս փիլիսոփայ իշխանը՝ որ խմաստուն մարդու մը զաղափարներ կ'ընծայեր կայսերական դահին՝ Ֆրանքֆօրթի մէջ իր թաղընկալութեամբը պատերազմի կ'ստորաստուէր :

Օտարին այս սպառնացող կերպարանքը , ինչպէս որ յայտնի է , սղղային զգացումը բորբոքելով՝ ստիպեց զանի փութալ յեղաշրջումի մեծ ոյժ մը տալու : Բանութիւնը որ ամեն տեղ ամենու մտքին մէջն էր՝ հիմա ամենու գործերուն մէջ մտառ : Բէթիօնը Բարիլի քաղաքապետ ըրին (18 Նոյեմբեր 1791) և Մանուէլ հասարակութեան փոխ-իրաւարար (procureur syndic) : Չմեռը կառավարութեան և ժողովոյ մէջ անընդհատ վէճերով անցաւ , անկարգութեան զաղափարը նահանգէ նահանգ կ'վաղէր : Պարագլուխները ինքզինքնին զօրստոր դասն : Տեսած էին որ նաւարեկութեան մէջնաւը ազատելու համար Առի ժ.Ձ. բոնի ստիպուած էր թողուլ որ արքայական իշխանութիւնը պատատ պատատ ծովը նեւանն վերնայարկի վրայէ . հիմա ուրիշ բան չէր մնար ընելու եթէ ոչ նոյն իսկ թաղապետութիւնը խորասուղել ծովուն մէջ :

Ներքին դրդիչ ստահակութեանց արդէն Աօրմանի և Սօպէնցի արձագանքները կ'սլաստասխանէին : Քանակիւ

Տաղար Գաղղխայիք Ֆրանսայի սահմանադրութենեբու միւմ կողմն Պուրպօնի սան եօթն իշխաններու բոլորակքը կ'հաւարուէին . գաղթականութիւնը՝ իր դժբաղդ Թագաւորին խրատներու խաւ՝ ՚ի դէն կ'կոչէր : Սակայն և այնպէս արդի հայրենասիրութեան դաղափարներով չ'դասուիք զանի : Ան ստեն հաստարմութիւն բաժնին հիմա մասնութիւն կ'անուանեն , և դասարմութիւն՝ այն բաժանումը որ պատիւ սեպուած էր : Այս զինուորական ազնուականութիւնը՝ իր երգումներով զահին կապուած , դադրած չէր Թագաւորը իբր ասլըղ հայրենիք համարելէ : Եր անձնական տխրոսները , ժառանգական պաշտօնները , և ընկերային առաւելութիւնները յօժարութեամբ թողած կամ առատասրտութեամբ անոնցմէ լքումը ընդունած էր , սակայն թագաւորական իշխանութիւնը կործանելու կամ դերելու կամքին չէր կրնար հպասակիլ զոր իր պարտն էր պաշտպանել : Սակայն և այնպէս ամեն ընտանիքներու մէջ մեղակիցներ ունէր : Արները՝ իրենց փափուկ երեւիայութեամբ , զոհեբու կողմն կ'անցնէին . մայրերը և բոլորը կ'յորդորէին իրենց զաւակները և եղբայրները որպէս զի երթան և իրենց համար վրէժինդիքներ վնասեն : Չ'գայողները վատ անուն ստանալով աղեկաս (էօրէքէ) մը կ'ընդունէին անոնցմէ որ տկարութեան և վատութեան նշանակ էր :

Այս ժամանակը ալ քաղաքականութեան չ'վերաբերիբ այլ պատմութեան , որ ամեն կերպերու և ամեն դրօշներու տակ անձնութիւնը պէտք է ձանչել : Ո՞վ պիտի համարձակէր զանոնք արատաթրել , ո՞վ պիտի կրնար չ'յարիլ անոնց վրայ : Ամենքն ալ մէկ պարտաւորութեան մը՝ այն է պատուօրէնքին , Գաղղխայուց այս հին կրօնքին կարծէին թէ կը հնազանդին : Երենց թագաւորի հրամանները զանոնք չէր խռովեր : Անոր սահմանադրական խօսքերը բունադատուած խօսքեր էին իրենց համար և բոլորովին տարբեր խորհուրդ

կըօղարկէին : Գաղթականութիւնը թշուառութիւն միանգամայն և պակասութիւն մ'եղաւ : Բայց Նաբօլէօն կայսրը կարծեց թէ աղէկ դատողութիւն մը կ'ընէր սոյն խօսքերը արտասանած ժամանակ . « Գաղթականները Քրանսայէն մեկնելով ուրիշ բան չըրին՝ բայց եթէ իրենց ընդհանուր հրամանատարներու , այսինքն դուրս գանուող իշխաններու հրաւերին հնազանդելով անոնց քով գումարուեցան » :

Օրէնսդիր ժողովը Ղուի ԺՋ.ի ձայնին անդօր ըլլալուն համոզուած , ուղեց իշխաններու և գաղթականներու ուղղուած արքայական նամակին և յայտարարութեան ամբողջութեանը սարսուռալիքներով դարման գտնել : Աճիտով մը պահանջեց որ Գաղղիացի իշխան Ղուի Սթանիսլաս Քսաւրիէն երկու ամսուան մէջ Գաղղիա մանէ , եթէ ոչ խնամակալ ըլլու պատահական իրաւունքէն պիտի զրկուէր : Ուրիշ վճիռով մը հայրենեաց դէմ գաւազրութեան վիճակի մէջ համարեց այն ամեն Գաղղիացիները որք Գաղղիայէ դուրս զինուալ գունդեր կ'ժողովէին , և մահուան պատիժ հրատարակեց այն անձանց դէմ որոնք եթէ 1792 Յունլար Աին իրենց պատամբ զէնքերը չ'յանձնէին : Իշխանները և գաղթականք քաղաքական սխալումի և անխոհեմութեան համար կրնային յանցաւոր ըլլալ , սակայն վատութեան յանցանքը չ'ունեցան : Ժողովոյ սպառնալեաց և ոչ մին բանի տեղ կ'զննն : Թագաւորը գաղթականներու և երդում չ'առած քահանաներու նկատմամբ վճիռները իր արդելումով (veto) ետ ձգեց : Բարիզի վիճակին գործադիր ատենը , ուր միապետական գաղափարի մնացորդ մը գեռ կ'ախրէր՝ աղերասարկով մը կը խնդրէր անորմէ որ հաւանութիւն չ'տայ կղերին դէմ արուած վճռոյն : Քանի որ և ոչ մէկ կրօնք մը օրէնք մը չէ , թող ուրեմն և ոչ մէկ կրօնք մը ոճիր մը չ'սեպուի » : Մի և նոյն մտքով նշանաւոր նամակ մը հրատարակած էր Անարէ Շէնիէ : Բարիզի գործադիր ատենին աղերասարկերը տաք վիճա-

բանութիւններ յարուցած էր ժողովոյ մէջ: Լրժանքը մտազործը առաջին անգամ երեւցաւ հոն մասնիններու և բռնաւորներու դէմ բորբոքումներ ճայթբելով: Թագաւորը երկնից և երկրի սպառնալիքներու մէջտեղը մնացած՝ աւելի արժանաւոր սակայն աւելի փոսանդաւոր կողմը բռնեց, ինքզինք ժողովրդին ապստամբութեան ենթակայ ըրաւ իր խղճմտանքի դէմ ինք չ'ապստամբելու համար:

Թէև սահմանադրութեամբ իրաւունք ունէր Լուի Ժ.Չ. սակայն այս երկու վճիռներու իր հաւանութիւնը մերժելը, որոց մին իր սիրոյ մէջ զինքը կ'փրաւորէր և միւսը իր կրօնասէր հաւատոյն՝ իբր ազգին վեհախնամութեան դէմ բերուած հարուած մը համարուեցաւ: Պիմանալով թեան խրատութիւնը կրկնապատիկ եղաւ: Պալատին առջև յեղափոխական ցոյցերը օր քան զօր աւելի բուռն կերպարանք մի կ'առնուին: Մէկ խօսքով, արքայական ընտանիքը նախատինքէ և սպառնալիքէ պաշարման վիճակի մէջ դրուած էր:

Այսու ամենայնիւ բանասարկութիւնները, զբարբառութիւնները և սպրաւաւորութիւնները՝ հին թագաւորութեան համար ժողովրդին սրտի բարախումբը՝ պոլսրովին խեղդած չէին: Փետր. 20ին Թագուհին իր զմեռններով Քօմէսի-Ֆրանսէզ (Թատրոն կատակերգութեան) գնաց և ուրախութեան աղաղակներով ընդունուեցաւ ժողովուրդէն: Քանի մը մրմունջներ մեծագոյն մասի զգացմանց դէմ բողբոսած ըլլալով՝ խռովաբար ստիպուեցան ետ քաշուիլ ծախահարութեանց որոտում մը շանթուած: Չ'նախատեսուած դէպքեր (Evénements imprévus) անուն փոքր թատերգութեան մէջ սպասաւորէն և սենեկուհիէն երգուած երկերը (duo) չորս անգամ կրկնել տուին սրահին մէջ գանուող հանդիսականք, ուր խօսքը իրենց ունեցած սիրոյն վրայ է տեւերնուն և ախկենուն համար, և երբ այս սողերը եկան,

«Չ'անոնք սէտք է երջանիկ ընել»,

Հանդիսականներէ մեծ մաս մը սրտաց, «Այո, այո! — Մտաւա՛մ Ելիզապէթ այս մանրամասն սրտազանները իր թրղթակցութեան մէջ սրտամելով կ'յարէ. «Վհակնաս մեր ազգը. պէտք է համաձայնիլ որ սքանչելի վայրկեաններ ունինա՛» : Գծբաղդարար այս վայրկեանները հաղուսդիւս և քիչ կ'սեւէին :

Ասի Գաղղիոյ մէջ արքայական ընտանիքի տրուած ժողովրդային համակրութեան վերջին վրայութիւնը եղաւ, Գաղղիոյ մէջ ըսինք, վասն զի Յուէտի դահին վրայ ասպետական անձնուիրութիւն մը յայտնուեցաւ Պուրպօնի տան համար : Սակայն ատրձանակի հարուած մը շատ չ'անցաւ և այս Կիւսդավ IIIը՝ յեղաշրջումի ազատական դիւցադնը դեպիս ասպալեց. որ Հանրի՞Պ.ի թերութիւնները ունենալով մեռաւ անոր պէս. հոգեվարը ազնուականութեան օգնութեան դարու փախարով նոյն ինքն կ'սպաննուէր ազնուականութեանէ :

Թագաւորական Իշխանը իր եօթներորդ տարին կ'մննէր : Արքայական տան աւանդութեանց մէջ կար որ Գաղղիոյ Գահաժառանգը երբ այս հասակը մննէր՝ զանի կառավարչի մը խնամոց կ'յանձնէին : Սահմանադիր ժողովէ՛ ծանուցուած օրէնքը, որ դահի մերձաորադոյն ժառանգի կրթութիւնը պէտք էր կարգադրել՝ շինուած չէր տակաւին : Օրէնագիր ժողովոյ սրտազլութիւնները ուղեցին այս օրէնքի բացակայութիւնը լեցնել, դմնէ ընտրելիներու ցանկը ետ ձգելով որոյ մէջէ՛ Թագաւորը պիտի ընտրէր արքայական Իշխանի կառավարիչը : Այս ցանկը որոյ առաջին տողին վրայ Սիէյներ, Քօնատրակներ և Բէթիօններ կ'երևէին՝ անմիջապէս իր վարկը կորուսանի մ'աննշան և ուղրմելի անուններ իբր օգնական աւելցուելով : Արչափ որ լրագիրներէ գրգռուած հասարակային կարծիքը կ'ուղէր որ ժողովը հօրը կամքը իրեն սեպհականելով ինք անմիջապէս կառավարիչ մ'ընտրէր

անոր տղուն՝ միայն խնամուն երկու հոգի այս նիւթիս նկատմամբ ժողովոյ մէջ բացուած առաջարկութիւնը պաշտպանեցին : Ընդհանուր ժողովը խնդաց վրանին և խնդիրը ուրիշ ժամանակի թողուեցաւ : Լուի ԺՁ. սկիզբէն ՚ի վեր այս խնդրին կցուած ծաղրածութենէ օգուտ քաղելով՝ այս դործքին մէջ սկիզբ ընելու իրաւունքը ինք ձեռք առաւ : Ապրիլ 18ին Տիւրանդօն իր կնքապահին միջոցաւ ծանոցոյ որ իր ընտրութիւնը նախկին ծովային պաշտօնեայ Պ. տը Ֆլէօրիէօրի վրայ եղած էր : Այս անակնկալ յայտարարութիւնը ժողովոյ պարագլուխները իրար անցոյց, և եթէ պէտք է իր անդամոց մէկուն վկայութեան հաւատալ՝ մէկ անձի մը սիրտը սաստիկ միրաւորած էր, որ Թագաւորէն դաղանի իշխանութիւն առած է եղեր այս բարձր պաշտօնը ինք առնելու : Այո՛, Նարման (տը լա Մէօլ) 1814ին տպուած դրքի մը մէջ կ'հաստատէ որ Լուի ԺՁ. միապետութեան ակոյտանները անդամալոյծ ընելու կամ գոնէ ՚ի դերև հանելու համար մինչև անգամ համամիտ երևած էր այս պաշտօնը Բօպէսրիէրի խոստանալու ! Խիստ մանրամասն պարագաներ կ'պատմէ սոյն նիւթին նկատմամբ կարծեցեալ բանակցութեան մը սկսելուն վրայ : այս պարագաները ուրիշ գրագէտներ նոյնպէս յիշատակեցին իրմէ վերջը : Առանց մենամարտելու այնպիսի կարծիքի մը դէմ որ խոհեմ և երևելի անձերու քով քիչ վարկ գտած է, միայն այս կ'ըսենք որ Լուի ԺՁ. ի ըրած ընտրութիւնը հետևութիւն մը չ'ունեցաւ : Միակ օգուտը սա եղաւ որ հակաակորդները արգիլեց երեսասարգ իշխանին կրթութեան միջամտիս ըլլալէ : Պ. տը Ֆլէրիէօ չ'հաստատուեցաւ, և Թագաւորը ու Թագաւորին ինչպէս առաջ նոյնպէս և հիմա իրենց զաւակի կրթութեան հսկեցին : Աերջէն պիտի տեսնուի թէ ով պիտի ըլլար ստոյգ կառավարիչը զոր յեղափոխութիւնը պիտի տար Լուի ԺՁի միապետութեան ժառանգին : 0 10

Թագաւորին արդելումէ դոյացած քէնը անմիջապէս նախատալի ամբաստանու թիւններով պայթեցաւ : Ալուրիչ բանի վրայ չէին խօսիր եթէ ոչ Պալատի խորամանկութեանց, Թագաւորին անխոհեմութեանց, Թագաւորին մատնութեանց և ստէպ Վօսլէնց և Աիէնա զրկուած սուրհանդակներու վրայ :

Թագաւորին նորէն փախուստի նկատմամբ կարծուած դիտաւորութեանց վրայ ամբաստանու թիւններ այս շշուկներու հետ կ'իտառնուէին : Առի ԺՁ. ի մտքէն անդամ չէր անցներ փախուստը, Աարէնի ճանքորդութիւնը իր ասէրը բացած էր Գրանսայի տրամադրութեանց վրայ, և զիտէր որ Բարիզէ մեկնելովը յեղատիտութեան սրտորուակ մը տուած սլիաքի բլար, առանց նեցուկ մը դռնելու : Աւստի այս ամբաստանու թիւնները անբիշ բաներ չէին բայց եթէ զանի տկարացընելու համար սահմանուած զբարտաթիւններ, որպէս զի քիչ մը վերջը զանի տապալելու յաջողին : Հասկցաւ Թագաւորը, և Մայիս 23ին նամակ մի դրեց քաղաքային ժողովոյ այս ազմուկներու անտեղութիւնը յայանելու և արդեցութիւննին կտրելու համար :

Հրատարակային ամբաստանութիւնները կ'սարտաւորէին Առի ԺՁ. անընդհատ շնորհումներ ընելու : Անձնուէր պաշտօնէից բազմապահանջ պաշտօնեաներ յաջորդած էին, և բազմապահանջ պաշտօնեաներու՝ խոսկարար պաշտօնեաներ : Մարտ 16ի կազմուած Թագաւորին սահմանադրական պահապան դռնը Մայիս 30ին արձակուելով՝ անոր հրամանատար Պրիտաքի դուքսը Օրլէանի բարձր ատենին առջև զրկուեցաւ երևակայական դատադրութիւններու համար :

Առի ԺՁ. բարիքադրայիններու նեցուկէ զրկուած, անծրէններէ շրջապատուած՝ մեղսացաւ ամեն ակնկալութիւններէ, սակայն իր խղճին մեջ չ'յաղթուեցաւ. անկարելի մեղք տակցութենէ մը զատ ամեն բան սուտցան անորմէ : Իննար

Ճողովոյ ծափահարութեանց մէջէ սրահանջած էր որ բոլոր չ'երգուեալ քահանաները, այսինքն եկեղեցւոյ հնազանդ մնալու համար սուած երգումնուն հաւատարիմ կեցողները, Գաղղիայէ վճռատին, և եթէ հիմնաւոր դանդաւաներ յայտնուին անոնց դէմ՝ մահուամբ սրատժուին: Եւ նոյն խի Աստուած անդամ դաստարարուելով կ'սրտար: «Տէր Աստուած! օրէնքն է այս, չ'ունիմ ուրիշ օրէնք, չեմ ուզեր ուրիշ օրէնք»: Լուի Ժ.Ձ. կ'շարունակէր երկնից և երկրի Աստուածը սաշտելու:

Պարագաներու բնական ճակատագրով մ'արտային կուոյ մը սպառնալիքները ներքին անկարգութեանց տաղնապններու հետ կ'մեծնային, և ներքին զայրոյթները դուրսը եղած սրատրաստութեանց լուրով կ'որբորեէին: Աւասի Լուի Ժ.Ձ. սրարագաներու ստիպումէն բռնադատուեցաւ ՊօՏեմիոյ և Հունդարիոյ Թաղաւորին դէմ սրատրագով հրատարակելու անաջարկութիւն ընել ժողովոյ: Ժողովը ահազին կայթիւնով մը (acclamation) սրատասխանեց: Ամեն մարդ այս սրատրագովին կ'վստահէր: Թաղաւորականք կ'յուսային այնպիսի զօրաստի մ'երեւան գալը տեսնել որ յեղափոխութեան տիրելով կարող ըլլար միապետութիւնը ազատել: Սահմանագրականք իրենց կողմէ կ'յուսային թէ այս զօրաստը Լաֆայէթ ըլլալով՝ յեղափոխութեան և Թաղաւորին վրայ իրենց կայսրութիւն պիտի տար. և լեռնականք — գինէ մեծագոյն մասամբ — թէ՛ մաքերու զիւրացոյց շարժումը դէնքերու բախիւնէ յաճախ գրգռուած ըլլալով՝ միապետականները, սահմանագրականները և Թաղաւորութիւնը միահամուռ պիտի առնէր տանէր և իշխանութիւնը աւելի զօրեղ և աւելի յանդուզն եղողներու պիտի մնար:

Վարէնի ճանբորդութեան տարեգարձը՝ Պոյնսէս և հասարակաց ժողովոյ (tiers état) Վերսայի դնտատունի մէջ սուած երգումին տարեգարձն էր: Այս կրկին տա-

րեզլուխի վերադարձը, այս երկու դէպքերու յիշատակը կամակոր արդելումին վրայ ժողովրդային ջերմը արթնցնելու և անհնազանդ միապետը պատժելու համար պատեհ առիթ մը կ'ընծայէին : ամեն ազաշանք, ամեն սպառնալիք անօգուտ եղան : Յունիս 20ի առաւօտէն գինեալ խումբեր սկսան կազմուիլ, որոնք նախ Սէնթ - Անդուանի և Սէն - Մարտի արուարձաններու գոնհիկներէ (sans-culotte) բազկանաւով՝ ճանքան հրացաններով և նիզակներով գինեալ և ցնցոտիներ հագած բազմութենէ մը հետըհետէ ստուարացան, և յեղափոխութեան սկիզբին Աարէնի մէջ երեցածին պէս չարատեսիլ ամբոխ մ'եղան : Մարդ, կին և տղայ, երեսուն հազար հոգի դարեջուր ծախող Սանթէրի առաջնորդութեամբ, որ խռովութեանց սկիզբէն 'ի վեր վտանգաւոր ազդեցութիւն մը ստացած էր իր թաղի ժողովրդեան վրայ՝ երեք դունդի բաժնուած յառաջ գոյելով, չորս ժամ դեղերեցան Սէնդ - Օնօրէ փողոցին մէջ, և անկէ օրէնսգիր ժողովոյ սրահին մէջ խռժեցան : Թուիլերըի տանելիք աղերսագիրնին ուղեցին հոն անդամ մը կարգալ, որպէս զի ժողովոյ հաւանութիւնն ալ ստանան :

Երեք քաղաքային պաշտօնակալներ եկան Թագաւորին իմաց տալու թէ ժողովը բազմութեան յորդութենէ կ'անդռէր, և թէ ճանքաները այնչափ լեցուած էին որ կրնային բռնութեամբ դուները բանալ : Թագաւորը իրենց խնդրանայ համեմատ հաւանեցաւ թողուլ այս աղերսարկուաց բանակը որ Ֆէօլեանի ճեմելիի վրայէ անցնելով Մանէժի դռնէն ելնէ : Մատամ Ելիզապէթ այս տխուր տեսարաններու վրայ և գրեթէ զոհ՝ այսպէս կ'նկարագրէ զանոնք երբ տակալին իր աչերու առջև տեղի կ'ունենային : «Քիչ մը վերջը, կ'ըսէ նա, սարսիղի միւս դուռերը բացուեցան տրուած հրահաններու հակառակ : Պարտեզը անմիջապէս լեցուեցաւ : Պաղատի ճակատը ճեմելիքին վրայ նիզակաւորները կարգու :

կըսցէին, ուր կ'դանուէին նաև երեք կարգ ազգային պա-
 Տասարան զօրք . և Արքայական կամուրջին դուռէն դուրս ել-
 նելով վերստին Սէնդ-Անդուանի արտարձանը մանելու
 համար Գարուգէլի վրայէ անցնելու միտք ունենային կե-
 րեւէր : Ժամը երեքին մեծ բակի դուռը ջախջախելու կամք
 մը կ'երեւէր իրենց կերպարանաց վրայ : Քաղաքային երկու
 պաշտօնակախներ բացին զան : Ազգային պաՏասարան զօրքը որ
 առաւօտէ ՚ի վեր սակաւին սլատուէրներ ընդունելու կարող
 եղած չէր՝ ցաւօք տեսաւ անոնց բակին մէջէ անցնելը առանց
 կարող ըլլալու ճանքան գոցել : Տեսչութիւնը ոյժը ուժով
 վանելու համար պատուէր առած էր , սակայն քաղաքային
 ժողովին հոգը չեղաւ : Մենք այս վայրկենին Թագաւորին
 պատուհանը կ'դանուէինք : Իր սենեկասարսի սենեկին մէջ
 դանուող սակաւաթիւ անձերը եկան մեզ յարելու : Գուռերը
 կ'դոցնէն , և մէկ վայրկենէն դրան բաղխելը կ'լսենք . սակ
 Ա.բլօքն էր որ իրեն հետ քանի մը թնդանօթածիզ և քանի
 մը կամաւոր զօրքեր բերելով Թագաւորէն կ'խնդրէ որ առ-
 անձին ժողովրդեան երեւի : Թագաւորը իր նախասենեակը
 անցաւ , ուր Պ. տ'Էրվիլլէի կու գայ անոր յարելու իրեն հետ
 քանի մը թնդանօթածիզ զօրքեր բերած : Այն վայրկենին
 որ Թագաւորը իր նախասենեակը կ'անցնէր՝ Թագաւորին
 յարող անձերը զանի իր տղուն սենեակը մտուցին սուրի : Ես
 իրմէ աւելի երջանակ՝ մէկը չ'գտայ որ Թագաւորին քովէն
 բաժնէր զիս : Հազիւ թէ Թագաւորին մեկնած էր երբ դուռը
 նիզակակերով ջախջախուեցաւ : Թագաւորը սոյն միջոցին պա-
 տուհաններու մէջ դանուած կարասիներու վրայ ելաւ .
 Մայլի մարաջախար , տ'Էրվիլլէի , Ա.բլօք և տասներկու քի
 չափ թնդանօթածիզ զօրքեր զանի շրջապատեցին : Ես պա-
 տուհանին քով կ'կենայի պաշտօնեաներէ և քանի մը պաՏաս-
 արան զօրքերէ շրջապատուած : Նիզակաւորը շանթի պէս սե-
 նեկէն ներս մտան . Թագաւորը կ'փնտուէին , մանաւանդ ա-

նոնց մէջէ մէկը որ ամենէ գէշ-բերանն էր : Թնդանօթաձխ
 զօրքերէն մին գէնքը ուղղեց ըսելով, «Թշուտ առկան ! քու
 Թագաւորն է այս !» : Միւս նիզակաւորնսրը մերկնարար
 պատասխանեցին այս աղաղակին : Սենեակը մէկ մանրերկ-
 րորդի մէջ լեցուեցաւ, ամենքն ալ պաշտօնեաներու փոխուիլը
 կ'սրահանջէին : Չորս ժամու չափ մի և նոյն աղաղակը կրկ-
 նուեցաւ : «Բիշ մը վերջը ժողովոյ անդամները հասան : Աէր-
 նիօ և Իննար աղէկ կերպով մը խօսեցան ժողովուրդին հաս-
 կըցնելու համար անոնց թէ իրաւունք չ'ունէին այս կեր-
 պով դալ և Թագաւորին հաւանութիւնը խնդրել, և յորդո-
 րեցին զանոնք ետ քաշուելու, բայց սախ մի և նոյն աղեցու-
 թիւնը ունեցաւ իբր թէ բնաւ խօսեցած չ'ըլլային : Քառական
 երկար ատեն ոչ խօսք կ'ըսուէր և ոչ կ'հասկցուէր աղմուկին
 պատճառաւ, և հազիւ թէ բառ մը կ'սկսէին արտասանել և
 ահա աղաղակները կ'կրկնուէին : Աւերջապէս Բէթիօն և քա-
 ղաքային ժողովոյ անդամներէն վրայ հասան. առաջինը ժո-
 ղովրդին ատենարանութիւն մ'ըրաւ, և անոնց վէհան յնա-
 լէն-նը և կարգը, որոցմով եկած էին, գովելէ ետքը՝ Բէ և Նոյն
 հանքաբոս-խէմօք ետ քաշուելու յորդորեց զանոնք, որպէս զի
 մէկը կարող չ'ըլլայ զիրենք յանդիմանել թէ քաղաքական տօ-
 նի մը մէջ չափը անցուցին : Ի վերջոյ ժողովուրդը բաժնուե-
 լու սկսաւ : Մուշայ ձեզ ըսելու որ ժողովուրդին ներս մանե-
 լէ քիչ մը ետքը թնդանօթաձխ զօրքերը գալով ճանքայ բա-
 ցած և Թագաւորէն հեռացուցած էին զանի : Գառնանք
 Թագուհոյն, որ յակամայս եղբօրորդւոյս սենեակը կ'գեղե-
 րէր, այս վերջինը այնչափ շուտով սրահին ներսի կողմը ա-
 ուած տարած էին՝ որ անոր սենեակը մտած ժամանակ ալ
 չ'կրցաւ զանի տեսնել : Արնաք երևակայել անոր յուսահատ
 միճակը : Ա, Հիւ և Ա, Ա. սրաշտօնակալը անոր հետ էին .
 վերջապէս դարձուցին իրեն զաւակը : Բոլոր ճիղը թափեց
 Թագաւորին սենեակը մօտեցու համար, սակայն զինքը շրջա-

պատող մարդերը թող չ'տունին : Այդրիւն մը վերջը կ'սկսէին դուռերը խորտակել, ժողովուրդը իր վնասածը չ'կրցաւ դանել, և եղբորորդւոյս մարդերէ մէկէն խարուելով որ ըսած էր թէ Թագուհին ժողովը կ'զանտի սրահին մէջ տարածուեցաւ : Այս միջոցիս թնդանօթածիզ զօրքերը խորհրդարանը մտան, և Թագուհին հոն ու զուակները խորհրդոյ սեղանին ետեւ գետեղելով թնդանօթածիզ զօրքերը և ուրիշ հաւատարիմ անձեր զանոնք շրջապատեցին, և ժողովուրդը անոր առջևէն անցաւ : Աին մը կարգիւր զտակ մը դրաւ անոր և եղբորորդւոյս գլուխը . Թագաւորը գրեթէ առաջին վայրկեանէն ՚ի վեր կ'կրէր զայն : Սանդէր որ ժողովուրդը կ'առաջնորդէր մեկնելու, Թագուհւոյն բանախօսութիւն մը կ'ընէ ըսելով թէ կ'խաբէին զինքը երբ կ'ըսէին իրեն թէ ժողովուրդը զինքը չ'սիրեր, և թէ սիրուած էր նա ժողովուրդէն, վստահացուց զանի թէ բան մը չ'ունէր յիշանալու : « Բնա- Բանէ ճը շէ-ի-ն-ար ճիւղ երբ ճարտարաններու և-ր-ի-գրան-ի » : Եւ մի և նոյն միջոցին ձեռքը իրեն մօտ եղող թնդանօթածիզ զօրաց երկնոցոց որոնք ամենքն ալ խոնարհեցան համբուրելու : Շատ սրտաշարժ էր այս յանարանը :

« Ակող պատգամաւորները իրենց յօժար կասեց եկած էին : Ստոյգ պատգամաւորութիւն մը դատով Թագաւորը իր սենեակը մտնելու յորդորեց : Այս բանը ըսելուս, ինչպէս որ չէի ուզեր բազմութեան մէջ առանձին զանուիլ, գրեթէ իրով ժամ մ'առաջ մեկնեցայ, և Թագուհւոյն եղած անզը երթալով կրնար դատել թէ ինչ հաճութեամբ գրկեցի զան, սակայն անոր անցուցած վտանգներէն անտեղեակ էի : Թագաւորին իր սենեակը մտած ժամանակ աւելի սրտառուչ յանարան մը չէր կրնար ըլլալ այն ինչ Թագուհին և իր զուակները անոր սրտանայր նետուեցան : Հոն զանուոյ պատկաճաւորները արտասուածոր կու լային : Ասին մէկ կէց

ժամ պատգամաւորութիւնները վերցուեցան , մինչև որ հանդարտութիւնը բոլորովին վերահաստատուեցաւ : Թամը տանին պարտար պարպուելով ամեն մարդ իր տեղը քաշուեցաւ » : Սրտառուչ սլարզութեամբ լի այս պատմութիւնը ուր նկարագրուած տեսարաններու խառնակութենէ մարդս ստոյգ զաղախար մը կ'առնու , Յունիս 20ի նախապատրաստուած դէպքը մատով շօշափել կու տայ : Պալատը քաղաքային ժողովէն յանձնուեցաւ , այսինքն Բէթիօնէն , և երկու կերտով , նախ՝ քաղաքային պաշտօնակալք դուռը բացին և որմէ ետք՝ քաղաքային ժողովոյ հրամանը կ'պակեէր ազգային պահապան զօրաց որպէս զի արգիլէին ժողովրդեան ներս մտնելը : Մի և նոյն միջոցին սէտք է նաև այս դիտել որ թագաւորութեան թշնամիները ամեն բան կ'համարձակէին անոր դէմ , և անոր պաշտպանները բան մը չէին համարձակեր ընել յեղափոխութեան դէմ : Մաքառումի լուծումը այս հակառակութեան մէջ գրուած , և Յունիս 20ի օրը՝ տեղի ունենալիք թշուառութիւնները կ'ծանուցանէր Գաղղոյ : « Յանուն երկնից , կ'դրէր Թէրպէր մօտ ինն գար առաջ , արգիլեցէք ձեր տիրոջ և Քրիստոսի դէմ ապստամբութիւնը , ամբոխի տէրութիւնը՝ թագաւորութեանց մահն է » :

Թողովը փոխանակ արգիլելու՝ թողուց որ ամեն բան ընեն . պաշտօնական պատգամաւորութիւնը ամեն բան լմննալէ վերջը կ'հասնէր : Պալատի գրառումը անպատմելի շփոթութեան տեսարան մ'եղաւ : Հոս Թագաւորը , հոն Մատամ Էլիզապէթ , անդին և աւելի վերջը Թագուհին քանի մը հաւատարիմ անձերէ կ'ըջապատուէին , որոնք զատ զատ խումբեր կազմելով յեղափոխութեան ծովու մը մէջ կորսուած կղզիներու նմանութիւնը կ'ներկայէին : Հարկ է միայն քամի մամաւոր պարագաներ յաւելցնել արդէն Մատամ Էլիզապէթէ տրուածներուն վրայ : Իր հրեշտակային համես-

տութիւնը գինքը փառաորելու նպատուող քանի մը բաներու վրայ լուծեամբ անցած էր . ուրիշներ անոր տեսութեանէ վրիպեցան , վասն զի այս թատրերդու թիւնը միջանկեալ դէպքերէ բաղկացած ըլլալով թագաւորական ընտանիքի մէն մի անդամը մի միայն սրատեբազմի էական կէտը կ'նշմարէր և անոր մէջ մղուած կ'դանէր ինքզինք : Այն ինչ ամբոխը Մատամ Էլիզապէթ Թագաւորէն բաժնելով սրատուհանի մը մէջ կ'մղէր զայն , նիզակաւորներ՝ ինչպէս կ'ըսէ ինք , զանի Մարի-Անդուանէզի տեղ կ'առնուն : «Ո՛հ , ահաւասիկ Աւստրուհին , կ'սրուան , Աւստրուհոյն գլուխը պէտք է մեզ !» Եւ անմիջապէս նիզակները ուղղուեցան : «Ի՞նչ կ'ընէր , կ'սրուայ Պ . ար Սէն-Բարտու , Մատամ Էլիզապէթի ախոռասկետը , անի չէ այս !» — Ինչո՞ւ ուղղել զանոնք իրենց սխալումէ , կ'ըսէ անոր Մատամ Էլիզապէթ , այս սխալումը կրնայ Թագուհին ազատե՞լ : Եւ ձեռքովը գրեթէ լրկուրծքին գպած սուին մը հեռացնելով , «Չդուշացիք , Պարոն , կ'ըսէ քաղցրութեամբ , կրնաք մէկը վիրաւորել , և հաւաստի եմ որ վերջէն ըրածնուդ պիտի ցախք» :

Երկաթը կ'ըթի , ատելու թիւնը կ'կակզի այս անակնկալ խօսքին վրայ : Մոլեղինները կ'պատրաստուին ան ատեն իրենց աղերսագիրը կարդալու . «Առաջարկելու վայրկեանը չէ այս , կ'ըսէ Թագաւորը հաստատ ձայնիւ , և ո՛չ իսկ շորհելու» : Անոյչ և հաճելի կերպարանքով 22 տարեկան երիտասարդ մը (Քլէման անունով) կ'սրուայ ան ատեն թէ բոլոր արքայական ընտանիքը պէտք է փողտուել (խղդեւ) : Ուրիշ մը (Պուրկուէն անունով) առաջինէն աւելի անմեղու , իրմէ մեծին առաջարկութիւնը կ'կրկնէ ցատումով : Երբորդ մը , չարատեսիլ կերպարանքով , գլուխը խաւարարտէ գտակ մը հագած և վրան Մատամ Էլիզապէթին ընդհանրութեամբ , ամենեւին ըսպառնալիք մը չ'տրտասաններ , սակայն համը և կասկածոյն՝ արեւազոյն աչերով կ'դիտէ Ղուի Թ.Չ. և անոր ամեն շարժ

ժանջ տհարելու դարարումներով (confortion) կ'հետևի ։
 Չորրորդ մը , Լըժանըը մնացործի սիրելին , որ այս ստուգումի
 ակտարանին մէջ մնոր մտ կ'գանուէր , կարմիր գտակ մի կը
 գնէ Թագաւորին զլուխը : Էինդերորդ մ'անրոխին մէջ կ'ծը-
 վայ , և երկայն գեղարդ մ'անյուցած դաւաղան մը սաստա-
 նելով կ'գոչէ . « Ա՛ւր է որ մեռցնեմ դայն ! » Ազգային պա-
 Տասարան զինոր մի (Քաննօլ անուումով) խերայնորը կ'բռնէ և
 Լուի Ժ.Չ.ի ռախց առջև նետելով կ'պարտաւորէ զանի Աեյ-
 ցէ Թագաւորը պուարու : Աեյերորդ մի գաւաթ մը և շիշ մը
 կ'ներկայէ Լուի Ժ.Չ.ի հարցնելով անոր եթէ կ'ուզէր աղ-
 զին կենաց համար խմել : « Ազգը պէտք է դիմնալ , կ'պա-
 տասխանէ , որ իրեն համար բոլոր բրածներէս վերջը զանի
 կ'սիրեմ , իմ սրախ խորէն է որ կ'խմեմ անոր կենաց հա-
 մար » : Եւ ընդդէմ անհանգիստ բողբոնբու , Լուի Ժ.Չ.
 Ազգասանդրի պէս վատահ իրեն ներկայութեամբ կ'ասկածելի
 բնակելին շուրթերուն կ'տանի :

Արտաքնոյն պատկերը ներսինին պէս տխուր էր : Անհամ-
 բեր ապտտամբութիւնը որ կարող եղած չէր պաղապին մէջ
 ընդունուիլ և բովանդակուիլ բակին և պարտիկին մէջ կ'խայ-
 տար , և ժամանակ առ ժամանակ արխնախանձ աղաղակներ
 կ'բարձրանային , « Ե՛րբ ուրեմն պիտի դրկէք մեզ Թագաւո-
 րին և Թագուհոյն զլուխները » :

Այսու ամենայնիւ Թագուհին , որու այս աղաղակները կը
 հանէին պարտի ամենէ ներսի կողմը եղած սենեակներու
 մէջ , տր փորձած էր իր զտակները պատտարելու , այս
 աղաղակներէ իրեն նշանակուած վտանգներուն ինք ալ հա-
 ղորդ ըլլալու պէտքին ալ չկրնար գէմ գնել : Ի զուր կ'յիշե-
 ցնեն* իրեն որ եթէ ամուսինն նաև մայր էր . 'ի զուր կը

* Ահաւասիկ գոյն վայրկենին Թագուհոյն քով գանուող անձանց ա-
 նունները որոնք այս վտանգաւոր օրուան մէջ զանի շ'թողուցին ,
 խանգալէ իշխանուհին , Թարանդի իշխանուհին , Թուրգելի Մարշ

պարտաւէին արատաւարի աչերով որ խոհեմութեան միջ
 դնէ և բնաւ ինքզինք վտանդի մէջ չ'ձգէ անօգուտ տեղ :
 վտան դի թաղաւորին օգնութեան հասնելու չէ թէ միայն
 յոյս չ'կար՝ այլ տեղի ստոյգ էր որ թաղաւորին երթալով
 տեղի վտանդի մէջ սլխտի իշխար նա : «Մէկը սլխտի չ'արդ իկէ
 դիս իմ տեղը երթալու , կ'գոչէ , մէկը սլխտի չ'կատեցնէ
 դիս» : Եւ դէպ ՚ի թաղաւորին սրահը կ'նետաւի , երբ յան-
 կարծ աղմուկի շատնալը լսելով իր ձգած սենեկի դրան առ-
 ջը կ'զատնայ պուսպով , «Ազատեցէք աղաս !» և նորէն կը
 մեկնի : Տիկնայք տը Լամպէլ և տը Թարանդ անոր ետեւէ
 կ'երթան : Պ. Հիւ Արքայորդին ստնելով ամապարանօք ա-
 նոր բրոջ սենեակը կ'տանի : Հոն հալիս թէ աղմուկը կ'հաս-
 նէր . սակայն խեղճ աղան ոչ պակաս անհանգստութեամբ ,
 հասկնալով իր բնաւորի բոլոր վտանգները՝ հեծկտանօք կը
 հարցնէ թէ ինչ կ'ընէին իր հայրը և մայրը : Մէկը չ'կրնար
 պատասխանել անոր , մէկը չ'համարձակիր ապահովել զանի :
 Տը Թարանդ իշխանուհին հասնելով կ'ծանուցանէ թէ անց-
 քերը դոցուած ըլլանուն պատճառաւ թաղաւորին չ'կենայով
 մինչև թաղաւորին մօտ թափանձել իր տղուն սենեակը
 դարձած էր : Պ. Հիւ երխտասարդ իշխանը հոն կ'տանի :
 Այն ինչ այս տղան անոր բազուկներէ թուրպէլի մաքրիլու-
 հւոյն բազուկներուն մէջ և այս մերջմանէն թաղաւորին դրո-
 կայը մէջ կ'նետաւի , այն ինչ իր մօր դոցուանքը կ'ընդունէր՝
 կից սենեկի մը դրան վրայ կրկնուած հարուածներու ձայնը
 կ'ըլտէ : Պ. Հիւ այս ձայնին վրայ անցքի մը մէջ նետուելով
 որ թաղաւորին գանուած սենեակը թաղաւորին պատկերու-

բիզուհին , տը Տիրա , տը Լիւյն և տը Մայլէկ դրուհիները ,
 Բօշ-Այմօնի մարբիզուհին , տը Մարօ պարօնուհին , տը Սուսի
 Մարբիզուհին , տը Թինէսթու կոմսուհին , տը Շօաղէօլ գուբուր ,
 Ե՛Օսօնկէլը և տը Մօնօրէն կոմսերը , տը Սէն—Բրիէսդ գերա-
 յանը , տը Շանսընէ մարբիզը և Գաղղիոյ ծառայութեան մէջ բա-
 շակի մարաջխտ Պարոն տը Ա. Իմէնկօֆ :

սենեկին հետ կ'հաղորդակցէր, կ'բանայ անոր դուռը, և Թաղուհին իր զաւակով և իրեն ընկերացող բոլոր անձերու հետ հոն կ'գիմէ : Տախտակամածին վրայ արհեստիւ կըտրուած այսչդուռը ամենեւին դուրսէն յայտնուելու նշան մը չ'ունէր : Աղտամբութիւնը մինչև այս նեղ անցքը կ'թափանձէ, դրան կից տախտակամածէն կտոր մը մէկ վայրկենի մէջ կացինի մը հարուածէն կ'իջնայ, սակայն որչափ որ սրտը մերկացած՝ դուռը դարձեալ երեւան չ'եղներ, և Թաղուհուհւոյն և Քահաժառանգին վերջին ասպատանարանը անյայտ կ'մնայ : Կտորին լուրջիւն մը կ'ախրէ թագասոյին մէջ (cachette), ուր Արքայորդին իր գանգաւանները խեղդելով, բարտուքները լափելով իր խեղճ մայրը որպէս թէ սրաշտպաններու համար իր դրկացը մէջ կ'սեղմէ, որ չէ թէ իր անձին այլ իր զաւակաց և անոնց հօր համար կ'գողայ : Այսպէս երկար ատեն մը կ'անցնի առանց Մարի-Անդուանէթ և Լուի Ժ.Չ. իրենց վիճակէն բան մը հասկընալու : Թաղաւորի սենեկապաններէ մին (Պլիննի) կարող եղած էր սենեակներէ ազատիլ և օդնութիւն խնդրել. այս օդնութիւնը Ֆիլլը-Սէն-Թօմասի գունդի անձնութեան մէջ գտաւ, որու հաւատարմութիւնը անյողգողգ մնացած էր : Այս գունդի թնդանօթածիղ զօրքերը, Պ. Պօսթարի տը Վիլլըլէնէ առաջնորդուած, կ'սընան թագաւորական ընտանիքը սրաշտպաններու, և խորհրդարանը գրտելով վերջապէս ստահակ հրոսը (horde) կ'շրջապատեն : Ժողովուրդը ան ատեն կ'պահանջէ Թաղուհին տեսնել. Մարի-Անդուանէթ կ'երևի սրահին խորը. քանի մը թնդանօթածիղ զօրքերը զանի շրջապատելով խորհրդոյ սեղանը կ'հռեն անոր առջև որ բազմութեան դէմ սրտուարի տեղ կ'ծառայէ անոր : Սանթէր որ մինչև ան ատեն բակերու մէջ կ'գանուէր, մոլեղիններու խումբ մը ետին ձգած վեր կ'եղնէ : Պալատի ներքը այս ազաղակները կ'գոտան, «Անցցէ Սանդէր! կեցցէ Սէնդ

—Անդուանի արուարձանը! Կեցցեն գուհիկները (անվարժ
 տիկները)» : Գարեջրոյ ժողովրդային վաճառականը Թագու-
 Տւոյն և իր զաւակաց զանուած սրահը կ'մննէ, որու հետ
 կ'խօսի նաև ամբօխը : Մարի—Անդուանէթ ոտքի վրայ կը
 զանուի իր Ա՛Ա տարեկան աղջիկ զաւակի ձեռքէն բռնած :
 Արքայական Իշխանը Թագու-Տւոյն առջևի սեղանին վրայ
 նստած է, որ աւելի զարմացած քան զարհուրած՝ դէսլ 'ի
 մայրը կ'դառնայ անընդհատ փնտտելով անոր աչերու մէջ
 թէ արդեօք վստահութիւն թէ ոչ վախ պէտք է ունենալ :
 Խառնիճաղանճ ամբօխը ահա այս դիրքին մէջ արքայական
 ընտանիքը կ'զանէ : Յաղթական քայլող ամբօխին գլուխը դի-
 նով կ'ին մը կ'շիկնի ; որ կու գայ կարմիր գտակ մի նետել սե-
 ղանին վրայ ; և ամենակողմա թշնամանքներով կ'պահանջէ
 որ Մարի—Անդուանէթի գլուխը դբուի : Պ. աը Ռւիթէնկ
 այս գգակը կ'առնու, և Թագու-Տւոյն հրամանաւ ու զայրու-
 թէ գողացող ձեռքով մը վայրկեան մ'անոր գլխուն վրայ կը
 ղետեղէ, և գրեթէ անմիջապէս ետքը կրկին առնելով սե-
 ղանին վրայ կ'դնէ զայն : Էղաղակներ կ'դոնեն, «Ար-
 միր գգակը Արքայական Իշխանին ! Եռագոյն ժապաւէն-
 ները սղտի Վէ՛թօին !» Սեղանին վրայ երկնցած ժա-
 պաւէնները այս խօսքերուն վրայ անմիջապէս սրածայր
 գգակին քով կ'իջնային : «Եթէ ազգ կ'սիրես, կ'սրոան ա-
 րուարձանի բնակիչները, կարմիր գգակը աղուդ գլուխը
 դիր» : Թագու-Տին միշտ հանդարտ՝ ժողովուրդը գոհ ընելու
 հրաման կու տայ Պ. Հիւի : Արմիր գտակը աղուն խար-
 տեաշ մազերու վրայ կ'փայլի, և եռագոյն ժապաւէնները իր
 պարանոցի բոլորախորը և կոճակնոցին վրայ կ'բարձրանան :
 Տղան չ'հասկնար միթէ թշնամանք թէ ոչ խաղ մ'էր այս, և
 ապշած կերպարանքով մը կ'ժպտի : Սակայն քիչ մ'ետքը Պ.
 Մօնժուրաւէն* և ազգային պահապան զօրաց պաշտօնակալ-

* Պ. աը Մօնժուրաւէն Բարեկեան պահակի գունդի քառասուն ե

ներէ շատերը դիտել առած ըլլալով որ անանկ սաստիկ աա-
քին մէջ բրդեայ ծանր գլխանոցը անսամելի անհանդստու-
թիւն մ'էր սղու մը գլխուն համար՝ «՛. Հիւ հանեց զայն
անոր գլխէն :

Քանի մը հողի ծախահարեցին թագուհւոյն համար, սա-
կայն կլինելը աւելի անդուժ ըլլալով կնոջ մը համար՝ չէին
զարբեր զանի թշնամանելէ : Հրապարակին կոյանոցներէ
վոխ աւանուած պիղծ բառեր նրալստի գմբեթները սասա-
նած՝ առաջին անգամ արքայորդուց ականջին կ'հնչէին, ու
բոնք այս բառերը չհասկնալով բնաւ չէին խոզեր. սողի-
տութիւնը ամօթէն կ'պահպանէր զանոնք : Մարի-Անդուա-
նէթ սրամանած կ'կարմրէր, չէ թէ իր անձին, հասար այս
ժողովրդին, հասար իր զուակայ համար : Թագուհւոյն ինք-
նասիրութիւնը կնոջ զայրոյթէն աւելի ևս կ'բարձրա-
նար : «Որչափ հարարս և ատեցողէ Աւսարուհին», պոռայ
շնորհայի դէմբով և վայելուչ հագուած երիտասարդ օրիորդ
մը : Անոր բուռն խօսքերու և կերպարանայ անուշութեան
մէջ եղած հակասութիւնը զինքը սուշեցնելով «Աւ ինչո՞ւ
ատեմ՝ զքեզ, բնաւ անոր Թագուհին, դու ուրեմն կ'ատես
իկա, դու ? Միթէ յանդէտն անիրաւութիւն մը կամ գէշու-
թիւն մ'ըրած եմ՝ քեզ : — Ոչ ինձ, պատասխանեց երիտա-
սասարդ օրիորդը, սակայն ազգին ըրած ես . — Ինչո՞ւ օրի-
որդ, կրկնեց Թագուհին մեղմութեամբ, այնպէս ըսին քեզ և
դու հաւատացիր : Աւ ի՞նչ օգուտ կրնայի ունենալ սուղին
գէշութիւն ընելու : Գու զիս Աւսարուհին կ'կոչես, սակայն
ես Ֆրանսայի Թագաւորին կլինն եմ, Գահաժատանդին մայ-
րը . Ֆրանսուհի մ'եմ՝ իմ ամուսնոյ և մայրական բոլոր զգա-
ցումներով : Բնաւ չ'սխալի տեսնեմ վերատին այն երկերը՝ ուր
ուժ հրամանատարներէն մին էր : Բողկարկերի բնաւորութեան
տակ անհուան գառապարտուած՝ մեռնելէ առաջ ազնուութեամբ,
քաջարութեամբ և զգայնութեամբ լի գիպասանութիւն մը շինեց :

ծնայ ! Ձեռնկրնար ոչ երջանիկ և ոչ թշուառ ըլլալ բաց եթէ
 Կաղղիոյ մէջ . Սակայն երջանիկ էի երբ զիս կ'սիրէիր !» Ե-
 րիտասարդ աղջիկը այս անոյշ յանդիմանտ թենէ խոսիլով
 կակղացաւ : «Ներեցէք ինձ , ըսաւ լալազին , սլառձառ ըզ-
 ձեզ չ'ճանչելա էր , աղէկ կ'տեսնեմ հիմա որ չար կ'ին մը
 չէք» :

Նոյն իսկ Սանթէր , Իշխանուհին տեսնելուն՝ որու թեր-
 ևս զլուխը առնուլ կ'փափարէր՝ խոսվուած երեցաւ : Շընչ-
 արդեւ թենէ կ'խեղդուէին սրահին մէջ . ոստի կ'աղաչեն
 զան որ բազմութիւնը դուրս հանել տայ : Ան տանն զինքը
 Թագուհիէն բաժնող սեղանին վրայ ձեռքը ուժղնութեամբ
 զարնելով : «Ե՛հ , աիկին , ըսաւ անոր , մի վախնար ամենե-
 վին , ձեզի գէշութիւն մ'ընել չեն տղեր , սակայն յիշեցէք
 որ զձեզ կ'խարեն և թէ ժողովուրդը խարելը վտանգաւոր
 է : Յանուն ժողովրդեան կ'խօսիմ ասոնք ձեզի» : Ահա այս
 միջոցին էր որ Թագուհին Մատամ Էլիզապէթի սլառնած
 գեղեցիկ շարժումը ունեցաւ . Ազգային պահասարան զօրաց
 սիրտը շափազանց կ'շարժի . ամբոխը և ոչ իսկ կ'մըմբայ : Նոյն
 իսկ քանի մ'անձերու սիրտը կակղելով անոնցմէ մին կ'ոչէ :
 «Ո՛րչափ քաջասիրտ է Աւստրուհին» . ուրիշ մը , «Ո՛րչափ
 գեղեցիկ է սրտի Իշխանը» : Ասան զի ժողովուրդը զիւրա-
 շարժ , զիւրահաւան , հետաքրքիր և աղմկիչ աղայ մ'է , որ
 ամենափոքր շշուկի՛ յառաջ կ'ըլլան , բարակ գաւազանի մը
 հարուածը զանի վաղցնել կու տայ , որ շունչ մը զանի ան-
 դու թ և բառ մը զանի առատափրատ կ'ընէ . աղայ մը՝ որ
 նոյն վայրկենի աղբեցութեան տակ իր զգացումները և գա-
 ղափարները կ'փոփոխէ , սակայն դժբաղդարար , գէշութիւն
 ընելու համար մարդու մը նշ ունի : Սանթէր որչափ որ
 վայրենի , սակայն զիւրա՛ ի դու թ կ'շարժէր : Մարի-Ան-
 դուանէ թի կ'մօտի , ձեռքը սեղանին վրայ կ'դնէ և գէպ 'ի
 անոր ծռուելով , «Բառական անպիտան բարեկամներ ունիք

տիկին, կ'ըսէ անոր կէս ձայնիւ, կ'ճանչեմ այնպիսիներ որք
 աւելի աղէկ պիտի ծառայեն ձեզ! » Արու վրայ յանկարծ ետ
 կ'քաշուի և վեհափառ շարժումով մը կ'հրամայէ ժողովրդին
 որ ետ դառնայ : Աղբրած խառնիճաղանճ ամբոխը Թագու-
 հւոյն առջևէն կ'անցնի կ'քաշուի և մեկնած ատեն քանի մը
 թշնամանքներ անոր ուղղելով կ'բաւականանայ : Այս դուեհիկ
 բաղնաթիւնը այլանդակ միանգամայն և ահարկու տեսք մը
 կ'ընծայէր . դիմակաւորութիւն մ'էր արեան մէջ թաթ-
 խուած : Շատ մը խումբեր խորհրդաւոր նշաններ և վերնա-
 գրեր կրող սղախ դրօշակներով կ'զանազանէին իրենց մէջ,
 որոց մէկուն վրայ այս խօսքերը կային : Էստան-Քիւն Կամ
 Ժակ . ուրիշ մը , Գողմ' , Բանասոր ! Ժամբ հասած է : Մարդ
 մը փայտեայ գործի մը ձեռքը բռնած է կաղայենի ձեռով,
 որու վրայէ կնոջ մը սրտիկերը կ'կախուի հետևեալ նշանա-
 բանով : Զգուշացիք լապտերէն (մահուան գործի) : Ուրիշ մը
 կէյէօդէն մը (զլխատութեան մեքենայ) կ'ժուռածէ , որու
 աակ այս խօսքերը կ'կարգայտին . Ազգայէն ուրբար-Քիւն
 Բանասորաց համար . 'է վայր Աւելո և էր կէնը ! Երբորդ մը
 նիզակի վրայ արիւնաշաղախ սիրտ մ'անցուցած է հետևեալ
 խօսքերով . Բանասորաց և ողնուհաննէրոս սիրտը :

Գլխաւոր դաւաճանները ինքզինքնին յայտնած էին . միայն
 Բէթիան որ բակերուն մէջ կ'երթար կու գար՝ բնաւ չ'երեւ-
 ցաւ սրահներուն մէջ . վերջապէս կ'տեսնեն զանի : « Իշ-
 խան , կ'ըսէ , հիմա այն ինչ խնայայ բոլոր անցած գացածը :
 — Ատի կ'զարմայնէ զիս , սրատասխանեց Աուի , վասն զի
 արդէն երեք ժամէ 'ի վեր է որ կ'տեսէ » : Բարիկի քաղաքա-
 պետը աթոռակի մը վրայ ելած կ'յարեցնէ : « Իշխան , վախ-
 նալու բան մը չ'ունիք : — Աւսնալու ! կ'կրկնէ Թագաւոր-
 րը , բարի մարդ մը , որու խիղճը հանդիստ է , բնաւ չ'դո-
 կար Եկուր , կ'շարունակէ իրքով եղած թնդանօթածիլդ զին-
 ւորի մը ձեռքէն բռնելով , ձեռքդ սրտիս վրայ դիր , և ըսէ

այս մարդուն եթէ տեղի ուժղին կ'զարնէ» : Այս միջոցին էր որ Բէթիանն դէպ 'ի ժողովուրդը դառնալով իր տարօրինակ բանաստեղծիւնը ըրաւ , որմէ ահաւասիկ քանի մ'իմաստ կ'նշանակենք հոս : «Քաղաքացիք և քաղաքացուհիք , վեհանձնութեամբ և իմաստութեամբ սկսաք օրը , ձեր ազատ ըլլալը տողեցիք : աւարտեցէք ուրեմն նոյն կերպիւ , վեհանձնութեամբ , և ըրէք ինձի պէս , դացէք տեղերնիդ պատկերու » :

Ժողովուրդը կ'սկսէր ետեւէ ցրուիլ , և Մատամ Էլիզաւէթ կարող եղաւ , ինչպէս կ'սկսամէ ինք , Թագուհւոյն սենեակը վաղելով անոր դիկաց մէջ նետուիլ . «Ամեն բան հանդարտ է , ամեն բան հանդարտ է , ըսաւ անոր , Թագաւորը ազատեցաւ » : Ստուգիւ Ղուի խոնջէնքէ և տաքէն նեղուած խորհրդարանը կ'տարուի ազգային պահապան զօրքէն և ժողովոյ պատգամաւորութենէ , այս տեղէն իր պատկերու սենեակը անցնելով նոյնպէս և ընտանիքը անմիջապէս եկաւ միացաւ իրեն : Աինը , զաւակները և քոյրը անոր պարանոցը նետուեցան : Պաշտօնակալք , պատգամաւորք , բոլոր վնքի շրջապատողները արտաստաթու կու լային : Ամանք անոնց մէջէ օրուան դէպքերուն վրայ կ'ուզէին Ղուի Ժ.Ձ.ը մխիթարել , իր յայտնած քաջարատ թիւնը գովելով : «Պարտքս ըրի և ոչ ուրիշ բան» , պատասխանեց դժբաղդ Իշխանը : Սոյն վայրկենին նոր պատգամաւոր մի Թագուհւոյն մօտեցաւ ընտանեւար , և մեղմ ձայնով մ'ըսաւ անոր . «Բաւական վախ զգացիք , Տիկին , համոզուեցէք . — Ա՛չ , Պարօն , բնաւ վախ չ'զգացի , բայց խիստ կ'տագնապէի Թագաւորէն բաժնուած ըլլալուս վրայ այնպիսի վայրկենի մը մէջ ուր իր օրերը վտանգի մէջ էին : Գոնէ իմ զաւակաց քով գտնուելով այսպէս իմ սպարաուց մին կատարելու մխիթարութիւնը ունէի : — Աւանց ըսել ուղիւր թէ ամեն եղած բաները ներքի էին , կրկնեց այս պատգամաւորը , միաբանեցէք Տիկին , որ

ժողովուրդը շատ աղէկ կերպիւ վարուեցաւ : — Թագաւորը և ես , Պարօն , հանդուած ենք ժողովուրդին բնական բարեսրտութեան վրայ , և բնաւ չար չէ երբ չ'մոռոնցնեն զանի» : — Օրիորդը քանի՞ տարեկան է , շարունակեց այս պատգամաւորը Իշխանուհին ցոյցնելով : — Աղջիկս , Պարօն , այն հասակին մէջն է որ սասնկ տեսարաններու սուկումը արդէն կտտարելապէս կ'զգայ :

Ուրիշ պատգամաւորներ Արքայորդին կ'ըջատուէին , և հետաքրքիր ըլլալով անձամբ անոր մտքի կարողութեան և ուսման տարածութեան արժէքը հասկնալու՝ Քրանապի պատմութեան և աշխարհագրութեան վրայ անթիւ հարցումներ կ'ուղղէին անոր : Անոնցմէ մին ողորմ յիշատակ մը միտքը բերելով Սուրբ Պարթէլէմիի անունը արտասանած էր , այն ինչ անոր ընկերներէ մին , այս խօսքին նախատական անարատ հոմիւնը զգալով ըստ անմիջապէս , « Ինչն ողորմանին վրայ կ'խօսիր , Շարլը իննեքորդ չ'կայ հոս» : Եւ ոչ « Բաթէրին տը Յէախի» , յարեց երիտասարդ Իշխանը : Տղուն պատասխանը մեծ յաջողութիւն դուտ , աւելի մօտեցան անոր , և Գաղղիոյ ներքին և արտաքին սահմանազլխներունոր բաժանման վրայ անթիւ հարցումներ ըլլալով իրեն՝ ամենքն ալ գոհ կ'ընէր այնպիսի յիշողութեամբ և անանկ ճշգրտութեամբ որ իր ունկնդիրները կ'զարմացնէին :

Մոյն վայրիկնին ազգային պահապան զօրաց պաշտօնակալ մը սրահը մտաւ , որ մեծ եռանդ և փոյթ ցոյց տուած ըլլալով Թագաւորին օրերը ասպհովելու՝ քովէն վերաւորուելու պատիւը ունեցած էր : Սրահէն ներս մտնելուն ամեն բանէ սուաջ իր վարմունքի արժանի գովեստներ ընդունեց իր ընկերակցաց մեծ մասէն : Գահաժառանգը ըստ Պ. Հիւի . « Ինչ է այս պաշտօնակալին անունը որ իմ հացըը այնչափ աղէկ պաշտարանեց , այս անունը կ'ուղեմ սովրիլ որպէս զի բնաւ չ'մոռնամ : — Չեմ գիտեր , Իշխան , պատասխանեց

սրտին Հիւ . խորհուրդ կու տամ ձեզ դուք անձամբ հարցընել , ափ իրեն հաճոյք սխտի սրտաձառէ » : Իշխանը վաղեց իր հարցումը ընել սրաշօնակալին : Այս վերջինը յարգական կերպերով մերժեց «նոր խնդիրը , և Իշխանը , ընդդէմ իր թախանձանայ , չկրցաւ անոր անունը լսել : Պ . Հիւ սնտակն մեծանձն քողարացոյն մօտենալով անունը խնդրեց : — « Չե՛հ համարձակիր ձեզ լսել , պատասխանեց աշերը արտասուալի , և արդէն խնդրեցի Իշխանէն որ թող տայ ինձ լսել . այս անունը դժբաղդարար նոյնն է ինձ համար ինչ որ է գարշելի մարդու մ'անունը : — (Այս մարդը Տրուէ կը կոչուէր :)

Պատգամաւորութիւնները ամեն մէկ կէս ժամ կ'նորոգուէին մինչև որ հանդարտութիւնը կատարելապէս վերահաստատուեցաւ : Առի ժ.Չ. իր հանդարտ բարեօրութեամբը կ'ընդունէր զանոնք , որոնք սրտաշաճ յարգանքով մօտէին թագաւորական ընտանիքին քով , խորտակուած դոները և սրալատի ուրիշ մասերը որ բռնութեան նշաններ կ'կրէին՝ ջրուցին անոնց , զորս փողոցի աղվայոյղ հեղեղները անցնելու ժամանակ թողած էին . ճնշուած փականքները , փրցուած ձղինիները , խորտակուած տախտակամանները , տէղերու երկաթները , զէնքերու բեկորները և մինչև անգամ երկաթի կտորներով լեցուած թնդանօթը որոնք սահներու սեւմերու վրայ կ'ստարածուէին : Յարմար տեղն է հոս եղած դիտողութիւն մը յիշել . սպաստաբութիւնը հազարաւոր նախատիկներ ճայթքած էր Թագուհւոյն սենեկին մէջ , հազարաւոր հեղնութիւններ Առի ժ.Չ.ի դարբնութեան գործարանին մէջ , հազարաւոր ծայրակիսն աղաղակներ և սուլնները գահի սրահին մէջ . սակայն Գահաժառանգի աշխատութեան սենեակը մտած ժամանակ զիրքերը , տեւրակները , տղու մը աշխատելու տախտակները և գործիները տեսնելով հանդարտած , մեղմացած էր : Թամը 10ին

պալատը պարսպուած , բոլորտիբը ըուռ , և Արքայական փոքր
Իշխանը այնպիսի հանդարտութեամբ մը կ'ննջէր որ կարծես
թէ գերերջանիկ օրուան մը յիշատակներով զանի օրորած է-
ին :

Հետևեալ օրը , Յունիս 21, 1792, խոռվարարք առառ
կանուխ ոտք ելած՝ կ'աշխատէին ժողովուրդը նորէն մղելու
ինչպէս որ առջի օրը բրած էին : «Այսօր , կ'սրուային , Վէ-
դօի վախտատին տարեդարձն է , պէտք է անոր այս մեղքը
քաւել ասնք» : Բոլոր քաղաքին մէջ հրատէրը կ'հնչէր , և
Թուրքերի գաւիթներուն մէջ արգէն գունդերը կ'կազմուե-
ին : Թագուհին լաւ տղուն քով զնաց որ զանի տեսած ժամա-
նակ ըստ անոր միամտաբար . «Մայր , միթէ երեկ է դեռ» :
Ափսոս ! սցո՛ , դեռ երեկ էր , Յունիսի 20ը կ'աւէր միշտ և
պիտի տւէր մինչև Յունվար 21 : Յունիսի 20ին է որ Ղուի
ԺՁ.ի զրհը կ'սկսի , այսօրուան թուականէն թագաւորու-
թեան Քրիստոսը վշտայլուղին մանկելով յայտնապէս կը
նշմարէ իր Գաղղոթան :

Քանի մը վայրկեան վերջը դուքս տը 'Նօայլը-Մուշի մա-
րաջախտը Թագուհոյն սենեակը ներկայացաւ : Թէև առջի
օրը Թագաւորը իրեն հաւատարիմ ծառաներու 'ի պաշտօնէ
հրաման տուած էր տեղերնին քաշուելու համար , սակայն
Ժերունի մարաջախտը՝ իր ներկայութիւնը արդարացնելու
համար իր հասակին վտտահելով Թագաւորին քովէն չ'բաժ-
նուած , և վտանգի ժամանակ անոր իր անձնուիրութեան
հաւատարիքը տալու երջանկութիւնը ունեցած էր , «Պարօն
Մարաջախտ , ըստ անոր Մարի-Անդուանէթ , Թագաւորը
տեղեկացուց ինձ ձեր քաջութեան որով զանի պաշտպանեցիք
երեկ , անոր երախտագիտութեան ես ալ կ'մասնակցիմ : —
Տիկին , ըրածս շատ քիչ է քաղաքակրթ այն յանցանքներու
հետ , որոց հաւուցում տալու կ'ուզէի կարող ըլլալ , թէև
այս յանցանքները իմն չեն՝ սակայն շատ մօտէն կ'ազդեն իմ

որտի!» — Թագուհին ուղերթով խօսակցու թեանն նիւթը վռտել, «Տղաս, ըսաւ, կրկնէ սլարոնն Մարաջախաին ստջեայն աղօթքը՝ զոր այս առաւօտ Աստուծոյ կուղղէիր Թագաւորին համար» : Տղան ծռնկի վրայ կու դայ, և ձեռները կցուած, աչերը երկինք վերուցած, Բէյնօլտի պատկերին մէջ երիտասարդ Սամուէլին նման, ամենազոռ և ամենազգայուն հնչումով Մեծին Պետրոսի օրէրոյն այս խօսքերը կ'երգէ :

Երկին, ըէ իմ հոս ըրած
աղաչանաց,
Բարի հայր մի սահէ իրեն
հպասակայ!

Ciel, entends la prière
qu'ici je fais;
Conserve un si bon père
à ses sujets!

Պ. ար Մալէրտ պալատին մէջ Մուշի մարաջախաին կը հեռուէր մօտէն. վաղեմի առաջին նախազահը իր սովորութեան հակառակ՝ քովէն սուրը կախած էր : — «Երկար ատեն է որ սուր կրած չ'ունիք, ըսին իրեն : — Իբրաւ է, պատասխանեց յարդելի ծերունին, ինչ ընտանի չէ այս հագուստը, սակայն նմ չ'զինուիր երբ Թագաւորին կեանքը վտանգի մէջ կ'դանուի!» — Որով ետք Արքայական Իշխանը դիտելով ըսաւ Թագուհոյն, «Գունէ կ'յուտամ Տիկին, որ մեր զաւակները աւելի պայծառ օրեր պիտի տեսնեն, փութորիկը բաւական սատիկ է և չ'կրնար երկար ատեն աւել» :

Առի ժ. Զ. իր վաղեմի սլաշտօնէին յուսոյ և պատիր ակնկալութեանց չէր մասնակցեր : Այն սպառնայիքները և թշնամանքները՝ որոյ իր պալատին մէջ ենթակայ եղած էր՝ հրովարտակաւ մը Պաղղիոյ ծանուցանելէ ետքը Դօախոյնե-

բու ուխտի գլխաւորին* իր ստոյգ վախերը սարունակող սա հետեւեալ խօսքը գրեց : « Ահէք այսօր զիս տեսնելու , մարդկան հետ ընկուցի գործս , ուրիշ բանէ մը սէւք չ'ունիմ'ալ բայց միայն երկնքէ » :

Բէթիոն չ'ուշայտ սպառախն մէջ երեւիլ , սոջի օրուան անկարգութեանց համար շահաց քաղաքային ժողովը արգարայնել և յանդիմարար կ'իսուէր : Առի ժ.Ձ. հաստատութեամբ սրտասխանեց անոր : Եւ ինչպէս որ խառնայոց քաղաքապետը ժողովուրդեան առ թաղաւորական Անձն ունեցած յարդանքը հաստատութեամբ վկայելով մէկտեղ կ'համարձակէր ակնարկել մը և շարժումով այս հասարակային զգայումէն դուրս ձգել Թաղաւորին որու արժանի էր , Թաղաւորը ժպիւրհ այցելուին բերանը գոցեց , ըսելով անոր որ իր սլարտքը Բարիդի հանդարտութեան հսկել ըլլալով սէւք էր իր սաշտօնին դատնալ : Հաղիւ թէ մեկնած էր նա երբ Արքայական Իշխանը որ Բէթիոնի խօսակցութիւնը լսած և անոր ամեն մէկ շարժումները դիտած էր իր մօր գիրկը նստուեցաւ ըսելով , « Մայր , չար մարդուն մէկն է այս սարօնը , սակայն նաև զաւական դժբաղդ է , վասն զի զձեզ չըճանչեր : Ինչու ուրեմն Բարիդի քաղաքապետ ըլին զանի » :

Յունիս ՉՍի գործուած նախասինքները , ստաջադրուած ոճիրները , Թաղաւորական հրովարտակը որ զանանք Գազդիոյ կ'ծանուցանէր՝ միանգամ էս նպատակով յետաշրջումի յայտարար նշաններու ծնունդ տուին : Առի ժ.Ձ. վայրկեան մի ևս իր թշնամեաց վրայ գերիշխանութիւն տեսցաւ : Քունի մ'օր վերջը Բարիդի վարչական ժողովը որ հրաման ըրած

* Իօտիսդները աշխարհական քահանաներու ուխտ մ'էին քարոզիչներու և կղերանոցներու հսկողութեան նստրուած : Ան ստանուան գլխաւորինն Հէպէր կ'կոչուէր և Թաղաւորին խոստովանահայրն էր : Աճիւրար փողոցի Բարմէլեաններու կառնործին մէջ մեռաւ , իրեն հետ կորսուեցան նաև Արլի արքեպիսկոպոսը , Պօլէի և Աէնդրի եպիսկոպոսները , և այլն , և այլն :

էր նոյն օրուան անկարգութեանց վրայ տեղեկութիւն տու-
նուլ առժամանակեայ կերպիւ քաղաքապետը և հասարակաց
ընդհանուր դործակատարը իրենց սլաշածէն դադրեցուց :
Ըէթիմն նաշանոր ոյժ առայա այս վայրկենական աչքէ իյ-
նայովը որ զանի բնականաբար աւելի թանկագին ընկելով ժո-
ղովրդին՝ ժպրօսէններու ընկերութիւնը և մինչև անգամ օ-
րէնագիր ժողովը ՚ի նպատանոր յօժարեցուց : Աւփայէթ
զօրապետը, որու անունը տեսալ մ'աղգեցութիւն կ'ներ-
գործէր հասարակաց կարծիքին վրայ՝ Յունիս 28 ի ոճիւրնե-
րու լուրը առնելուն եկաւ և իր բնակի գանդաանները ժողո-
վոյ առջև դրաւ (28 Յունիս 1792), «Որ Թուրքերի մէջ
դործուած բնութեանց նկատմամբ ամեն բարի քաղաքացի-
ներէ զգացուած սրտմտութեան և երկիւղներու մասնակից
եղած էր» կ'ըսէ : Աւստի խնդրեց ժողովէն որ հրաման ընէ
այս բնութեանց դրդիչները և պաշտպանները իբր ազ-
դագաւ (lèse-nation) հալածուիլ և պատժուիլ, ջնջել այն-
պիսի աղանդ մը որ ազգային դերիշխանութիւնը կ'կորզէր,
քաղաքացիները կ'ըռնարարէր, և որու հրատարակական
մարտումները ամենեին կատկածի տեղի չէին թողուր զանի
վարողներու դիտաւորութեանց վայրնութեան վրայ : Աւր-
ջապէս երդում կ'ձգէր անոնց վրայ որպէս զի սահմանա-
դրական իշխանութիւնները յարդել տալու համար ազու-
միջոյններ ձեռք առնուն, և ապահովութիւն տան բանակին
որ Սահմանադրութիւնը ամենեին ներքը հարուած մը պիտի
չ'ընդունի, այն ինչ քաջասիրտ Գաղղիացիներ իրենց արիւնը
կ'թափէին սահմանադրուիններու վրայ զանի սլաշտարաններու
համար :

Աւփայէթ եթէ պահանջէր ժողովէն որ դեռ չ'ու-
ծուած իր առաջարկութեան որոշում տար որ ջերմ՝ ծափա-
հարութիւններ կ'ընդունէր՝ նպատաւորքուէ մը պիտի վա-
արկէր թերևս, սակայն որոշիչ հարուած մը տալու համար

բաւական հաստատամտութիւն չ'ունէր իր բնաւորութեան մէջ: Բաւական չէր դիտեր որ ինչպէս ոսկիանոսի՝ նոյնպէս և ընկերութեան համար թումեր կ'հարկաւորէին, և թէ ժողովուրդներու իշխանութիւնը որչափ արդարութեան նոյնչափ և ուժէ պէտք ունի: Լաֆայէթ մեծ առաքինութեամբ, աներկբայելի ուղղամտութեամբ և մարդկութեան համար ունեցած անչափ սիրով միշտ ատեն սուած է իր թշնամեաց իրենց գիտաւորութիւնները ՚ի կատար հասցնելու: Նախատեսութեան ամեն միջոցներով ամբայած՝ բնաւ բան մը չ'արդիւնեց. միշտ աւելի յեղաշրջումը կարդի ասկէ դնելու քան թէ անոր առաջը առնելու յօժարամիտ՝ իր վրայ ան ատեն եղած դանդաղ արդարացուց, որ կ'ըսէին թէ դործի մը մէջ ուրիշ բանի մը համար չ'դիտեր երեւիլ եթէ ոչ անկարգութեան մէջ տեսակ մը կարգ մտնելու համար: Թագաւորը իր կողմէ ամենեւին պէտք եղածը չ'ունէր Լաֆայէթի դործունէութեան պակասութիւնը լեցնելու համար: Զօրապետին սպասած սկիզբ ընելու իրաւունքը՝ Թագաւորը սալ չ'դիտեր: Երկու քն ալ Սահմանադրութեան հաստատում, և ամեն բան անոր սահմաններու մէջ դործելու որոշուած՝ մին չէր ուզեր պետահարմը (coup d'état) առաջարկել որ իր երդումը կ'նեղէր, միւսը կ'վախնար այնպիսի շարժում մը երկրորդելու որ կրնար Միապետը խիստ շատ բարձրացնել իր դահլին վրայ: Լուի Թ.Չ. Լաֆայէթը չէր սիրեր, վասն զի իր գժբաղղութեանց մէկ մասին սրասձառ կ'կարծէր զանի: Բէթիոն Լուի Թ.Չ.ը չէր սիրեր, վասն զի անոր Ղարէնէ դարձած ժամանակ Պարնավի ցուցուցած աչքի զարնող նկատումներու ստջև իրեն յայանած արհամարհոտ անասրբերութեան բնաւ չէր ներեր իր նախանձոտ դիւրադրողութեամբ: Թերեւս ներելի ըլլայ կարծել որ այս երկու անձերու օգնութեամբ, որոց մին բանակը կ'առաջնորդէր և միւսը ժողովուրդը, Թագաւորը պիտի կրնար ինչ-

պէս իր հայրենեաց նոյնպէս և իր սերունդին ստեղծա-
 դէտ մը խնայել, բայց թէ որ աւելի խորը մտածուի՝ պիտ
 տեսնուի որ եթէ Ղափայէթ պակասութիւններ չունենար և
 Բէթիւն մուլութիւններ՝ որք զիրենք արդիւիցին այս մեծ դե
 րը խաղալէ՝ ամենևին ժողովրդեան պաշտպանութիւնը պիտ
 չկրնային ստանալ. վստն զի ժողովուրդը աւելի իրենց պա
 կասութիւններու և մուլութիւններու համար է որ իր կու
 քերը կ'սիրէ: Յեղաշրջումի պատմագրին և ընթերցող
 մշտնջենաւոր մտախորհումը (préoccupation) ահա հոս է
 միշտ ենթակայ բլբալով այն կարծիքին որ եթէ ուրիշ կեր
 վարուէին՝ չէին կորսուէր: Այսու ամենայնիւ այս երեք ան
 ձերը՝ յեղափոխութեան սկիզբէն ՚ի վեր այնչափ տարբե
 ճանքաներու հետևած, գէպ իրենց վտանգը կ'զիմէին
 Թապաւորը գէպ ՚ի մահարեմը Յունվար 24ին. Ղափայէ
 Օրնուցի Աւստրիական բանտը, և Բէթիւն գէպ ՚ի այն աղ
 տաբեր փայտը՝ ուր իր մարմինը դայլերու և գիշատիչ թը
 չուններու ճարակ պիտ' ըլլար:

Վ Է Ե Ր Զ Ա Ռ Ա Զ Ի Ն Լ Ա Տ Ա Ր Ա Յ

ՅԱՆԿ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՅ

ԻՐՔ Ա. Վերսայլ (27 Մարտ 1785-6 Հոկ. 1789)	3
ԻՐՔ Բ. Թուրքերի (6 Հոկ. 1789-20 Յունիս 1791)	44
ԻՐՔ Գ. Ճանրորդու ի վարէն (20-26 Յունիս 1791)	69
ԻՐՔ Դ. Յսս 20ի օրը (26 Յսս 1791-20 Յսս 1792)	113

